

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

11767

Ռ Է Ն

ԳՆԱԿԱՀԱՐՈՒԱԾՆԵՐԸ

Վ Է Պ

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԻՑ



ՓԱՐԻԶ

1931

891.99
Ռ -33

891.99
Ռ-33

12 MAR 2011
413



Ռ Է Ն

Ռ Է Ն

ԳՆԴԱԿԱՀԱՐԻԱԾՆԵՐԸ

Վ Է Պ

Ռուսական Մեծ Յեղափոխութիւնից

11767

Printed in France

ՓԱՐԻԶ

1931

52057

24.07.2013

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ, ԱՐՏԱՏՊՈՒԹԵԱՆ
ԵՒ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆ
ԻՐԱՒՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀՒԱԾ Է ՀԵՂԻՆԱԿԻՆ



(524-59)

804-2002

I

Զօրավար Դենիսովը զարթնեց այն ժամին, երբ արեւի առաջին ճառագայթները չեշտակի ընկան նրա ճաղատ գլխին, բարձրացան ճակատի վրա և, թաւ յօնքերից թափանցելով, ըսկսեցին ասեղնոտել նրա արտեւանունքները: Նա մի քանի անգամ չուռ եկաւ մահճակալի մէջ, մեղկօրէն տրորեց աչքերը, յօրանջեց, բազուկները չփեց իր ամենօրեայ սովորութեամբ, մի անգամ, բայց հատու, սեղմեց գանգի կոճակը և բութ արտայայտութեամբ աչքերը յառած ղրան՝ սպասեց:

Նրա չտաբի պետը, որ ամէն առաւօտ պարտաւոր էր գալ և սպասել յարակից սենեակում մինչև զօրավարի զարթնելը, գանգի ձայնը լսելով՝ իսկոյն ոտքի կանգնեց, իրեն կարգի բերեց, վիզը մէկ չարժուռմով եւս թեքեց, գօտին աւելի սեղմեց բարակ մէջքին, թղթապանակը վերցրեց և երկիւղածութեամբ ներս մտաւ զօրավարի ննջարանը, զինուորական բարևով ողջունեց նրան ու անշարժ կանգնեց նոյն դիրքի մէջ:

— Քնա՞ծ էք, ի՞նչ է, քանի՞ անգամ պէտք է զանգահարել,— ասաց զօրավարը՝ փոխանակ գնդապետի բարևն առնելու:

Գնդապետը ոչ միայն չայլայլեց, այլ և բերնի մէկ ծայրով ժպտաց, որովհետև նա քաջ գիտէր, որ այդ է նորին գերազանցութեան տոնը և որ այդ բարկութիւնն ու նկատողութիւնը ոչ միայն իրական չեն, այլ և նշան նրա լաւ տրամադրութեան և սիրալիրութեան:

— Ձեռքը վա՛ր առէք և նստեցէ՛ք,— ասաց զօրավարը՝ միաժամանակ ծխելով:

Գնդապետ Վոլոդովը վայելուչ չարժուռմով յետ դարձաւ, վերցրեց աթոռը ու նստեց զօրավարի նստարի մօտ:

— Գիշերս վա՛տ եմ քնել, գնդապե՛տ,—ասաց զօրավարը:

— Բայց գաղթի էք երևում, Ձերդ Գերազանցութիւն,— պատասխանեց չտաբի պետը:

— Կարծես թէ լաւ եմ քնել, հը՞, սատանան տանի, ի՞նչ էք ասում դնդապե՛տ:

— Այո՛, Ձերդ Գերազանցութիւն, լաւ քնած պէտք է լինէք, որովհետև ձեր դէմքը պայծառ է:

— Եւ երևակայեցէ՛ք, դնդապե՛տ, դիշերը ուշ եմ վերադարձել տուն:

— Այդ է պատճառը, Ձերդ Գերազանցութիւն, որ հանդիստ էք քնել. մարդ որ ուշ քնի, լա՛ւ կը քնի. ես այդ չա՛տ ու չա՛տ փորձերով դիտեմ:

— Երէկ, ճիշդն ասած, ուզում էի չուտ տուն գալ,— ասաց Դենիսովը,— բայց զօրավար Գորդեեվկին չատ խնդրեց, որ մի երկու ձեռք պրէֆերանս խաղանք, չմերժեցի: Խաղին մասնակցում էին զօրավար Շէյտման և Կալուխինը: Սկզբում, ամբողջ ժամանակ, ինձ անիծած թուղթ էր գալիս, երեք խաղի ընթացքում մօտ հինգ հարիւր ռեմիզ նատեցի. գժոխա՛յին անյաջողութիւն: Կալուխինը թէ՛ լաւ խաղացող է և թէ՛ նրան լաւ թուղթ էր գալիս: Նա երկու անգամ ինձ զգեց՝ ութը առանց կոզերի ասելով: Շէյտմանը նոյնպէս մի քանի անգամ ընկաւ և պատկառելի վնասով: Սակայն, նա, այդպիսի դէպքերում, չուտ է ջղայնանում, մի բան որ դիւրեկան չէ: Այդ կողմից անգուգական է զօրավար Գորդեեվկին. նա իրեն պահում է զինուորականի վայել կեցուածքով. պնդյաջողութեան պարագային այնպէս է ժպտում, որպէս թէ իր մօտ թնդանօթի ռումբ պայթած լինի, առանց վնաս հասցնելու:

— Կալուխինը, Ձերդ Գերազանցութիւն, այնքան էլ լաւ խաղացող չէ, ես առիթ եմ ունեցել նրա հետ խաղալու:

— Ես էլ կարծում եմ, որ նա լաւ խաղացող չէ. բայց ի՞նչպէս է, որ լաւ խաղացողի համբաւ ունի:

— Նա լաւ տակտիկա ունի, Ձերդ Գերազանցութիւն. նրա գլխաւոր առաւելութիւնը այդ բանի մէջ է:

— Ո՞րն է նրա տակտիկան:

— Նրա տակտիկան, Ձերդ Գերազանցութիւն, այն է, որ նա ամէն կերպ աշխատում է ուրիշին գցել. նա սակարկութիւնը բարձրացնում է երկու և երեք անգամ աւելի, քան որ

թուղթ ունի իր ձեռքը. այդպիսով հակառակորդին ստիպում է ռիսկի գնալ և կորցնել կրկնակի անգամ:

— Ես այդ նկատել եմ. բայց դա վտանգաւոր տակտիկա է,— ասաց զօրավարը՝ գլուխը ուժգին թափահարելով:

— Այո՛, Ձերդ Գերազանցութիւն, այդ վտանգաւոր տակտիկա է, բայց նայած տեղին և խաղընկերին:

— Ի հա՛րկէ, այդ բոլորը հաշիւներ են,— համաձայնեց զօրավարը:

— Բայց նա,— չարունակեց դնդապետը,— յաճախ իր տակտիկան փոխում է և հակառակորդին մատնում չփոթութեան. այսպէս, օրինակ, նա չատ դէպքերում հիանալի թուղթ է ունենում, բայց վախկոտութեան աստիճան պակաս սակարկութեան է գնում և, նախաձեռնութիւնը թողնելով հակառակորդին, նրան յանկարծակիի է բերում ու մղում ռեմիզի:

— Ուրեմն, նա իր զինուորական արուեստը կատարելագործել է թղթախաղի մէջ, այնպէս չէ՞, դնդապե՛տ,— ասաց զօրավարը՝ ժպտալով:

— Այդպէս է երևում, Ձերդ Գերազանցութիւն,— պատասխանեց չտաբի պետը՝ յօնքերը վեր նետելով:

— Սակայն, դիտէ՞ք ինչ, դնդապետ,— չարունակեց խօսել զօրավարը,— երէկւայ խաղի մէջ, Կալուխինը, այդ լաւ տակտիկա ունեցող Կալուխինը, գլխովին չախչախուած վեր կեցաւ, Շէյտմանը բոլորովին տարուեց, իսկ Գորդեեվկին գրեթէ ինձ հաւասար յաջողութեամբ վեր ելաւ: Ես տարայ եօթ հարիւր յիսուն և վեց հազար ռուբլի,— մի չնչին գումար այժմ, որ սակայն Նորին կայսերական Մեծութեան օրով ահագին հարստութիւն էր:

— Դուք վատ խաղացող չէք, Ձերդ Գերազանցութիւն. զօրավար Գորդեեվկին ձեր խաղը չատ է հաւանում:

— Ուրեմն, ո՞ւր մնաց ձեր Կալուխինի տակտիկան. թուղթը որ գայ, կը գայ, որ չգայ՝ չի գայ. ահա, ամբողջ յաջողութիւնը դրա մէջ է:

— Ճշմարի՛տ էք, Ձերդ Գերազանցութիւն, բայց ընդունեցէք, որ դուք աւելի լաւ տակտիկա էք ունեցել, և դրան ու միմիայն դրան էք պարտական ձեր յաջողութիւնը:

— Անշո՛ւշտ, այդ ես չեմ ժխտում. բայց Կալուխինը

պէտք է հասկանայ, որ նա այլևս առաջնակարգ խաղացող չի կարող համարուել:

— Կարելի է ընդունել, որ գօրավար Կալուխինը առաջնակարգ խաղացող չէ, բայց անկարելի է ժխտել, որ նա առաջնակարգ խաղացողներից մէկը չէ:

— Ինչպէս տեսնում եմ, գնդապե՛տ, դուք Կալուխինին հաւանողներից էք,— ասաց գօրավարը կատակի տալով:

— Թո՛յլ տուէք, Ձերդ Գերազանցութիւն, չհամաձայնուել ձեզ հետ, որովհետև նրան հաւանելու ապացոյցներ չեմ տեսել և բացի այդ՝ ես առաջնորդւում եմ լոկ այն տեսակէտով, որ եթէ Կալուխինի վարպետութիւնը նսեմացնելու լինենք, այն ժամանակ ձեր տարած յաղթանակը կրկնակի կը նսեմանայ:

— Ռազմական քաղաքականութիւն էք վարում, գնդապե՛տ,— ասաց գօրավարը, որին այնքա՛ն դիւր եկաւ չտաբի պետի հակաճառութիւնը:

— Ճշմարիտ է, որ թղթախաղն էլ մի տեսակ ռազմավարութիւն է, Ձերդ Գերազանցութիւն, և այդ յաջող ռազմավարութիւնը ձեզ վարձատրել է մօտ մէկ միլիոն ռուբլով:

— Դուք ճշմարիտ էք:

— Ձեմ կասկածում:

— Բայց կարո՞ղ էք երևակայել, գնդապե՛տ, որ ես, առհասարակ, թղթախաղից յետոյ աւելի հանգիստ և անխռով եմ քնում, քան որևէ լուրջ աշխատանքից յետոյ:

— Անժխտելի փաստ է. բայց դո՛ւք, Ձերդ Գերազանցութիւն, երբևիցէ առիթ ունեցե՞լ էք անդրադառնալու այն բանին, թէ թղթախաղը օրւայ ո՞ր ժամանակ աւելի հաճելի է:

— Գիշերը, ի հարկէ, ամենայարմար ժամանակն է, մանաւանդ որ ելեքտրականութիւնը հաճելի երանգով ճուլւում է կանաչ սեղանին, որի շուրջը մարդս ներշնչւում է յաղթելու անսահման յոյսով ու հաւատքով:

— Այստեղ, դժբախտաբար, մեր տրամադրութիւնները տարբերւում են,— ասաց գնդապետը մեղմ և սիրալիր,— ես, ընդհակառակն, սիրում եմ խաղալ երեկոները, իսկ ուշ գիշերները խմել և քէֆ անել: Գիշերները չարունակ տաբւում եմ: Ճաճախ է պատահել, որ խաղից յետոյ, երբ անկողին եմ մտել, խաղը նոյնութեամբ չարունակւել է նաև քնի մէջ: Ինչ չեն նաև

դէպքեր, երբ ես քնած ժամանակ խօսել, պառանգել և հայհոյել եմ ինձ և ամենքին: Ճաճախ կինս ինձ զարթեցրել և պատմել է այդ բոլորը, բայց ես ոչինչ չեմ յիշել, և ինձ այնպէս է թւացել, որ այդ ամենը պատահել է ակումբում: Սակայն, երեկոները, ժամը, այսպէս, ութից-իննից սկսած մինչև կէս գիշերը, ինձ համար ամենայարմարագոյն ժամանակն է:

— Այդ շատ տարօրինակ է, գնդապե՛տ:

— Մանկութիւնից այդպէս եմ վարժւել, Ձերդ Գերազանցութիւն: Պապս, որ Դոնեան հետևոտն կոզակների Գնդապետ էր, մի՛շտ թէյի պահերին, երբ ինքնաեռը խշշում էր սեղանի վրայ, անհուն հաճոյք էր զգում տնեցիների հետ թուղթ խաղալ: Ես այն ժամանակ դեռ պատանի էի և հաճոյքով հաւաքում, դասաւորում էի պապիս թղթերը: Այդպէս կամաց-կամաց սովրեցի պապիս նախասիրած մի քանի խաղերը, և յետոյ, երբ նա արդէն շատ էր ծերացած և տնեցիներից ոչ ոք այլևս հաճոյք չէր առնում նրա հետ խաղալու, ես դարձայ նրա մի՛ակ խաղընկերը: Պապս բարի մարդ էր և ինձ շատ էր սիրում: Մինչև հի՛մա էլ յիշում եմ, թէ ինչպէս ես նրան տանում էի, երբ նրա աչքերը արդէն շատ էին տկարացել: Նա չարունակ երկու թուղթ մի՛ասին էր քաշում և բարձր ձայնով, պոռում.—

«Սպասի՛ր, վա՛յնկա, երկու թուղթ եմ քաշել»:

Պապս լաւ մարդ էր և կոզակ:

— Որքան մա՛րդ, այնքան վարժութիւն և բնաւորութիւն,— ասաց գօրավարը՝ իբր թէ մի մեծ ճշմարտութիւն յայտնաբերելու անսփոփութեամբ:

— Այո՛, Ձերդ Գերազանցութիւն, որքան մա՛րդ, այնքան բնաւորութիւն և սովորութիւն,— հաստատեց գնդապետը:

— Մի անգամ,— չարունակեց գօրավարը,— կարծեմ սրանից մէկ կամ երկու ամիս առաջ, երբ ակումբից ես ու գօրավար Գորոդեցկին տուն էինք վերադառնում, նա պատմեց, որ ինքը, երիտասարդ ժամանակ, ամիսներ չարունակ, արևի լոյսը ինչ է՝ չի տեսել. ցերեկները գիշերների՝ և գիշերները ցերեկների վերածելով՝ խաղացել է ամենամոլի կերպով: Նա ասում էր, թէ այդ մի քանի ամսւայ վարժութիւնը դարձել էր բնաւորութիւն: Նա, ինչպէս ինքն էր հաւատա-

ցնում, ու ես հաւատում եմ նրան, ցերեկները խորշում է թուղթ խաղալուց, իսկ գիշերները լուսացնելու նեղութիւնը ուրախութեամբ և հաճոյքով է յանձն առնում: Այս դէպքը պատմեցի, որպէսզի հաստատեմ ձեր ասածը: Տեսնո՞ւմ էք, սա էլ վարժութիւն է,— վարժութիւն, որ դարձել է բնաւորութիւն:

Գալով ինձ՝ պիտի ասեմ, որ այդ բոլորը երկրորդական նշանակութիւն ունեն: Խաղի մէջ իմ նախասիրութիւններից մէկը և ամենագլխաւորն այն է, որ թղթերը բոլորովին նոր ծրարից հանուած լինեն, այլապէս ես թուղթը ձեռքս չեմ վերցնի, թէկուզ վիզս կտրեն: Ահա՛ ձեզ մի ուրիշ վարժութիւն և սովորութիւն: Այս ամենից պարզ երևում է իմ և ձեր ասածի ճշմարտութիւնը: Տարբեր մարդիկ, տարբեր սովորութիւններ և վարժութիւններ:

— Դո՛ւք, Ձերդ Գերազանցութիւն, այնպէս պերճախօս հաստատեցիք այն, ինչ ես ասացի անչնորհք կերպով, որ այլևս ասելու բան չունեմ:

— Այդ բոլորը ճշմարիտ է, սիրելիս, տարբեր մարդիկ՝ տարբեր բնաւորութիւններ և նախասիրութիւններ,— վերջին անգամ չեշտեց զօրավարը՝ հանգած ծխախոտը մոխրամանը դնելով:

— Բաւական յոգնեցիք, Ձերդ Գերազանցութիւն, — ասաց գնդապետը՝ միաժամանակ բաց անելով ծունկերին դրած թղթապանակը:

— Թողնենք այս կեղտոտ գործերը. ի՞նչ նորութիւններ կան, գնդապետ,— հարցրեց զօրավարը՝ ուշադիր դիտելով գնդապետի բարակ և սպիտակ մատները, որոնց վրայ փայլփլում էին ադամանդակուռ մատանիները:

— Ձե՛րդ Գերազանցութիւն, թէև մտահոգիչ նորութիւններ չկան, բայց ճակատից ստացած գիշերւայ հաղորդագրութիւնները այնքան էլ մխիթարական չեն:

Զօրավարը պատրաստեց լսել զեկուցումը, իսկ գնդապետը նոյն սառնութեամբ շարունակեց.

— Դեր–Գնդապետ Ազդեևը ծածկագիր հեռախօսագրով հաղորդում է, որ կարմիրները մեր աջ թևի վրայ կասկածելի շարժումներ են երևան հանում, իսկ ձախ թևում, Արմաւիրի ուղղութեամբ, այսօր, լուսաբացին, թշնամու թիկունքում

խուլ հրացանաձգութիւն է լսել, որը տևել է մօտ քառորդ ժամ:

— Կամ ցոյց է, կամ գնդակահարութիւններ,— ասաց զօրավարը՝ նոր սիգար վառելով:

— Հաւանաբար:

— Ցետո՞յ:

— Կենտրոնից հաղորդագրութիւն կայ, թիւ եօթը ծածկագրով, որով դաշտային շտաբի պետ Պեչկով յայտնում է, թէ մեր առաջաւոր դիրքերի տասնեմէկ գինուոր և մի սպայ փորձել են անցնել հակառակորդի կողմը, բայց ձերբակալուած են. գնդապետը խիստ քննութիւն է կատարել, որի ընդարձակ զեկուցումը շուտով կը ստանանք:

— Գնդապետ Պեչկովը աչալուրջ և արժանաւոր գինուորական է,— ասաց զօրավարը՝ հազիւ լսելի ձայնով:

— Ե՛ւ քաջ և՛ վստահելի,— հաստատեց շտաբի պետը:

— Իմ կողմից գոհունակութիւն յայտնել:

— Լսում եմ, Ձերդ Գերազանցութիւն:

— Էլ ուրի՞շ:

— Ուրիշ ոչինչ, Ձերդ Գերազանցութիւն:

— Լսեցի՛ք, գնդապե՛տ,— ասաց զօրավարը՝ չոկւելով անկողնու մէջ:

— Հրամայեցէ՛ք, Ձերդ Գերազանցութիւն:

— Անյապաղ կարգադրել, որ պահեստի ութերորդ գնդի երկրորդ դումարտակը ճամբայ ընկնի դէպի մեր աջ թևի դիրքերը:

— Լսում եմ:

— Ցետոյ՝ անմիջապէս հաղորդագրել ստուգումն ձախ թևի վրայ տեղի ունեցած հրացանաձգութեան պատճառների:

— Լսում եմ:

— Ապա՝ գնդապետ Պեչկովին իմ գոհունակութիւնը յայտնելով հանդերձ՝ հեռագրել, որ անմիջապէս փախչելու փորձ արած գինուորներն ու սպան, խիստ հսկողութեան տակ, ղրկւին այստեղ:

— Լսում եմ, Ձերդ Գերազանցութիւն:

— Այս բոլորից յետոյ... հա՛... ի՞նչ պիտի յիշեցնէի, — ասաց Դենիսովը՝ մոռացած մի բան մտաբերելու ճիգով:

— Գուցէ բանտարկեալների մասին կ'ուզէիք մի բան հրամայել:

— Այդ էլ կարևոր է, սակայն, մի այլ կարևոր խնդիր կայ, բայց, սատանան տանի, չեմ կարող մտաբերել:

— Գուցէ պարենաւորման խնդրի հետ կապ ունի, Ձերդ Գերազանցութիւն:

— Բնա՛ւ:

— Թերևս ռազմամթերքի՞:

— Ո՛չ:

— Ի՞նչ պէտք է լինի, Տէր Աստուած,— ասաց գնդապետը՝ մտազբաղ:

Փոքր լռութիւնից յետոյ զօրավարը նորից վառեց սիգարը և ասաց.—

— Ո՛չինչ, այդ յետոյ կը յիշեմ, բանտարկեալների մասին ի՞նչ ունէք ասելու:

— Բանտարկեալները, Ձերդ Գերազանցութիւն, երեք խմբի կարելի է բաժանել և այդ լաւագոյն դասաւորութիւնն է. առաջին խումբը կազմում են գերի ընկած կարմիրները, որոնց մէջ կան մի քանի կոմիսարներ, երկրորդը՝ դասալիք զինուորները, իսկ երրորդը և ամենածանր յանցագործները կարելի է համարել նրանց, որոնք փորձել են անցնել հակառակորդի կողմը:

— Այսինքն՝ իսկական դաւաճանները,— ասաց զօրավարը:

— Կրկնակի դաւաճանները,— հաստատեց գնդապետը:

— Նախնական քննութիւնները դեռ չե՞ն կատարել:

— Դեռ ո՛չ, Ձերդ Գերազանցութիւն:

— Անմիջապէս դաշտային դատարան կազմել և յանցագործներին խստագոյնս պատժել,— ասաց զօրավարը՝ թաւ յօնքերը կիտելով և խստագոյնս բառը շեշտելով:

— Լսում եմ, Ձերդ Գերազանցութիւն, ուրիշ հրամաններ չունէ՞ք:

— Առայժմ այսքան:

— Լսում եմ:

Գնդապետ Վոլգովը հաւաքեց զեկուցման թղթերը, դրեց թղթապանակը, ոտքի կանգնեց և մի քանի անգամ խոր գլուխ տալով ուզում էր հեռանալ, երբ զօրավար Դենիսովը բարձրացրեց ցուցամատը, հասկացնել ուզելով թէ ասելիքներ ունի:

— Ի՞նչ կը հաճէիք հրամայել, Ձերդ Գերազանցութիւն, — հարցրեց գնդապետը՝ միշտ զինուորական վայելուչ կեցուածքով:

— Լաւ կը լինի, որ դաշտային դատարանը կազմուի ձեր նախագահութեամբ:

— Ուրախութեամբ,— անմիջապէս համաձայնուեց Վոլգովը:

— Ցեսոյ՝ դուրս գնալիս՝ համհարզին կարգադրեցէք, որ վաննան պատրաստեն և սափրիչ կանչեն. ես արդէն վեր եմ կենում:

— Լսում եմ Ձերդ Գերազանցութիւն:

* * *

Շտաբի պետ Վոլգովը, որին զօրավար Դենիսովը սովորաբար գնդապետ էր կոչում, առանց նրա անունն ու ազգանունը յիշատակելու, մինչահասակ, լայն թիկունքով, երեսունն անց մի երիտասարդ էր: Նրա դէմքի վրա այդ հասակին անծանօթ այնպիսի խորչոմներ կային, որոնք յատուկ են միայն զէնք ու չայտ կեանք վարողներին:

Զինուորական բարձրագոյն ճեմարանը աւարտելուց յետոյ՝ կոզակներին յատուկ դաժանութիւնն ու կոպտութիւնը ոչ միայն չէին մեղմացել ու յղկուել նրա մէջ, այլ աւելի էին զօրացել, որպէս զովելի յատկութիւն լաւագոյն զինուորականի: Կեանքը նրա համար զին չունէր, իսկ խաղաղութիւնը համարում էր մի ձանձրալի միջադէպ: Համաշխարհային պատերազմի ընթացքում նա աչքի էր ընկել իր սխրագործութիւններով և մէկն էր այն երջանիկ սպաներից, որոնք, Մազուրեան լճերի կատաղի մարտից յետոյ, կարողացել էին ազատուել գերմանացիների ծանր հարւածից: Նա չա՛տ և շա՛տ մահեր էր տեսել, ականատես լինելով աննպատակ և չոայլ զոհերի, որ տուել էր ռուսական բանակը թէ՛ նահանջի և թէ՛ առաջխաղացութեան պարագային: Այժմ նա մարդկանց վրայ նայում էր որպէս լոկ նիւթի՝ հարկաւոր միայն պատերազմներ մղելու և ռազմադաշտերի վրայ ընկնելու համար: Նա ռազմադերիներին

ատում էր սոսկ այն պատճառով, որ նրանք չեն կուռել մինչև մահը կամ առիթ չեն ունեցել մեռնելու. իսկ դասալիքները նրան կատաղեցնում էին, որովհետև ոչ միայն չէին կամենում մեռնել, այլ մահից սարսափում անարդ վախկոտությամբ:

Երբ գնդապետ Վոլդովը հասավ այն չէնքի առաջ, որի երկրորդ յարկաբաժինը յատկացված էր գվխավոր շտաբին, կանգ առավ, սրբեց ճակատի քրտինքը, որ ավելի շուտ բարկության և սրտնեղության արդիւնք էր, քան յոգնածության, ինքն իրեն կարգի բերեց, վառեց ծխախոտը և հաստատ ու աղմկալի քայլերով վեր բարձրացավ: Շտաբի գինուորական պաշտօնեաները և սպաները, որոնք ծանօթ էին նրա քայլերին և այժմ անգործ նստած սեղանի ծայրերին խօսում ու ծիծաղում, յանկարծ լռեցին, երբ նրանցից ուշադիրն ասաց.

— Զգո՛յշ, գալիս է:

Վայրկեանապէս ամէն մէկը իր տեղն անցավ և լուրջ ու զբաղված դիրք ընդունեց:

— Բարե՛ւ,— ասաց գնդապետը ներս մտնելով և անչեղ մօտենալով իր սեղանին:

— Բարև՛, պարոն գնդապետ,— կրկնեցին ներկաները՝ համարեա միաբերան և ոտքի կանգնած:

Գնդապետ Վոլդովը գվխարկը վար առավ, դրեց իր սեղանի վրայ, վճռական չարժումով բաց արաւ թղթապանակը ու սկսեց քրքրել, երբ հերթապահ սպան մօտենալով՝ ասաց.—

— Թո՛յլ տուէք զեկուցել, պարոն գնդապետ:

— Կարո՛ղ էք,— ասաց Վոլդովը՝ առանց գլուխը բարձրացնելու:

— Մեր ձախ թևի դաշտային շտաբից հաղորդում են, որ լուսաբացին լսած հրացանաձգության չարժառիթները զգանի են մնում, բայց յոյս կայ, որ...

— Սպասեց՛ք,— ընդմիջեց Վոլդովը մտազբաղ:

— Լսում եմ:

— Նախքան այդ՝ կարևոր է անյապաղ հրամանագրել, որ պահեստի ութներորդ գնդի երկրորդ դումարտակը անմիջապէս ճամբայ ընկնի դէպի մեր աջ թևի դիրքերը, ուր թշնամին կենդանի չարժումներ է ի յայտ բերում:

— Լսում եմ, պարոն գնդապետ:

— Հաղորդագրությունը թողէք սեղանիս վրայ, ես յետոյ կը կարդամ,— ասաց գնդապետը՝ թղթապանակը քրքրելով:

— Լսում եմ:

— Դրանից զատ,—չարունակեց գնդապետը,—առանձին առանձին հրամանագրել սպաներ Պաւլովին, Կուզմինսկուն և Պլետնովին, որ նրանք նշանակված են դաշտային դատարանի անդամներ՝ կարմիրներին և դաւաճան գինուորներին դատելու համար:

— Լսում եմ:

— Հրամանագրերը ստանալու վայրկեանից՝ պէտք է գործի անցնեն, իրենց վերապահելով նախնական քննութիւնները: Հրամանագրերում չմոռանաք յիշատակել նաև, որ դատարանը կազմուում է իմ նախագահութեամբ:

— Լսում եմ, պարոն գնդապետ:

— Ուրեմն, գո՛րծի,— կարուկ վերջացրեց Վոլդովը և վերցնելով ճակատից ստացած հաղորդագրությունները, սկսեց կարդալ և դասաւորել՝ զօրավար Դենիսովին զեկուցելու համար:

II

Զօրավար Դենիսովը առաւօտեան լոգանքն արդէն ընդունել և մեղկօրէն յանձնուել էր սափրիչին, որին մտահոգում էր ոչ թէ այն, որ թրաշը շուտ վերջացնի, այլ այն, թէ ի՞նչպէս անի, որ հինգ մարդ սափրելու ժամանակ կորցնի: Զօրավարը նոյնպէս չէր աճապարում. նա այն մարդկանցից էր, որոնք թուլութիւն ունեն նիրհելու սափրիչի մատների տակ և երբեմն զրոյց անելու:

— Քանի՞ տարի է այս արհեստով ես պարապում,— հարցրեց զօրավարը, լաւ յիշելով, թէ առաջին անգամ չէ որ միևնոյն հարցով է սկսում իր խօսակցութիւնը սափրիչի հետ:

— Քսան և հինգ տարի, Ձերդ Մեծութիւն,— պատասխանեց սափրիչը՝ փոխանակ Ձերդ Գերազանցութիւն ասելու:

— Գո՞հ ես արհեստիդ:

— Ձեր շնորհիւ, մի կերպ ապրում ենք:

— Օրական քանի՞ մարդ ես սափրում:

— Այն օրւանից, Ձերդ Մեծութիւն, երբ արժանացայ Ձեզ սափրելու պատւին՝ ուրիշներին չեմ թրաշում:

— Ինչպէ՜ս,— իբր թէ զարմացած հարցրեց զօրավարը:

— Հասարակ մարդկանց չեմ սափրում:

— Այդ հաշւով՝ վնաս պէտք է անես:

— Մեր գործի մէջ շահ ու վնաս չկայ. եթէ սափրիչը կարողանայ ապրել, այդ արդէն շահ է, իսկ ես, փառք Աստուծոյ, մի կերպ կարող եմ ընտանիքս պահել. խանութում աշխատողներ ունեմ:

— Օ՜, ուրեմն, դու գործատէր ես և ուրիշների աշխատանքը շահագործող,— ասաց զօրավարը ժպտալով:

— Այդպէս է, Ձերդ Մեծութիւն,— պատասխանեց սափրիչը ՝լաւ ըմբռնելով զօրավարի հեգնական ակնարկութիւնը:

— Է՛, եթէ կարմիրները գալու լինեն, քեզ անպայման կը գնդակահարեն որպէս շահագործողի:

— Աստուծոյ և Ձեր շնորհիւ կարմիրների երեսը այլևս չենք տեսնի, Ձերդ Մեծութիւն,— ասաց սափրիչը՝ ածելին կաշեայ յեսանին քսելով:

— Ասենք՝ թէ եկան:

— Ածելիս կոկորդիս կը դնեմ, նախընտրելով մեռնել, քան սափրել նրանցից որև է մէկին: Մի անգամ ծնւել ենք, մի անգամ էլ պիտի մեռնենք:

— Դժւար թէ սափրիչները այդքան քաջ լինեն,— ասաց զօրավարը՝ ձեռքը սահեցնելով երկրորդ անգամ յղկւած երեսին:

— Ես այդ կ'անեմ, Ձերդ Մեծութիւն: Եթէ նրանց արարքները չտեսնէի, գուցէ չանէի, բայց նրանց ճանաչողը անկարող է ապրել նրանց իշխանութեան տակ:

— Քունքերիս մազերը կարճ և եռանկիւնի կտրել,— հրամայեց Դենիկինը:

— Լսում եմ:

— Ասում ես՝ ինձանից բացի ոչ ոքի չես սափրո՞ւմ. այդ զարմանալի է:

— Հասարակ մարդկանց, այո՛, չեմ սափրում:

— Մեր զօրավարներից ո՞րոնց ես սափրում:

— Նորին Մեծութեան Գորոդեցկիին և Շէյտմանին:

— Նրանցից ո՞րն աւելի խստապահանջ է:

Սափրիչը ժպտաց և ուղիղ պատասխանի փոխարէն ասաց.

— Զօրավար Գորոդեցկիի մազերը աւելի կարծր են, քան զօրավար Շէյտմանի:

— Իսկ զօրավար Կալուխի՞նինը:

— Նրան ուրիշ սափրիչ է թրաշում:

— Ինչո՞ւ, քեզ չի՞ հաւանում:

— Ես նրան բնաւ չեմ սափրել: Առաջին օրից, երբ կամաւորական բանակը գրաւեց քաղաքը, զօրավարը սափրիչ է ուզում և նրան են կանչում. այդպէս էլ շարունակւում է, չընայած, որ Մոսկւա կամ Պետրոգրադ չի եղել և լաւ վկայական էլ չունի:

— Լա՛ւ, ես կ'ասեմ նրան, որ քեզ կանչի, գուցէ քեզանից գոհ մնայ:

— Շատ շնորհակալ եմ:

— Ես կարծում եմ, որ իմ մազերը աւելի կարծր են:

— Ձեր մազերը այնքան փափուկ են, որ ածելին ինչպէս սրւած է, այնպէս էլ մնում է:

— Չի կարող պատահել:

— Այո՛, ճշմարիտ է, Ձերդ Մեծութիւն:

— Այդպէս, ուրեմն, ասում ես ինքնասպանութիւն պիտի գործես կարմիրներին չտեսնելու համար:

— Այո՛, Ձերդ Մեծութիւն, ես նրանց ատելով ատում եմ, նրանք կողոպտիչներ են, մարդասպաններ և գողեր:

— Երբ կարմիրները այստեղ էին, նրանց ինչո՞ւ խոսք չէիր հասկացնում,— կատակեց զօրավարը:

— Նրանց ժամանակ ձայն-ծպտուն կարո՞ղ էինք հանել, Ձերդ Մեծութիւն. նրանք շա՜տ խիստ էին, շա՜տ դաժան: Ես մարդիկ գիտեմ, որոնք գնդակահարւեցին գետնախնձոր գողանալու համար:

— Իսկ սոխի ու սխտորի գողերը չէի՞ն գնդակահարւում:

— Մարդիկ նրանց համար սոխեր են, որոնց գլուխը կարելի է միայն թողնել և էն էլ ինչպէ՜ս,— պատասխանեց սափրիչը՝ քաջալերւած զօրավարի կատակներից:

304-2002 (524-59)

— Դու կարմիրներին չես հաւանում, բայց ասում են, որ նրանց մեծագոյն մասը սափրիչներ, կօշկակարներ և սայլապաններ են. այս ի՞նչպէս կը լինի:

— Նրանց մէջ, Ձերդ Մեծութիւն, ամէն տեսակ թափթփուկներ կան, բայց սափրիչները՝ սակաւ: Մեր արհեստին պատկանող մարդը չեզոք պիտի մնայ:

— Բայց դո՛ւ, այս րոպէիս, չեզոքութիւնը խախտում ես, այդ լաւ չէ,— նորից կատակեց զօրավարը:

— Ներեցէ՛ք, Ձերդ Մեծութիւն, տգէտ մարդիկ ենք, մեր խօսածն ու արածը չդիտենք:

— Թւում է, թէ աչ քունքիս մազերը աւելի երկար են,— ընդմիջեց զօրավարը՝ հայելի նայելով:

Սափրիչը մի քանի անգամ դիտեց նրա աչ ու ձախ քունքերը, ածելին նորից սրեց, օճառեց աչ քունքը և ուզում էր գործի անցնել, երբ զօրավարի համհարզը ներս մտնելով յայտնեց, որ մի կին խնդրում է Նորին Գերազանցութեան տեսակցութիւնը:

— Թող սպասի՛,— հրամայեց զօրավարը:

— Լսում եմ,— ասաց համհարզը և կրունկի վրայ դառնալով, աչ ոտքը ձախին խփելով՝ դուրս ելաւ:

Սափրիչը ածելու մի քանի թեթև խաղեր կատարեց զօրավարի չորրորդ անգամ ածիլւած երեսին և, սրբիչները վերխելով, սկսեց նրան օծել անուշահոտ իւղով և թանկագին փոշի քսել:

Սափրիչը իր գործիքները հաւաքեց, իսկ զօրավարը գոհունակութեամբ սկսեց հագնուել: Նա, հակառակ իր սովորութեան, այդ տեսակցութիւնը ընդունեց առանց առարկութեան միմիայն նրա համար, որովհետև սափրուելուց յետոյ կնոջ հանդիպելը հաճելի առիթ էր համարում: Երբ զօրավարը արդէն պատրաստ էր և սափրիչը հեռացած՝ զանգահարեց:

— Ի՞նչ կին է և ի՞նչ է ուզում,— հարցրեց Դենխօվը, երբ նրա համհարզը արդէն սենեակումն էր:

— Բանտարկւած կոմիսարներից մէկի կինն է, Ձերդ Գերազանցութիւն, և չատ է խնդրում չմերժել տեսակցութիւնը:

— Ի՞նչ է ուզում:

— Եթէ հրամայէք, կարող եմ հարցնել, Ձերդ Գերազանցութիւն:

— Ինչո՞ւ է լինճ դիմում, թո՛ղ զնդապետին դիմի:

— Զգիտեմ, Ձերդ Գերազանցութիւն:

— Լա՛ւ, հրաւիրի՛ր ընդունարան:

— Լսում եմ:

Համհարզը դեռատի կնոջ առաջնորդեց զօրավարի ընդունարանը, որի պատերը զարդարւած էին Արքայական Տան անդամների և մի շարք իշխանների իւղաներկ պատկերներով: Մի քանի կլոր սեղաններ՝ մետաքսէ ծածկոցներով, մէկ դիւժին զսպանակաւոր և թաւշապատ թիկնաթոռներ, երկու ճօճաթոռ, սպիտակ արջի մուշտակներով, երկու նեղ ու երկար դռներ, խաչաձև փուած յատակին և մի քանի ծաղկի թաղարներ կահաւորում էին ընդունարանը:

Դեռատի կինը՝ անձանօթ վախով բռնւած՝ զգուշութեամբ նստեց թիկնաթոռի ծայրին:

— Լա՛ւ տեղաւորւեցէք, մի՛ վախենաք,— ասաց համհարզը կոտրտւելով,— զօրավարը չատ բարեհամբոյր է:

— Շնորհակալ եմ, այսպէս լաւ է,— պատասխանեց կինը՝ անմեղ նայւածքով:

— Դուք չատ բախտաւոր էք, տիկի՛ն,— ասաց սպան,— զօրավարը չէր ուզում ձեզ ընդունել, բայց ես խնդրեցի ու նա չմերժեց:

— Երախտապարտ եմ,— ասաց կինը, արեւստօրէն ժպտալով:

— Ցուցած վիճակ ունէք, տիկի՛ն, հանդարտւեցէք. ինչ խնդիր էլ որ ունենաք, չէք մերժւի, զօրավարը բարի մարդ է,— դարձեալ խօսեց սպան՝ ամէն կերպ աշխատելով հաճելի երեւալ:

— Զգիտե՛մ, բնաւ այսպէս չեմ եղել:

Միջանցքում լսւեց զօրավարի ոտնաձայնը:

— Արդէն գալիս է,— ասաց համհարզը՝ հալճեպ դիմելով դէպի դուռը:

Կնոջ դողը աւելի սաստկացաւ, ու ինքնաբերաբար ոտքի կանգնեց:

Զօրավարը, ներս մտնելով, բարևեց կնոջ և ձեռք մեկնելով՝ ասաց.

— Ինչո՞վ կարող եմ ձեզ օգտակար լինել:

— Ձերդ Գերազանցութիւն...

— Նստեցէ՛ք, խնդրեմ,— ընդմիջեց զօրավարը:

Կինը նստեց առաջւայ դիրքով և անհամարձակ:

— Ձեզ լսում եմ, շարունակեցէ՛ք:

— Ձերդ Գերազանցութիւն,— նորից սկսեց կինը,— եկել եմ ձեզ մօտ մի խնդիրքով:

— Այո՛:

— Ամուսինս ծանր յանցանքով բանտարկւած է, սակայն, բոլորովին զուր տեղ, միանդամայն զուր տեղ:

— Ի՞նչ յանցանքով,— հարցրեց զօրավարը՝ չդիտնալ ձևանալով:

— Մեղադրւում է իբրև կարմիր կոմիսար:

— Կարմիր կոմիսա՞ր...

— Այո՛:

— Է՛հ, ի՞նչ կարող եմ անել, տիկի՛ն,— ասաց զօրավարը ժպտալով և վաւաշոտ դիտելով դեռատի կնոջ կուրծքը, որ յուզումից բարձրանում, իջնում էր:

— Դուք ամէն բան կարող էք անել,— ասաց կինը,— նրա կեանքը կախւած է ձեր մէկ հրամանից:

— Նրա կեանքը չա՞տ թանդ արժի,— կատակեց զօրավարը:

Կինը, վոքր ինչ համարձակ, ասաց.—

— Ամէն կեանք թանդ արժի, նա հայր է և ամուսին:

— Ես, օրիորդ, հայր և ամուսին չե՛մ, և չե՛մ էլ լինելու. ի՞նչ էք կարծում, իմ կեանքը թա՞նդ արժի:

— Ամէն կեանք, Ձերդ Գերազանցութիւն, ամէն մի կեանք:

— Դուք շատ բարի էք և խելօք, տիկի՛ն, բայց ձեր ամուսինը ինչո՞ւ այդքան հասարակ բան չի հասկանում և իր գլուխը դրել է վտանգաւոր արկածների մէջ:

— Ես քաղաքականութիւնից չեմ հասկանում, բայց մի բան լաւ գիտեմ, որ իմ ամուսինն անմեղ է, զոհ է ուրիշներին,

նրա կործանումով մի ընտանիք է քայքայւում. ազատեցէք նրան, և ազատած կը լինէք մի ընտանիք:

— Խորապէս ցաւում եմ, տիկի՛ն, բայց ի՞նչ կայ իմ ձեռքը,— ասաց զօրավարը կեղծ ժպիտով,— ես միայն կարող եմ հրամայել և անել այն, ինչ որ օրէնքն ու արդարութիւնը թելադրում են, իսկ ձեր ամուսինը օրէնքի և արդարութեան հակառակ յանցանքի մէջ է: Եթէ իրօք զուր տեղ է ձերբակալւած, ինչպէս պնդում էք, անկասկած կ'ազատւի. իսկ հակառակ պարագային պիտի պատժւեն բոլոր նրանք, որոնք Մեծն Ռուսաստանի և նրա ժողովրդի չարհերին հակառակ են գործում:

Դեռատի կինը զուսպատ դիտում էր զօրավարի դէմքը, որի վրայ պարզ գծւած էին ամուրի և ծեր զինուորականի բոլոր դաժանութիւնները: Կինը այդ վայրկեանին մտածում էր այն մասին, թէ ինչո՞ւ համհարզը այնքան բարեմասնութիւններ չռայլեց զօրավարի հասցէին, երբ նա իրականի մէջ խիստ և դաժան մարդ է, իր բոլոր կիրքի և վայելուչ չարժումներով:

— Համաձայն չէ՞ք ինձ, տիկի՛ն, ինչի՞ մասին էք մտածում,— ասաց զօրավարը, համոզւած, որ կինը իրեն չէր լսում:

— Համաձայն եմ, Ձերդ Գերազանցութիւն, բայց իմ ամուսինը արդար է, բոլորովին արդար,— պատասխանեց կինը՝ կերկերացող ձայնով:

— Ուրեմն, վստահ եղէ՛ք, որ անպարտ կ'արձակւի:

— Ո՞վ գիտէ,— ասաց կինը, անյոյս, արտասուք աչքերին:

— Ի՞նչ է ձեր ամուսնու անունը:

— Ալէքսանդր Մակարովիչ Մելիքով:

— Դուք, կարծեմ, ռուս չպիտի լինէք:

— Այո՛, մենք հայ ենք, բայց ռուսացած. ո՛չ ես և ո՛չ նա մէկ բառ հայերէն չդիտենք:

— Ո՞րտեղացի էք:

— Ղրիմցի:

— Ղրիմցի՞:

— Այո՛:

— Մի՞թէ այնտեղի հայերը իրենց մայրենի լեզուն չը-գիտեն:

— Շատ քիչեր գիտեն:

— Բայց դուք չէիք էք։
— Այո՛։
— Հայերը սեւ են։
Կինը ուսերը թոթուեց։
— Դուք չատ մաքուր ռուսերէն էք խօսում։
— Ես և ամուսինս ռուսական կրթութիւն ենք ստացել։
— Միայն միջնակա՞րդ։
— Նա իրաւաբան է։
— Ձինուոր եղե՞լ է։
— Պահեստի զինուոր։
— Ոչ մի աստիճան չունի՞։
— Ոչ մի աստիճան։
— Ուրեմն, սոսկական զինուոր։
— Այո՛, սոսկական զինուոր։
— Կարմիրների ժամանակ նա այստե՞ղ էր, ինչո՞ւ հեռացաւ։
— Զգիտեմ, Ձերդ Գերազանցութիւն, մի երեկոյ վիճեցինք, դուտ ընտանեկան հարցերի չուրջ, անից հեռացաւ ու էլ չտեսանք։ Միայն այս քանի օրս լսացանք, որ գտնուում է բանտում։
— Ուրեմն, անարժան ամուսին է և վատ մարդ։
— Ես դժբախտ աստղի տակ եմ ծնուած,— ասաց կինը՝ արցունքները սրբելով,— մենք դրեթէ ամուսնական կեանք չենք տեսել։ Մեր ամուսնութիւնից վեց ամիս յետոյ նա զօրակոչի ենթարկուեց, չորս տարի անընդհատ մնաց ճակատներում, հազար ու մի նեղութիւնների ենթարկուեց, հաւատարմութեամբ ծառայեց թագաւորին և ժողովրդին։ Երբ յեղափոխութիւն ծագեց, նա վերադարձաւ տուն, բայց արդէն վատառողջ, քայքայած ջղերով և կիսանորմալ։ Հայր էր, բայց զաւակը նրան չէր ճանաչում. դարձել էր մելամաղձոտ և անտարբեր, խորտակուած էր նրա մէջ ամէն հաւատք։ Զորս տարուայ կեանքը, կրակի և սարսափի կեանքը նրան բոլորովին փոխել էր, անճանաչելի դարձնելու չափ փոխել։ Իսկ ես ու նրա մայրը մխիթարում էինք այն յոյսով, որ այդ բոլորը ժամանակի ընթացքում կ'անհետանայ, և նա կը դառնայ նոյն ազնիւ, բարի և սիրող ամուսինն ու ընտանիքի հայրը։ Մենք յանցաւոր էինք,

մենք չկարողացանք նրա հետ վարուելու նոր կերպեր գտնել։ Եւ նա՝ հիասթափ ու յուսահատ ընկաւ ուրիշների ազդեցութեան տակ, ու այսօր, վոխանակ տանը լինելու, մեզ հետ, իր ընտանիքի մէջ, նստած է բանտ հազար ու մի գոյնի մարդկանց ընկերակցութեամբ։ Սարսափելի և անըմբռնելի է այս բոլորը... Երբ այդքան երկար բաժանումից յետոյ նա վերադարձաւ, ասացինք՝ վերջացան դժբախտ օրերը։ Բայց ահա՛ նոր քամբախտութիւն, նոր տառապանք ու նոր բաժանում։ Այս ամենը ե՞րբ պիտի վերջանայ, ի՞նչպէս պիտի վերջանայ, Տէ՛ր Աստուած, Տէ՛ր Աստուած...

Ու կինը դառնօրէն հեկեկաց։

Զօրավար Դենիսովը անհանգիստ երթևեկում էր։ Նա խռովայոյզ էր ոչ թէ նրա համար ,որ մի կնոջ ու մի տառապած մօր արցունքները թրջում էին նրա սենեակի յատակը, այլ լոկ այն պատճառով, որ այդ արցունքները տկարութեան յայտարար էին. իսկ նա ատում էր տկարներին իր զինուորական դաժանութեամբ։ Կինը չարունակում էր աւելի և աւելի դառնագին լալ. նա մոռացել էր ամէն բան. նրան թւում էր, թէ մի հսկայ ծանրութիւն է դնում իր տկար ուսերից, արցունքի մէջ սրտի թեթևութիւն էր զգում, իսկ իր հոգու վրայ՝ խաղաղութիւն։

— Չե՛մ հասկանում, տիկի՛ն, ի՞նչ կարիք կայ արտասւել մի մարդու համար, որը այնքա՜ն անպիտան է, անպարտաճանաչ և արհամարհելի,— ասաց զօրավարը, կանգնելով տիկնոջ կողքին։

Կինը, որ մինչ այդ զուսպ խնայողութեամբ էր արցունք թափում, լսելով զօրավարի խօսքերը՝ բաց արաւ իր սրտի դռները ու խեղդուեց արտօսրի մէջ։

Որսի սպասող հին գայլը, տարփաւոր ղողոջքով ձեռքը դրեց կնոջ ուսին և ասաց կատակով.

— Դուք, որ այդքա՜ն սիրում էք ձեր ամուսինը, գոնէ դրա կէսի չափ փոխադարձութիւն գտե՞լ էք։

Կինը կարծես չզգաց նրա ձեռքի հպումը և չլսեց նրա խօսքերը։ Ծեր տարփաւորի փորձը յաջող էր։ Տեսնելով, որ կինը համակերպութիւն է ցոյց տալիս, զօրավարը կրքի սաստուով բռնեց նրա ծնօտը և համբուրեց ճակատը։ Կինը գայթացած ոտքի կանգնեց, մէկդի հրեց զօրավարին և սրբելով

արցունքները, մի քայլ առաւ դէպի դուռը: Զօրավարը նրան կանչնեցրեց և ասաց.

— Պատուոյ խօսք եմ տալիս, որ ձեր ամուսինը՝ ինչ դնով էլ լինի՝ պիտի ազատ արձակեմ:

Այժմ կինը իրեն խնդրարկուի դերում չէր զգում, այլ մի անիրաւած պահանջատէր, որ ընդունակ է դեռ ներելու և սպասելու:

— Բայց ե՞րբ,— ասաց կինը ամօթխած և դլխահակ:

— Այդ երկար չի տեւի:

— Բոլոր տղամարդիկ, լինեն նրանք բարձրաստիճան, հասարակ, ազնւական թէ ռամիկ, միևնոյնն են, նոյն վատութեամբ և թուլութիւններով:

— Այդ ի՞նչ էք ասում, տիկի՛ն,— ասաց զօրավարը՝ ժպտալով և կնոջ ձեռքը վերցնելով:

— Այդպէս է, ինչո՞ւ չասել:

— Այսինքն:

— Դուք լաւ էք հասկանում,— ասաց կինը, իր ձեռքը զօրավարի ձեռքից քաշելու թոյլ փորձով:

— Հետաքրքիր բան էք ասում, բայց իրար պէտք է հասկանանք:

Կինը չպատասխանեց:

— Խնդրում եմ նստել,— ասաց զօրավարը, առաջինը ինքը նստելով:

Կինը անշարժ էր և հայեացքը միևնոյն կէտին:

— Համեցէք նստել:

Կինը հնազանդւեց՝ առանց զօրավարին նայելու:

Ու զօրավարը, անյայտ դողով բռնւած, թիկնաթոռը մօտեցրեց կնոջը:

— Ապա՝ բացատրեցէ՛ք, ի՞նչ ակնարկութիւն էր:

— Ի՞նչը,— հարցրեց կինը, իբր չհասկանալով:

— Թէ բոլոր տղամարդիկ հաւասար են, նոյն վատութիւնով և թուլութեամբ:

— Ձեզ վայե՞լ բան է այդպէս անել,— ասաց կինը պարտւած զօրավարին:

— Ես մեղաւոր չեմ, բնութիւնն է մեղաւոր:

— Բնութի՞ւնը:

— Այո՛, բնութիւնը:

— Ես կարծում էի, թէ զինուորականները ասպետական հոգի ունեն և թոյլերին պաշտպան:

— Զէ՛ք սխալւել:

— Այսօր հասկացայ, որ սխալւած եմ:

— Ի դո՛ւր, տիկի՛ն,— ասաց զօրավարը՝ պաշտպանւելու ուրիշ խօսք չգտնելով:

— Ի՞նչ կեանք էք ստեղծել, անվերջ կռիւ, սպանութիւն, վոխ–վրէժ, արիւն արցունք, մի՞թէ մարդավայել բան է:

— Միանգամայն արդարացի և խելօք էք դատում,— ասաց ծեր զօրավարը, նորից դեռատի կնոջ ձեռքը վերցնելով:

— Բոլորդ այդպէս էք խօսում, բայց այլ կերպ վարւում:

— Այդ եւս ճշմարիտ է,— ասաց զօրավարը,— եկէ՛ք ամբողջ իշխանութիւնը և քաղաքականութիւնը յանձնենք ձե՛ղ, կիներիդ և աշխարհը կը խաղաղւի:

Կինը ժպտաց:

— Այո՛, ես ուրախութեամբ այդ կ՚անեմ, մենք՝ զինուորականներս՝ ձանձրացել ենք, վայրենացել:

— Թողէ՛ք,— ասաց կինը, երբ զօրավարը փորձ արաւ նրան զրկելու:

— Իմ պաշտօնը դո՛ւք վարեցէք:

— Կանայք անընդունակ են այդ դաժանութեան:

— Ի՞նչպէս:

— Շատ պարզ— ձեր պաշտօնը և դիրքը արիւն և արտասուք են պահանջում:

— Ջուր չէ՛, որ կարմիր կոմիսարի կին էք,— ասաց զօրավարը ժպտալով և կնոջ գրկելով:

Կինը դիմադրութիւն ցոյց չտւեց, որովհետև զօրավարի վերջին խօսքերը նրան դինաթափ արին: Նա զգաց, որ իր համարձակութիւնը աննպաստ տպաւորութիւն է թողնում և հակառակ արդիւնք տալիս: Բայց դերակշռութիւնը զօրավարից խլելու համար՝ կինը մէկ չարժումով վեր ելաւ և հազիւ լսելի ձայնով ասաց.

— Քանի որ դուք ինձ վիրաւորում էք, հաւատացած լինելով, որ իմ ամուսինը կարմիր կոմիսար է, ես այլևս ձեզ

խնդրելու բան չունեմ. եթէ արդարութիւն կայ այս աշխարհում և Աստուած՝ երկնքում, ամէն բան թողնում եմ նրան:

Զօրավարը, անկնկալի եկած, նոյնպէս ոտքի ելաւ և մեղմ ու սիրալիր ժպիտով՝ ասաց.

— Ներեցէ՛ք, տիկի՛ն, ներեցէ՛ք, ես կատակեցի, բնաւ նպատակ և միտում չունեմ ձեզ վիրաւորելու:

— Ո՛չ, Զերդ Գերազանցութիւն, ձեր խօսակցութիւնից երևում է, որ դո՛ւք, չնորհիւ ձեր ստորադաս պաշտօնեաների, համոզուած էք, թէ իմ ամուսինը կոմիսար է, թէ ես և մեր ընտանիքը դործակից ենք այդ թալանչիներին, այդ աներեւակայելի մարդասպաններին:

— Ձեզ պատուոյ խօսք տւի նրան ազատել և իմ խօսքի տէրն եմ. դեռ աւելին՝ անդամ եթէ քննութիւնը և դատավարութիւնը պարզեց, որ նա կոմիսար է և կամաւոր կարմիր, համոզուած եղէ՛ք, որ ձեր ամուսինը կ'ազատուի:

— Շնորհակալ եմ, Զերդ Գերազանցութիւն, դուք, իրօք, ազնիւ էք և ասպետական հոգու տէր, ես ևս ներողութիւն եմ խնդրում, ձեզ վիրաւորելուս համար:

— Ձեզ մի՛չտ կարելի է ներել, տիկի՛ն, դուք դեռ չատ երիտասարդ էք:

— Զգացւա՛ծ եմ, Զերդ Գերազանցութիւն:

— Ուրեմն, դործի անցնելով, ձեզ խորհուրդ կուտամ մի խնդրագիր գրել իմ անունով և յանձնել այն չտաբի պետին:

— Բայց ի՞նչ գրեմ:

— Գրեցէք, թէ ձեր ամուսինը չորս տարի ծառայել է թագաւորին հաւատարմութեամբ և տուն է վերադարձել միայն յեղափոխութիւնից յետոյ: Ցիշատակեցէք նաև, որ մի քանի անդամ վիրաւորւել է, ապաքինւել, նորից ճակատ մեկնել, ինչպէս և աւելորդ չէ գրել, որ չորս տարւայ պատերազմի մէջ կորցրել է իր առողջութիւնը, դարձել է ջղային, կիսանորմալ և դիւրաբորբոք. բացի այդ `ընդդծեցէք, որ տան միակ նեցուկն է:

— Այդքա՞ն միայն:

— Կարծեմ՝ բաւական է:

— Շատ չնորհակալ եմ:

— Բայց այս մասին ոչ ոքի չպատմել:

— Շատ լաւ:

— Գիտցէ՛ք, որ ապօրինութիւն եմ անում, և այդ բոլորը միայն ձեզ համար, տիկի՛ն, միայն ձեզ համար:

— Երախտապարտ եմ, Զերդ Գերազանցութիւն:

— Ցետոյ,— չարունակեց զօրավարը, աւելի մօտենալով կնոջը,— այստեղ պատահածների մասին նոյնպէս պէտք է մոռանալ: Ձիշդ է, ես ինձ թոյլ տւի իշխելու ձեր աստիճանին, բայց այդ արի՛, որովհետև դեղեցիկ էք և դիւրեկան: Հաւատացած եղէ՛ք, տիկի՛ն, որ իշխանութիւններ են ալքատացել իմ չորս կողմը, բայց ես հպարտ եմ նման խոստովանութեան. սակայն, ձեզ արի՛, որովհետև հաւատացած եմ, որ այս ամէնը մեր մէջ կը մնայ:

Կինը խաղալով իր մատների հետ, դլխահակ լսում էր զօրավարի ասածները և չամառում որևէ խօսք ասել:

— Դէ՛, ուրեմն, մնաք բարով,— ասաց զօրավարը և, կնոջը առնելով իր թևերի մէջ, մի քանի անդամ կրքոտ համբուրեց նրա ծոծրակը, որի վրայ անխնամ ընկած էին դլխարկից դուրս մնացած երկու փունջ մազերը:

— Խնդրագիրը ձեր անունով գրեմ և չտաբի պետին յանձնեմ, այդպէս չէ՞,— հարցրեց կինը՝ չեկացած դէմքի քրտինքը սրբելով:

— Այո՛, միանդամայն հասկացել էք:

— Լա՛ւ:

— Այո՛:

— Նախընտրելի է, որ դուք գրէք, փառք Աստուծոյ, ռուսերէն դիտէք և ռուսական կրթութիւն ունէք:

— Կարելի է:

— Պատասխանի համար, աշխատեցէք ինձ տեսնել:

— Շատ՞ը դամ:

— Ո՛չ, այստեղ, ազատ եմ երեկոյեան պահերին:

— Բայց ո՞ր ժամերին:

— Թէյի ժամանակ, ժամը վեցից մինչև ութը:

— Ամէն օր այդ ժամերի՞ն:

Զօրավարը դուռը բաց արաւ և հրամայեց համհարզին, որ ինքնաչարժը բերի, իսկ կնոջ դառնալով՝ յարեց.—

— Նորից ցտեսութիւն:

Երբ դեռատի կինը փողոց դուրս եկաւ, նրան թւաց, թէ մի ծանր բեռ է կրում իր ուսերին. նա չէր շտապում տուն հասնել և ամաչում էր մարդկանց նայել: Նորից անդրադառնալով այն բոլորին, ինչ որ կատարւեց զօրավարի ընդունարանում, նա կորուստ ունեցող մարդու ափսոսանք զգաց. սակայն, այն հանգամանքը, որ «այդ» մասին ոչ ոք գիտէր՝ նրան մխիթարութիւն էր պատճառում : Հասնելով քաղաքային պարտէզի ցանկապատին, նա ծանր յոգնածութիւն զգաց, և ուզում էր պարտէզ մտնել ու հանգստանալ, բայց տեսնելով իր երեխային տարեկից մի քանի մանչերի խաղը, անյայտ ցաւ և կարօտ զգաց: Ինքնաբերաբար երեսը շուռ տւեց և քայլերը ուղղելով դէպի յարակից նեղ ու անբանուկ փողոցը, սկսեց ինքն իրեն հաշիւ տալ:

— Անբիծ եմ ապրել,— մտածում էր նա,— չորս տարի համբերել և սպասել եմ նրա վերադարձին, եղել եմ օրինակելի կին և մայր, սիրել եմ նրան, և նոյն սիրով սիրում եմ. նրա կեանքը խորտակման վտանգի տակ է: Նա ինձանից զոհաբերութիւն չի պահանջում, բայց ես պարտաւոր եմ այդ անել. ես այժմ յօժար եմ իմ կեանքի գնով նրան ազատել. իսկ պատւոյ գնով նրան փրկելու մէջ ի՞նչ ծանր յանցանք կայ: Այսպէս մտածելով՝ նա իրեն երևակայում էր ծեր և վաւաշոտ զօրականի գիրկը, բոլորովին անձնատուր նրան— վստահացած նրա խօսքին ու խոստման: Բայց, ահա՛ խոր հիասթափութիւնը... Ամէն անպատւութիւն և ինքնազոհութիւն անելուց յետոյ՝ իր ամուսինը դատապարտւում է մահւան. սակայն, իր զոհաբերութեան գնով, պատիժը փոխւում է ցմահ տաժանակիր աշխատանքի կամ բանտարկութեան .չէ՞ որ դա էլ մի զիջում է, և զօրավարը ամենայն իրաւունքով կարող էր ասել՝—

— Տիկի՛ն, ձեր ամուսինը անխուսափելի մահւանից ազատեցի և նրա աններելի պատիժը սահմանափակեցի ցկեանս բերդարգելութեան, սրանից աւելի ի՞նչ էք ուզում:

Ո՛չ: Դեռատի կինը դրանով գոհ չէր: Նա կ'ուզէր, որ իր ամուսինը բոլորովին անպարտ արձակւի: Նրա յանցանքը ձեռքի մի շարժումով պէտք է ջնջւէր, մաքրւէր, նա իրեն զգար այնպէս, ինչպէս ապրել ու զգացել էր բանտարկութիւնից

առաջ: Այլապէս նա չէր կարող իրեն ներել՝ կրկնակի յանցանք գործելով: Ո՛չ, չէր կարող այդ անել և չպիտի անէր...

Ու կինը դառնօրէն ծիծաղեց, սարսուռ զգաց ինքն իր հանդէպ և բնազդօրէն հանելով թաշկինակը `ամուր կերպով սրբեց ծոծրակը, ճակատն ու երեսը: Եւ նրան թւաց, թէ մաքրեց այն սեւ բիծը, որ դրոշմւել էր իր ծոծրակին, ճակատին ու երեսին: Նա թաշկինակով հովհարեց դէմքը և անսահման թեթեւութիւն զգաց, մտաբերելով, որ ինքը դեռ անարատ է, անդաւաճան և անմատչելի:

Երբ կինը իրենց բնակարանի դուռը բացաւ և ներս մտաւ, նրա երեխան ուրախ ճիչով բացագանչեց.

— Մայրիկը, մայրիկը:

Նա խանդաղատանքով գրկեց զաւակը, սեղմեց կրծքին ու մի քանի անգամ համբուրելով՝ ասաց

— Շուտով հայրիկը տուն պիտի գայ, հայրիկը շուտով տուն պիտի գայ:

— Ի՞նչ եղաւ, տեսա՞ր զօրավարին,— հարցրեց նրա սկեսուրը անհամբեր:

— Տեսայ, խնդրագիր պիտի գրեմ,— պատասխանեց կինը՝ յոգնաբեկ ընկնելով թիկնաթոռի մէջ:

III

Բանտը այնքան ծեր է որքան մարդկութիւնը. նա անձեռնմխելի հիմնարկութիւն է բոլոր ժամանակների և մարդկային բոլոր սերունդների համար. առանց նրան մարդիկ չուզեցին և չեն ուզում ապրել. Թէ՛ պատերազմի և թէ՛ խաղաղութեան ժամանակ, թէ՛ ազատութեան և թէ՛ բռնութեան ատեն, բանտը մնացել է և մնում է նոյնը, յարատև, անփոփոխ: Բանտը մահւան պէս սարսափելի և նրա չափ անխուսափելի է. որովհետև մարդիկ արհամարհելով բնական օրէնքները՝ ապրում են արւեստական կանոններով: Ամէն ինչ ժամանակի ընթացքում կերպարանափոխւել է, մարդն էլ շա՛տ ու շա՛տ է փոխւել. բայց նա անկարող է եղել մի չիւղ անգամ փոխել

այն դորչ տնից, ուր չղթայում է մարդկային ազատութիւնը:

Մարդը նոր կրօններ ու պաշտամունքներ ստեղծեց, եկեղեցիների տեղ դպրոցներ է բարձրացնում, աղբանոցները պարտէզների վերածում, գետերի և ծովերի ընթացքը չրջում, ու հիմա ազատ ճախրում է օդի մէջ և համարձակ քայլում է ջրերի տակ: Այս ամենը նա արել և անում է իր մտքի թռիչքով, իր կամքի ուժով և իր հաճոյքի համար. բայց նա մնացել է նոյն ստրուկը, հին բռնակալն ու գազանը: Նա կոյր է, ազատութիւնը արգելարաններով է չափում և կեանքը տեսնում է միայն արիւնի և սպանդների մէջ: Եւ դրա համար է, որ այդ անկար և անազատ կենդանին ցարդ չի կարողացել քանդել բանտը և նրա փլատակների վրայ ծաղկանոց տնկել՝ ազատութեան ծաղիկներով, կեանքի երգը երգել՝ եղբայրութեան դիւնով ու յաւիտենականութեան ձայնը լսել՝ անմեռ հաւատքով:

Սակայն, մարդկային պատմութեան մէջ բանտը այնքան ուժ և կարողութիւն չէր ստացել, որքան առանձին ուժ և կարևորութիւն ստացաւ սրանից տարիներ առաջ, երբ մուժիկների երկրում ծայր տւին ու բուռն թափ ստացան քաղաքական կռիւները: Ինչպէս միշտ, այս անգամ էլ, ոչ ոք անբնական չէր համարում, թէ ինչպէս միլիոնաւոր բանական արարածներ, որպէս հօտ, քշւում էին դէպի բանտերը, հին ու նոր օրէնքներով դատապարտւում և իրենց յանցանքը քաւում սպանդանոցներում, անմռունչ և անբառբառ: Բանտը երբեք չէր տեսել այնքա՜ն չռայլութիւն և ճոխութիւն, որքան նա ականատես եղաւ մուժիկների և ցարերի երկրում: Անգամ այն բանտերը, որոնք դատաւորական խղճուկ անցեալ ունէին ու հասարակ դողերից և մարդասպաններից բացի ուրիշ այցելուներ չէին տեսել, այժմ նոր յանցանքներով, նոր դէմքեր էին հիւրընկալում, առանց դասի, ազգի, սեռի ու հասակի խտրութեան:

Այդպիսի պատկեր էր ներկայացնում նաև այն բանտը, ուր նստած էին մի խումբ ռազմագերի կարմիրներ իրենց կոմիսարներով, և այն գինուորները, որոնք չորս տարի անընդհատ կռւել էին տարբեր ռազմաճակատներում ու հիմա, ձանձրացած վառօդի ծխից և արեան հոտից, վճռել էին դէն չպրտել հրացանը: Երկու օր առաջ այնտեղ էին հասել նաև տասնեմեկ գինուոր և մէկ սպայ, որոնք ձերբակալւած էին այն պահուն, երբ նրանք, առաջաւոր դիրքերը լքելով, կամեցել էին անցնել կարմիրների ռազմաթօռին: Հին բանտարկեալներից չատ քչերն էին մնացել բանտում: Նրանցից քրէական ծանր յանցագործները, ճարպիկ և ուժեղ, կարողացել էին շղթաները փշրել ու դուրս գալ բանտից այն ժամանակ, երբ կարմիր և սպիտակ դնդերը սւինամարտ էին մղում քաղաքի փողոցներում: Շատերը նրանցից յաջողել էին փախչել կարմիրների հետ և այժմ կռւում նրանց շարքերում, իսկ ոմանք միացել էին Սպիտակ Բանակին ու մեկնել ռազմաճակատ: Սակայն, բանտը, անգամ այդ փոխանցման կարճ ժամանակամիջոցին, մէկ վայրկեան իսկ դատարկ չէր մնացել, ո՛չ նրանց օրով, որոնք արդարութիւնը տեսնում էին հին, տապալւած կարգերի մէջ և իրաւունքը՝ իրենց սուսերի ծայրը, և ո՛չ էլ այն մարդկանց ժամանակ, որոնք կռւում էին յանուն ազատութեան, տնտեսական հաւասարութեան և մարդկային սրբազղծւած իրաւունքների:

Նոր նշանակւած բանտապետը, որ արքայականների ժամանակ ամբողջ երեսուն տարի իր երիտասարդ լաւագոյն օրերը սպանել էր բանտերի պարիսպներից ներս, այժմ գործի վրայ էր: Նա, յեղափոխական ցասումից խուսափելով, մի կերպ կարողացել էր դուրս գալ մայրաքաղաքից և իրեն նետել Հիւսիսային Կովկասը, ուր համախմբւած էին սպիտակ ուժերը, իրենց վերջին ու վճռական մարտը մղելու համար:

Մի քանի ամիս էր, որ բանտապետը իր բովանդակ հմտութիւնը, փորձառութիւնը և անսպառ հունարը ի գործ էր դնում կանոնաւորելու բանտային կեանքը՝ վերահաստատելով հին, իրեն ծանօթ կարգն ու կանոնը. սակայն, ամէն բան այնպէս չէր ընթանում, ինչպէս ցանկանում էր: Բանտային կարգապահութիւնն ու խաղաղութիւնը, որին վարժւած էր ծեր բանտապետը, ամէն օր ու ժամ խանգարւում էր նորանոր ձերբակալութիւններով ու խճողումներով: Այդ նրան սարսափ էր ազդում. որովհետև նա զգում էր, որ հինը անվերադարձ անցել է, ժամանակները փոխւել, ինչպէս և փոխւել են մարդիկ ու նրանց սովորութիւնները:

Բանտապետը գինուորական իշխանութիւնից հրամանագիր էր ստացել, որով հրահանգւում էր նրան, խիստ հսկողութեան

տակ առնել ռազմագերի Կարմիրները, պարզ դասալիքները և փախչելու փորձ արած զինուորները իրենց սպայով: Հրամանագրի մէջ ասուած էր, որ այդ երեք կարգ բանտարկեալներից, որևէ մէկի փախուստի պարագային, ինքը, բանտապետը պատասխանատու լինելով՝ պատժուելու է զինուորական ժամանակի ամենախիստ օրէնքներով:

Այդ երեք խմբերից՝ կոմունիստները ողբերգական վիճակ ունէին. Նրանք հիւծուած էին և բազմատարազ. ոմանք միրուքով և գզգզուած մազերով, ուրիշները՝ ոտաբոպիկ և մէկ թէք կօշիկով: Նրանք իրենց համարձակ էին պահում, աղմկարար ու պահանջկոտ: Ընդամէնը տասնեւութ հոգի, որոնցից երեքը կոմիսար և մէկը՝ Արտակարգ Յանձնաժողովի կամ Չեկայի գործակալ: Ըստ ազգութեան՝ նրանցից երկուսը հայեր էին, չորսը՝ հրեաներ, երեքը՝ չինացիներ, մէկը՝ կալմիկ, իսկ մնացեալները ռուսեր: Միւս երկու խումբ կալանաւորները կրում էին անգլիական զինուորական համազգեստ և ռուս զինուորական գորշ փափախ՝ հին զինանշանով: Սրանք առողջ էին, ուրախ, բայց անհամարձակ ու մտախոհ: Որպէս կարգապահութեան վարժուած մարդիկ, նրանք անմռունչ հնազանդւում էին բանտային կարգ ու կանոնին և խուսափում աւելորդ արկածախնդրութիւնից, հաւատացած լինելով, որ դրանով ոչ իրենց դրութիւնը կը լաւանայ և ոչ էլ կարող են նոր կանոններ ներմուծել այդ հնամենի հիմնարկութեան մէջ, որի հիմերը հազարամեակների բորբոս՝ և տասնեակ հազարաւոր մարդկանց ոտքի փոշի էր տեսել:

Ներքին անդորրութեան տեսակէտից կարմիր ռազմագերիները ամենից վրդովւած վիճակ ունէին: Նրանք անխնայ և դաժան էին եղել հակառակորդների նկատմամբ և այժմ՝ պատկերացնելով գալիք անխուսափելի փոխադարձութիւնը՝ անհանգիստ էին, ջղային և կռուարար: Նրանցից իւրաքանչիւրը առիթ էր որոնում մէկի հետ վիճելու, կռուելու և բանտային վերատեսչութեան ուշադրութիւնն ու միջնորդութիւնը հրաւիրելու: Այդ բոլորը նրանք անում էին, որպէսզի ճնշող և ձանձրանալու չափ դանդաղ անցնող ժամանակը մի կերպ լցնեն ունայնութիւններով: Ամենից շատ նրանց ջղայնութիւն էր պատճառում այն, որ տասնեհինգ օրւայ մէջ դեռ չէր վճռուած իրենց ճակատագիրը,— մի երկար ժամանակամիջոց, որի ընթացքում կարելի էր մէկ մարդ տասնեհինգ անգամ գնդակահարել:

Այս տեսակէտից սպանիչ անհամբերութիւն և սպասողականութիւն էր ցուցահանում Չեկայի գործակալը: Նա իրեն զգում էր ասիական բանտում, ուր ամէն բան կատարւում է ծանր ու դանդաղ, ուր ժամանակի խնայողութիւն չկայ և ուր զոհերի հետ վարւում են այնպէս, ինչպէս մի մսագործ, զոհը իր ոտների տակ տապալած՝ հանդարտ դանակ է սրում, ծխում է կամ մի դէպք է պատմում իր հարեւանին: Այս ամենի մէջ նա հակամարդկայնութիւն էր տեսնում, ծաղր ու անպատուութիւն: Ինքն իրեն հակադրելով իսկական դահիճներին, գտնում էր, որ չա՛տ արդար և ազնիւ է վարուել այն բոլոր զոհերի հետ, որոնք գետին էին փռուել կռնակից հասցուած ատրճանակի գնդակից կամ կացինի հարուածից: Մտապատկերների յաջորդականութեամբ նա յիշեց մի մարդ, որի կեանքի րոպէները հաշուած էին: Նա մտաբերեց նաև, թէ ինչպէս այդ զոհը, սարսափով լի աչքերով, հարցրել էր.—

— Ինձ ո՞ւր էք տանում, ինչո՞ւ էք սպանում:

Իսկ նա, ամենայն հանդարտութեամբ՝ պատասխանել էր.—

— Ցիմա՛ր, ինչե՞ր էք դուրս տալիս, ձեզ տանում եմ քննութեան:

Ու երբ զոհը, անբարբառ համակերպութեամբ, կռնակը դարձնելով առաջ էր ընկել, ինքը ատրճանակի փողը դրել էր նրա ծոծրակին՝ մահը վայրկեանապէս փութացնելով:

— Շատ ես մտազբաղ, ընկե՛ր,— ասաց կոմիսար Մելիքովը, ձեռքը խփելով գործակալի ուսին:

Գործակալը սթափւեց, գլուխը թափ տուեց, ճնշող մտքերը վանելու փորձով: Եւ նայելով կոմիսարին, թէև խիստ ատելութիւն զգաց, բայց ինքնազսպումով պատասխանեց.—

— Ծարա՛ւ եմ, ընկե՛ր, ծարա՛ւ:

— Գիտե՛մ ինչ բանի ծարաւ ես,— ասաց Մելիքովը՝ քմծիծաղ տալով:

— Չէ՛, պարզապէս ծարաւ եմ,— ասաց գործակալը՝ վայրկեանապէս ըմբռնելով կոմիսարի ակնարկութիւնը:

— Թէյից մնացած գաղջ ջուր կայ, խմի՛ր, մինչև նոր

ջուր բերեն,— ասաց կոմիսարը՝ արդէն լուրջ և կարեկցաբար:

Ու գործակալը թէյնիկը վերցնելով՝ պապակած վիրաւորի պէս, ծծեց մնացած ջուրը մինչև վերջին կաթիլը:

— Դէ՛, հիմա ծխի՛ր,— ասաց կոմիսարը՝ առաջարկելով նրան ծխախոտ:

Ծխախոտը վերցնելով՝ գործակալը ոտքի ելաւ, ու կոմիսարի հետ անցան ընդարձակ սենեակի անկիւնը:

— Այս անգամ էլ եթէ ազատուեցինք, իմ անելիքը գիտեմ,— ասաց գործակալը՝ համարեա անլսելի:

— Ի՞նչ, կարծում ես, որ մեզ լուրջ վտա՞նգ է սպառնում,— հարցրեց Մելիքովը՝ նոյն դաւադիր փսփսուքով:

— Նախազգում եմ մահը:

— Հակայեղափոխութիւնը կորուկ չէ, նա վախկոտ է և կապուած հազար ու մի բարոյական աւանդութիւնների· նա ընդունակ չէ մեզ պէս մահավճիռներ արձակել ու գործադրել:

— Բայց յեղափոխութիւնը խախտել է հին մարդկանց բարոյական հասկացողութիւնները...համաշխարհային պատերազմն ու քաղաքացիական կռիւները կեանքը աժանացրել, ու մահուան ծանրութիւնը թեթեւացրել:

— Մասամբ, այո՛, բայց մենք ռազմագերիներ ենք:

— Անարժէք է· մենք կամովին կռւողներ ենք, իսկ մեր մղած պայքարը վրէժի կռիւ է, զերծ պատերազմական ընկալեալ սովորութիւններից և միջազգային օրէնքներից:

— Սակայն, ի նկատի ունեցիր, որ պատանդների հարցը թեթեւացնում է մեր պատիժը:

— Ի՞նչ, նոր լուր ունե՞ս:

— Այո՛, բայց զգո՛յշ,— ասաց Մելիքովը, աջ ու ձախ նայելով:

— Հետաքրքիր է՛:

Գործակալի մարած աչքերը լայնացան զարմանքից և հիացմունքից, ու նա հարցրեց.—

— Բայց ի՞նչպէս:

— Ինչպէս քեզ յայտնի է, այս շրջանը ինձ ծանօթ է: Ըստ մեր յեղափոխական սովորութեան և աչալրջութեան, Տիխորեցկայա աւանը թողնելու նախավերջին օրը, մենք մի գաղտնի խորհրդակցութիւն ունեցանք, որի ժամանակ, անողոք

վճռով, որոշեցինք մի քանի անկասկածելի ընկերներ թողնել Սպիտակ գծից ներսը: Այժմ նրանք կարողացել են կապ հաստատել Պետրոգրադում գործող մեր ընկերների հետ: Երեկոյեան, պահակ զինուորներից մէկը, որ այստեղ մնացած մեր ընկերներից է, արտաքնոցի ճանապարհին մի տոմսակ սահեցրեց գրպանս· ձեռագիրը ճանաչում եմ, գրողը նոյնպէս տեղումս մնացած մեր ընկերներից է և Սպիտակ զօրավարների սափրիչը:

— Իսկ ի՞նչ է գրում, ի՞նչ է գրած,— անհամբեր հարցրեց Չեկայի գործակալը:

— Գրած է, որ Հանքային Ջրերում ձերբակալուած են միապետական բանակի միտքը և կամքը կազմող յիսուն և ինը զօրավարները, պահուելով ամենախիստ հսկողութեան տակ, որպէս պատանդներ:

— Հիանալի է, հրաշալի է· ուրեմն, մեր գործը դեռ կորած չէ և մեր կեանքը վտանգից ազատ,— ասաց գործակալը՝ աւելի շուտ իր կեանքի ապահովութիւնից՝ քան յեղափոխութեան յաջողութիւնից մղուած:

— Խիստ գաղտնապահութեան մասին նորից խնդրելու կարիք չեմ զգում· որպէս յեղափոխական, դու այդ լաւ գիտես, բայց անհրաժեշտ եմ համարում ասել, որ քեզ պահես յեղափոխականի վայել տրամադրութեամբ և աննկուն կամքով: Մի քիչ առաջ, երբ մտասուզուած էիր, տեսքդ ճնշիչ տպաւորութիւն էր թողնում: Հարկաւ, այդ վատ կ'անդրադառնայ մեր երիտասարդ ընկերների վրայ, ու նրանք կարող են թուլութիւն ունենալ աննպաստ ցուցմունքներ տալու:

— Իրաւացի՛ ես, ընկեր, իրաւացի՛,— ասաց գործակալը,— բայց ես մի ահաւոր ծանրութիւն եմ զգում:

— Ինչո՞ւ, ի՞նչն է քեզ տանջում:

— Ես,— շարունակեց գործակալը,— իմ կեանքի ամբողջ ընթացքում այնքան չեմ տառապել, որքան այս տասն և հինգ օրը:

— Բայց ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ասա՛, մի՛ քաշուիր,— հարցրեց կոմիսարը՝ եղբայրական գուրգուրանքով:

Գործակալի դէմքը երկարեց, բարակեց, նրա այտերի ու ծնօտի մկանները սկսեցին դողդողալ, և նա ուզում էր բար-

ջուր բերեն,— ասաց կոմխարը՝ արդէն լուրջ և կարեկցաբար:

Ու գործակալը թէյնիկը վերցնելով՝ պապակած վիրաւորի պէս, ծծեց մնացած ջուրը մինչև վերջին կաթիլը:

— Դէ՛, հիմա ծխի՛ր,— ասաց կոմխարը՝ առաջարկելով նրան ծխախոտ:

Ծխախոտը վերցնելով՝ գործակալը ոտքի ելաւ, ու կոմխարի հետ անցան ընդարձակ սենեակի անկիւնը:

— Այս անգամ էլ եթէ ազատուեցինք, իմ անելիքը դիտեմ,— ասաց գործակալը՝ համարեա անլսելի:

— Ի՞նչ, կարծում ես, որ մեզ լուրջ վտա՞նգ է սպառնում,— հարցրեց Մելիքովը՝ նոյն դաւադիր փսփսուքով:

— Նախազգում եմ մահը:

— Հակայեղափոխութիւնը կորուկ չէ, նա վախկոտ է և կապած հազար ու մի բարոյական աւանդութիւնների. նա ընդունակ չէ մեզ պէս մահավճիռներ արձակել ու գործադրել:

— Բայց յեղափոխութիւնը խախտել է հին մարդկանց բարոյական հասկացողութիւնները...համաշխարհային պատերազմն ու քաղաքացիական կռիւները կեանքը աժանացրել, ու մահուան ծանրութիւնը թեթևացրել:

— Մասամբ, այո՛, բայց մենք ռազմագերիներ ենք:

— Անարժէք է. մենք կամովին կուռղներ ենք, իսկ մեր մղած պայքարը վրէժի կռիւ է, զերծ պատերազմական ընկալեաւ սովորութիւններից և միջազգային օրէնքներից:

— Սակայն, ի նկատի ունեցիր, որ պատանդների հարցը թեթևացնում է մեր պատիժը:

— Ի՞նչ, նոր լուր ունե՞ս:

— Այո՛, բայց գո՞յ չէ,— ասաց Մելիքովը, աչ ու ձախ նայելով:

— Հետաքրքիր է՛:

Գործակալի մարած աչքերը լայնացան զարմանքից և հիացմունքից, ու նա հարցրեց.—

— Բայց ի՞նչպէս:

— Ինչպէս քեզ յայտնի է, այս չրջանը լինճ ծանօթ է: Ըստ մեր յեղափոխական սովորութեան և աչալրջութեան, Տիխորեցկայա աւանը թողնելու նախավերջին օրը, մենք մի զաղանի խորհրդակցութիւն ունեցանք, որի ժամանակ, անողոք վճռով, որոշեցինք մի քանի անկասկածելի ընկերներ թողնել Սպիտակ գծից ներսը: Այժմ նրանք կարողացել են կապ հաստատել Պետիդորսկում գործող մեր ընկերների հետ: Երեկոյեան, պահակ զինուորներից մէկը, որ այստեղ մնացած մեր ընկերներից է, արտաքնոցի ճանապարհին մի տոմսակ սահեցրեց գրպանս. ձեռագիրը ճանաչում եմ, գրողը նոյնպէս տեղումս մնացած մեր ընկերներից է և Սպիտակ գօրավարների սակրիչը:

— Իսկ ի՞նչ է գրում, ի՞նչ է գրած,— անհամբեր հարցրեց Զեկայի գործակալը:

— Գրած է, որ Հանքային Ջրերում ձերբակալուած են միապետական բանակի միաքը և կամքը կազմող չխուն և ինը զօրավարները, պահելով ամենախիստ հսկողութեան տակ, որպէս պատանդներ:

— Հիանալի է, հրաշալի է. ուրեմն, մեր գործը դեռ կորած չէ և մեր կեանքը վտանգից ազատ,— ասաց գործակալը՝ աւելի շուտ իր կեանքի ապահովութիւնից՝ քան յեղափոխութեան յաջողութիւնից մղուած:

— Ինչ որ գաղտնապահութեան մասին նորից խնդրելու կարիք չեմ զգում. որպէս յեղափոխական, դու այդ լաւ գիտես, բայց անհրաժեշտ եմ համարում ասել, որ քեզ պահես յեղափոխականի վայել տրամադրութեամբ և աննկուն կամքով: Մի քիչ առաջ, երբ մտասուզուած էիր, տեսքդ ճնշիչ տպաւորութիւն էր թողնում: Հարկաւ, այդ վատ կ'անդրադառնայ մեր երիտասարդ ընկերների վրայ, ու նրանք կարող են թուլութիւն ունենալ աննպատակ ցուցմունքներ տալու:

— Իրաւացի՛ ես, ընկեր, իրաւացի՛,— ասաց գործակալը,— բայց ես մի ահաւոր ծանրութիւն եմ զգում:

— Ինչո՞ւ, ի՞նչն է քեզ տանջում:

— Ես,— չարունակեց գործակալը,— իմ կեանքի ամբողջ ընթացքում այնքան չեմ տառապել, որքան այս տասն և հինգ օրը:

— Բայց ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ասա՛, մի՛ քաշւիր,— հարցրեց կոմխարը՝ եղբայրական գուրգուրանքով:

Գործակալի դէմքը երկարեց, բարակեց, նրա այտերի ու ծնօտի մկանները սկսեցին դողդողալ, և նա ուզում էր բար-

ձրաճայն հեկեկալ ,երբ կոմխսար Մելիքովը նրա թևը բռնած՝ ասաց.—

— Զսպի՛ր քեզ և լսի՛ր մի ուրիշ նորութիւն:

Զեկխատը, փրկութեան սպասող մարդու անհամբերութեամբ, գլուխը վեր բարձրացրեց և ուղիղ նայելով կոմխսարի աչքերին, ասաց.—

— Պատմի՛ր, չա՞տ պատմիր:

Կոմխսար Մելիքովը լուրջ տեսք ընդունեց և, աւելի մօտենալով գործակալին, ասաց.—

— Եղբա՛յր, նորութիւն չունեմ քեզ յայտնելու. ես մի այն ուզեցի անակնկալով ցրել վիշտդ:

— Լաւ հոգեբան ես,— ասաց գործակալը, դառն ժպտալով:

— Սակայն, կ՚ուզէի քեզ հետ աւելի մտերիմ լինել,— շարունակեց Մելիքովը,— և այդ ոչ թէ նրա համար, որ ինձ հետաքրքրում է մի ընկերոջ, դաշտիարակից ընկերոջ, անհատական կեանքը, ո՛չ, բոլորովին ո՛չ, այլ նրա համար, որ կարողանայի մասնակից և բաժնեկից լինել այն տառապանքին, որ դու ունես,— տառապանք, որին մարդիկ չատ յաճախ են ենթարկւում, բայց անդիտակ են նրա սկզբնապատճառներին: Ես հին յեղափոխական եմ: Դեռ ուսանող ժամանակից անից աւելի բանտ եմ տեսել. նստել եմ հազար ու մի տեսակ յանցագործների հետ, որոնց ընկերակցութիւնը սկզբում մահացու տանջանք է թւացել. բայց երբ խօսել—մտերմացել ենք, նրանց չարքում մարդիկ եմ տեսել, որոնք պատկառանք ու յարգանք են ազդել ինձ, ու մենք հետագայում դարձել լաւագոյն բարեկամներ: Այժմ մենք նոյն դաշտիարի համար բանտ ենք նստած, անորոշ ճակատագրով: Կան մարդիկ, որոնց բանտը աղնւացնում է. կան և ուրիշներ, որոնք իրենց մարդկային առաքինութիւնները թաղում են այնտեղ: Դու անփորձ երիտասարդ ես և պատկանում առաջին կարգի մարդկանց: Այս է պատճառը, որ ես կ՚ուզէի քեզ մտերիմ լինել և մասնակից՝ քո ապրումներին:

Զեկայի գործակալը, որ պարզ արտայայտութեամբ և համակրելի դէմքով երիտասարդ էր, ծայրայեղ լարւածու-

թեամբ ունկնդրելով Մելիքովին, և բոլորովին զինաթափ նրա խօսքերից՝ ասաց.—

— Տեսնում եմ, ընկե՛ր, որ քո մէջ աւելի չատ մարդն է խօսում, քան յեղափոխականը, և ուրախ եմ ասելու, որ յեղափոխութեան փոթորիկը դեռ չի գռեհկացրել քո մարդկային լաւագոյն գծերը: Ես այդպէս չեմ. յեղափոխութիւնը, որպէս ահարկու հեղեղ, իմ հոգուց սրբել-տարել է այն ամենը, ինչ որ մարդկային է. իմ մէջ մնացել է միայն և միայն անասնականը, և այդ կատարւել է աստիճանաբար, անզգալաբար: Ես ժամանակ չեմ ունեցել անդրադառնալու ինքս ինձ և միշտ թւացել է, որ ես նոյն մարդն եմ: Այս տասն և հինգ օրւայ մէջ ես առիթ և ժամանակ ունեցայ ինքնասուգման և ինքնաքննադատութեան և տեսայ, որ ես մի հրէշ եմ, ընդունակ ամէն վատ բանի:

Ես բժշկական կիսաւարտ ուսանող եմ: Քաղաքականութեամբ չեմ զբաղւել, յեղափոխական միտումներ չեմ անուցել. մի դժբախտ ընտանիքի զաւակ, նիւթական ահաւոր զրկանքներով: Ես դեռ աշակերտ էի, երբ հայրս ինքնասպանութիւն գործեց, մայրս մեռաւ մելամաղձոտութեան մէջ, իսկ քոյրս, որ մայրական դուրգուրանքով էր լինձ պահում, սայթաքեց և ընկաւ Մոսկւայի անառականոցները: Ու ես բոլորովին մենակ մնացի: Քոյրս թունաւորւեց անառականոցում, և այդ լինձ վրայ այնպիսի խոր տպաւորութիւն թողեց, որ ես մի քանի անգամ անյաջող փորձարի ինքնասպանութիւն գործելու: Այս ամենից յետոյ ունայնութիւն իջաւ վրաս, այլևս անիմաստ զգայ ուսումս շարունակելը: Այդ պատահեց յեղափոխութիւնից մի քանի ամիս առաջ: Ծագեց յեղափոխութիւնը, ընկայ նրա ամենակուլ հոսանքի մէջ, ու իմ կեանքը նոր թափ ու ընթացք ստացաւ:

Յեղափոխութեան մէջ առաջին անգամ զգացի, որ կեանքը այնքան էլ ունայն և պարապ չէ, ինչպէս ենթագրում էի: Ինձ թւում էր, որ իրական կեանքը ոչ թէ այն էր, ինչ որ ես ապրել էի, այլ այն, ինչ որ ապրում էի: Դրա համար էլ իմ մէջ մի անհաչտ զգացում ծնունդ առաւ հանդէպ այն բոլորի, որոնք այս կամ այն կերպ աշխատում էին վերականգնել անցածը, հինը: Այլ խօսքով, հակայեղափոխականները դարձան

լինձ համար վնասակար մրջյուններ, որոնց ոչնչացնելու համար ոչ միայն ափսոսանք չէի զգում, այլ խորապես հաճույք էի ստանում: Եթե հնացած խօսքով արտայայտելու լինենք, այս անզթութիւնը նախայեղափոխական հետքեր ունի իմ մէջ: Ուսանող ժամանակ, անդամագրնուԹեան վորձերին առանձին հաճոյքով էի զնում, իսկ չոր տեսուԹիւնը սպանիչ ձանձրոյԹ ու յոգնածուԹիւն էր պատճառում: ՑեղափոխուԹեան մարտիկ եմ, իսկ հակայեղափոխականները լինձ զահիճ են անւանում: Դրանցից ո՞րն է ճիշդը, ես լինքս չգիտեմ: Բայց ես գիտեմ մի բան — և դա ճշմարիտ է,— Թէ այս և Թէ այն՝ զատարկ, անցաւոր բաներ են:

Իմ մէջ բեկում է առաջ եկել և դրա սկզբնապատճառը ձերբակալուԹիւնն է: Ես սարսափելի վախենում եմ. վայրկեաններ են լինում, երբ լինձ Թւում է, Թէ մատներով չօշափում եմ մահը և դէմքով զգում նրա ցուրտ շնչառուԹիւնը: Մահն լինձ սարսափ է պատճառում ոչ նրա համար, որ կեանքի հետ այնքան սերտ կապով եմ կապւած, այլ նրա համար, որ իբր Թէ լինձ ուղարկում եմ այնտեղ, ուր ես անխուսափելի կերպով պիտի հանդիպեմ նրանց, որոնք ընկել են իմ ձեռքով:

— Դատարկ երևակայուԹիւններ,—ընդմիջեց Մելիքովը:

— Զգիտե՛մ, չգիտե՛մ,— շարունակեց զործակալը,— այդ բոլորը լինձ իրական է Թւում, այնքա՞ն ճշմարիտ, ինչպէս ես ու դու կանգնած խօսում ենք:

— Անցածի մասին չատ ես մտածում և զո՞ւր տեղ:

— Կուզէի չմտածել, կուզէի մոռանալ այդ ամենը, բայց չե՛մ կարող, չե՛մ կարող, հասկանո՞ւմ ես, ընկե՛ր, չե՛մ կարող, ես մարդ եմ:

— Հանդարտւի՛ր, հանդարտւի՛ր,— ասաց Մելիքովը, երբ տեսաւ, որ զործակալը սկսեց յուզւել ու ձայնը բարձրացնել:

— Թո՛ղ լինձ ազատեն, ես մարդասպան չեմ. լինչո՞ւ են բռնել, լի՞նչ բանի համար. մի՞Թէ մենակ ես եմ մարդ սպանել, ձեզանից ո՞վ չի սպանել,— ասաց զործակալը մի այնպիսի զայրոյԹով ու բարկուԹեամբ, որ յատուկ է միայն անմեղ, բայց զրպարտւած մարդկանց:

— Ֆե՛զ, մե՛զ և բոլորիս, որ ձերբակալել են, հօ մարդասպանուԹեան համար չէ, ինչե՞ր ես ասում,— պատասխանեց Մելիքովը, քմահաճ երեխաներին հանդարտացնելու եղանակով:

— Այդ ուրիշ բան է՛, ոչինչ ունեմ ասելու:

— Ի հա՛րկէ, այդպէս է, մենք քաղաքական յանցաւորներ ենք, և այդ պատիւ է բերում ամէն մի ազնիւ քաղաքացու:

— Բայց ի՞նչ ես կարծում, ընկեր կոմխար, լինձ կը ներե՞ն,— հարցրեց զործակալը՝ յայտնապէս անհաւասարակչիռ մարդու միամտուԹեամբ:

— Մեղանից ոչ ոք չի պատժւի. իսկ եԹէ կայ մէկը, որ առաջին հերԹին պիտի արդարանայ, այդ դու ես,— ասաց Մելիքովը՝ համոզւած լինելով, որ իր խօսակիցը յիմարուԹեան բացայայտ նշաններ է ցուցահանում:

— Ես էլ այդպէս եմ կարծում,— հաստատեց զործակալը և ուզում էր խօսքը շարունակել, բայց Մելիքովը նրան ընդմիջելով՝ յարեց.—

— Տեսնենք՝ ի՞նչ են անում մերոնք այդպէս համախըմբւած: Գնա՛նք այնտեղ:

Նրանք մօտեցան խռնւած բանտարկեալներին: Երեք չինացիները, պզպզած՝ իրենց ձեռնաձուի ամբողջ հմտուԹիւնը հրապարակ էին դրել զարմացնելով բանտարկեալները: Նրանցից մէկը, ռուս զինուորի երեք վախախ յատակին դրած ու իւրաքանչիւրի տակ մէկական զնդիկ, կոտրւած ռուսերէնով բացատրում էր, Թէ ինքը կարող է բոլոր զնդիկները մէկի տակ հաւաքել, առանց զլխարկները շարժելու կամ նրանց դիպչելու: Բացատրելուց յետոյ, չինացին ձեռքերը շարժում էր զլխարկների վրայ, կախարդական ելևէջներով, սուլում էր տարօրինակ և մեղմ, ու հրամայում վախախները վերցնեն. բանտարկեալները զարմանքով տեսնում էին, Թէ երեք զնդիկները, երեք հաւկիԹների պէս, հաւաքւած են մէկ զլխարկի տակ: Փորձը աւարտելով՝ չինացին զլխարկ էր պտտցնում ու դրամ հաւաքում: Երկրորդ չինացին երկաԹէ չիւղով ատամներ էր մաքրում: Նա կանգնած էր խռնւած բանտարկեալների մէջտեղը և նոյն վատ ռուսերէնով բացատրում, Թէ իւրաքանչիւր մարդ որդնած ատամներ ունի, բայց չի զգում. ինքը կարող է այդ բժշկուԹիւնը կատարել, և այդ բաւականուԹիւնը կ՝արժենայ՝

ամէն մէկին, ոչ աւել, ոչ պակաս, քան չիսուն րուբլի: Բանտարկեալները դրամը վճարում էին ու ձեռնածուն, վարպետ չարժումով, բաց էր անում «հիւանդի» բերանը, երկաթէ չիւղով խառնում ենթակայի ակռաները ու սպիտակ մարմնով ու սև գլխով որդը, չիւղի ծայրին, ցոյց տալիս ներկաներին: Երրորդ չինացին մի այլ բան էր անում: Եւ այդպէս, յաջորդաբար, նրանք իրենց օրապահիկն էին հայթայթում և զբաղեցնում այն մարդկանց, որոնք ժամից-ժամ սպասում իրենց ճակատագրի վճռին:

— Սատանան տանի, չինացիներն ու ճափոնցիները միշտ այսպէս հունարով են,— ասաց մի ռուս գինուոր, երբ ձեռնածուները իրենց գործը վերջացրին:

— Ի՞նչ հունար, ի՞նչ բան, աչպարաբուժիւն է,— հակաճառեց հրեաներից մէկը:

— Ջանե՞ս մի,— չտպեց պատասխանել մի ուրիշ ռուս:

— Ո՛չ այս է, ո՛չ այն, այլ չանտաժ է,— առանձին հեղինակութեամբ վրայ բերաւ երկրորդ հրեան, որը միշտ հանդիսատես էր, առանց մէկ կոպէկ նուիրելու:

— Ընկե՛ր, վայել չէ այդպէս արտայայտուել,— նկատեց Մելիքովը, որ բանտարկեալների վրայ ազդեցութիւն ունէր:

— Ներողութի՛ւն, ներողութի՛ւն. ես վիրաւորելու նպատակով չասացի,— պատասխանեց հրեան, տեսնելով, որ դերդաստիւն և հակակրանք է չահում:

— Լա՛ւ, հաւատա՛նք ընկերոջ և հարցը փակենք,— նորից խօսեց Մելիքովը՝ հրեային լռութեան կոչելով:

Ընդհանուր խաղերից և զարճալիքներից յետոյ, այդ երեք կարգի կալանաւորները, տարբեր յանցանքներով և տարբեր պայմաններում ձերբակալուած, յայտնապէս ջոկւում էին իրարից, և նրանցից իւրաքանչիւրը հաւաքւում իր խմբակի չուրջը: Թւական առաւելութեամբ, կոմունիստներից յետոյ, երկրորդ տեղը դրաւում էր վախչելու փորձութեան ենթարկւած ասան և մէկ գինուորի և մէկ սպայի խմբակը, որն ունէր իր առանձին անկիւնը: Սրանցից իւրաքանչիւրը մխիթարւում էր նրանով, որ ինքը մենակ չէ, և իրենց մէջ կայ մէկը, որ սոսկական գինուոր չէ, այլ սպայ... Ու գինուորները

նրա աստիճանի մէջ իրենց յանցանքի թեթևութիւնն էին որոնում:

Սակայն սպան, որ բարձրահասակ ու գեղադէմ մի երիտասարդ էր, ոչ միայն գինուորների պէս չէր մտածում իր դիրքի և աստիճանի մասին, այլ անխախտ հաւատում, որ եթէ նրանց մէջ կայ մէկը, որը պիտի արդարանայ՝ նա ինքն է,— մի մարդ, որ կռւոմով գինուորական է և պատկանում մի դասի, որը աքանչելի օրինակներ է տւել անձնազոհութեան, նիւթասիրութեան և սխրագործութիւնների, միշտ կանգնած լինելով առաջին դիրքերում և միշտ առաջնորդ գորչ և միօրինակ զանգւածների, զանգւածներ, որոնց պարտականութիւնն է լոկ հրամանները լսել և մահւան դէմ գնալ:

Եւ ինչո՞ւ չներէին, քանի որ առաջին անգամն էր սայթաքում... միայն մի անգամ մեղանչել գինուորական օրինապահութեան դէմ և մահով պատժո՞ւել... անկարելի է:

Սպան չէր կարող մտաբերել, թէ ի՞նչպէս պատահեց այդ ամենը: Միայն յիշում էր, որ ինքը, սկզբում, ուզում էր հետևել վախստական գինուորներին՝ իմանալու նրանց մտադրութիւնը: Բայց յետոյ խառնւեց նրանց, ու այդ ամենը կատարւեց անխօս համաձայնութեամբ և առանց բարդութիւնների:

Սպան յիշում էր նաև, որ իրենք լո՛ւռ քայլում էին բաց դաշտի մէջով և բաւական հեռացել իրենց առաջաւոր դիրքերից ու վտանգն անցած համարում, երբ մթութեան մէջ, կոյր պատահականութեամբ, իրենց իսկ բանակի յիսուն կոդակ հետախոյզները նրանց դէմ ելան և թշնամի կարծելով՝ պոռացին.—

— Ցանձնւեցէ՛ք, եթէ ոչ կրակում ենք:

Ու իրենք՝ ենթադրելով, որ պատահել են կարմիր գինուորների՝ պատասխանում են.—

— Եղբայրնե՛ր, յանձնւում ենք, մի՛ կրակէք:

Մի վայրկեան յետոյ ամէն բան պարզւում է, և իրենք, գինաթափ ու կալանաւոր, եա են դառնում նոյն տեղը, նոյն ընկերների մօտ, միևնոյն առաջնորդների հրամանի տակ, բայց այս անգամ որպէս վտանգաւոր թշնամի և աններելի հակառակորդ:

Ահա այս է այն կարճ ու բարդ պատմութիւնը, որի
պատճառով բանտ էին առաջնորդւած տասն և մէկ զինւոր ու
մէկ սպայ: Երրորդ կարգի կալանաւորները, թւով հինգ հոգի,
մեղադրւում էին որպէս պարզ դասալիք: Բոլորի մէջ սրանք
աչքի էին ընկնում իրենց քչախօսութեամբ և չափաւորու-
թեամբ: Ապրած ու թրծւած լինելով պատերազմի մէջ, նրանք
դարձել էին պաղարիւն, ծանր և լուրջ: Քիչ բան նրանց զար-
մանք էր պատճառում, իսկ շատ բաներ դիտում ու անցնում
աննկատ: Թւում էր, թէ նրանք համր են ու խուլ, անտարբեր
ամէն բանի: Այս հնգեակի անդամները թարմ երազով և փայ-
լուն յոյսերով երիտասարդներ էին, երբ իրենց տարիքի ստի-
պողականութեամբ զօրակոչի ենթարկւեցին ու մտան գործօն
բանակը: Խաղաղ ժամանակ, ուղիղ երեք տարի, ծառայեցին
ցարին և հայրենիքին. երեք շաբաթ էր մնացել, որ իրենց զօ-
րադասի ցրում տեղի պիտի ունենար, երբ, յանկարծ, պայթեց
համաշխարհային ողբերգութիւնը, որի հետևանքով նրանք
ստիպւած եղան շարունակել զինւորական ծառայութիւնը:

Ամբողջ չորս տարի կռւել էին, եղել գրեթէ բոլոր ռազ-
մաճակատներում, իրենց թւի չափ օտար և թշնամի զինւորի
սւին էին տեսել. նրանցից իւրաքանչիւրը քանի՛, քանի՛ ան-
գամ վիրաւորւել, ապաքինւել, նորից մեկնել ճակատ, կրկին
ու դարձեալ նետւել պատերազմ-դժոխքը, չարունակ սպանե-
լով Ամենակուլ Արքային: Լրիւ եօթը տարի հրացանը նրանց
ուսից չէր իջել և լման չորս տարի նրանք մահ էին որոնել.
բայց մահը նրանց չէր գտել: Ու հիմա, յոգնած ու ձանձրա-
ցած, լի զայրոյթով ամենքի դէմ, իրենց դէմ, նրանք անտար-
բեր սպասում էին ճակատագրի տնօրէնութեան:

Այս հինգ հոգուց միայն երկուսը տարրական կրթու-
թիւն ունէին, միւս երեքը անգրագէտ գիւղացի պատանիներ
էին, երբ զօրակոչի ենթարկւեցին: Սակայն, զինւորական ծա-
ռայութեան միջոցին գրագիտութիւն սովրեցին և նոյնիսկ նա-
մակներ գրում տունը, հիացմունք պատճառելով համագիւղա-
ցիներին: Նրանց ընթերցանութեան միակ գիրքը Աւետարանն
էր, որից ամբողջ գլուխներ անգիր գիտէին, հաւատալով Ամե-
նակարողին այնպէս, ինչպէս առաջին քրիստոնեաները: Պատե-
րազմի մէջ նրանց հաւատքը աւելի զօրացաւ. բազմաթիւ

փորձերով տեսան, որ իրենք քանիցս անգամ մահւանից ազատ-
ւել են, մինչ՝ իրենց կողքին կռւող հին ու նոր զինւորները,
առաջին իսկ կռիւներում, մահ էին գտել. նրանց փոխարինել
նորերը, որոնք նոյնպէս ընկել ու ոչնչացել էին, տեղ տալով
ուրիշներին: Եւ այսպէս անվերջ փոխւել էին մարդիկ, եկել ու
գնացել, բայց իրենք մնացել էին նոյն գնդում, որպէս առաջին
ներ և առաջնորդներ էին տեսել, որոնցից շատերի դէմքը այժմ
չէին յիշում: Այս բոլորը պատահականութիւն չէր: Նրանք հա-
մոզւած էին, որ կայ մի ուժ, որ զօրու է պահպանելու բոլոր
նրանց, ովքեր ջերմեռանդօրէն հաւատում են Իրեն ու Իր
խօսքին:

Դեռ պատերազմից շատ առաջ նրանք գնդում մտերիմ
ընկերներ էին. միասին էին ման գալիս, կիրակիներ եկեղեցի
գնում և ջերմեռանդ աղօթում: Աղքատների համար միշտ մէ-
կական կոպէկ ունէին իրենց գրպանում: Խմելն ու ծխելը հե-
տըզհետէ թողին, իրենց վերապահելով միայն մէկ հաճոյք —
աղած սերմ չրթել: Նրանք ծառայում էին թագաւորին այն
խորին համոզումով, որ նրա իշխանութիւնը կամօքն Աստու-
ծոյ է. դրա դէմ գնալ, նշանակում է հակառակ գործել օրինաց:

Սակայն, շատ տարիներ յետոյ, հրից ու սրից անցած,
երբ մի օր զարմանքով լսեցին, որ ժողովրդի ձեռքով թագա-
ւորը տապալւած և ամբողջ գերդաստանով մորթւած է, ինչպէս
մի հասարակ զինւոր պատերազմի դաշտում, նրանք զգացին,
որ Ամենակարողը իր իշխանութիւնը թագաւորից վերցրել ու
յանձնել է ժողովրդին: Այդ բանում նրանք աւելի ևս համոզ-
ւեցին, երբ մի օր առաջաւոր դիրքերում լուր տարածւեց, թէ
պատերազմը վերջացնելու համար պէտք է հրացանը դէն
շպրտել ու «եղբայրութիւն» սկսել թշնամիների հետ: Եւ դրա-
նից աւելի մարդկային ի՞նչ վեհագոյն սկզբունք:

Ու այս հինգ զինւորները «եղբայրութիւն» սկսեցին ի-
րենց մահ սպառնացող թշնամի զինւորների հետ, խաղաղու-
թիւն քարոզելով:

Բայց թշնամին, դեռ ամբարիշտ ու մեղաւոր, շարունա-
կում էր կռւել ու մարդ սպանել: Սակայն, այդ երկար չտևեց.
ու ռազմաճակատում երևացին քրիստոնէական նոր առաքեալ-
ներ, նոր խօսքով — խաղաղութիւնը ձեռք է բերւում խաղա-

ղուխեամբ, կուարար ու բիրտ թշնամուն օրինակ տալու համար, պէտք է տուն վերադառնալ ու յայտարարել բոլորին, բոլորին, բոլորին, որ պատերազմը վերջացած է, որ խաղաղութիւն և եղբայրութիւն պէտք է թագաւորէ ամենուրեք:

Ու դարձեալ այս հինգ հոգին էին առաջիններից, որոնք փչրեցին իրենց հրացանները, թաղեցին ձեռնառումբերը, ու ամէն ինչ թողնելով իրենց ետև՝ դինուորի պայուսակը չալակած՝ մի քանի օրւայ պարէնով՝ ճամբայ ելան դէպի տուն:

Սակայն, ամիսներ յետոյ, դառն ճամբորդութիւնից վերջը, երբ նրանք հասան Թիկունքի դէմաւոր քաղաքներից մէկը, որտեղ պատրաստւում էին ողջադուրեւ ու բռնել իրենց հայրենի հիւղակների ճամբան, յանկարծ պաշարեցին սէնեաւոր դինուորներով և քշեցին դէպի հիւն, իրենց լաւ ծանօթ զօրանոցները, որպէսզի հիւն կարգով, նո՛ր պատրակով, նո՛ր պատերազմներ վարէին:

Այս անգամ նրանք գնում էին եղբայրասպան կռւի. ռազմաճակատը հեռու չէր, կատաղի մարտը մղւում էր քաղաքից մի քանի վերստ վրայ. նրանք երեկոյեան դուրս պիտի գային. բայց արդէն խորհրդակցել և հաստատապէս որոշել որ կռիւ սկսելու առաջին իսկ վայրկեանին իրենց հրացինները պիտի ձգեն, մխաբերան դառալով.—

— Կորչի՛ պատերազմը, կորչի՛ եղբայրասպան կռիւը:

Ու նրանք հաւատարիմ իրենց եղբայրական ուխտին և որոշման, յանձնւում են իրենց վրայ քայլող զնդերին, բաղկացած առաւելապէս սպաներից, սոսկական դինուրի դերում: Աւելի ահռելի, անխնայ և հակամարդկային կռիւ նրանք չէին կարող երևակայել, քան այն կատաղի պայքարը, որ սկսել էր իրենց անծայրածիր հայրենիքում և որ օրէցօր լայնանում, ընդարձակւում և խորանում, խորտակելով ամէն ինչ:

Ինքնակամ անձնատուութեամբ, նրանք այն բարեմիտ և միամիտ հաւատքն ունէին, թէ այդպիսով իրենցից կը հեռացնեն եղբայրասպան կռւի վորձութեան բաժակը և կը դառնան սոսկ զերիներ սեփական հայրենիքում, մինչև որ փոթորիկը խաղաղի: Սակայն, համաշխարհային պատերազմում անգամ պահպանւած զերիավարութեան կանոնները այստեղ խախտած և արհամարհւած էին:

Ու նրանք, երկրորդ օրն իսկ, հակառակ իրենց ցանկութեան և կամքի, դարձեալ ու դարձեալ հրացանը ուս առած և փամփուչտակալը մէջք կապած՝ հազարաւորների հետ ճամբայ հանւեցին դէպի ռազմադաշտը:

Պարզ, լուանելակ գիշեր էր: Բաւական ճամբայ էին կտրել: Կէս գիշեր էր, յոգնաբեկ էին, ու նրանց հրամայւեց կէս ժամ հանգիստ: Անհամարձակ իրար զատ. հին զարերի հաւատացեալների պէս, վախկոտ և զգոյշ, գլուխ գլխի տւին, խօսեցին, փսփսացին և արդէն պատրաստ իրագործելու նոր, վտանգաւոր և վերջին ծրագիրը — փախչել...

Զօրամասը դեռ հանգստանում էր. ոմանք՝ յենած իրենց պայուսակին՝ անթարթ նայում էին երկինք, որ այնքան խաղաղ էր ու ջինջ. ուրիշները ծխում և կամաց խօսում. չատերը հանգստավայրի չրջանակից դուրս գալով, կորչում մօտակայ խրամի մէջ, ապա վերադառնում էին հագուստները չոկելով ու կապկպելով:

Այս հինգ դինուորները ոտքի ելան, բաժանւեցին իրարից և գիմեցին դէպի այն խրամը, ուր չատերն էին գնացել ու վերադարձել:

Հրամանատարի սուլիչը դորշ գանգւածը մէկ մարդու պէս ոտքի հանեց, ուշացած դինուորները հև ի հև հասնում էին իրենց տեղերը գրաւելու: Գունդը այնքան հպարձակ էր կազմւած ու լրացւած, որ դինուորներից չատերը իրար չէին ճանաչում և յաճախ քառեակներ կազմում բոլորովին նոր և անծանօթ դինուրների հետ: Այնպէս որ ոչ ոք չիմացաւ, թէ ինչպէս հինգ դինուր, պղպած խրամում, յամառ և անվախ, չէին ուզում վերադառնալ:

Մի քանի րոպէ յետոյ, երբ հազարաւոր անհատներից կազմւած այդ մէկ և անմեկին սուերը փռւած էր սպիտակ փոշիով ծածկւած խճուղու վրայ, լսւեց հրամանատարի զոռ ու զոռոզ ձայնը.—

—Պա՛տ-րա՛ստ:

Ոտքերի աղմուկ:

— Ցա՛ռ-ա՛յ:

Եւ գունդը, ծանր ու դանդաղ, առաջ շարժուեց։

Փախստական զինուորները, անխօս և լուռ, որպէս գերեզմանափորներ, նորից իրար քով եկան, հրացանները վար առին իրենց ուսերից և, երկրորդ անգամ լինելով, հողին յանձնեցին մարդկութեան ժանդը։ Ապա՝ երեսները խաչակնքելով՝ ետ դարձան դէպի այն քաղաքը, որտեղից դուրս էին եկել։

Մի քանի օր յետոյ գլխաւոր շտաբը ռազմաճակատից ստացաւ հետևեալ ծածկագիր հեռախօսագիրը.—

«Ռազմաճակատը խաղաղ է, մեր մարտիկների տրամադրութիւնը բարձր, բոլորս պատրաստ ենք կռուելու և մեռնելու յանուն մեր ծուատուած հայրենիքի ամբողջացման, հզօրութեան և միահեծանութեան։

«Տասներորդ գունդը իր ամբողջ կազմով հասաւ ռազմաճակատ և զետեղուեց նշանակուած դիրքերում՝ մօտալուտ յարձակողականի ամբողջ վճռականութեամբ։ Սակայն, գնդի ստուգման ժամանակ պարզուեց, որ նրանից դասալիք են եղել հինգ զինուոր՝ իրենց ամբողջ սարքուկարգով։

«Այս երևոյթը հիւանդագին բնոյթ կարող է ստանալ և քայքայել կամաւորական ամուր և վճռական բանակը, եթէ այժմից իսկ խիստ և կտրուկ միջոցներ ձեռք չառնուեն՝ դասալքութեան դէմ կռուելու համար։

«Կասկածներ կան, որ դասալքութիւնը հետևանք է կարմիրների քարոզչութեան, որը հետզհետէ սկսել է թափանցել նաև բանակի ներսը»։

Ահա այս յանցանքով էին մեղադրւում և բանտն էին առաջնորդուած այդ հինգ զինուորները։

IV

Բանտերը, կարմիր գծից ներս, նոր բովանդակութիւն ու նոր կոչում ունէին։ Նրանց թիւը կրկնապատկել ու դարձել էին հանրամատչելի բոլորի՛ն, բոլորի՛ն, բլորի՛ն...

Երբեմնի այդ գորշ տները, որոնք պատժարանների դեր էին կատարում, այժմ վերածուած էին մահուան մէկ-մէկ կա-

յանների, իրենց կից ունենալով և՛ գերեզմանոցը և՛ մահուան ամենակուլ փոսը։

Կարմիրների մօտ մահը համայնացուած էր, և շատ հազուագիւտ կորիճներ կամ բախտաւորներ կային, որոնք բնական մահով մեռնում։ Հին մարդիկ նոր սովորութիւններ ունէին. նրանք արհամարհում էին այն բոլոր յապաղումները և ծիսակատարութիւնները, որոնք ընկած են կեանքից մահուան անցնելու կարճ և ողբերգական փոխանցման շրջանում։ Մարդը ծնւում է մեռնելու համար և պիտի մեռնի, էլ ի՞նչ ուշացում, էլ ի՞նչ ժամանակի կորուստ։ Եւ դրա համար էր, որ երբեմնի արհամարհուած ու պիղծ բանտապետներն ու դահիճները, մարդկայնական շղթայից դուրս շպրտուելով, այստեղ արժանացել էին առանձին գուրգուրանքի։

Ժամանակներն ու մարդիկ այնքա՜ն կերպարանափոխուած էին, որ հին արժէքներն ու առաքինութիւնները դարձել աններելի արատներ ու պակասներ, իսկ հին պակասներն ու արատները նոր արժէք և իմաստ ստացել։

Մարդկանց, կենդանիների ու բոյսերի տարեգրութեան մէջ, այսքա՜ն հազարամեակներից յետոյ, չկայ մի էջ, ուր ասուած լինի, թէ մահը այնպէս յանդուգն ու համարձակ է եղել, ինչպէս այժմ էր, ցարերի և մուժիկների երկրում, ուր յեղափոխութիւն և քաղաքացիական կռիւներ կային։ Այստեղ, կարմիր գծից ներս, մահը դարձել էր անպատկառ, լպիրշ ու անհաշիւ։ Նա, որ առաջ վախկոտօրէն էր մտնում հանքահորերի անօդ, մո՛ւթ ու մռայլ բաւիղները. նա, որ զգո՛յշ և անյոյս կանգնում վիթխարի, նորակառոյց շէնքերի առաջ, պատահականութեան մի որս խլելու ժամավաճառութեամբ. նա, որ շա՛տ անգամ յուսահատ և ձեռնունայն, աղօթարանը դեռ չբացուած, մուրացիկի աներեսութեամբ, կծկւում էր հիւանդանոցների դարբասներին, կամ կուչ էր գալիս խրճիթների ջախջախուած դռների տակ՝ մաշուած, անպէտք և աւելորդ մի կեանք վերցնելու, որպէս փշրանք,— այժմ տիրականօրէն, օրը ցերեկով, յաղթ քայլում էր փողոցներով, մտնում տները, հիմնարկութիւնները, ազատ և ընտանի այցելում բանտերը և արնակալ բիբերով նայում առողջ, կայտառ և դեռ կէս կեանք ապրած մարդկանց աչքերին։ Ամենքը յարգում և սպասար-

Եւ գունդը, ծանր ու դանդաղ, առաջ չարժւեց:

Փախստական զինուորները, անխօս և լուռ, որպէս դերեզմանափորներ, նորից իրար քով եկան, հրաղէնները վար առին իրենց ուսերից և, երկրորդ անգամ լինելով, հողին յանձնեցին մարդկութեան ժանգը: Ապա՝ երեսները խաչակնքելով՝ ետ դարձան դէպի այն քաղաքը, որտեղից դուրս էին եկել:

Մի քանի օր յետոյ գլխաւոր շտաբը ռազմաճակատից ստացաւ հետևեալ ծածկագիր հեռախօսագիրը.—

«Ռազմաճակատը խաղաղ է, մեր մարտիկների տրամադրութիւնը բարձր, բոլորս պատրաստ ենք կուելու և մեռնելու յանուն մեր ծաւալուած հայրենիքի ամբողջացման, հզօրութեան և միահեծանութեան:

«Տասներորդ գունդը իր ամբողջ կազմով հասաւ ռազմաճակատ և դեռեղեց նշանակուած դիրքերում՝ մօտալուտ յարձակողականի ամբողջ վճռականութեամբ: Սակայն, գնդի ստուգման ժամանակ պարզուեց, որ նրանից դասալիք են եղել հինգ զինուոր՝ իրենց ամբողջ սարքուկարդով:

«Այս երևոյթը հիւանդագին բնոյթ կարող է ստանալ և քայքայել կամաւորական ամուր և վճռական բանակը, եթէ այժմից իսկ խիստ և կորուկ միջոցներ ձեռք չառնուին՝ դասալքութեան դէմ կուելու համար:

«Կասկածներ կան, որ դասալքութիւնը հետևանք է կարմիրների քարոզչութեան, որը հետզհետէ սկսել է թափանցել նաև բանակի ներսը»:

Ահա այս յանցանքով էին մեղադրւում և բանտն էին առաջնորդւած այդ հինգ զինուորները:

IV

Բանտերը, կարմիր գծից ներս, նոր բովանդակութիւն ու նոր կոչում ունէին: Նրանց թիւը կրկնապատկւել ու դարձել էին հանրամատչելի բոլորիր, բոլորիր, բոլորիր...

Երբեմնի այդ դորշ տները, որոնք պատժարանների դեր էին կատարում, այժմ վերածւած էին մահւան մկ–մկ կայանների, իրենց կից ունենալով և՛ դերեզմանոցը և՛ մահւան ամենակուլ փոսը:

Կարմիրների մօտ մահը համայնացած էր, և շատ հազւագիւտ կտրիճներ կամ բախտաւորներ կային, որոնք բնական մահով մեռնում: Հին մարդիկ նոր սովորութիւններ ունէին. նրանք արհամարհում էին այն բոլոր յապաղումները և ծիսակատարութիւնները, որոնք ընկած են կեանքից մահւան անցնելու կարճ և ողբերգական փոխանցման շրջանում: Մարդը ծնւում է մեռնելու համար և պիտի մեռնի, էլ ի՞նչ ուշացում, էլ ի՞նչ ժամանակի կորուստ: Եւ դրա համար էր, որ երբեմնի արհամարհած ու պիղծ բանտապետներն ու դահիճները, մարդկայնական չղթայից դուրս չպրտւելով, այստեղ արժանացել էին առանձին դուրգուրանքի:

Ժամանակներն ու մարդիկ այնքա՜ն կերպարանափոխւած էին, որ հին արժէքներն ու առաքինութիւնները դարձել աննշանութիւն արատներ ու պակասներ, իսկ հին պակասներն ու արատները նոր արժէք և խմաստ ստացել:

Մարդկանց, կենդանիների ու բոյսերի տարեգրութեան մէջ, այսքա՜ն հազարամեակներից յետոյ, չկայ մի էջ, ուր ասւած լինի, թէ մահը այնպէս յանդուգն ու համարձակ է եղել, ինչպէս այժմ էր, ցարերի և մուժիկների երկրում, ուր յեղափոխութիւն և քաղաքացիական կռիւներ կային: Այստեղ, կարմիր գծից ներս, մահը դարձել էր անպատկառ, լկտիք ու անհաչիւ: Նա, որ առաջ վախկոտօրէն էր մտնում հանքահորերի անօդ, մո՛ւթ ու մռայլ բաւիղները. նա, որ գո՛յչ և անյոյս կանգնում վիթխարի, նորակառոյց չէնքերի առաջ, պատահականութեան մի որս խլելու ժամավաճառութեամբ. նա, որ չա՜տ անգամ յուսահատ և ձեռնունայն, աղօթարանը ձեռ չբացած, մուրացիկի աներեսութեամբ, կծկւում էր հիւանդոցների դարբասներին, կամ կուչ էր գալիս խրճիթների ջախջախած դռների տակ՝ մաչած, անպէտք և աւելորդ մի կեանք վերցնելու, որպէս փշրանք,— այժմ տիրականօրէն, օրը ցերեկով, յաղթ քայլում էր փողոցներով, մտնում տները, հիմնարկութիւնները, ապատ և ընտանի այցելում բանտերը և արնակալ բիբերով նայում առողջ, կայտառ և դեռ կէս կեանք ապրած մարդկանց աչքերին: Ամենքը յարգում և սպասար-

կում էին նրան, որովհետև նա հարստացել և յղփացել էր կեանքի հաշւին:

Մահւան դնով մարդիկ ուզում էին լաւագոյն կեանք անօրինել, իսկ կեանքի դնով մահը լչխում էր բոլորի վրայ:

Աչնան մի պայծառ առաւօտ, Հանքային Ջրերի կենտրոնական քաղաքներից մէկում, մահւան սպասարկուներից մէկը և ամենադաժանը՝ զարթնեց ծանր ու հալածող երազներից:

Նա երեսուն տարի հոլոված երիտասարդ էր, գրաւիչ դէմքով, չէկ միրուքով և մեղմ արտայայտութեամբ: Թէև նրա երակներում յորդում էր հայկական արիւնը, բայց իր ազգութիւնը մատնող ոչ մի արտաքին նշան չունէր, և այդ բանի համար շատ ուրախ էր: Երիտասարդը չկամ չարժումով վերմակը մէկդի հրեց, մերկ ոտքերը կախեց մահճակալից ու դանդաղօրէն սկսեց հագնուել:

Նա մտաղրաղ էր երևում, և նրա դէմքի երակները երբեմն պրկւում անհաճոյ մտապատկերներից՝ պղտորելով նրա պարզ արտայայտութիւնը: Նախորդ օրը, մի մուրհակ ստորագրելու առնութեամբ, ստորագրել էր հազար եօթը հարիւր վաթսուն և ութ մարդու մահւան վճիռ և անձամբ ներկայ էր եղել մահապարտների դնդակահարման արարողութեանը: Այժմ նրա գանկը խշշում էր անորոշ ձայներից, աղեխարշ հառաչանքներից և բացագանչութիւններից, որոնք, թւում էր թէ, լսւում էին հեռու՛ւ, շա՛տ հեռու տեղերից, մերթ աղմկայոյզ և սարսռազդեցիկ, մերթ մեղմ ու մարող, բայց միշտ կրկնւող և արձագանգող:

Երիտասարդը ճգնում էր վերյիշել այդ ձայների ու աղմուկի մէջ մի պարզ և որոշ առած բառ, խօսք կամ նախադասութիւն, բայց չէր կարող· նա լսում էր միայն ու միայն ջղայնացնող և անհասկանալի կանչեր: Սակայն, յստակօրէն պատկերացնում էր այդ փոքրիկ հաւաքականութիւնը, որ մէկ մարդու պէս և մէկ վայրկեանում դեռին ընկաւ: Նա այժմ աւելի պարզ էր տեսնում թէ ինչպէս մարդկային այդ դէմը, տրորւած միջատների կոյտի պէս, ջղաձգւում, գալարւում ու վխտում էր: Ամենից որոշ տեսնում էր բարձրացող և իջնող գլուխներ, ձեռքեր և ոտքեր, որոնք խիտ, բայց հետզհետէ նօսրացող անտառի տեսարան էին պարզում:

Երիտասարդը ոտքան մտածում էր «այդ» մասին, այնքան նրա միտքը զրդռւում և երևակայութիւնը ճոխանում էր նոր-նոր վերյիշած պատկերներով:

— Այո՛, այս բոլորը ծանր է, բայց յեղափոխութիւնը կատակ չէ,— ասաց նա իւրովի և մօտեցաւ լւացարանին:

Լւացւելուց յետոյ նրան թւաց, թէ իր ձեռքերը մաքուր են և իր խիղճը հանգիստ, որովհետև այդ ամենը արել է և անում է միմիայն մարդկային բարօրութեան համար:

Այդպէս էր համոզւած նա, այլ կարծիք չունէր և իր չրջապատը: Մարդիկ, որոնց մէջ և որոնց հետ աշխատում էր այդ երիտասարդը, ոչ միայն նրան չէին պախարակում իր հակամարդկային արարքների համար, այլ և խրախուսում, ձեռք տալիս, աւելի պատկառանքով, աւելի ջերմ, քան առաջ:

Այդ էր պատճառը, որ մի քանի րոպէ առաջ նրան տանջող ու հալածող մտքերը ցրւեցին, ու նա սկսեց մտածել այն մասին, թէ ի՞նչ նոր ծրագիր պիտի ներկայացնի այն կարևոր և գաղտնի ժողովին, որ նշանակւած էր այդ օրը և պիտի գումարւէր իր սենեակում, իր նախագահութեամբ:

Ընդամէնը երեք հոգի պիտի մասնակցէին այդ յոյժ կարևոր ժողովին. երիտասարդը արդէն պատրաստ էր և րոպէ առ րոպէ սպասում միւսներին:

* * *

Որոշւած ժամանակից առաջ երիտասարդի սենեակը մտաւ երկայնահասակ, մաքուր ածիլւած մի գինւորական, որի գլխարկի վրայ կարմիր աստղը աչքի էր զարնւում իր վառ գոյնով: Նա իր չարժուձևերով հին, միապետական բանակի սպայ էր երևում, բայց ամէն կերպ աշխատում էր յարմարւել իրեն չրջապատող և գործակից մարդկանց սովորութիւններին, որոնք նրան բնաւ չէին պատշաճում: Այդ չրջանի կարմիր բանակի ընդհանուր հրամանատարն էր, բայց դեռ գտնւում էր գաղտնի հսկողութեան տակ· վաղուց կռահել էր չրջապատի անվստահութիւնը հանդէպ իր անձին, բայց անգիտակ էր ձևանում:

— Կոմունիստական բարևներո՛ց,— ասաց նա՝ ներս մըտնելով երիտասարդի սենեակը:

— Բարե՛ւ կարմիր հրամանատարին,— պատասխանեց երիտասարդը՝ ձեռքը մեկնելով սպային:

— Ցիմերմանը դեռ չի՞ եկել,— հարցրեց հրամանատարը՝ թղթապանակը դնելով սեղանի ծայրին ու նստելու պատրաստվելով:

— Դեռ քառորդ ժամ ունենք· չուտով կը գայ,— պատասխանեց երիտասարդը՝ դանդաղօրէն երթևեկելով և ծխելով:

— Ուրեմն, ես չտապել եմ, իմ ժամացոյցը ճիշդ էէ,— ասաց հրամանատարը՝ ժամացոյցին նայելով:

— Օ՛, այդ լաւ չէ՛, ընկե՛ր հրամանատար, այդ լաւ էէ՛· կարմիր ժամացոյցը պիտի երկվայրկեաններով ճիշդ աշխատի, այլապէս նրան պէտք է անխնայ դնդակահարել,— ասաց երիտասարդը՝ կատակ անել ուզելով:

— «Սաբոտաժ» անող երկրորդ ժամացոյցն է, որը պիտի վիշրեմ այնպէս, ինչպէս դու վիշրում ես հակայեղափոխականներ դանկերը···

— Բայց ոչ թիկունքում, ճակատի վրայ:

— Ե՛ւ այստեղ և՛ այնտեղ:

— Մէկ խօսքով ամէն տեղ:

— Ամէն տեղ, այո՛:

— Ճակատից ի՞նչ նորութիւններ, ընկեր հրամանատար:

— Առայժմ խաղաղ է, բայց այդ մասին պիտի զեկուցե՛մ:

— Ցիմերմանը դեռ մէկ վայրկեան ժամանակ ունի, եթէ ուշացաւ, առաջին անգամ լինելով, կարելի է նրան հուշակել անճշտապահ,— խօսեց երիտասարդը՝ նոյն դիրքի մէջ և անդադար ծխելով:

Այդ րոպէին ներս մտաւ կարճահասակ, թուխ դէմքով, քառասունին մօտ մի մարդ և կանացի ձայնով ասաց.—

— կարմիր բարևներս հակայեղափոխականներին:

— Բարե՛ւ, բարե՛ւ, ձայն տուին մի՛ւսները:

— Ընկերնե՛ր, կարծեմ ժամանակին հասայ, այնպէս չէ՞:

— Կէս ժամ ուշացել ես,— ասաց երիտասարդը՝ ուրախ տրամադրութեամբ:

— Անկարելի բան է,— ասաց Ցիմերմանը՝ ճակատի քրտինքը սրբելով ու հեւալով:

— Վկայ եմ, որ ուշացել ես ամբողջ կէս ժամ,— հաստատեց հրամանատարը:

— Բահն ու Մանդաղը վկայ, չեմ ուշացել, իսկ եթէ այդ ճշտի, այնքա՛ն ժամագործներ գնդակահարել կը տամ, որքան վայրկեաններ եմ կորցրել:

— Այդքան ժամագործներ չկան,— ասաց երիտասարդը:

— Կը գտնե՛նք, կա՛ն, և՛ ժամագործներ կան և՛ ժամացոյցներ, բայց նրանք թաղնուած են:

— Սկսե՛նք, ասաց երիտասարդը՝ նստելով սեղանի չուրջը:

— Սկսենք,— ասացին մի՛ւսները՝ բաց անելով իրենց թղթապանակները:

Վեց սւինաւոր զինուորները հսկում էին երիտասարդի սենեակը՝ սկսած առաջին աստիճանից մինչև դուռը: Նրանց հրամայած էր ստուգել ներս մտնողի ինքնութիւնը, մանրակրկիտ խուզարկել և հուսկ ուրեմն զեկուցել երիտասարդին՝ ներս ընդունելու համար: Կարմիր հրամանատարը և Ցիմերմանը նոյնպէս պիտի ենթարկէին այդ նախազգուշութեան, եթէ ամէն մի զինուորի ականջին չխուսային նոյն օրւայ նշանը:

Ժողովը սկսելուց առաջ՝ երիտասարդը դուռը բաց արաւ և զինուորներին պատուիրեց, որ ոչ ոքի թոյլ չտան նախադռնից ներս մտնելու, եթէ անդամ ռազմաճակատը պատռած և քաղաքը հրդեհի տրուած լինի: Այս բոլորից յետոյ երիտասարդը դուռը փակեց ներսից ու ժողովը բանալով՝ խօսք տուեց կուսակցական կենտրոնական կոմիտէի քարտուղար Ցիմերմանին:

«Ընկերնե՛ր,— սկսեց քարտուղարը,— մի ամիս յետոյ կարմիր Հոկտեմբերի տարեդարձն է: Ուղիղ մի տարի է, որ իշխանութիւնը դտնուում է բանւորների և գիւղացիների ձեռքը: Ցեղափոխութիւնը լայնանում ու խորանում է: Քաղաքացիական կռիւները, որոնցից կախւած է պրոլետարիատի վերջին և վճռական յաղթանակը, աւելի և աւելի սուր կերպարանք են ստանում: Երկիրը բաժանւած է երկու ահռելի բանակի· մէկ կողմը՝ մենք, միւս կողմը՝ հակայեղափոխութիւնը: Մի տարւայ մեր փորձառութիւնը դալիս է հաստատելու, որ մենք կանգնած ենք

ամբողջ աշխարհի դէմ: Սպիտակ բանակը լիուլի օգնութիւն է ստանում դրսից, մենք օղակւած ենք ամէն կողմից և, մեր պարտութեան դէպքում, մեզ սպասում է բնաջնջումը: Մեր ամենակատաղի թշնամիները գտնւում են երկրի ներսը, մեր թիկունքում, մեր մէջ ու մեզ հետ: Դա ինքը, ժողովուրդն է, այդ դորշ, միապաղաղ զանգւածը, որի համար միայն հայ ու չոր է հարկաւոր, իսկ համամարդկային իդէալները՝ բնա՛ւ: Ռուս մուժիկը և կոշտ ձեռքերով բանւորը դեռ չեն դիտակցում պատմական այն մեծ դերը, որ ստանձնել է Համառուսական կոմունիստական կուսակցութիւնը: Զանգւածը դեռ տհաս է, ստրուկ և՝ ստրկահոգի: Այս երկրի ցարերը և նրանց պնակալէզ արիստոկրատիան ու բիւրոկրատիան ստրկութեան այնպիսի թանձր հեղուկ են քամել ժողովրդի հոգու մէջ, որ նա դարձել է անկամ և անվճռական մի հօտ, միշտ կարօտ մահակի ու մտրակի, միշտ հլու, հնազանդ բռնութեան և չհագուրդման: Մե՛ղ և միմիայն մե՛ղ է վիճակւած ստրկութիւնը և բռնութիւնը խորտակել ամէն գնով, իսկ այդ ստրկութիւնն ու բռնութիւնը խորտակելու համար՝ անհրաժեշտ է լինել անխնայ, անչեղ և հետևողական:

«Դրսից յամառ լուրեր են հասնում, որ Եւրոպան կանգնած է Համաշխարհային Յեղափոխութեան նախօրեակին: Անգլիայում հրդեհաշէջները գործադուլ են յայտարարել. Ֆրանսայում հանրակառքերը ամբողջ մի վայրկեան կանգ են առել ի յարգանս մեր մղած անհաւասար պայքարի. Հոլանդայում ճկնորսները այլևս ձուկ չեն որսում, բողոքելով Ռուսաստանի օղակման դէմ. իսկ իսլամ ժողովուրդների ամբողջ համակրութիւնը մեր կողմն է. հնդիկները գաղտնի զնդեր են կազմակերպում մեզ օգնութեան հասնելու. թուրքերը նոր չարժում են սկսել. Աֆղանիստանի խանները բանակցութիւններ են վարում մեզ հետ: Դեղին ցեղերը նոյնպէս անտարբեր չեն. ճապոնացիները, Սախալինը գրաւելով, ուղում են հարւածել Սիբիրի սպիտակ բանակին. չինացիները բողոքի ցոյցեր են կազմակերպում անգլիական և ամերիկեան կապիտալիստների դէմ: Մէկ խօսքով, ամէն տեղ, աշխարհի չորս անկիւններում, նոր խմորումներ կան սոցիալիստական հողի վրայ: Մեր ճգած հրդեհը լափում է ողջ մարդկութիւնը: Ամէն կողմից նոր ճայներ են

լսւում, և ամենքը աչքերը յառած՝ մեզ են սպասում: Պէտք է չտապել, պէտք է մեր ներքին կռիւը չուտով հաշւեյարդարի ենթարկել, և այն տեղափոխել արտաքին ճակատի վրայ: Մեր ռազիօները գործում են ամէն վայրկեան, նորանոր լուրեր բերելով իմպերիալիստների և կապիտալիստների ճարճատող երկիրներից:

«Ճաւալի է, սակայն, յիշատակել, որ կան երկիրներ ու ժողովուրդներ, որոնք դեռ չեն սթափւել և չարունակում են իրենց թշնամական ընթացքը հանդէպ յեղափոխութեան: Դրանցից առաջինը Հայաստանն է, որ սերտ բարեկամութեան մէջ է Դենիկինեան բանակի հետ, որից դէնք, ռազմամթերք և պարէն է ստանում. նոյն բարեկամական յարաբերութիւնն է պահում նաև Անգլիայի և Ամերիկայի հետ, որոնք ձգտում ունեն Հայաստանը յենակէտ և գործիք դարձնել՝ մեր դէմ կռւելու համար: Անդրկովկասում մեզ անհաչտ թշնամի է նաև սոցիալ-դաւաճանների երկիրը՝ Վրաստանը, որ գինւորական գաղտնի դաշինք է կռւել թշնամի բանակների հետ: Միակ երկիրը, որ դեռ իր չեզոքութիւնը չի խախտել, Պարսկաստանն է, որին մեր կողմը քաշելու կամ առնւազն նրա չեզոքութիւնը տևական դարձնելու փորձեր են կատարւում, և յոյս կայ, որ մեր ճիդերը ապարդիւն չպիտի մնան:

«Այժմեան, ընկերնե՛ր, արտաքին քաղաքականութեան մասին: Գալով մեր ներքին կեանքին, պիտի ասել և չէ՛տել, որ մեր չարքերը օր ըստ օրէ աւելանում են, մեզ հետ գործակից են Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդները. մեր կողքին կռւում են կալմիկները, չէչէնները, օսերը. մեր չարքերում պատասխանատու դեր են կատարում հայերը, վրացիները և հրեաները, ինչպէս և չինացիները, ճապոնացիները և տարբեր ազգութիւնները: Մեր միջազգայնականութիւնը կայանում է հէնց այս բանում: Ըստ դասակարգի, մեզ անհաչտ հակառակորդ են վաճառականները, դրամատէրերը և բոլոր տեսակի չահագործողները. ըստ դասի՝ մեր դէմ կռւում են կղերականները և սպաները (մա՛հ նրանց):

«Ճշմարիտ է, վերոյիշեալ ազգութիւններից կան անհատներ, որոնք կռւում են նաև հակառակ բանակում. բայց այդ դեռ չի նշանակում միջազգայնականութիւն, կամ առնւազն,

դա նշանակում է միջազգային հակայեղափոխութիւն: Ըստ սեռի՝ կանայք, ընդհանրապէս, պահպանողական համոզմունքի տէր լինելով՝ հակուած են հակայեղափոխութեան կողմը. բայց այդ սարսափելի չէ, որովհետև մեր ընկերների մեծագոյն մասը և գլխաւորապէս երիտասարդութիւնը դեռ ամուսնացած չէ: Ըստ հասակի՝ անչափահասները, ընդհանրապէս, մեզ հետ են և ակտիվ. միջին տարիք ունեցողները տատանւում են և առաւելապէս թեքւում յաղթող կողմը. ծերունիները և պառաւները, որպէս հին գլխի տէր մարդիկ, մեզ հակառակորդ են և հետևաբար մեզ պէտք չեն: Ըստ սոցիալական դրութեան, նկատելի է, որ ժամագործները, կօշկակարները, խողովակ և կօշիկ մաքրողները մեզ թշնամի են և շատ հասկանալի պատճառով: Սոցիալիզմի յաղթանակով և բուրժուազիայի տապալումով, նրանք կորցրել են իրենց տնտեսական հաւասարակշռութիւնը, և այդ պատճառով մեղադրում են մեզ և ծաւալւող յեղափոխութիւնը:

«Կուսակցութեան ներքին վարքագիծը հետևեալն է.—

«Հակայեղափոխութիւնը գլխովին ջախջախելու համար՝ գործադրել բոլոր միջոցները: Ամէն մի շրջանի կուսակցական մարմին լայն իրաւունք ունի անել այն, ինչ որ հնարաւորութիւն է տալիս յեղափոխութեան յաղթանակին: Որպէս ապացոյց այդ լայն ապակենտրոնացման, Արտակարգ Յանձնաժողովին (Չեկային) լիազօրութիւն է տրուած արիւնի մէջ խեղդել այն բոլոր անհատները, դասերն ու խմբակցութիւնները, որոնք այս կամ այն կերպ նպաստում են հակայեղափոխութեան: Աւելի դաժան և խիստ պէտք է լինել նրա՛նց հանդէպ, ովքեր մեզ հետ են, բայց թուլամորթութիւն, վախկոտութիւն և անկարգապահութիւն են ցուցահանում: Սակայն, այս քաղաքականութիւնը պէտք է տարւի շատ զգո՛յշ և ծածուկ, ամէն կերպ աշխատելով հասարակութեան աչքին արդար և իրաւարար հանդիսանալ: Զարնե՛լ, բայց չերևա՛լ, ակտի՛վ լինել, բայց հակառակորդին մեղադրե՛լ: Մասսայական ահաբեկումները պէտք է կատարուեն՝ հաւանական և վտանգաւոր պրովոկացիա տարածելուց յետոյ: Չեկան համարել յեղափոխութեան աչքը և ականջը, որը իր ցանցերն և գաղտնի գործակալները պիտի ունենայ ամէն տեղ՝ հաւաքատեղիներում, բանակում, կու-

սակցական շարքերում, դուրսը, ներսը, ընտանիքում, մէկ խօսքով, ամէն տեղ և ամէն վայրում լսել, տեսնել և հոտոտալ: Ուժեղ և վստահելի լրտեսութիւն կազմակերպել հակառակորդի գծից ներսը, առատ դրամական օժանդակութիւն ցոյց տալ այն բոլորին, որոնք մտնում են այդ գործի մէջ: Նոյն ձևով պէտք է կազմակերպուի պրովոկացիայի գործը, որի առանձին մարմինն արդէն անցել է իր պարտականութեան:

«Գնդակին ու վառօդին հաւասար մեզ անհրաժեշտ է նաև բանաւոր պրոպագանդան: Ամէն տեղ խօսել–քարոզել բուրժուական բարոյական նորմաներով, որին վարժուած են զանգուածները, բայց գործել կոմունիստական սկզբունքներով՝ կարճ և կտրուկ: Սոցիալական այս փորձարկութիւնը, որին ձեռք է զարկել մեր կուսակցութիւնը, առայժմ յաջող է ընթանում. ամէն ճակատի վրայ հին իրաւակարգը ապրում է իր վերջին փլուզումը: Հին աշխարհը պիտի հիմնովին քանդել, նորը կառուցանելու համար:

«Այս մի տարւայ մէջ մենք այդ ապացուցինք և կ՚ապացուցենք հետագայում: Ամբողջ աշխարհի սոցիալ–դաւաճանները մեզ մեղադրում են անօրինակ բռնութիւնների մէջ. խօսում են անձի անձեռնմխելիութեան, խօսքի, մամուլի, ժողովների ազատութեան և ուրիշ հի՛ն, աւանդական նախապաշարումների մասին: Այո՛, ազատութիւնը անհրաժեշտ է, բայց ո՞ւմ. տընտեսական հաւասարութիւնը դարուս պահանջն է, բայց ո՞րի համար: Այս բոլորը հարցեր են, որոնք դեռ պէտք է քննուեն և իրենց լուծումը ստանան: Պատմական մատերիալիզմի գծած ուղին պարզ է և անմեկին: Մենք գնում ենք այդ ճանապարհով՝ խորտակելով ամէն տեսակի խոչընդոտ, ընկած մեր առաջ: Յեղափոխութիւնը դեռ շարունակւում է, և մենք ժամանակ չունենք բանւորական, հողային և ազգային հարցերը լուծել: Սակայն, չի կարելի ժխտել, որ այդ հարցերը մասամբ լուծուած են արդէն:

«Բանւորները, ինչպէս և գիւղացիութիւնը՝ առժամապէս բահն ու մուրճը թողած՝ իրենց իշխանութիւնն են նւաճում. բայց նրանք այնպէս կազմակերպուած են, որ մի հրաման բաւական է նրանց սւինները փոխարինել բահերի ու մուրճերի:

«Մնում է ազգային ցաւոտ հարցը, որ, ըստ իս, հակա-

յեղափոխական համ ու հոտ ունի, և նրան լաւագոյն կերպով կարող է լուծել ինքը, միջազգայնականութիւնը։ Սակայն, տարբեր ժողովուրդներ և ազգութիւններ մեզ կապելու համար, դարձեալ ըստ իս, լաւ է, որ այդ հարցը միշտ արծարծուի, բայց բնաւ չլուծուի, միշտ կենդանի մնայ, սակայն, միշտ առկախ։

«Գալով ստեղծագործ աշխատանքին, պիտի ասել, որ մեր կուսակցութիւնը, չնայած ծայր տւող հակայեղափոխութեան և նրա անմիջական հետեւանք հանդիսացող քաղաքացիական կռիւների, հսկայական աշխատանք է կատարել։ Պատմութեան մէջ, առաջին օրինակ լինելով, ազնուական կանայք և իշխանուհիները, բոլորովին կամաւոր կերպով, աւելը վերցրած՝ Կրեմլի բակը և Կարմիր Հրապարակը մաքրել են։ Մի ուրիշ խումբ, բաղկացած ականաւոր գործատէրերից և հարուստներից, օրը ցերեկով, պրոլետարիատի աչքի առաջ, բոլորովին ինքնակամ, զօրանոցների արտաքնոցներն են սրբել, հնարաւորութիւն ստեղծելով Կարմիր Բանակայիններին, ամենակարճ ժամանակամիջոցում, գրագիտութիւն և տնտեսագիտութիւն սովորելու։

«Տեխնիկական ասպարէզում նոր նւաճումներ են կատարւում։ Յայտնի է, որ առաջ, ձմեռւայ եղանակին, Մոսկուայի գետը և հռչակաւոր Նեւան սառչում էին և նրանց սառցակոյտերը չահագործելով, Ռուսաստանի ազնուականութիւնը և բիւրոկրատիան ամառը պաղպաղակ էր պատրաստում և մենակ լափում։ Հիմա այդ գետերը չեն սառչում, և նրանք գնում են ոռոգելու գիւղացիութեան դաշտերը, որով թէ՛ երկիրը տնտեսապէս զարգանում է և թէ՛ հասարակութեան մի մասը ազատւում է աւելորդ և գայթակղեցուցիչ շռայլութիւնից։

«Դեռ շատ բան կայ պատմելու, բայց ես աւելորդ եմ գտնում ժողովը զբաղեցնել մանրամասնութիւններով,— մանրամասնութիւններ, որոնք իրենց բնոյթովը հետաքրքիր, և ընթացքով՝ շատ նշանակալի են յեղափոխութեան պրոցէսի համար։ Բայց և այնպէս, ես կ'ուզէի մի վերին աստիճանի կարևոր միջադէպ պատմել, որը պարզ ցոյց է տալիս, թէ ինչպէ՞ս յեղափոխական ոգին սեփականութիւն է դարձել անգամ ռայեղափոխական ոգին...

հարին։ Այս դէպքը, ընկերնե՛ր, կարող է ձեզ ծիծաղ պատճառել, բայց նա արտասւելու չափ սրտառուչ է և մխիթարական։

«Ինչպէս ձեզ յայտնի է, Սարատովի նահանգը և պատմական Վոլգայի ամբողջ շրջանը գալարւում է սովի պողպատէ ճանկերում։ Միլիոնաւորներ, ամիսներ շարունակ, արածում են. բուսականութիւնն անգամ հատնում է. իսկ դրանից առաջ նրանք սպառել էին բոլոր տեսակի կենդանիները, չխնայելով նոյնիսկ միջատները։ Եւ այսպէս, այդ միլիոնաւոր սովահար բազմութիւնները մի օր բազմամարդ ժողով են գումարում, իրենց անելիքի մասին մտածելու։ Հիւծւած, նւաղկոտ և անկար՝ ճառախօսները ամբիոն են բարձրանում խօսելու։ Նրանց մէջ գտնւում են որկրամոլ հակայեղափոխականներ, որոնք վատ ակնարկութիւններ են անում յեղափոխութեան հասցէին և գովեստներ շռայլում տապալւած հին կարգերին։ Եւ, օ՜ հրաշք, այս տիպի ճառախօսները, դեռ իրենց տեղերը չնստած, գետին են ընկնում և հոգիները աւանդում։ Ժողովականները, որպէս մէկ մարդ, յարձակւում են սրանց դիակների վրայ և բզիկ-բզիկ անելով ուտում։ Ապա՝ այդ ահռելի տեսարանից յետոյ, ժողովը միաձայնութեամբ գտնում է, որ սովի միակ և իսկական աղբիւրը բուրժուազիան է, և որովհետև նա այլևս գոյութիւն չունի իր ծանր պատասխանատւութիւնը քաւելու համար՝ որոշում են յարձակւել գերեզմանոցների վրայ և նրանց դիակները հանելով՝ գործածել որպէս պարէն։

«Մեր մանրակրկիտ քննութիւնները պարզել են, որ յեղափոխական այս երևոյթը հետեւանք է ոչ այնքան սովի, որքան յեղափոխականութեան։

«Ահա՛, ընկերնե՛ր, մի յուզիչ, մի արտակարգ և տարօրինակ դէպք, որը գալիս է ապացուցելու, թէ մեր վարած պայքարը ինչքա՜ն է խորացրել ու լայնացրել դասակարգային շերտաւորումը, անհաշտութիւնն ու ատելութիւնը, միևնոյն ժամանակ գիւղացուն ու բանւորին մղելով դէպի իր շահերի խորին գիտակցութիւնը։

«Ուրեմն, կեցցէ՛ Կոմկուսը։

«Կեցցէ՛ սոցիալիզմը։

«Կեցցէ՛ պրոլետարիատը։

«Ես՝ ընկերնե՛ր, վերջացրի»։

Զեկուցումը վերջացնելով՝ Ցիմերմանը՝ ամենայն բա-
ւականութեամբ և ծանր աշխատանք կատարած մարդու հա-
ճոյքով `սրբեց ճակատից հոսող քրտինքը և, ըստ ընդունուած
սովորութեան, թուղթն ու մատիտը վերցրեց իրեն ուղղուած
հարցերը գրելու:

— Դու հարցեր չունե՞ս տալու, ընկեր հրամանատար,—
ասաց նախագահը՝ դիմելով զինուորականին:

— Ընկեր քարտուղարը այնքան բազմակողմանի հարցեր
շօշափեց և լուսաբանեց, որ ես միանգամայն բաւարարուած եմ,
— խօսեց կարմիր հրամանատարը,— ես կ'ուզէի միայն իմա-
նալ, թէ ճապոնացիների կողմից Սախալին կղզիի գրաւումը
նպատակ ունի հակայեղափոխութիւնը կռնակից հարուածելո՞ւ,
թէ՞ դա մի նուաճողական քաղաքականութիւն է և իմպերիա-
լիստական խաղ:

— Այո՛,— ասաց Ցիմերմանը՝ հարցը գրի առնելով:

— Յետոյ,— շարունակեց հրամանատարը,— Վոլգայի
շրջանի սովահար բազմութիւնները, որոնք այնքան յեղափո-
խականօրէն են տրամադրուած, չի՞ կարելի շահագործել որպէս
հում նիւթ, մեր պայքարը աւելի ուժեղացնելու. այսինքն՝ նը-
րանցից երիտասարդները զօրակոչի ենթարկել և խառնել
Կարմիր Բանակի շարքերը:

— Շա՛տ կարևոր հարց է,— ասաց Ցիմերմանը՝ գլխի
հաւանութեան նշանով:

— Երրորդ և վերջին հարցը,— յարեց հրամանատարը,
— Կոմկուսը, որպէս յեղափոխութեան նախաձեռնողը և վա-
րիչը, ի՞նչ միջոցներ է նախատեսել այն օդաչուների նկատ-
մամբ, որոնք կռուի տաք և վճռական րոպէին խնդիրներ են
վերցնում թշնամուն լրտեսելու, բայց անցնում են հակառա-
կորդի կողմը և մեր զինուորական գաղտնիքները յայտնելով
Սպիտակ հրամանատարութեան, կռւում մեր դէմ:

— Աւելի քան կարևոր:

— Կարող էք պատասխանել, ընկե՛ր քարտուղար,— ա-
սաց նախագահը:

— Կարմիր հրամանատարի տուած հարցերից,— պատաս-
խանեց Ցիմերմանը,— առաջինը վերաբերում է արտաքին քա-
ղաքականութեան, որի մասին Կոմկուսը պարզ և որոշ տեսա-

կէտ ունի. լինել ամենքի հետ և ամենքի դէմ, իսկ ներխոր-
հալ նուաճումները նա համարում է ապադասակարգային հարց,
հետևեաբար, անկարևոր: Իսկ երկրորդ հարցը, որ վերաբե-
րում է սովահար բազմութիւններից Կարմիր Բանակ կազմե-
լուն՝ դէմ է Կոմկուսի վարած ներքին քաղաքականութեան այն
հասարակ պատճառով, որ սովահարները յեղափոխական են
մինչև այնքան ժամանակ, քանի դեռ անօթի և քաղցած են,
հէնց որ կշտացան, նրանք դառնում են մէկ-մէկ հակայեղափո-
խականներ, Կարմիր Բանակը քայքայող և նրան պարտութիւ-
նից պարտութիւն առաջնորդող: Եւ, վերջապէս, դա զուտ
մարդասիրական խնդիր է, որով կարող են զբաղուել միայն
քրիստոնէական ընկերութիւններ և ամերիկացի պատուելիներ,
բայց ոչ երբեք մի յեղափոխական կուսակցութիւն, որպիսին
է Կոմկուսը:

Գալով երրորդ, վերջին և ամենակարևոր հարցին, պիտի
ասել, որ այդ մասին վաղուց ազդարարութիւն է եղած հար-
ւածային կարգով: Եւ եթէ չեմ սխալւում, թիւ 7687 դեկրե-
տում ասւած է մօտաւորապէս հետևեալը.

«Կարմիր Բանակից՝ դաւաճանօրէն հակառակորդին օգ-
նող և նրա կողմն անցնող անհատների փոխարէն պատասխա-
նատու են համարւում և պատժւում, յեղափոխական ժամանա-
կի դաժանութեամբ, նրանց հարազատները, ազգականներն ու
բարեկամները, իսկ այդպիսիների բացակայութեան կամ չլի-
նելու դէպքում, նոյն պատասխանատուութեան են ենթարկւում
փախստականի ծանօթները և ընկերները»:

«Այստեղից պարզ երևում է, որ թշնամու գիծն անցնող
ու չվերադարձող օդաչուները պատժելու համար `պէտք է պա-
տանդ վերցւեն նրանց գերդաստանը, ազգականներն ու բարե-
կամները, մինչև որ փախչողները ինքնակամ գան ու յանձնւեն:

«Ես՝ ընկերնե՛ր, վերջացրի»:

Ցիմերմանից յետոյ զեկուցում կարդաց կարմիր հրամա-
նատարը: Նա մանրամասն նկարագրեց բանակի կարիքները,
ներկայացրեց թշնամու ուժն ու պատրաստութիւնը, առանձնա-
պէս կանգ առաւ բանակի կարգապահութեան վրայ, և գտաւ,
որ կարգապահութիւնը դեռ չի հասել այն աստիճանի, որ բա-
նակը նորանոր սխրագործութիւնների անցնի. շեշտեց, որ

բանակում բացակայում են մտաւորականները, սպեցները և առաւելապէս սպաները: Չմոռացաւ յիշատակել, որ երբեմն, այդ պակասները լրացնելու համար, ռազմաճակատն են ուղարկւում պատասխանատու ընկերներ և կոմիսարներ, որոնք միջամտելով զինուորական գործերին, աւելի շուտ խանգարում, քան օգնում են:

Որպէս օրինակ, նա յիշեց կոմիսար Մելիքովի դէպքը, մեղադրեց նրան, որ առանց հրամանատարական կազմի հաւանութեան և գիտութեան, աջ թևի վրայ գիշերային յարձակման է գնում և ահագին զոհեր տալով՝ գերի ընկնում մի քանի տասնեակ ընկերներով: Գանգատի խօսքեր ասաց վարձկան չինացիների մասին, որոնք բարձր գներով են ծառայում և յարմար առիթին անցնում հակառակորդի կողմը: Բանակի անմխիթար վիճակը ներկայացնելուց յետոյ, հրամանատարը յոյս յայտնեց, որ բանակը հետզհետէ գոյն և կերպարանք է ստանում և կարճ ժամանակամիջոցում ի վիճակի կը լինի իր վրայ դրւած կարմիր պարտականութիւնը կատարելու յանուն յեղափոխութեան և համամարդկային գաղափարների:

Կարմիր հրամանատարի զեկուցման առիթով, գերի ընկած կարմիրների մասին մի քանի բացատրութիւններ տւեց նախագահը:

— Ես անձամբ ճանաչում եմ կոմիսար Մելիքովին,— ասաց նա,— անգործնական, ապիկար, հանդարտաբարոյ և յեղափոխութիւնը կատակ համարող մէկն է. լինելով նախկին դեմոկրատ, դեռ չի ազատագրւել մարդասիրական նախապաշարումներից: Նա ճակատ առաքւեց, որպէսզի եփւի յեղափոխական պայքարի մէջ և նոր մարդ դառնայ: Թիկունքում եղած ժամանակ, ականջիս լուրեր էին հասնում, որ նա Արտակարգ Ցանձնաժողովի դաժանութիւնը քննադատում է և ներողամըտութեան միտումներ ցուցահանում հանդէպ հակայեղափոխականների: Մենք ինքներս նրան պէտք է պատժէինք, բայց լաւ է եղել, որ գերի է ընկել. Թո՛ղ իր մեղքերը քաւի հակայեղափոխականների մարդասիրութեան և լայնախոհութեան մէջ: Նոյն տիպի մարդիկ են նաև միւս կոմիսարները, ինչպէս և մեր մի գործակալը, որը վերջերս զղջումի նշաններ էր ցոյց տալիս: Եւ, վերջապէս, իսկական կարմիրները գերի չեն ընկնի.

նրանք կամ մեռնում են, կամ ինքնասպանութիւն գործում, հակառակորդի ձեռքը չընկնելու համար: Դրանք՝ ո՛չ այս են արել և ո՛չ այն:

Ապա՝ նախագահը, իր հերթին, վերապահումներով, կարճ տեղեկութիւններ հաղորդեց Արտակարգ Ցանձնաժողովի գործունէութեան մասին: Նա չեշտեց Չեկայի վճռական դերը յեղափոխութեան մէջ, համարելով այն՝ կարմիր և արթուն պահակ, որը սանձել գիտէ թիկունքի և ճակատի սև ուժերը, որոնք ձգտում են վերականգնել ընկած և ջարդւած հին կարգերը: Ի զարմանս միւսների, յայտնեց, որ իրենք արդէն կապ են պահում Սպիտակ գծից ներս մնացած ընկերների հետ, որոնցից մէկը, սափրիչի պաշտօնով, կարողացել է թափանցել մինչև իսկ հրամանատարական կազմը, ծանօթ է գլխաւոր հրամանատարին և ուրիշ աչքի ընկնող զինուորականներին:

Անցնելով կալանաւորների հարցին, նա ասաց, որ հակայեղափոխականները ամէն տեղ և ամէն պարագայի նոյնն են. դէմ են յեղափոխութեան և չեն ուզում ընթանալ այն հունով, որով մենք ենք գնում: Այս բաւական է, որ բոլորն էլ պատժւեն: Մենք ժամանակ չունենք նրանց անմիտ պատճառաբանութիւնները լսելու. նրանք մեզ չեն ուզում լսել և մեզ հետ չեն:

Մանրամասնութիւնները զանց անելով՝ բանտարկեալները կարելի է բաժանել մի քանի դասի: Հակայեղափոխականների մէջ կարևոր և վտանգաւոր տեղ է գրաւում սպայական կաստան, որի ուղեղը կազմող յիսուն և ինը զօրավարները արդէն մեր «տրամադրութեան» տակ են: Դրանից անմիջապէս յետոյ գալիս է սոցիալ-դաւաճանների դասը, որ աւելի վտանգաւոր է, քան առաջինը: Սրանք յեղափոխութիւնը չփոթի են մատնում իրենց անցեալ ազդեցութեամբ և չակերտաւոր յեղափոխական հռչակով: Սրանց մէջ են նաև անջատողականները բոլոր ազգերի. սրանք յեղափոխութիւնը ուզում են ճիւղաւորել, իրենց ազգային հնացած հարցերով: Երրորդ դասը բուրժուազիան է, որ թէև ոչ մի տեղ և ոչ մի կէտում կազմակերպւած դուրս չեկաւ մեր դէմ, իր դիրքերը պաշտպանելու, բայց նրա ներկայութիւնը ժողովրդի մէջ անտրամաբանական է, որովհետև մեր պայքարը դասակարգային է: Եթէ բուրժուազիան

ազատ լինի, մեր կուլուբը կորցնում է իր սոցիալական կերպարանքը և հետևաբար, հալածանքը բուրժուազիայի դէմ՝ դառնում է անխուսափելի և մեր նպատակներից առաջինը: Զորքորդ և վերջին խումբը որակել շատ դժուար է, որովհետև այստեղ ամէն տիպի, դասի և դիրքի տէր մարդիկ կան, սոցիալական դրութեամբ իրար հակառակ և ներհակ: Այս խմբին «խառն» անունը կարելի է տալ: Այստեղ դանուում են բանուորներ, գիւղացիներ, մանր առևտրականներ, սպեկուլանտներ, կղերականներ, ծերեր, կանայք և երեխաներ, որոնք յայտնապէս, այս ու այն առիթով, անհանգստել են յեղափոխութիւնը և ուրիշ ակտերով իրենց համակրութիւնն են ցոյց տուել նահանջող Սպիտակ Բանակին: Այսպէս, օրինակ, սրանց հետ բանտարկած է մի կօշկակար իր կնոջ հետ, որ սև դրօշակ է բարձրացրել տանիքի վրայ այն ժամանակ, երբ կարմիր բանակը, տաք կուլից յետոյ, թշնամու ուսերի վրայով, ներխուժել է քաղաքը: Այստեղ են նաև մի քահանայ և երկու տիրացու, որոնք խաչով-խաչվառով են դիմաւորել Սպիտակ Բանակը:

— Անհնարելի յանցա՞նք,— բացադանչեց Յիմերմանը:

— Ոճի՛ր, ոչ թէ յանցանք,— ուղղեց հրամանատարը, աւելի կարմիր երեսալու ցանկութեամբ:

— Եւ, վերջապէս,— շարունակեց նախագահը,— սրանց մէջ կայ մի գիւղացի, որի տունը խուզարկելու ժամանակ բացադանչել է.—

«Եթէ այս է գիւղացիների իշխանութիւնը, վա՛յ մեզ»:

Կան նաև մի քանի բանուորներ, որոնք հրաժարուել են ուղիը ժամից աւելի աշխատել, և այդ՝ այն ժամանակ, երբ մեզ հարկաւոր է եղել քան և չորս ժամւայ հարաճապային աշխատանք կատարել: Սրանց թուումն է նաև անատամ մի պառաւ ադնաականուհի, որի պահարում գտնուել է ցարի ոսկեզօծ չըքաղնակով նկարը: Երբ մեր ընկերները վամպիրի նկարը ձգում են ոտքի տակ և ջարդում, նա վայ է տալիս գլխին և լացկումած: Այս կարգով և նման ծանր յանցանքներով կան ուրիշ շատ բանտարկեալներ:

— Արտակարգ Յանձնաժողովը ի՞նչ միջոցներ է նախատեսում այդ կարգի դատապարտեալներին պատժելու համար,— շտապեց հարցնել Կոմկուսի քարտուղարը:

— Արտակարգ Յանձնաժողովի գործունէութիւնը յեղափոխական կարգով առաջ է տարուում,— պատասխանեց երիտասարդը իր սովորական պաղարիւնութեամբ,— բանտերը լեցուում ու դատարկուում են, նորերին տեղ պատրաստելու համար: Արդէն մի քանի հազար մարդ «մխսած է», իսկ մնացեալները «հերթական թեկնածուներ են»: Սակայն «գործը» օրինական ձեւակերպութեան տակ դնելու համար՝ յեղափոխական տրիբունալի կազմութիւնը անհրաժեշտ է: Եւ դա երկու դիտաւորի պատճառով. նախ՝ որ յեղափոխական մասսաները կը համոզուեն, որ մենք օրէնքով պատժել դիտենք բանուորա-գիւղացիական իշխանութեան թշնամիները. և երկրորդ, որ տրիբունալի հրապարակային դատերը մեծ էֆէկտ պիտի թողնեն դրչ և տատանուղ մասսաների վրայ: Մի գիւղացու, մի իշխանուհու և կամ մի կօշկակարի դնդակահարութիւնը լինքնըստինքեան չնչին բան է, և այդ մասին չատ քչերը պիտի իմանան: Բայց երբ նրանք դատւելուց յետոյ են քաւում իրենց մեղքերը այդ արդէն ուրիշ բան է:

— Յեղափոխական կարգով՝ խնայողական ծրագիր է,— հաստատեց Յիմերմանը:

— Միանգամայն համաձայն եմ,— վրայ բերաւ հրամանատարը,— բայց եթէ բոլորը դատից անցնեն, մենք ահագին ժամանակ կը կորցնենք և մեծ թուով մարդիկ պիտի զբաղեն այդ աննշան գործով:

— Մոռացայ ասել,— բացատրեց երիտասարդը,— որ տրիբունալը երեք հոգուց բաղկացած պիտի լինի, մի դիւղացի և մի բանուոր, որպէս պրոլետարիատի իշխանութիւնը խորհրդանշող, որոնք նախօրօք սանկցիա պիտի ստանան: Իսկ ժամանակի տեսակէտից մենք կորուստ չենք կարող ունենալ, որովհետև տրիբունալը երկար-բարակ քննութեամբ չպիտի զբաղուի. մի քանի հարց, մի քանի պատասխան, առանց վկաների, առանց փաստաբանների և առանց պաշտպանողական ճառերի, ուղղակի յեղափոխական կարգով, կարճ ու կտրուկ:

— Հարցը պարզ է,— նորից համաձայնեց Յիմերմանը:

— Առաջարկը անցնում է,— հաստատեց կարմիր հրամանատարը՝ միշտ զարմանալով, թէ ինչպիսի՛ քաջութիւն ունի հակաճառելու:

Նախագահ Գրիչա Աղաբէկովը ժողովը փակած յայտարարեց և սեղանի վրայ երևացին Շուստովեան կոնեակի չիչերը, որից յետոյ մեռած քաղաքը և քաղաքի մէջ եղած բանտերը, ընդմիջումներով, լսում էին միջազգայնական երգի յանկերգը.—

«Սա մեր վերջին և վճռական կռիւն է»:

V

Ցեղափոխական Տրիբունալը պատրաստւում էր գործն անցնել: Նրա կազմի մէջ մտնում էին օրւայ իշխանութիւնը խորհրդանշող երեք հոգի — մի գինւոր, մի գիւղացի և մի բանւոր: Այս մարդիկ պատահական անձնաւորութիւններ չէին: Սրանք թէև դատ-դատաստանից և արդարութիւնից բան չէին հասկանում, բայց ունէին յեղափոխական խառնւածք և արժանաւոր անցեալ:

Ձինւորը, յեղաշրջման առաջին օրերում, երբ դեռ ամէն ինչ անորոշ էր և յեղափոխութիւնը խարխափում, համարձակւել էր զօրանոցում բղաւել.—

«Կորչի՛ պատերազմը, ղէպի տո՛ւն»:

Գիւղացու անցեալը աւելի փառաւոր էր: Այդ միևնոյն օրերին, երբ նրա գետնախնձորի մի մասը բռնագրաււած էր մայրաքաղաքի ազգաբնակչութեան համար, նա ամենայն յանդգնութեամբ և դասակարգային խորին գիտակցութեամբ՝ ըսպառնացել էր.—

«Քաղաքի համբանները մեր գետնախնձորը չե՛ն մարսի»:

Պակաս անցեալ չունէր նաև բանւորը: Մի հրապարակային ժողովում, ուր օրւայ ճառախօսները դուրս էին եկել «գիշեր ու ցերեկ աշխատանք» և «պատերազմը մինչև յաղթական վախճանը» կարգախօսներով, նա, ամէն վտանգ արհամարհելով, բարձրացել էր բեմը և յաղթ ձայնով գոռացել.—

«Կեցցէ՛ ութ ժամեայ բանւորական օրը, կեցցէ՛ սոցիալիզմը»:

Տրիբունալի այս երեք անդամներից՝ գինւորը անգրագէտ

էր, գիւղացին հազիւ կարող էր ստորագրել, իսկ բանւորը ազատ կարդում էր լրագիրը, բայց քիչ բան էր հասկանում:

Դատավարութիւնից մի օր առաջ նրանք բերանացի ցուցմունքներ ու հրահանգներ էին ստացել մեղադրեալներին դատելու համար: Նրանց որոշապէս ասւած էր, որ դատավարութիւնը պէտք է դրւի դասակարգային հողի վրայ, քանի որ մեղադրեալները, իրենց ընկերային դիրքով, պատկանում են դանդաղ դասակարգերի, դասերի և խաւերի: Դատաւորներին յայտնւած էր նաև, որ դատավարութիւնը ինչ ընթացք էլ որ ունենայ, մեղադրեալները ինչ յանցանքի տէր էլ որ լինեն, բոլորի համար պատիժը մէկ է և անխուսափելի...

Եւ ահա՛, աշնան մի գեղեցիկ օր, երբ արևը բարձրացել էր երկնակամարի վրայ և հաճելի ջերմութեամբ կեանք էր տալիս նորից ծլած վտիտ խոտերին, չողում էր կանաչած արտերի և մարգագետինների վրայ, հատւսարապէս թափանցելով ծառերի թաւուտքներում, ուր խմբովին ճուռղում էին սարեակներն ու ճնճղուկները, այդ նոյն օրը, նոյն արևի լոյսի և ջերմութեան տակ, յիսուն սւինաւոր զինւորներ, համաչափ քայլերով, արագընթաց, լո՛ւռ և մտածկոտ, գնում էին դէպի բանտը: Քաղաքը մեռած էր, և մարդիկ վարագոյրների տակից էին դիտում անցնող զինւորները: Փողոցներում ազատ քայլում էին միայն չները և անտէր կատուները, որս փնտռելով երբեմնի բանուկ փողոցներում, խոնաւ պատերի տակ և կիսակործան տների մէջ:

Երկու օր առաջ պատերին փակցւած էր մի ազդարարութիւն—«Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն»վերնագրով, ուր ասւած էր, թէ Ցեղափոխական Տրիբունալը դռնբաց է դատում պրոլետարիատի թշնամիները, և ցանկացողները կարող են ներկայ լինել դատավարութեան:

Սակայն, ժողովուրդը չարագուշակ բան տեսնելով ազդարարութեան մէջ, յամառում էր փակւած մնալ տներում և վախենում էր դուռը բաց անել, վտանգը ներս չընդունելու համար: Բայց քաղաքի խաղաղութիւնը, ճեղքւած սաւանի լռկանութեամբ, պատւեց զինւորների յանկարծական քայլերգով, որին արձագանգ տւաւ զինւորական երաժշտախումբը քաղաքի հեռաւոր ծայրից:

Զինուորները՝ հանելով գլխաւոր բանտի դարբասին՝
կանգ առին: Կալանաւորների խումբը, որ վաղուց խառն ի
խուռն սպասում էր բանտի ընդարձակ բակում, հրաման ստա-
ցաւ քառեակներով դուրս ելնելու:

Առաջին շարքում կանգնած էին այն չորս բանւորները,
որոնք մեղադրւում էին որպէս գործադուլի պարագլուխներ:
Երկրորդ շարքի մէջ էին կօշկակարը իր կնոջ հետ, որոնք սեւ
դրօշակ էին բարձրացրել իրենց հիւղակի տանիքին, կարմրնե-
րի կողմից քաղաքը գրաւելու պահուն: Սրանց հետ էր նաև
գիւղացին, որ իշխանութիւնն էր անւանարկել, և իշխանուհին,
որի մօտ ցարի պատկեր էր գտնւել: Երրորդ քառեակում կան-
գնած էին քահանան և երկու տիրացուն, որոնք խաչով-խաչ-
վառով էին դիմաւորել Սպիտակ Բանակը, ինչպէս նաև մի
սպայ, նորաւարտ, անբեխ, անմիրուք: Հետագայ քառեակում
աչքի էին ընկնում երկու հաստափոր և խստապարանոց մար-
դիկ, ինչպէս և մի վարժապետ, ադադուն կազմւածքով և բա-
րի դէմքով: Ապա սրանց հետևում էին մի քանի անծանօթներ,
ահարկու արտաքինով և պարթև հասակով:

Երբ անունների ստուգումը վերջացաւ, կալանաւորները
հրաման ստացան առաջ շարժւելու: Բանտի պարիսպներից
դուրս գալով ՝նրանք ընկան սւինների շղթայի մէջ: Զինուոր-
ները անմիջապէս գօտևորեցին այս դորշ դանգւածը և յիսնա-
պետի հրամանով ճամբայ ընկան դէպի շէնքը Յեղափոխական
Տրիբունալի:

Զինուորական երաժշտախումբը շարունակում էր պտտել
գլխաւոր փողոցները և յեղափոխական երգեր նւագել՝ հանդի-
սատեսներ հաւաքելու համար: Անսպասելի յաջողութիւն: Նւա-
գախումբը ահագին բազմութիւն էր քաշ տալիս իր ետևից:
Բացի մի քանի երեխաներից, թափօրին հետևում էին երկու
նաւաստի, երեք խոհարարուհի և մէկ զինւոր, որոնք արևածա-
ղիկի կուտ էին ուտում և սիրաբանում. յետոյ գալիս էին երեք
պառաւ, օրւայ դէպքի մասին տաք վէճի բռնւած, և մի հաշմ-
անդամ՝ անվերջ հայհոյելով:

Այս բազմութիւնից առաջ Տրիբունալի հրապարակն էին
հասել և անհամբեր սպասում կալանաւորների մօտիկ բարե-
կամները և ծանօթները:

Վերջապէս, հասաւ նաև կալանաւորների խումբը և յոգ-
նաբեկ կանգ առաւ:

Քառորդ ժամից նրանք նոյն կարգով և հսկողութեամբ
ներս մտան Տրիբունալի դահլիճը և տեղաւորւեցին մեղադրեալ-
ների նստարանների վրայ: Հանդիսատեսները նոյնպէս բռնեցին
իրենց տեղերը: Կարմիր զինւորների մի մասը դուրս կանգնեց,
մի քանիսը դռների աջ ու ձախ, իսկ միւսները մնացին դահլի-
ճում, կալանաւորներին հսկելու: Նւագախումբը տեղաւորւեց
սրահի աջ կողմը: Ամբիոնի վրայ դրւած էին երկու կոշտ սե-
ղան, իսկ դահլիճի ճակատը զարդարում էր կարմիր դրօշակը՝
մուրճ ու մանգաղով և հետևեալ մակագրութեամբ.—

«Պրոլետարնե՛ր բոլոր երկիրների՝ միացէ՛ք»:

Սրահում տիրում էր երկիւղալի լռութիւն, և բոլորը
ակնապիշ նայում էին բեմի դռնակին, որտեղից ներս պիտի
մտնէին սոցիալիստական առաջին դատաւորները, իրենց հետ
բերելով նո՛ր արդարութիւն և նո՛ր օրէնք: Ձնայած, որ Տրի-
բունալի անդամները պատրաստ էին ներս գալու և դատավա-
րութիւնը ժամանակին սկսելու, բայց դիտմամբ ուշանում էին,
աւելի տպաւորութիւն գործելու և աւելի հետաքրքրութիւն
շարժելու:

Նշանակւած ժամանակից ուղիղ մէկ ժամ անց՝ նրանք
ամբիոն դուրս եկան: Առաջինը ներս մտաւ դատաւոր բանւորը
և դրաւեց նախագահի աթոռը: Նրանից յետոյ եկաւ դատաւոր
գիւղացին, բռնելով նախագահի աջ կողմը և ապա՝ դատաւոր
զինւորը, նստելով նախագահի ձախը: Ամենից յետոյ եկան
երկու գրագիրներ, որոնք տեղ բռնեցին յարակից սեղանի
շուրջը և ժամանակը դնահատող մարդկանց աճապարանօք՝
սկսեցին բաց անել թղթապանակները:

* * *

Ահարկու լռութեան մէջ նախագահը ոտքի կանգնեց, ան-
հանդիստ շարժումով անգլիական կէպը շպրտեց սեղանի վրայ
և, մի քանի անգամ շրթունքները լզելով՝ ասաց.—

— Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր, յանուն համայն պրոլե-
տարիատի և յանուն Բանւորա-Գիւղա-Զինուորական Իշխանու-

թեան, Ցեղափոխական Տրիբունալի առաջին նստաշրջանի առաջին նիստը բացած եմ յայտարարում:

Այս ասելիս՝ նախագահը հանդիսաւորութեամբ չարժեց ցուցամատը և ամբողջ սրահը ոտքի կանգնեց: Երաժշտախումբը նուագեց «Միջազգայնականը», որից յետոյ կարգապահութեամբ և անաղմուկ թողեց դահլիճը. ապա սկսեց պրոլետարիատի Թշնամիների դատավարութիւնը:

Նոյն խորհրդաւոր լռութեան մէջ, դատաւորների մի վայրկեան տևող փսփսուկից յետոյ, քարտուղարներից աւագը, նիհար ու բարձրահասակ, կարդաց հետևեալ մեղադրականը.—

«Այն օրից, երբ պրոլետարիատը, յանձինս բանուորների, գիւղացիների և զինուորների, քաղաքական իշխանութիւնը իր ձեռքն առաւ տասնեակ հազար գոհերի գնով. այն օրից, երբ հազարամեակների միապետութիւնը տապալուեց, երբ արիստոկրատիան և բիւրոկրատիան խայտառակ ոչնչացան. այն օրից, երբ բանուորը գործարանին և գիւղացին հողին տէր դարձան, ու զինուորը սրանց պահապան. ահա՛ այդ օրից և դեռ շա՛տ առաջ, կիսաջախջախ բուրժուազիան, որ իր դիրքերը ամարդօրէն լքել էր և թեում էր, թէ մեռած է, անցել էր դաղտնի, հակայեղափոխական աշխատանքի, կամենալով նորից տէր դառնալու իր կորսւած իրաւունքներին, նորից չահագործելու բանուոր, գիւղացի և զինուոր դասակարգը, նորից կասեցնելու յեղափոխութեան ընթացքը և արգելք հանդիսանալու սոցիալիզմի յաղթանակին և հաստատման:

«Պատմական Մատերիալիզմը մեզ սովորեցնում է, որ բուրժուազիան երբե՛ք և ո՛չ մի դէպքում կամովին չի հրաժարուել իր դասակարգային չահերից, բայց անձամբ էլ դուրս չի եկել կուի, այլ նա, իր կապիտալի ուժով, պրոլետարիատի արիւն-քրտինքով դիզած հարստութեամբ վարձկան ուժեր է համախմբել և, կանգնած վարագոյրի ետև, կուիւ է մղել պրոլետարիատի դէմ, նրա իշխանութիւնը տապալելու համար: Պատմութիւնը նոյնութեամբ կրկնուում է նաև Սովետական Ռուսաստանում, սկսած Սախալին կղզուց մինչև Կովկասեան Լեռնանցքը և Բալտիկ ծովից մինչև Աֆղանիստանի սահմանները ,ուր արթուն նստած է համաշխարհային կապիտալիզմի իմպերիալիզմի առաջապահը — Անգլիան: Անգլիան՝ դա համաշխարհային հակայեղափոխութիւնն է, դա ինքը բուրժուազիան է, կազմակերպած, ուժեղ ու դաւադիր: Անգլիան չէ՞ր, որ համաշխարհային պատերազմի առաջին օրերին կիչները ղրկեց Ռուսաստան, որպէսզի կազմակերպի բուրժուական բանակը և պատերազմը յետաձգի երկար տարիներով: Անգլիան չէ՞ր, որ կապիտալիստական Ամերիկան պատերազմի քաշեց, որպէսզի ջախջախի գերման պրոլետարիատը, որին հաւասար մրցորդ էր համարում համաշխարհային չուկաներ ձեռք բերելու կրկէսում: Անգլիան չէ՞, որ քանիցս անգամ փորձել է Պոլիսը և Նեղուցները խլելու թուրք աշխատաւորների ձեռքից և արգելք հանդիսանալու թուրք և ռուս աշխատաւորութեան սերտ միացման և բարեկամութեան: Եւ վերջապէս, Անգլիայի խաղերի և ինտրիգների հետևանք չէ՞, որ այսօր հակայեղափոխութիւնը գլուխ է բարձրացրել ողջ Ռուսաստանում և ըսպառնում է հինը վերահաստատել բանուորների և գիւղացիների կործանման գնով:

«Այո՛, այս բոլորը արել է Անգլիան և անում է Անգլիան:

«Սակայն, պրոլետարիատը հասկացել է այդ բոլորը, նա կուի է դուրս եկել և հաւատացած է, որ Անգլիայի պարտութիւնը բուրժուազիայի պարտութիւնն է և նրա յաղթանակը՝ պրոլետարիատի պարտութիւնը: Անգլիա՝ դա մի աբստրակտ հասկացողութիւն չէ՛, դա մի իրական, ռէալ ուժ է, լինելով ամէն տեղ, ամէն բանի մէջ, աշխատելով մխիթարի իր չահի և գրպանի համար:

«Անմահ Մարքսը դեռ վաթսունական թւականներին նախատեսել է, որ Անգլիան, որպէս առաջնակարգ ինդուստրիալ երկիր, ինչպէս նաև Հոլանդիան, ամենից շուտ ենթակայ են սոցիալիզացիայի, և այսօր մենք ականատես ենք այդ մարգարէութեան իրականացման, որովհետև անգլիական պրոլետարիատը կանգնած է մեր ետև և հրճանքով դիտում է մեր մղած պայքարը:

«Պատմութիւնը երբեմն դառն կատակներ է անում: Կար ժամանակ, երբ պրոլետարները բոլոր երկիրների իրենց առաջին ազդանշանը սպասում էին Անգլիայից, իսկ այսօր մենք ենք, որ առաջին ազդանշանը տալիս ենք բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն... Եւ սա պատահականութիւն չէ, որովհետև մեզ

մօտ պրոլետարիատն է կազմակերպած, իսկ նրանց մօտ՝ բուրժուազիան. մենք այստեղ բուրժուազիան ենք խեղդում, նրանք այնտեղ պրոլետարիատն են ոտքի տակ ձգում. և վերջապէս, մենք ուղղակի գնում ենք դէպի սոցիալիզմը, նրանք՝ դէպի պարլամենտարիզմը. մենք տակից ենք սկսում, նրանք վերևից. մենք հող ենք ուզում, նրանք՝ ջուր. մենք քանդում ենք, նրանք՝ չինում. և այսպէս, մեր շահերը իրար հակառակ են և մեր կռիւը պիտի չարունակուի, քանի դեռ բուրժուազիան չանջանջած չէ վերջնականապէս:

«Մենք ապրում ենք համաշխարհային յեղափոխութեան նախօրեակին: Եւ այդ է պատճառը, որ անգլիական լորդերը իրենց սպիտակ ձեռքերը երկարել են Ռուսաստանի քաղաքական հնոցի մէջ՝ կրակը աւելի արծարծելու և աւելի բորբոքելու:

«Այսօր, այս հանդիսաւոր դատավարութեան, մարդկային պատմութեան մէջ առաջին անգամ լինելով, պրոլետարիատը, որպէս միահեծան և իշխող ուժ, մեղադրական նստարանների վրայ է քաշել իր դատի ոխերիմ թշնամիները»:

Այստեղ՝ քարտուղարը ընդմիջեց մեղադրականի ընթերցումը, սրբեց ճակատի քրտինքը, մի բաժակ ջուր խմեց և ուզում էր չարունակել, բայց թերթիկների սխալ դասաւորութեան հետևանքով դահլիճը թողեց մի քանի րոպէ տևող լռութեան և լարւածութեան մէջ:

Հանդիսատեսներից երեք պատւոները, որոնք մեղադրականը լսել էին սկզբից մինչև վերջը ամենայն ուշադրութեամբ, այժմ, դլուխ-գլխի տուած, հազիւ լսելի ձայնով, վիճում էին այն մասին, թէ կալանաւորներից ո՞րն է անգլիացին: Առաջին պատւոը միշտ մղում էր ընդունելու, որ երկու հաստափոր մարդկանցից կարմիր քթովն է անգլիացին. երկրորդը պնդում էր, որ անգլիացին անպայման միւսն է. իսկ երրորդը՝ ժխտելով և՛ մէկը և՛ միւսը, մատնանշում էր վարժապետը և փաստում էր, որ նա սպիտակ օձիք ունի և կարմիր փողկապ, հետևաբար նա է անգլիացին:

Նաւաստիները և խոհարարուհիները, ամբողջ ընթերցման ժամանակ, զղայնութեան վայրկեաններ ապրելով, հիմա տհաճութեամբ էին տանում ընթերցումի յապաղումը:

Ստահակ երեխաները, օգտուելով միջադարից, իրար բոթում էին, առանց սակայն ազատուելու հաշմանդամ մարդու խոժոռ հայեացքի և ցուցամատի սպառնալիքից:

Կալանաւորների աղջականներն ու բարեկամները աւելի մեծ տագնապ էին ապրում, քան բուն մեղադրեալները: Վերջինների մէջ միայն կօշկակարի պատւոը անհանգիստ և ջղային չարժում էր ցուցահանում, բայց կօշկակարը նրան հանգստացնում էր սիրալիր հայեացքներով: Իրենց պաղարիւնութեամբ և վայել կեցուածքով աչքի էին ընկնում գործադուլի պարագլուխ չորս բանւորները, իշխանութիւնն անւանարկող գիւղացին, ինչպէս նաև վարժապետը, որ չարունակ խառնում էր իր նօսր միրուքը՝ անսպառ և մեզմ ժպիտը դէմքին:

Վերջապէս, մեղադրական կարդացող քարտուղարը մի քանի անգամ հագաց՝ ի հրաւէր ունկնդրութեան և լռութեան, բերանը ծռմռեց, շրթունքները լիզեց և չարունակեց ընթերցումը՝ նորից սկսելով վերջին պարբերութիւնից.—

«Այսօր, այս հանդիսաւոր դատավարութեան, մարդկային պատմութեան մէջ առաջին անգամ լինելով, պրոլետարիատը, որպէս միահեծան և իշխող ուժ, մեղադրական նստարանների վրայ է քաշել իր դատի ոխերիմ թշնամիներին: Այս մարդիկ, իրենց խիստ սոցիալական դրութեամբ, միանգամայն հակոտնեայ են բուրժուազիային, բայց իրենց համոզումներով և մանաւանդ յեղափոխական պրոցէսում ի յայտ բերած իրենց արարքներով և գործելակերպով բացայայտ կերպով ծախւած են բուրժուազիային և, հետևաբար, Անգլիային:

«Համաշխարհային կապիտալիզմը և նրա արժանաւոր տէրը՝ բուրժուազիան, այնքան վնասակար չեն համաշխարհային պրոլետարիատի դատին, որքան նրանց սպասարկող անանուն և անյայտ մարդիկ, որոնք վխտում են ժողովրդական զանգւածների մէջ և որոնց տիպիկ մէկ խմբակն է, որ այսօր դատւում է: Սրանցից իւրաքանչիւրը ծանր մեղքեր ունի պրոլետարիատի հանդէպ, դրա համար էլ պրոլետարական արդարութիւնը նրանց դատի է քաշել յեղափոխական ժամանակի խստութեամբ:

«Ահա՛ այստեղ է նստած մի ծերունի կօշկակար իր պառաւ կնոջ հետ. նրանք համարձակութիւն և յանդգնութիւն են

ունեցել սև դրօշակ պարզելու իրենց խրճիթի ճակատին այն ժամանակ, երբ Սպիտակ Բանակը անկարգ նահանջել և երբ Կարմիր Բանակը հանդիսաւոր մուտք է գործել քաղաքը՝ Թշնամու ուսերի վրայով:

«Մեղաւորեալների մէջ է երբեմնի արիստոկրատիան ներկայացնող մի իշխանուհի, որի մօտ գտնւած է Ռուսաստանի բռնակալ ցարի՝ Նիկոլա երկրորդի ոսկեզօծ չրջանակով նկարը՝ խնամքով փաթթւած մետաքսէ կտորների մէջ: Երբ խուզարկութիւն կատարող կարմիր բանակայինները նկարը վերցնում և ոտքի տակ ձգում, իշխանուհին լաց է եղել մաղերը փետտելով:

«Սրանց մէջ են, բայց սրանց մէջ չպիտի լինէին, չորս բանւորները, որոնք ութ ժամեայ բանւորական օր են պահանջել այն ժամանակ, երբ մեզ անհրաժեշտ է եղել աշխատել հարւածային կարգով, օրական քսան և չորս ժամ: Երբ այս բանւորներին կարգի են հրաւիրում, սրանք, ամենայն անպատկառութեամբ, գործը թողնում և «կեցցէ՛ սոցիալիզմը» պոռալով՝ դուրս են գալիս գործարանից:

«Այստեղ է նստած մի գիւղացի, որը ոչ միայն հրաժարւել է ընդառաջ գնալ Բանւորա-Գիւղացիական իշխանութեան, այլ և համարձակւել է իշխանութիւնը անւանարկել, երբ բռնագրաւել են նրա պարէնի աւելցուկը բանակի կարիքների համար: Նա կանգնելով կատարւած փաստի առաջ և անկարող լինելով դիմադարձութեան՝ ամբողջ կոկորդով բղաւել է.—

«Եթէ այս է գիւղացիների իշխանութիւնը, վա՛յ մեզ»:

«Հանդիսաւորապէս այստեղ են նստել (և անբնական կը լինէր, որ այստեղ չլինէին) կղերական դասի փայլուն ներկայացուցիչները — մի քահանայ և երկու տիրացու: Այս աւանդական հակայեղափոխականները, փոխանակ կրօնական խիստ լռելեայնութեան, խաչով-խաչվառով են դիմաւորել Սպիտակ Բանակի մուտքը, երբ Կարմիր Բանակը, ռազմագիտական ինչ-ինչ պատճառներով, կարճ ժամանակի համար, ստիպւած է լինում թողնելու քաղաքը:

«Սրանց հետ և սրանց կողքին նստել է մեղադրեալի նըստարանի վրայ գինւորական կաստայի ներկայացուցիչը — մի նորաւարտ և երիտասարդ սպայ, որը, իր դասին յատուկ հակայեղափոխական նպատակով, փոխանակ իր փայլուն ուսադիրները ոչնչացնելու, նրանց խնամքով ծրարել և դրել է իր պայուսակը՝ մի օր նորից գործածելու, նորից իր ուսին դնելու յամառութեամբ: Ի՞նչ է նշանակում: Այդ նշանակում է, որ սպան անմեղ հաւատքով սպասել է ռեստաւրացիայի, ուրեմն նա ռեստաւրատոր է և կատաղի թշնամի պրոլետարիատին և նրա իշխանութեան:

«Այստեղ է նաև մի վարժապետ, որ իր կրթութեամբ, դաստիարակութեամբ և աչխարհայեացքով ներկայացնում է ինտելիգենցիան,— մի ինտելիգենցիա, որ արիստոկրատական տենդենցներ ունի, պահպանողական հակումներ և քաղքենի դաղափարաբանութիւն: Այս վարժապետը, լինելով տիպիկ ներկայացուցիչ իր դասի և հետևաբար, թշնամի աչխատաւորութեան և յեղափոխութեան, ոչ միայն հոգ չէ տարել, որ իր խնամքին յանձնւած երեխաները բուռն հետաքրքրութիւն ցոյց տան մեր օրերում կատարւած պատմական խոշոր նշանակութիւն ունեցող քաղաքական դէպքերին, այլ մթագնել է բանւորների և գիւղացիների զաւակների միտքը՝ նրանց ուշադրութիւնը սահմանափակելով դպրոցի և դպրոցական նեղ, մի-օրինակ և ձանձրալի խնդիրների չուրջը: Այդ բոլորը մասամբ կարելի է ներելի համարել, ի նկատի ունենալով նրա սահմանափակ պրոֆեսիան: Բայց նա դրանով չբաւականանալով՝ անցել է ակտիվ գործունէութեան: Այսպէս, օրինակ, սպիտակների ժամանակ, «Առողջապահական խնդիրները» թեմայով իր մէկ դասախօսութեան մէջ ասել և մի քանի անգամ չեչտել է հետևեալ վիրաւորական և վարկաբեկիչ արտայայտութիւնը.—

— «Երեխանե՛ր, մի՛ լինէք այնպէս ոջլոտ, ինչպէս գինւորները, և այնպէս կեղտոտ, ինչպէս գիւղացիները»:

«Ի՞նչ է նշանակում այս: Այս նշանակում է, որ վարժապետը նպատակ և դիտում է ունեցել վարկաբեկելու պրոլետարիատը, որ արհամարհելով բուրժուական և արիստոկրատական նախապաշարումներն ու աւելորդ հոգսերը՝ իր դասակարգային պայքարն է մղում նրանց դէմ, որոնց չարքն է անցել ինքը, վարժապետը. ասել է թէ՝ ինտելիգենցիան: Ո՞ւմ յայտնի չէ, որ կեղտն ու ոջիլը բուրժուազիան և կապիտալիզմն են վաթթել բանւորների, գիւղացիների և գինւորների

չինքը, որից ուզում են մէկ անգամ և ընդմիշտ ազատագրուել:

«Եւ, վերջապէս, այստեղ են նստած աշխատաւորութեան արիւնը ծծող երկու բուրժուաները, որոնցից մէկը եկել է Հանքային Ջրերը իր վիզն ու փորը աւելի հաստացնելու, իսկ միւսը՝ չարաշահութեամբ և խաբեբայութեամբ հարստանալու:

«Արժանաւորապէս այս բոլորի հետ դատւելու են բերւած նաև երկու աւազակները, որոնք օգտւելով քաղաքական խառնակ կացութիւնից, մարդիկ են կողոպտել, թալանել և սպանել: Այս երկու ոճրագործները, «կանանչ» անւան տակ, բազմիցս անգամ աւերի են տւել մեր բանակի պաշարակիրը սայլերը, նպատակ ունենալով կասեցնելու մեր չեչոտակի առաջխաղացութիւնը:

«Այս տասն և եօթ անձերը, որոնք մեղադրւում են քաղաքական, հասարակական և քրէական զանազան ծանր յանցանքների համար՝ յանձնւած են պրոլետարիատի Բարձրագոյն Դատարանին, որի արդարութիւնը չպիտի ուշանայ, և յանցագործները իրենց արժանաւոր պատիժը պիտի կրեն յեղափոխական ժամանակի ամբողջ թափով և խստութեամբ: Այսօր, այս հանդիսաւոր ու դռնբաց դատավարութեան, մարդկային պատմութեան մէջ առաջին անգամ լինելով, պրոլետարիատը, որպէս միահեծան և իշխող ուժ, մեղադրական նստարանների վրայ է քաշել իր դատի ոխերիմ թշնամիները:

«Կեցցէ՛ Ցեղափոխական Տրիբունալը:

«Կեցցէ՛ համաշխարհային պրոլետարիատը:

«Անկցի՛ բուրժուազիան:

«Անկցի՛ կապիտալիզմը:

«Անկցի՛ն պրոլետարիատի ոխերիմ թշնամիները»:

* * *

Երբ մեղադրականի ընթերցումը վերջացաւ, աւագ քարտուղարը տիրական հայեացքով աչքերը պտտցրեց մեղադրեալների վրայ, նոյն արտայայտութեամբ նայեց հանդիսատեսներին, ապա՝ դառնալով բանւոր նախագահին՝ ասաց.—

— Ես՝ վերջացրի, ընկե՛ր նախագահ, կարող էք սկսել դատավարութիւնը:

Ու նախագահը՝ իր ձեռքը բռնած անւանացանկով՝ կանչեց կօշկակարը և նրա կինը:

Մեղադրեալները կանգնեցին, առանց տեղից շարժւելու:

— Առա՛ջ եկէք,— հրամայեց նախագահը:

Մերունին և պառաւը առաջ եկան:

— Ի՞նչ ունէք ասելու,— հարցրեց նախագահը:

— Ի՞նչ ունենք որ՝ ի՞նչ ասենք,— խօսեց կօշկակարը,— փորձանքը որ գայ, կը գայ. տասը հազար անգամ այս պառաւին ասացի, որ լացք չանի, մի քանի օր համբերի. բայց իր ասածն արաւ և այսպիսի փորձանք բերաւ գլխներիս. մնացածը Թո՛ղ լինքը պատմի:

— Սեւ դրօշակ պարզե՞լ էք ձեր տան վրայ,— հարցրեց նախագահը:

— Ո՛չ,— ասաց պառաւը լալկան ձայնով և դողալով:

— Հապա՞...

— Թո՛ղ որ գլխից պատմեմ,— խնդրեց պառաւը արցունքները սրբելով:

— Պատմի՛ր,— հրամայեց նախագահը խրոխտ ձայնով:

— Աստւա՛ծ, երկի՛նք, գետի՛ն վկայ, եղելութիւնը սա է,— սկսեց պառաւը,— առջի օր դուք էլ էիք կուտում, նրանք էլ. տասնհինգ օր չէինք կարող տնից դուրս գալ. պարապ նըստել չեմ կարող. ասի՝ վեր կենամ մի երկու լաթ լւանամ, օրն էլ տաք է, պարզեմ՝ Թո՛ղ չորանայ: Հալւորս հակառակեց. ասաց՝ մի՛ անի, մի քիչ էլ սպասի, խառնակ ժամանակ է, արևը չի փախչի: Մարդուս չլսեցի, ջուր տաքացրի, մի քանի լաթեր լացի. լւացքը պրծայ, կեղտոտ սապոնաջրի մէջ մարդուս զոգնոցն էլ լւացի: Ասի՝ քանի որ լւացք եմ արել, Թող էն էլ մաքուր լինի: Հալւորիս սովորութիւնը գիտեմ. նա առանց զոգնոցի մեխ չի խփի կօշիկին. միտքս դրի՝ առաջինը նրա զոգնոցը չորցնել: Առաւօտ չուտ վեր եկայ: Ջայն-ձուն չկար, կռիւը դադրել էր: Զոգնոցը կապեցի մեր խրճիթի առկիւնի փայտին, որ հա՛մ չորանայ, հա՛մ էլ՝ քամին չտանի: Մի քիչ յետոյ կռիւը էլի սկսւեց: Դուրը փակեցինք ներս մըտանք: Մի սամաւար եռցնելու չափ սպասեցինք: Ցանկարծ հուռայի ձայն լսեցինք, և ամէն բան խաղաղւեց: Մարդս ասաց՝ «կամ սրանք են յաղթել կամ նրանք: Այս ասաց-չասաց՝

մեր դուռը ծեծեցին, հինգ զինուոր ներս մտան, հասած բանն առին ու տարան. ուրիշներ եկան, ինչ տեսան՝ տարան: Եկողը տարաւ, հասնողը թալանեց: Մէկ ժամ յետոյ մնացինք չոր յատակին .ոչ լաց օգնեց, ոչ պաղատանք: Երկու օր վերջ ինձ ու հալիւորիս բռնեցին: Այսօր ձեզանից կը լսենք, որ սև դրշակ ենք քաշել մեր տան վրայ:

— Դոզնոցը ի՞նչ եղաւ,— հարցրեց նախագահը:

— Ի՞նչ զիտնամ, ի՞նչ եղաւ, տարան,— պատասխանեց պառաւը:

— Ա՞յս է ամբողջ պատմութիւնը,— հարցրեց նախագահը, զիմելով կօշկակարին:

— Ամբողջը այդ է, պառաւս չատ մանրամասն պատմեց, մի բան պակաս չթողեց:

— Դոզնոցդ սե՞ւ էր թէ սպիտակ,— հարցրեց նախագահը:

— Ո՛չ սեւ էր, ո՛չ սպիտակ. դոզնոցս մուգ կապոյտի կը գարնէր,— պատասխանեց կօշկակարը:

— Չէի՞ք կարող լացքը կամ մէկ օր առաջ անել կամ մէկ օր ետ,— հարցրեց նախագահը՝ քիթը սրբելով և կողքին քսելով:

— Էդ ասա է՛է՛... էդ ասա է՛է՛,— ասաց կօշկակարը՝ գլուխը չարժելով:

— Ձեռքերս կոտրէր՝ այդ օրը լացք չանէի,— վրայ բերաւ պառաւը:

— Հապա ինչո՞ւ արիք:

— Ֆոռացանք արինք՝ երանի թէ չանէինք:

— Ուրեմն, կ՛ընդունէ՞ք, որ ձեր արածը հակայեղափոխական ելոյթ է:

— Ձհասկացանք, ներողութիւն,— ասաց կօշկակարը:

— Դուք «նրա՛նց »կողմն է՞ք թէ մեր կողմը:

— Ո՛չ էս կողմը, ո՛չ էն կողմը, երկու կրակի մէջտեղ:

— Լեզուդ քե՛զ քաչիր, ի՞նչպէս թէ երկու կրակի մէջտեղ,— սաստեց նախագահը:

— Ներեցէ՛ք,— ասաց կօշկակարը,— կին է, խելքից պակաս, պառաւ է, խօսածը չի դիտեր, ուզում է ասել թէ երկու սրի մէջտեղ:

— Այդ ուրիշ բան է,— ասաց նախագահը յաղթականօրէն նայելով աջ ու ահեակը:

Այդ ժամանակ դատաւորը զիւղացին նախագահին նշանով հասկացրեց, որ հարց ունի տալու:

— Ձեզ ուղղուած հարցերը լա՛ւ լսեցէք,— ասաց նախագահը՝ դիմելով մեղադրեալներին,— մենք ժամանակ չունենք հարցերը կրկնելու:

Ապա՝ զիւղացի դատաւորը երկու անգամ հազաց, վերից-վար չփեց միրուքը ու հարցրեց հետևեալը.—

— Տատի՛կ, ինչո՞ւ առաջ դոզնոցը կախեցիր, և յետոյ՝ ինչո՞ւ միւս չորերն էլ չպարզեցիր չորացնելու:

— Ո՛րդի,— ասաց պառաւը,— դոզնոցը հալիւորիս չատ պէտք էր, առանց նրան մէկ մեխ չէր գարնի կօշիկի տակ. ուզեցի առաջ նա չորացնել:

— Եւ յետոյ՝ ինչո՞ւ միւս չորերն էլ չպարզեցիր չորացնելու,— հարցը կրկնեց դատաւոր զիւղացին՝ կարծելով, թէ պառաւը խուսափում է իր երկրորդ կարևոր հարցին պատասխանելու:

— Եթէ կռիւը չսկսէր,— չա՛տ հանդարտ պատասխանեց պառաւը,— մնացած չորերն էլ պիտի փռէի արևի տակ:

Այս պատասխանի վրայ՝ դատաւոր զիւղացին կասկածանքով չարժեց գլուխը: Դատաւոր զինուորը, զիւղացուց ետ չմնալու համար, հանդիսաւոր և բարձր ձայնով հարցրեց.—

— Դոզնոցը փայտի մէջտեղի՞ց կախեցիր, թէ՞ փայտի ծայրից:

— Փայտի ծայրից կախեցի, որ չուտ չորանայ,— պատասխանեց պառաւը:

Զինուորն ուսերը թոթուեց:

— Փաստը այն է, որ դոզնոցը կախուած է,— եզրափակեց նախագահը:

— Եւ փայտից է կախուած,— հաստատեց դատաւոր զիւղացին:

— Եւ կախուած է փայտի ծայրից,— վրայ բերաւ դատաւոր զինուորը:

— Անցէ՛ք ձեր տեղը,— հրամայեց նախագահը, դիմելով մեղադրեալներին:

Ու կրտսեր քարտուղարը, որ պաշտօն ունէր դատավարութեան արձանագրութիւնը կազմելու, ի հաչիւ կօշկակարի և նրա կնոջ, արձանագրեց հետևեալը.—

«Ցեղափոխական Տրիբունալի մանրամասն հարցաքննութիւնը պարզեց, որ կօշկակարն ու նրա կինը, ի նշան սուգի, սեւ դրօշակ են պարզել իրենց տան վրայ այն պահուն, երբ, կատաղի կուռից յետոյ, ջախջախած Սպիտակ Բանակը նահանջում է և երբ յաղթական Կարմիր Բանակը քաղաք է մըտնում, թշնամու ուսերի վրայով:

«Մեղադրեալները խոստովանեցին իրենց հակայեղափոխական էլոյթը, ներման արժանանալու ստոր մտադրութեամբ»:

* * *

Կօշկակարից անմիջապէս յետոյ կանչուեց հարցաքննութեան իշխանուհին: Երբ այս վաթսուն և հինգ ամեայ պառաւը լսեց իր անուան ընթերցումը, սուր ճիչ արձակեց, որ աւելի չուտ գայրոյթ էր քան վախ, սկսեց դողալ, մի վայրկեան վարանեց, բայց չուտով ինքն իրեն գալով, ոտքի կանգնեց և մանր ու դանդաղ քայլերով առաջ եկաւ:

— Գիտե՞ս ինչ բանի համար ես ձերբակալուած,— հարց տուեց նախագահը:

— Ո՛չ:

— Մեղադրականը չլսեցի՞ր:

— Լսեցի, բայց չհասկացայ ՝ ի՞նչ մեղքիս համար էք ինձ այսպէս չարչարում:

Նախագահի դիմումի վրայ՝ քարտուղարը նորից կարդաց նրան վերաբերեալ կէտը:

— Արդարութիւն չկա՞յ, Աստուած չկա՞յ,— ճղճղան ձայնով խօսեց պառաւը,— ե՞րբ և ո՞րտեղ ինձ մօտ գտել են թագաւորի պատկերը:

— Ուրիշ անգամ «Աստուած» բառը չդործածես,— սաստեց նախագահը, հինը անցած է և մոռացած:

— Լա՛ւ,— համաձայնեց պառաւը, հեգնական եղանակով:

— Դէ՛, այժմ պատմի՛ր եղելութիւնը,— ասաց նախագահը, դիմելով մեղադրեալին:

— Արդարութիւն չկա՞յ, խիղճ չկա՞յ,— չարունակեց իշխանուհին,— ո՞վ ասաց, որ ինձ մօտ գտել են թագաւորի պատկերը: Այդ իմ դժբախտ ամուսնու վերջին և միակ նկարն էր, որ ես երկար տարիներ պահել էի իբրև քաղցր յիշատակ: Ամուսինս ծովային սպայ էր, ծովակալ Մակարովի հրամանատարութեան տակ. նրա հետ գնաց և մեռաւ ճապոնական ջրերում, մեռաւ Մեծն Ռուսաստանի փառքի և դէնքի յաղթութեան համար: Ամուսինս, օրհնեալ լինի նրա յիշատակը, սիրուն տղամարդ էր. երիտասարդ ժամանակ մի րոպէ չէր պահում, բայց յետոյ, երբ կամաց-կամաց բարձր աստիճանների հասաւ, մի րոպէ էր թողնում և թագաւորին շատ էր նմանում, մազերը նրա պէս սանտրելով: Այն ժամանակ ո՞ր զօրավարը, ո՞ր ծովակալը չէր ուզում նմանուել Նիկոլա ցարին: Շատ անդամ, երբ լաւ տրամադրութիւն ունէր, ասում էր.— «Աննա՛, ես չատ եմ նման թագաւորին, այնպէս չէ՞»:

Իշխանուհին այլևս չկարողացաւ չարունակել, նրա ձայնը կերկերաց, նետեց ու սկսեց դառնօրէն հեկեկալ:

— Այստեղ մեռելատուն չէ՛, չարունակեցէ՛ք,— սաստեց նախագահը:

— Էլ ի՞նչ ասեմ, էլ ի՞նչ չարունակեմ,— ասաց իշխանուհին,— մնացածը ձեզ ծանօթ է: Զինուորները եկան, տակն ու վրայ արին սենեակս, եղած-չեղածը տարան, կոտրեցին, թափեցին և հայհոյելով հեռացան:

— Իսկ ամուսնուդ նկարը ինչո՞ւ չարդեցին,— հարց տուեց նախագահը:

— Մարդուս նկարը նրա մի քանի հին իրերի հետ դրել էի հարսնութեանս սնտուկի մէջ. սնտուկը չարդեցին, իրերը վերցրին և նկարը կոխկռտելով՝ սպառնացին.— «ա՛ա՛, հա՛ կայեղափոխական էք թագցնում հա՛. սպասեցէք դեռ»:

— Ուրեմն, քո ամուսինը թագաւորին նմանա՞կ էր:

— Այո՛:

— Բայց նկարը ինչո՞ւ էիր թագցրել:

— Վախենում էի, որ փոշոտի. ապակին կոտրւել էր. չէի կարող դնել տալ:

— Զօրավար Դենիկինի ժամանակ նկարը կախա՞ծ էր պատից:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ ամուսինդ չատ էր ուզում նմանւել թագաւորին:

— Թագաւորին նմանւելը մե՞ղք է:

— Դա հակայեղափոխութիւն է:

— Այն ժամանակ հակայեղափոխութիւն չկար:

— Քեզ երբեք չի՞ ասել թէ ուզում է թագաւոր դառնալ:

— Չի ասել:

— Մտո՞վն էլ չի անցել:

— Չգիտեմ:

— Կ՚ուզէի՞ր ամուսինդ ողջ լինէր:

— Կ՚ուզէի:

— Ինչո՞ւ:

— Որովհետև ամուսինս էր:

— Ցարի ժամանա՞կ լաւ էր, թէ՞ հիմա:

— Ի՞նչ ասեմ. էն ժամանակ խաղաղութիւն կար, էժանութիւն կար, թալան, կողոպուտ չկար, օրէնք կար, արդարութիւն, մարդը իր գլխի տէրն էր. հիմա ամէն բան խառն է, տայ Աստած, խաղաղութիւն և հանդիստ լինի:

— Ուղն ու ծուծով հակայեղափոխական է,— փսփսաց նախագահը՝ դատաւոր գիւղացուն և գինուորին նայելով:

Ներանք գլխով հաւանութեան նշան տւին և դատաւոր գինուորը՝ հարցրեց.

— Ցարի պատկերը փաթթա՞ծ էր մետաքսէ շորերի մէջ:

— Այո՛, ամուսնուս նկարը փաթթած էր իր մետաքսէ թաշկինակների մէջ:

— Լա՛ւ,— ասաց գինուորը, չատ լուրջ մտասուզելով:

— Թաշկինակներն էլ տարան,— աւելացրեց իշխանուհին:

— Երբ ցարի նկարը ոտքով տրորեցին, ինչո՞ւ լաց եղար,— հանդիսաւորապէս հարց տւեց գինուորը:

— Ինձ թալանում, հայհոյում և սպառնում էին, սիրտս փուլ եկաւ, լաց եղայ. էդ էլ հարցնելու բա՞ն է,— պատասխանեց պառաւը:

— Ցարի պատկերի համար լաց եղա՞ր, թէ վախից,— նոյն հանդիսաւորութեամբ հարցրեց գինուորը:

— Լա՛ց եղայ, լա՛ց եղայ, ամէն բանի համար լա՛ց եղայ:

— Լա՛ւ,— ասաց գինուորը և դառնալով նախագահին՝ աւելացրեց,— ես պրծայ:

Մինչ այդ՝ դատաւոր գիւղացին ամբողջապէս ամփոփւած՝ մտածում էր թէ ի՞նչ հարցեր տայ, և անպայման աւելի չատ, քան տւել էր գինուորը:

Ու նա սկսեց:

— Քանի՞ դեսեատին հող ունես:

— Ո՛չ մի դեսեատին:

— Անտառ էլ չունե՞ս:

— Չունեմ:

— Ամուսինդ կալւածատէր չէ՞ր:

— Չէր:

— Բա էլ ի՞նչ իշխանուհի ես:

— Ես միայն իշխանական ծագում ունեմ:

— Մենք իշխաններին ցո՛յց կը տանք. մեր արիւնն են ծծել,— վերջացրեց դատաւոր գիւղացին, գոհունակութեամբ նայելով նախագահին, որը գլխով հաւանութեան նշան էր տալիս և ժպտում բերկրանքով:

— Անցէ՛ք ձեր տեղը,— հրամայեց նախագահը, իսկ արձանագրութեան մէջ հետևեալ եզրափակումը գրւեց պառաւի մասին.—

«Դատավարութեան մէջոցին իշխանուհին պարզօրէն խոստովանեց, որ խնամքով ծրարել ու պահել է վամպիր Նիկոլա երկրորդի նկարը, աւելացնելով, որ դա ոչ թէ եղել է Նիկոլա ցարը, այլ իր ամուսինը, իբր թէ նմանակ ցարին: Անուղղակիօրէն պարզւեց նաև, որ իշխանուհու ամուսինը եղել է ծովային սպայ, մասնակցել է ռուս-ճապոնական իմպերիալիստական պատերազմին և հաւանաբար, մեծ դեր է խաղացել Կապիտան Շմիտի ապստամբութիւնը ճնշելու»:

* * *

Հերթը հասաւ մեղադրեալ գիւղացուն, որը հանդիստ նստած սպասում էր հերթի. նախագահը նրա անունը կարդալով, հրաւիրեց որ առաջ գայ:

Գիւղացին դէմքը ծամածռելով և հեգնական ժպիտով առաջ եկաւ:

— Դու մեղադրւում ես բանւորա-գիւղացիական իշխանութիւնը հայհոյելու և անւանարկելու համար,— ասաց նախագահը:

— Գիտե՞մ, գիտե՞մ,— պատասխանեց գիւղացին սառնութեամբ:

— Խոստովանո՞ւմ ես յանցանքդ:

— Սկի՛ էլ չէ:

— Ի՞նչպէս:

— Ինչի՞ էղպէս չուտ մոռացել էք, ինչպէս ենք յուշունց տալիս. վառք Աստծու, ո՛չ հէր, ո՛չ մէր, և ո՛չ էլ հոգի եմ քֆրել. էլ ի՞նչ յուշունց: Ընտանիքիս հացն ու գետնախնձորը զօրով քաշեցին-տարան. «վա՛յ» եմ տւել գլխիս. էդ եղաւ յուշո՞ւնց:

— Գիտէի՞ր ում համար են տանում:

— Չէ՛:

— Չգիտէի՞ր, որ կարմիր բանակի համար են տանում:

— Կարմիր, սեւ, սպիտակ, ի՞նչ գիտնամ, հասնողը տանում է. տւէք հա՛ տւէք. ո՞րտեղից տանք, ունե՞նք որ տանք:

— Կարգի՛ն խօսիր, լեզուդ կա՛րճ պահիր,— սաստեց նախագահը,— Ցեղափոխական Տրիբունալի առաջ էդպէս չեն խօսում:

— Ի՞նչ ուզում էք՝ արէ՛ք, Տաբունալ-մաբունալ ի՞նչ... Երեխաները քաղցած, տունս քանդւած, էմն էլ հոգին առէ՛ք, վերջանայ գնայ. լաւ օր չտեսանք,— պատասխանեց գիւղացին, ձեռքը յուսահատօրէն թափ տալով:

Գիւղացու այս անպատկառ խօսակցութեան վրայ՝ դատաւորները մի քանի րոպէ փսփսացին, և նախագահը դիմելով մեղադրեալին՝ ասաց.—

— Տե՛ղդ անցիր:

Հանդիսականների մէջ չշուկ անցաւ...

— Իրեն լաւ չզգաշտպանեց,— ասաց մէկը:

— Մեծ պատիժ կը ստանայ,— վրայ բերաւ մի ուրիշը:

— Վերջին խօսքը ասելու չէր,— աւելացրեց երրորդը:

— Հիմակւան ժամանակ աւելի քաղաքագէտ պէտք է լինել. միշտ դէպի նրանց պէտք է տաշել,— ասաց մի ծերունի:

— Գիւղացի է, ի՞նչ է հասկանում այդ բաներց,— պատասխարակեց ծերունու հարևանը, հազիւ լսելի ձայնով:

— Այդ էլ պէտք է՛ր, լաւ տեղին դարկեց,— ասաց խորամանկ աչքերով մէկը, որ եկել էր սոսկ հետաքրքրութեան համար:

— Կամա՛ց,— աչքով նշան տւաւ քաղաքագէտ ծերունին,— ամէն չիտակ խօսք չի ասւի:

Դատարանի քարտուղարը գիւղացու դատավարութեան արձանագրութիւնը վերջացրեց կամման կէտերով և հետևեալ երկու բառով.—

«Արտակարգ Թեկնածու...X»

* * *

Նախորդ քննուղները իրենց մխիթարւած էին զգում, իսկ հարցաքննութեան սպասողները վեհութեամբ և անվախութեամբ էին լեցւում: Գործադուլի պարագլուխ բանւորները, որոնք նստել էին առաջին շարքում և անհամբեր սպասում իրենց հերթին, բայց, անհասկանալի պատճառներով, նրանց հարցաքննութիւը յետաձգւում էր:

Նախագահը կարդաց քահանայի և երկու ախրացուի անունները:

Մեղադրեալները կարգով և ընկճւած՝ առաջ եկան:

— Խաչով-խաչվառով էք դիմաւորել Սպիտակ Բանակը,— ասաց նախագահը՝ յօնքերը կիտած և սպառնալից:

Քահանան գլխի դրական շարժումով պատասխանեց:

— Խօսի՛ր, տէ՛րտէր, քեզ եմ հարցնում, ինչա՞ւ դիմաւորեցիք Սպիտակ Բանակը:

— Մեր պաշտօնն է:

— Եթէ ձեր պաշտօնն է, հապա ինչո՞ւ չդիմաւորեցիք Կարմիր Բանակը:

— Վախեցանք, որ կը սպանէք:

— Լաւ է, որ այդքանը հասկացել էք:

— Այդքանը հասկանում ենք:

— Սպիտակներից չվախեցա՞ք:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ:

— Նրանք եկեղեցու իրաւունքը ճանաչում են:

— Ուրեմն, ձեզ համար հակայեղափոխականները ընդունելի՞ են:

— Մեզ համար ամէն իշխանութիւն ընդունելի է, քանզի ասւած է, թէ չկայ մի իշխանութիւն, որ երկնքից տրւած չլինի:

— Պրոլետարիատի իշխանութիւնը երկնքի՞ց է տրւած:

— Առանց Եհովայի հրամանի, տերևն անգամ չի շարժի:

— Մարքսի «Կապիտալը» կարդացե՞լ էք:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ:

— Աւետարանից դատ ուրիշ գրքեր չենք կարդում և չենք հասկանում:

— Բայց ինչո՞ւ:

— Ուրիշ գրքերը կարդալը դայթակղեցուցիչ է, քանզի մենք կրօնաւորներ ենք:

— Ի՞նչ ասելով՝ Մարքսի «Կապիտալի» ընթերցումը մե՞ղք է:

— Քաղաքականութեամբ իրաւունք չունենք պարապելու. հոգևոր հայրերի կողմից արգելւած է:

— Եթէ քաղականութեամբ չէք պարապում, հապա ի՞նչպէս է, որ Նիկոլա ցարի անունը միշտ յիշում էք պատարագներում:

— Հոգևոր հայրերը այդպէս էին կարգադրել, այդպէս էլ դնում էր:

— Այս տիրացուները քեզ հե՞տ էին:

— Այո՛:

— Ամենից յետինն ես էի,— շտապեց յայտնել տիրացուներից մէկը, կծկւած, դողալով:

— Այդ կարևոր չէ,— նկատեց նախագահը:

Ապա մի քանի հարցեր տւին նաև Տրիբունալի միւս անդամները: Դատաւոր գիւղացին հարցրեց.—

— Տէ՛րտէր, մեռած հակայեղափոխականների համար պատարագ արի՞ր:

— Հոգեհանգիստ եղաւ բոլոր մեռածների:

— Սուտ ես ասում:

— Ճշմարիտ է:

— Մեզ անիծում էիր, չէ՞:

— Ո՛չ մի անէծք:

— Մտքո՞ւմդ էլ չանիծեցիր:

— Մտքումս էլ չեմ անիծել:

— Ես բաւարարւած եմ,— ասաց գիւղացին՝ հանգիստ տեղաւորւելով աթոռի վրայ:

— Տէրտէրները խորանք են դնում աղքատի և հարուստի միջև, այդ ինչի՞ց է,— հարց տւեց դատաւոր գինւորը:

— Բոլոր ծուխերին հաւասար աչքով ենք նայում,— պատասխանեց տէրտէրը:

— Փաստերը կը խառնակես,— նկատեց գինւորը,— ես աչքովս եմ տեսած, որ մեռելոցին տէրտէրները հարուստներին շուտ կ'երթան, աղքատներին ուշ կ'երթան:

— Ես այդպէս չեմ անում:

— Էլի փաստերը խառնակում ես,— պնդեց գինւորը,— ես փաստ եմ ասում. տէրտէրները խորանք կը դնեն հարուստի և աղքատի մէջ: Մի անգամ ես ու մայրս մեռած եղբօրս հոգուն պատարագ անել տւինք և պատարագը մի չայ խմելու չափ չտևեց, քեզ փաստ եմ ասում:

— Ի՞նչ ժամանակ էր, ամա՞ռ թէ ձմեռ,— հարցրեց քահանան:

— Ծնունդից առաջ էր:

— Է՛հ, ձմեռները, եկեղեցին ցուրտ լինելու պատճառով, արարողութիւնը կիսով չափ կրճատւում է. հոգևոր հայրերը այդպէս են պատւիրել:

— Էդ էլ ճիշտ չէ,— նորից հակաճառեց գինւորը,— փաստ եմ ասում, որ մեր գիւղում մի համբայի հոգուն պատարագ եղաւ և այնչափ երկարեց, որ ես գնացի տուն, ձիերը ջրեցի, կեր տւի, վերադարձայ, և պատարագը դեռ չարունակւում էր: Սրան ի՞նչ կ'ասես, քեզ փաստ եմ ասում:

— Արդար կը խօսի՛,— պոռաց հանդիսատես պառաւներից մէկը:

— Խարանք կը դնե՞ն, խարանք կը դնե՞ն,— քաջալերած հաստատեց երկրորդ պառաւը:

— Հարուստի կո՛ղմ կը բռնեն,— աւելացրեց երրորդ պառաւը:

Այս բացագանչութիւնների վրայ՝ նախագահը ոտքի կանգնեց, մի քանի անգամ մատիտը խփեց սեղանին և, կէս ժպիտ դէմքով, ասաց.—

— Ընկերնե՛ր, դուք խանգարում էք Ցեղափոխական Տրիբունալի աշխատանքները: Ինչ ունէք ասելու՝ գրաւոր ասացէք, այլապէս ստիպուած կը լինեմ խիստ միջոցի դիմել:

— Տիրացուների ձեռքը բան չկայ, նրանց բան մի՛ ա-նէք,— դարձեալ պոռաց առաջին պառաւը:

Նախագահը դայրացաւ և խօսքը ուղղելով ուինաւոր կարմիր բանակայիններին՝ ասաց.—

— Ընկե՛ր զինուորներ, սրանից յետոյ ձայն հանողին ձերբակալեցէ՛ք. այստեղ պոռնկատուն չէ:

Ու լռութիւնը կատարեալ եղաւ:

Ապա՝ նախագահը, դառնալով մեղադրեալներին, դուռ ձայնով ասաց.—

— Հարցը չափազանց պարզ է. դուք խաչով-խաչվառով էք դիմաւորել պրոլետարիատի թշնամիներին և չէք ուրանում. դնացէ՛ք:

Իսկ դատարանի քարտուղարը հետևեալ եզրափակումն արձանագրեց ի հաշիւ ութրակցի և երկու տիրացուի.—

«Տէրտէրի և երկու տիրացուի հարցաքննութիւնը անցաւ բուռն և աղմկալի: Նրանք ոչ միայն խոստովանեցին իրենց հակայեղափոխական ելոյթը, այլ և ճգնում էին ապացուցել, որ բոլոր իշխանութիւնները երկնքից են տրւած, ի թց առեալ բան-դիւղ-դին. իշխանութիւնից:

«Դրանից զատ՝ տէրտէրը և երկու տիրացուն, փոխն ի փոխ, իրար լրացնելով, յարձակուեցին Մարքսի «Կապիտալի» վրայ՝ առ ոչինչ համարելով այն՝ Աւետարանի համեմատու-թեամբ: Այս բանի վրայ՝ հանդիսատես պրոլետարիատը, չը-կարողանալով լսել և համբերել կղերական դասի անսահման յիմարութիւնը, մէկ մարդու պէս, դասակարգային խորը ան-տագոնիզմով լեցուած, մէջտեղ թռաւ և ուզում էր ինքնադա-

տաստանի ենթարկել իմպերիալիզմի և կապիտալիզմի այդ հզու ծառաներին, բայց արքունի կարմիր բանակայինները, նախազահի մէկ նշանով, առաջքն առին պրոլետարիատի արդար զայրոյթին ու ցասումին: Այս դէպքը եկաւ հաստատելու, որ նման դատավարութիւնները պրոպագանդի նոր ճակատ են բաց անում, զանգւածների մէջ դասակարգային լայն ու խոր չերտաւորում առաջ բերելու և նրանց յեղափոխականօրէն դաստիարակելու համար... Տէրտրոջ և երկու տիրացուների ճակատագիրը աւելի քան որոշ է»...

* * *

Ուսադիր պահելու համար մեղադրուող սպան աճապարանօք առաջ եկաւ, հէնց որ նրա անունը կարդացւեց:

Մի չքաւոր ընտանիքի զաւակ էր: Ինչպէս չա՛տ շատեր, նա էս, հակառակ իր կամքին և ցանկութեան, միջնակարգ դպրոցը աւարտելուց յետոյ, քշւում է զօրանոց՝ սպայ դառնալու հարկադրանքով: Ցեղափոխութեան ճգնաժամին ուղարկւում է ռազմաճակատ և՝ դեռ կռիւներին չմասնակցած՝ բոլորի՛, բոլորի՛, բոլորի՛ հետ «տուն» է վերադառնում, առանց սակայն իր հայրենի գիւղը հասնելու: Սպայական դասի դէմ եղած հետապնդումներից խուսափելու համար, առանց ափսոսանքի, պոկում է իր զոյդ ուսադիրները և, փոխանակ խպատ ոչնչացնելու, անխութութիւն է ունենում նետելու իր պայուսակը:

— Ուսադիրները պահե՞լ ես,— հարցրեց նախագահը:

— Պահել եմ:

— Ինչո՞ւ էիր պահում:

— Եթէ ճիշտը խօսեմ, չէք հաւատայ,

— Քո պարտականութիւնն է ճիշտն ասել. հաւատանք, չհաւատանք, այդ քո գործը չէ՛,— ասաց նախագահը՝ խիստ տոնով:

— Ճշմարտութիւնը այս է. ընկե՛ր նախագահ,— խօսեց սպան,— ես բնաւ մտադիր չեմ եղել ուսադիրները նորից գործածելու, ինչպէս յիշատակւած է մեղադրականի մէջ. ինքս պրոլետար ընտանիքի զաւակ, իմ կամքին հակառակ, սպայ եմ

դարձել, կռիւներին չեմ մասնակցել, քաղաքականութեամբ չեմ պարապել, ամէն իշխանութիւն ինձ համար ընդունելի է: Ոսաղիրներս մնացել են պայուսակումս անշաղրութեան և անփութութեան հետևանքով:

— Ա՞յդ է բոլորը:

— Այս է:

— Այդ քիչ է:

— Աւելի բան չունեմ ասելու:

— Դուք հարցեր չունե՞ք տալու,— դիմեց նախագահը միւս դատաւորներին:

— Ես ունե՛մ,— ասաց դատաւոր դինւորը:

Նախագահը մատիտը խփեց սեղանին և խօսքը ուղղելով սպային՝ ասաց.—

— Պատրաստւեցէ՛ք պատասխանելու ընկերը դինւորի հարցերին:

— Պատրաստ եմ:

— Բայց ճիշտ խօսիր. կը հաւատանք, չենք հաւատայ, այդ քո գործը չէ՛:

— Լսում եմ:

— Դու սպա՞յ ես,— հարցրեց դինւորը:

— Այո՛:

— Ի՞նչ աստիճանի:

— Առաջին:

— Զինւոր ծեծե՞լ ես:

— Ո՛չ:

— Հայհոյե՞լ ես:

— Ո՛չ:

— Սո՛ւտ ես:

— Չե՛մ ստում:

— Բնաւ «մէր» չե՞ս հայհոյել:

— Ո՛չ:

— Հիմա խեղճացե՞լ ես. մի ժամանակ մեր արիւնն էիք ծծում. ես դինւոր եմ, դի՛տեմ:

Սպան լռութեամբ պատասխանեց, իսկ դատաւոր դինւորը, մի րոպէ մտածելուց յետոյ, կրկին հարցրեց.—

— Ինչո՞ւ դինւոր չմնացիր, սպայ եղար:

— Ինձանից կախւած չէր:

— Ինչո՞ւ:

— Գրել-կարդալ գիտէի:

— Ասել է թէ՝ միայն մե՞նք էինք էլ:

— Զգիտեմ:

— Ճետոյ դնդապետ պիտի լինէիր, չէ՞:

— Այդ մասին չեմ մտածել:

— Մաքուռդ չի՞ անցել:

— Ո՛չ:

— Ես պրծայ,— ասաց դատաւոր դինւորը՝ դիմելով նախագահին:

— Հարցը պարզ է, տե՛ղդ անցիր,— ասաց նախագահը՝ խօսքը մեղադրեալին ուղղելով:

Դատարանի քարտուղարը այս երիտասարդի մասին ոչ մի արձանագրութիւն չկատմեց, միայն նշանակեց նրա անունազգանունը և ընդգծումով ու չակերտներով գրեց՝ «սպայ»...

* * *

Սպայի հարցաքննութիւնից յետոյ հերթը, վերջապէս, հասաւ գործադուլի պարագլուխ չորս բանւորներին, որոնք, խրոխտ կեցւածքով, արհամարհական ժպիտով, առաջ եկան և մէկ ղծի վրայ չարեցին:

Նրանցից երեքը երեսունի մէջ էին, իսկ մէկը, որ ունէր խորաթափանց աչքեր, կնճռոտ դէմք, ընկճող հայեացք և ողնեփուշ մէրուք, բախում էր յիսունի դուռը: Առաջին անգամ չէր, որ այս բանւորը բանտ, դատարան և դատաւորներ էր տեսնում: Նա իր կեանքի կէսից աւելին մաշել էր յեղափոխական չարժումների, գործադուլների, բանտի, դատի և աքսորանքի մէջ. ու հիմա, Տրիբունալի առաջ, նոյ իրեն այնպէս էր զգում, ինչպէս պիտի զգար արդար պահանջատէրը:

Դեռ բանտում այս չորս բանւորները խորհրդակցել և որոշել էին իրենց անելիքն և խօսելիքը: Երեք բանւորները եղբայրական միաձայնութեամբ և հաստատ համոզումով իրենց դատը յանձնել էին երէց բանւորին, նրան վերապահելով դատական հարցաքննութեան բոլոր մանրամասնութիւնները, ինչ-

պէս նաև իրենց բռնելիք դիրքը դատարանի հանդէպ: Նրանք այդ գերագոյն լիազօրութիւնը տւել էին աւագ ու փորձառու ընկերոջ՝ յայտարարելով նաև, որ իրենք պատրաստ են յաղթականօրէն դիմաւորելու մահը, եթէ այդ անհրաժեշտ լինի, միայն թէ, ինչպէս ամէն տեղ, այստեղ էլ բանւոր դասակարգը, յանձինս իրենց հանդէս գայ անվախ, խրոխտ և բողոքող:

Աւագ բանւորը, զգացւած իր հանդէպ ունեցած անսահման վստահութիւնից, արցունքով համբուրել էր նրանց և հանդիսաւոր խոստում տւել, որ Տրիբունալի առջև իրեն կը պահի ճիշտ այնպէս, ինչպէս այդ վայել է և յատուկ ըմբոստ ու պայքարող բանւորութեան: Սակայն, ականատես լինելով դատավարութեան և լսելով մեղադրեալների հարցաքննութիւնը, նրանք անյուսօրէն հիասթափւել էին և նւաստացուցիչ էին գտնում իրենց յանձնել հարցաքննութեան, որի ժամանակ ոչ միայն ճշմարտութիւնը չէր կարող իր տկար ու հիւանդ գլուխը բարձրացնելու փորձ անել, այլ և արդարութիւնը մեռնում էր անբարբառ և ցեխոտւած թևերով: Ու նրանք որոշել էին լռել, իսկ ծայրայեղ դէպքում, բողոքի ցոյց սարքել, գոռ բացականչութիւններով:

— Դո՛ւք մեղադրւում էք սաբոտաժի համար,— ասաց նախագահը, խօսքը ուղղելով բոլորին:

Լռութի՛ւն, անթարթ ու խոժոռ հայեացք:

— Ո՞վ յղացաւ գործադուլի միտքը:

Լռութիւն:

— Ձե՛զ եմ ասում, ո՞վ յղացաւ գործադուլի միտքը,— կրկնեց նախագահը:

— Ե՛ս,— զայրացած պատասխանեց աւագ բանւորը:

— Ո՛չ, ե՛ս,— ասաց երկրորդը:

— Նրանցից առաջ՝ ե՛ս,— վրայ բերաւ երրորդը:

— Ամենից առաջ՝ ե՛ս,— գոռաց չորրորդը:

— Այդ ի՞նչպէս կը լինի,— զարմացաւ նախագահը:

Լռութիւն:

Ապա՝ նախագահը, դիմելով աւագ բանւորին, հարցրեց.—

— Ուրեմն, առաջինը դո՞ւ յղացար գործադուլի միտքը:

— Հրաժարւում եմ պատասխանելու:

— Ես նոյնպէս,— ասաց երկրորդը:

— Երրորդում եմ,— յարեց միւսը:

— Չորրորդում եմ,— ասաց վերջինը:

— Մենք ձեզ սւինով կը հարցաքննենք,— սպառնաց նախագահը՝ ցուցամատը թափ տալով և ոտքի կանգնելով:

— Կորչի՛ բռնութիւնը,— գոռաց երէց բանւորը:

— Կորչի՛ բռնութիւնը,— կրկնեցին միւսները:

Ու նախագահի հրամանով սւինները շրջապատեցին ըմբոստ մեղադրեալներին և՝ նրանց դուրս քշելով դատարանից՝ առաջնորդեցին դէպի բանտը: Իսկ փողոցում լսւում էր «Դէ՛հ, ե՛լ, բողոքի՛ր, բանւոր դասակարգ» քայլերգը, որի ուժգին, բայց հետզհետէ մարող արձագանգը խանգարում էր դատասրահի լռութիւնը...

Քարտուղարը այս բանւորների անւանացանկի տակ կըրկնակի ընդգծումով՝ գրեց.—

«Սաբոտաժ, մենշեւիկեան սկանդալ, բանւորական պրովոկացիա»:

* * *

Այս դէպքից յետոյ, դատաւորները, քարտուղարների մասնակցութեամբ, տասը վայրկեան տևող փսփսուկ ունեցան, որից զգուշաբար օգտւեցին նաև հանդիսականները:

— Դէ՛ առէ՛ք ձեզ դատ-դատաստան,— փսփսաց երեք պառաւներից մէկը՝ իր հարևանուհուն:

— Հը՛, թո՛ղ տիրացուների դատը իմանան,— ասաց միւսը,— Աստծու գառան պէս էին կանգնել. անիծւած լինէք դուք, ձեր դատով-դատաստանով:

— Սո՛ւս կացէք, լաւ եղաւ, աշխարհը տակն ու վրայ արին, ամէն բան թանգացրին,— մէջ մտաւ երրորդ պառաւը:

— Հալա շա՛տ բաներ դուրս կը գան,— նորից խօսեց առաջին պառաւը,— բա՞, լւացքի համար մարդու դատի-դատաստանի կը կանչե՞ն. էս ո՞ր օրէնքի մէջ կայ, ո՞ր գրքի կող:

Քաղաքագէտ ծերունին այս կարծիքներից և ոչ մէկը չէր բաժանում. նա գտնում էր, որ այդ բոլորը աչքակապուկ է, խա՛ղ, փորձաքար: Նա աւելի կատաղեց այն ժամանակ, երբ

իր հանդիսական հարևաններից մէկը անխոհեմութիւն ունեցաւ՝ ասելու.—

— Ի՞նչ խաղ, ի՞նչ աչքակապուկ, մարդկանց էստեղն էր հասել, պոռթկացին, ճղաւեցին, բզաւեցին, էլ խա՞ղ մնաց:

— Ծօ՛, քաղաքագէտ եղի՛ր,— ասաց ծերունին կռացած և հազիւ լսելի ձայնով,— չունը չան միս չի ուտի. այս բոլորը խաղ է, աչքակապուկ, փորձաքար. դու դեռ ջահել ես, չես հասկանայ:

Միայն մեղադրեալները յամառ լռութիւն էին պահում: Նրանցից իւրաքանչիւրը, կասկածի տեղի չտալու համար, վախենում էր մէւսի հետ խօսելու: Նրանք ոչ միայն չէին զրուցում կամ փսփսում, այլ և ճգնում էին հեզ և տխուր երևնալու, աչխատելով ցոյց տալ թէ կատարած գէպքը անտեղի էր, պախարակելի և յանցաւոր:

Սակայն, նրանց մէջ չկար մէկը, որ իր հոգու մէջ անսահման ուրախութիւն և հրճւանք չզգար: Զկար մէկը, որ իր կեցւածքը դատարանի առաջ և իր տւած պատասխանները դատաւորներին համեմատութեան չդնէր այս չորս խեղճ բանւորների կենցւածքին և տւած պատասխաններին: Անդամ գիւղացին, որ առաջին անվախ և ըմբոստն էր, հետզհետէ անդրադառնալով իր կեցւածքին՝ սկսել էր զղջալ, իսկ այժմ բոլորովին հանգիստ էր, մոռացած սպառնագին գալիքը:

Նրանց մէջ կային չատեր, որոնք, այս ամենը հաչւի առնելով, իրենց յանցանքի չափը ամենայն վստահութեամբ դնում էին ներման և անպատութեան նժարի վրայ: Բոլորը, բոլորը իրենց մխիթարւած էին զգում և յանցանքի թեթևութիւն նախատեսնում, համեմատութեամբ այս չորս բանւորների:

Սակայն, դրանց մէջ ոչ ոք այնքան անհամբեր չէր դատավճռի ընթերցման, որքան երկու աւրացուները: Այս մարդիկ այնքան վստահ էին իրենց անպատութեան, որ ամէն մի մի-ջադադար կամ երկար հարցաքննութիւն նրանց անձկութիւն և ջղայնութիւն էր պատճառում: Նրանք այսպէս մտածելու և համոզւելու երեք դլխաւոր պատճառ ունէին. նախ՝ որ իրենց յանցանքից մի խոշոր մաս նետում էին տէրտրոջ վրնքին, որպէս առաջնորդի և նախաձեռնողի. յետոյ՝ մի պատկառելի

բաժին հանում պատասխանների մէկի այն բացատրութեան թէ՝ «Տէրացուների ձեռքը բան չկայ, նրանց բան մի՛ անէ՛ք». և ապա՝ չորս բանւորների ցոյցն ու խայտառակութիւնը համարում այն մաքրագործիչ ուժը, որ եկաւ, սրբեց ու տարաւ իրենց յանցանքի վերջին մնացորդը, բերելով բաղձալի ներումն ու անպատութիւնը:

* * *

Դատաւորների խորհրդակցութիւնը վերջանալու վրայ էր: Աւագ քարտուղարը ամբողջ եռանդով և այլայլւած, ինչ որ հրահանգներ էր տալիս մերթ այս, մերթ այն դատաւորին, որոնք չէին յամենում իրենց հաւանութիւնը յայտնել: Երբ քարտուղարը իր ասելիքը վերջացրեց, դատաւորները գրաւեցին իրենց տեղերը, և, նախագահը, լռութեան հրաւիրելով սրահը ու առանց ակնարկութիւն անելու կատարած միջադէպի մասին՝ կարդաց մեղադրեալ վարժապետի անունը:

Մեղադրեալը, որի դէմքի ժպիտը վաղուց ի վեր դարձել էր մկանների վարժութիւն և անծանօթների վրայ թողնում էր ամէն բան արհամարհողի տպաւորութիւն, հանդարտօրէն ոտքի ելաւ, երկու խստապարանոց մարդկանց ոտքերը կոխկրտելով, ներողութիւն խնդրելով՝ առաջ եկաւ:

Նախագահը, ըստ սովորութեան, անուն, տարիք, գործ և ուրիշ մի քանի նախնական հարց ու պատասխանից յետոյ՝ ասաց.

— Գիտե՞ս ինչ բանի համար ես մեղադրւում:

— Անշո՛ւշտ:

— Լսեցի՞ր մեղադրականը:

— Լսեցի:

— Ի՞նչ ունես ասելու:

— Ինչի՞ մասին:

— Մեղադրականի մասին:

— Ա՛հ՛, մեղադրակա՞նի մասին,— զարմացած հարցրեց վարժապետը:

— Այո՛:

— Խնդրում եմ նորից կարդալ մեղադրականը:

Ու քարտուղարը կարդաց.—

«Այստեղ է նաև մի վարժապետ, որը իր կրթութեամբ, դաստիարակութեամբ և աշխարհայեացքով ներկայացնում է ինտելիգենցիան,— մի ինտելիգենցիա, որ արիստոկրատական տենդենցներ ունի, պահպանողական հակումներ և բուրժուական դաշափարաբանութիւն: Այս վարժապետը, որը տիպիկ ներկայացուցիչն է իր դասի և, հետևաբար, Ֆինամի աշխատաւորութեան և յեղափոխութեան, ոչ միայն հոգ չի տարել, որ իր խնամքին յանձնուած երեխաները բուռն հետաքրքրութիւն և մասնակցութիւն ցոյց տան մեր օրերում կատարուած պատմական խոշոր նշանակութիւն ունեցող քաղաքական դէպքերին, այլ մթագնել է բանւոր և գիւղացի զաւակների միտքը՝ նրանց ուշադրութիւնը սահմանափակելով դպրոցի և դպրոցական նեղ, միօրինակ և ձանձրալի խնդիրների շուրջը: Այս բոլորը մասամբ կարելի էր ներելի համարել, ի նկատի ունենալով նրա սահմանափակ պրոֆեսիան: Բայց նա դրանով չբաւականանալով՝ անցել է ակտիվ գործունէութեան: Այսպէս, օրինակ, Սպիտակների ժամանակ, «Առաջապահական խնդիրներ» թեմայով իր մէկ դասախօսութեան մէջ ասել է և մի քանի անգամ չեշտել հետեւեալ վիրաւորական արտայայտութիւնը.— «Երեխանե՛ր, մի՛ լինէք այնպէս ոչխար, ինչպէս գինւորները, և այնպէս կեղտոտ, ինչպէս գիւղացիները»: Ի՞նչ է նշանակում այս: Այս նշանակում է, որ վարժապետը նպատակ և դիտում է ունեցել վարկաբեկելու պրոլետարիատը, որն արհամարհելով բուրժուական և արիստոկրատական նախապաշարմունքներն ու աւելորդ հոգսերը, իր դասակարգային պայքարն է մղում նրանց դէմ, որոնց չարքումն է ինքը, վարժապետը. այսինքն թէ ինտելիգենցիան: Ո՞ւմ յայտնի չէ, որ կեղտն ու ոջիլը կապիտալիզմն է փաթթել բանւորների, գիւղացիների և գինւորների ուսերին, որից նրանք ուզում են մէկ անգամ և ընդմիշտ ազատագրուել»:

— Այժմ ի՞նչ ունես ասելու,— նորից հարց տւեց նախագահը:

— Պարոննե՛ր,— սկսեց վարժապետը:

— Այստեղ պարոններ չկան,— անմիջապէս ընդմիջեց նախագահը:

— Ընկերնե՛ր,— ուղղեց վարժապետը,— ես երկրորդ անգամ լսեցի իմ մասին եղած մեղադրականը որի առաջին մասը բնաւ չի վերաբերում ինձ, բայց քանի որ ինձ դատում էք որպէս ինտելիգենցիայի ներկայացուցիչ, այդ առթիւ ես կ'ուզէի մի քանի խօսք ասել: Ամենից առաջ պիտի յայտնեմ, որ դիտութիւնը դեռ չի կարողացել որոշել այդ հասկացողութեան սահմանները: Ոմանց կարծիքով ինտելիգենտ է նա, ով հագնւում է կոկիկ և վերջին տարազով. ուրիշները դանում են, որ ինտելիգենտ է նա, ով խորասուզած՝ թանգարանների և դրադարանների փշրինքի մէջ՝ գիրք է կարդում և հին ձեռագիր է թղթատում. մի քանիսը պնդում են, որ ինտելիգենտ կարող է լինել և կոչւել նա, ով ձեռնափայտ և ակնոց ունի և երկար մազեր է պահում. կան մարդիկ, որոնք հերքելով հերքում են այս բնորոշումները և ինտելիգենտ ասելով՝ հասկանում են մարդկանց մի խմբակցութիւն, որը ո՛չ այս է և ո՛չ այն, այլ մի ուրիշ բան. դեռևիկ արտայայտած՝ այդ խումբը կամ խմբակցութիւնը ո՛չ հէ է և ո՛չ ճի, այլ ջորի, մի խառնուրդ, որի ինչ լինելը դեռ պարզաբանած չէ գիտականօրէն: Սակայն, այս բոլոր հասկացողութիւնները պատկանում են երեսունական–քառասունական թւականներին: Իսկ վաթսունական և եօթանասունական թւականներից սկսած՝ ինտելիգենցիայի հասկացողութեան սահմանաւորումը հետզհետէ պարզւում է, իր մէջ կրելով նախորդ բնորոշումների սաղմերը: Վերջին, ընդունած ու ընդհանրացած ձեւակերպումով ինտելիգենցիան մնում է խառնուրդ, ապազաս, ապազասակարգային, բայց որոշ ու պարզ իդէալներով և այդ իդէալները կեանքի մէջ կիրառելու մղումով և հետագայ սերունդներին փոխանցելու ցանկութեամբ: Այս վերջին բնորոշումով ինտելիգենտ կարող է լինել մի կօշկակար, մի բանւոր, մի գիւղացի և, եթէ կ'ուզէք, մի գինւոր, իսկ ընդհակառակն, մի պրոֆեսոր, մի ճարտարապետ, մի վաստակաւոր և մի վարժապետ, եթէ չունեն վերոյշեալ նախանշանները, չեն կարող լինել և կոչւել ինտելիգենտ: Ցանձինս ձե՛զ, ընկե՛ր դատաւորներ, ես տեսնում եմ ժամանակակից ինտելիգենցիայի ամենավայրկեան ներկայացուցիչներըը, որոնք որոշ իդէալ ունեն և աշխատում են այդ իդէալները, ինչ գնով էլ լինի, իրականացնել կեանքի մէջ: Ապա, ուրեմն...

— Սպասի՛ր,— ընդմիջեց նախագահը,— յանուն Ցեղափոխական Տրիբունալի ազդարարում եմ ձեզ, որ չվիրաւորես Տրիբունալի անդամները, նրանց դասելով ինտելիգենտների չարքը: Խօսի՛ր մեղադրականի մասին:

— Շա՛տ լաւ,— չարունակեց վարժապետը, միչտ ժըպիտը դէմքին,— ուրեմն, այդպիսով դուք ինտելիգենտներ էք...

— Նորից եմ ազդարարում,— սաստեց նախագահը,— չվիրաւորել Տրիբունալի անդամները և խօսել գործի մասին:

— Իսկ գալով մեղադրականի երկրորդ կէտին,— նոյն տոնով չարունակեց մեղադրեալը,— պիտի ասեմ և չեչտեմ, որ ես մանկավարժ եմ և մանկավարժ էլ պիտի մեռնեմ: Իմ խորին համոզումով, աշակերտները, մեծ լինեն թէ փոքր, դասից դատ ուրիչ բաներով չպիտի պարապեն: Նորադոյն մանկավարժութիւնը այդ է թելադրում և այդպէս էլ պէտք է լինի: Փոխանակ Նիկոլա ցարի գահընկեցութեան խնդիրներով զբաղելու, թո՛ղ նստեն և Ցուլիոս Կեսարը կարդան, գոնէ լատիներէն կը սովորեն... Չա՛, լատիներէն ասացի՝ միտքս ընկաւ... իմ ամբողջ մեղադրականի աղբիւրը լատիներէն լեզուն է: Բարձր դասարանի աշակերտներին լատիներէն եմ դասաւանդում. նրանցից մի քանիսը դասարանը չեն փոխել լատիներէնի պատճառով, մի երկու հոգի էլ վատ թւանշան են ստացել, և ահա՛, այդ իսկ հոգի վրայ, դրանք յեղափոխական են դարձել և ինձ էլ ամբաստանում են որպէս հակայեղափոխական: Այդ նոյն աշակերտների ցուցմունքով ինձ մեղադրում էք այն բանի համար, որ իբր թէ ես վարկաբեկել եմ գինուորներն ու գիւղացիները՝ նրանց ոչլոտ և կեղտոտ անուանելով: Սա արդէն բացարձակ զրպարտութիւն է, որի մասին և ուղղակի աղբիւրը դարձեալ լատիներէն լեզուն է: Ես իմ դասախօսութեան մէջ ասել եմ հետևեալը.— «Երեխանե՛ր, լաւ յիշեցէք, որ մաքրութիւնը յատուկ չէ միայն բարձր դասին, իսկ կեղտն ու ոջիլը՝ բանւորին ու գիւղացուն: Մաքուր եղէ՛ք թէ՛ տանը և թէ՛ դպրոցում, և մաքրութիւն սովորեցրէք ձեր ծնողներին»: Ես ուրիշ ասելիք չունեմ:

— Ուրեմն, քո խոստովանութիւնից պարզւում է, որ կեղտն ու ոջիլը կապել ես բանւորի և գիւղացու անուան հետ և

ոչ թէ գինուորի, ինչպէս յիշատակւած է մեղադրականի մէջ:

— Այո՛, ընկեր նախագահ, ես իմ դասախօսութեան մէջ գինուոր բառը երբեք չեմ գործածել:

— Ընկե՛ր քարտուղար,— ասաց նախագահը,— խնդրում եմ, վարժապետի մեղադրականի մէջ յիշատակւած զինուոր բառը ջնջել և փոխարէն գրել՝ բանւոր:

— Մի կարևոր ճշտում եւս,— ասաց վարժապետը,— մեղադրականիս մէջ ասւած է, թէ ես պահպանողական հայեացքների տէր եմ: Այդ նոյնպէս չի համապատասխանում իրականութեան. ես առաջդիմական տեսակէտներ ունեմ և դրան որպէս ապացոյց կարող է ծառայել այն, որ մի օր, ցարական ռեժիմի ժամանակ, երբ դպրոցների ընդհանուր վերատեսուչը ուզում էր այցելել մեզ, ես չներկայացայ նրան. հիւանդ ձևանալով՝ գնացի սենեակս ու պառկեցի, որի համար շատ խիստ նկատողութիւն ստացայ տեսչից: Մտածեցէ՛ք, ես այդպէս եմ վարւել հին կարգերի ժամանակ, երբ մեր տեսչից ամենքը դողդում էին, իսկ ընդհանուր վերատեսչին արքայական պատիւ և ընդունելութիւն էին ցոյց տալիս: Եւ գո՛ւր չէ, որ դրանից յետոյ պաշտօնակիցներս ինձ անիշխանական էին անուանում. իսկ հիմա՞... հիմա միապետական դարձա՞նք... Օ՛ բարքեր, օ՛ ժամանակներ... Այս է բոլորը, ես այլևս ասելիք չունեմ, մնացածը թողնում եմ ձեզ:

Վարժապետի բացատրութիւններից յետոյ նախագահը չփոթ վիճակ ունէր. նա չէր կարող որոշել, թէ վարժապետի յանցանքը ո՞րտեղից է սկսում և ո՞ւր է վերջանում, հարցաքննութիւնը ի՞նչպէս սկսի և ի՞նչ եղանակով տանի:

Սկզբում, նախագահը բարեացակամ էր տրամադրւած հանդէպ մեղադրեալի, բայց նրա վերաբերմունքը փոխւեց այն վայրկեանից, երբ մեղադրեալի իսկ խոստովանութեամբ պարզւեց, որ նա իր դասախօսութեան մէջ ոչ թէ անուանարկել է գինուորները, այլ բանւոր դասակարգը: Բացի այդ՝ նախագահի համար անլուծելի մնաց այն, թէ վարժապետի ասածները ճիշտ և լուրջ էի՞ն, թէ այդ ծաղր էր, մի հեգնանք չպրտւած Ցեղափոխական Տրիբունալի և նրա անդամների հասցէին: Այս հանգամանքը աւելի էր կատաղեցնում նախագահին, որը խըզելով սպասողական և ճնշող լռութիւնը՝ ասաց.—

— Մութ և կասկածելի մարդ ես. որքան շատ ես խոսում, այնքան հարցերը աւելի ես խճճում. ասա՛ պարզ և որոշ, ինտելիգե՞նտ ես թէ ոչ:

— Ո՛չ:

— Ի՞նչպէս:

— Արդէն ասացի, նորի՞ց կրկնեմ:

— Իսկ մենք քեզ դատում ենք որպէս ինտելիգենտ:

— Է՛հ, ի՞նչ անեմ, դատեցէք՝ ինչպէս ուզում էք. ես իմ բացատրութիւնները տուի:

— Դու ինտելիգենտ ես նրա համար, որ ակնոցներ ունես:

— Բայց ասացի, որ այդ տեսութիւնը հերքւած է:

— Մենք այդ տեսութեամբ ենք դատում:

— Է՛հ, լա՛ւ, յետո՞յ:

— Յետոյ՝ որ ձեռնափայտ ես կրում:

— Կեանքիս մէջ երբեք ձեռնափայտ չեմ ունեցել, միշտ հովանոց եմ գործածել,— ասաց վարժապետը զայրացած:

— Աւելի՛ վատ, դա արդէն չռայլութիւն է:

— Ինա՛ւ:

— Յետոյ,— չարունակեց նախագահը,— որ ամենագլխաւորն է, սպիտակ օձիք ես գործածում և դէղին փողկապ:

— Դա յանցա՞նք է:

— Դա ապացոյց է, որ ինտելիգենտ ես:

— Ազգաբնակչութեան մեծ մասը այդպէս է հագւած:

— Հին ժամանակ, այո՛, բայց հիմա ամենքը սեւ շապիկ են հագնում:

— Ես այդ չգիտէի:

— Չգիտէիր, որովհետև դեմոկրատական կարգերը քեզ համար խորթ են և աւելի:

— Բողոքո՛ւմ եմ:

— Ոչ մի բողոք:

— Բողոքո՛ւմ եմ:

— Գալով մեղադրականի երկրորդ կէտին,— չարունակեց նախագահը...

— Այդտեղ կա՛նգ առէք, պարո՛ն դատաւոր... Երկնքի տակ ո՛չ մի արդարութիւն չկայ,— ասաց վարժապետը և դուրս

խը հանդարտօրէն զարձնելով, նոյն միօրինակ ժպիտը դէմքին, անցաւ իր տեղը:

Ու քարտուղարը վարժապետի մասին գրեց հետևեալը.—

«Յայտնի հակայեղափոխական, երբեմնի անիշխանական, այժմ թունդ միապետական: Թքեց դատաւորների երեսին և բարձրաձայն գոչեց.— «Օ՛ բարքեր, օ՛ ժամանակներ»:

* * *

Դատավարութիւնը առանց ընդմիջումի չարունակւեց:

Հարցաքննութեան կանչւեցին երկու հատուկտոր և խըստապարանոց մարդիկ, որոնցից կարճահասակը խոստովանեց չարաչահութեան իր զբաղմունքը և լալկան ձայնով խընդրեց դատարանի ներողամտութիւնը՝ հանդիսաւորապէս խոսք տալով, որ այսուհետև կ՝ապրի և կ՝ապրեցնէ իր ընտանիքը միայն ճակատի քրտինքով: Իսկ միւսը, դեղատոմսերի կապոցով և բժշկական այլ վաստակդիերով, հաստատեց, որ ինքը չգանալու հիւանդութիւն ունի և եկել է Հանքային Ջրերը ոչ թէ օգտիսխութեան և հաճոյքի համար, ինչպէս յիշատակւած էր մեղադրականի մէջ, այլ բուժւելու մի հիւանդութիւնից, որը արագօրէն նրան տանում է դէպի մահը: Այս հիւանդը իր մօտ եղած հեռագիրներով ապացուցեց նաև, որ ինքը ոչ միայն բուրժուա չէ, այլ չքաւոր մարդ, և ապաքինւում է իր բարեկամների դրամական օժանդակութեամբ:

Վերջին քննուղները, պարթև հասակով և ահարկու դէմքով, այն երեք անծանօթներն էին, որոնք մեղադրւում էին թալանով և սպանութիւններով ապրող հասարակ աւազակներ: Սրանց հարցաքննութիւնը չատ կարճ տևեց, որովհետև մեղադրեալները անպատկառ համարձակութեամբ և մէկիկ-մէկիկ խոստովանեցին իրենց կատարած ոճիրները, յայտարարելով միաժամանակ, որ այդ բոլորը արել են որպէս փոխադարձութիւն ու վրէժ իրենց հարազատների, որոնց անարդարօրէն դնդակահարել են կարմիրները:

* * *

Երբ Ցեղափոխական Տրիբունալի դատավարութիւնը վերջացաւ, դատաւորները, աւագ քարտուղարի մասնակցութեամբ, առանձնացան դատավճիռը կայացնելու:

Ամբողջ սրահը չչուկով լեցուեց: Հանդիսատեսներից ոմանք փսփսուքով վիճում էին այն մասին, թէ մեղադրեալներից ո՞վ ինչքան կը բանտարկուի, ո՞վ ամենից ծանր պատիժ պիտի կրի և ո՞վ անպարտ պիտի արձակուի: Պառաւները, ամենայն բարեսրտութեամբ և առանց երկար տարաձայնութիւնների, բաւականացան մեղադրեալներից ոմանց մի քանի ամսից մինչև մի քանի տարի բանտարկութեան պատիժ տալ, անպարտների առաջին չարքը դասելով երկու տիրացուները, պառաւ իշխանուհին, կօշկակարը իր կնոջ հետ և վարժապետը իր բարի ժպիտով: Քաղաքագէտ Ծերունին, իր ամբողջ ծանօթութեամբ և եռանդով, հարևանին հաւատացնում էր, որ ամենից առաջ անպարտ պիտի արձակուեն գործադուլի պարագլուխ չորս բանուորները, որպէս «իրենց չները», խիստ պատիժ պիտի կրեն գիւղացին, վարժապետը, աւազակները և սպեկուլանտ վաճառականը, իսկ միւսները թեթև բանտարկութեամբ պիտի պատժուեն, մինչև խառնակութիւնները վերջանան:

Մեղադրեալները աւելի քան հանդիստ էին: Կօշկակարը, իր կինը և պառաւ իշխանուհին փսփսում էին, և նրանց ձեռքի ու գլխի շարժումների մէջ բացասական ոչ մի չեզտ կար: Ռոսելիս՝ նրանց դէմքը խաղաղ էր ու ներման արժանանալու վստահութիւն և վեհութիւն էր արտայայտում:

Գիւղացին նոյնպէս ուզում էր մի երկու խօսք փոխանակել սրանց հետ, բայց պառաւները որոշապէս խուսափում էին նրա հետ խօսքի բռնուելու:

Տէրտէրը մտազբաղ էր, և տիրացուները դրանով չատ ուրախ, որովհետև խօսելու առիթ չէր ստեղծւում:

Երիտասարդ սպան նոյնպէս լուռ էր և նրա գլխում անվերջ հոլովւում էր դատաւոր գինուորի խիստ արտայայտութիւնը.— «Հիմա խեղճացե՞լ ես, մի ժամանակ մեր արիւնն էիք ծծում, ես գի՛նուոր եմ, գի՛տեմ»:

Վարժապետը անծանօթ ուրախութիւն էր զգում. ըստ վարժութեան, արագ-արագ խառնում էր նօսր միրուքը, մատներով սանտրում և անդրադառնալով տաք ցուցմունքներին՝ չատ էր հաւանում իր արտաբերած մէկ նախադասութիւնը.— «Երկնքի տակ ո՛չ մի արդարութիւն չկայ»:

Հաստափոր մեղադրեալներից՝ չարաչահը իրեն անօգնական էր զգում. նա այժմ հասկացել էր, թէ փաստաբանները որքա՜ն անհրաժեշտ են դատարանների մէջ և թէ դատարանները որպիսի՛ անարդարութիւններ կարող են գործել առանց փաստաբանների: Նա այժմ մտաբերում էր իր մի այլ դատավարութիւնը, ուր ինքը մեղադրւում էր ծանր, բայց իրական դեղծումի մէջ, սակայն, փաստաբանի կրկնակի կեղծիքով և ուժեղ պաշտպանողականով կարողացել էր ոչ միայն անպարտութեան վճիռ չահել, այլ և պատժել իր հակառակորդին՝ նրան վճարել տալով դատական ամբողջ ծախսերը: Սրա համար էր, որ նա կատաղի և դուսպ գայրոյթով ու հանդիսաւոր տոնով չարունակ կրկնում էր իր հաստափոր հարևանի ականջին.—

— Առանց փաստաբանի՝ դատարան չի՛ լինի. դատարանը առանց փաստաբանի չի՛ լինի:

Սակայն, հիւանդ հաստափորը երբեք չկարողացաւ հասկանալ իր հարևանի անօգնական վիճակը և ի պատասխան նրան՝ իր սեփական ցաւն էր լալիս.—

— Հիւա՛նդ եմ, չքաւո՛ր եմ, աչխարհքը գիտէ. ի՞նչ դա՞տ, ի՞նչ դատաստա՞ն, ի՞նչ փաստաբա՞ն:

— Առա՞նց փաստաբանի՝ դատարան չի՛ լինի:

— Ի՞նչ փաստաբա՞ն, ի՞նչ դատարա՞ն, հիւանդ եմ, աչխարհը գիտէ...

Ոճրագործները խռովայոյզ վիճակ ունէին: Նրանցից երկուսը, որոնք աւելի տարէց էին և փորձած, այնքան չէին հետաքրքրւում դատավճռով, որքան այն բանով, թէ դատաւորները ի՞նչ են խօսում, և այդ էր պատճառը, որ նրանցից մէկը հարցրեց.—

— Ինչո՞ւ ուչացան:

— Մեր մասին են խօսում,— պատասխանեց միւսը, հապիւ լսելի ձայնով:

— Ճիչտ ես ասում, իմ մտքովն էլ անցաւ:

Երրորդ և երիտասարդ ոճրագործը, որ մինչ այդ մտածում էր առաստաղի պատահաբար փուլ գալու մասին, քաղաքի վրայ յանկարծական յարձակում և խուճապ սկսելու և այդ առիթներից օգտուելու և փախուստի դիմելու մասին, տեսնելով իր ընկերների դաւադիր փսփսուկը, կռացաւ, գլուխը մօտեցրեց նրանց և թուքը կուլ տալով՝ ասաց.—

— Շա՛տ եմ ծարաւ:

Տարէց ոճրագործները նրան նայեցին, բայց չպատասխանեցին:

* * *

Դատասրահի չչուկը յանկարծ դադարեց, դատաւորները ներս եկան: Բոլորը ոտքի կանգնեցին, ու սկրեց երկիւղի և սարսափի լռութիւն:

Տրիբունալի նախագահը, բարձր ու հանդարտ եղանակով, կարդաց հետևեալ դատավճիռը.—

«Հանքային Ջրերի Ցեղափոխական Տրիբունալը, յանուն արդարութեան և յանուն յեղափոխական պրոլետարիատի դեբադոյն չահերի, մանրամասն և հանգամանօրէն քննելով քաղաքական, հասարակական և քրէական տան և եօթ ամբաստանեալների դործը՝ վճռեց նրանց դատապարտել յեղափոխական ժամանակի ամենաբարձր պատժի — զնդակահարութեան»:

* * *

Ցեղափոխական Տրիբունալի քարտուղարը, որ պաշտօն ունէր դատավարութեան արձանագրութիւնը կազմելու, դատավճռի ընթերցումից յետոյ մօտեցաւ նախագահին, նրանից վերցրեց մահավճռի վաւերագիրը, դրեց արձանագրութեան թղթերի մէջ, խնամքով ծրարեց ու մակագրեց.—

«Ցեղափոխական Արխիվ — Տասն և եօթ գնդակահարուածների գործը»:

VI

Այն ժամանակ, երբ տասնեակ հազարաւոր մարդիկ, իրար թշնամի և անխնայ, սպառազէն ու պատրաստ, բայց դաշտի վրայ, բլուրների լանջին, անտառների մէջ, քարերի ու թփերի ետև, խորտակուած ատրճանների ու գիւղերի կիսակործան պատերի տակ դարանակալ, րոպէ առ րոպէ յարձակման, կռիւ և արիւնի էին սպասում, մահուան սարսափով. այն ժամանակ, երբ զօրավար Դենիսովը, ապահով թիկունքում նստած, արքայավայել խրախճանք էր սարքում նոր յաղթանակներ տանելու յաման որոշումով. երբ Կարմիր ու Սպիտակ բանտերում հազարաւոր կալանաւորներ, գանազան յանցանքներով արգելափակուած, մատների վրայ վայրկեաններ էին հաշւում՝ ո՛մանք անպարտ արձակուելու յոյսով, ուրիշներ դատի ելնելու. լինքնախոբէութեամբ, իսկ չատերը մահուան դնալու անհամբերութեամբ,— ահա՛ այդ մթնոլոր ժամանակ, հին օրերի երկու մարդ, նոր օրեր հաղած, Տասն և Եօթի դատավարութեան երեկոյեան, նստած իրենց սենեակում, լայն, ընկուզեայ փայտէ սեղանի չուրջը, օղի էին պարպում՝ իրենց անցեալը քննքննելով:

Նրանք վաղեմի ծանօթներ էին, ոսկրոտ ու բարձրահասակ: Հակառակ այդ օրերի սարսափին ու նախազգուշութեան, հագնուած էին ճոխ ու չոայլ: Ունէին ոսկի ժամացոյց, ոսկի չղթաներով ու դարդերով: Ամէն մէկի առջև դրուած կար արծաթ ծխատուփ՝ ոսկի մակագրութիւններով, լի ընտիր սիգարներով: Թանգարժէք մատանիները, ճկոյթից մինչև բթամատը, փայլփլում էին նրանց մատների վրայ, ու նրանց հագուստները, չնայած սուղ կտորներին, դուրկ էին միևնոյն դոյնի ու ձևի համակարդութիւնից: Առաջին իսկ ակնարկից երևում էր, որ ղրանք պատկանելիս են եղել տարբեր մարդկանց, տարբեր ճաշակների:

Սեղանի վրայ վառուում էր քարիւղի լամպը, կանաչ լուսամփոփով, կիսաղօտ, խափուսիկ տեսք տալով սենեակին:

Դահիճներ էին:

Նրանցից աւագը, որի երեսուն և հինդ տարին բոլորում էր այդ դիչերը, բաժակները նորից լեցրեց, յօնքերը մի քանի

անգամ վեր նետեց, ծխախոտը ծծեց ու ծուխը յորդօրէն բաց թողնելով՝ ասաց.—

— Շնորհակա՛լ եմ, Անդրիւշկա, բարեմաղթութիւններիդ համար, տա՛յ Աստուած, որ ողջ մնանք ու մի օր էլ տօնենք քո երեսուն և հինգ տարեվիցը: Ա՛յս էլ պարպենք քո կենացը:

— Տա՛յ Աստուած, Պորֆի՛րիյ, տա՛յ Աստուած, ողջառողջ մնանք և միշտ այսպէս կեանքի գլխին նստած,— ասաց Անդրիւշկան, ու բաժակները պարպեցին մինչև վերջին կաթիլը:

— Այսպէս է կեանքը, սի՛րելիս,— ասաց Պորֆիրին՝ դատարկ բաժակը սեղանին խփելով:

— Պատմութիւնդ չարունակի՛ր,— ասաց Անդրիւշկան:

— Ո՞ւր հասանք:

— Քեզանից յետոյ՝ մարդու է գնում:

— Հա՛, նա ամուսնացաւ, իսկ ես ընդմիշտ հեռացայ Օմսկից,— չարունակեց Պորֆիրին,— ես հեռացայ այդ քաղաքից, բայց նրան չմոռացայ: Տարիներ յետոյ միայն իմացայ, որ նա մարդուց բաժանուել է: Նամակ գրեցի ծանօթներիս նրա մասին տեղեկութիւն խնդրելով: Պատասխանեցին, որ Մոսկուա է և ապրում է մի ինչ որ պաշտօնեայի հետ: Այդ ժամանակ ես նոր ծառայութեան էի մտել գաղտնի բաժանմունքը: Հետաքրքրուեցայ և տեսայ նրա մարդուն: Բաւական այլանդակ, տակառ կազմուածքով, արիւնախառն աչքերով մի երիտասարդ էր: Նրան համեմատեցի ինձ հետ, ու ծիծաղս եկաւ: Կանայք չատ անճաշակ են: Ինչ որ է, սատանան նրանց հետ: Պաշտօնից բերումով, ի միջի այլոց, նրան էլ հետապնդեցի, բայց տեսնելով որ քաղաքական գործերից գլուխ չունի, թքեցի ու վազ անցայ:

— Իսկ կնոջը տեսա՞ր:

— Մի քանի անգամ որոշեցի նրան տեսնել, բայց յետոյ դղջացի: Նոր պաշտօնս զբաղիչ էր. նոր մարդիկ, նոր կեանք ու նոր չրջան ունեցայ և նրանց մոռացայ:

— Իսկ ի՞նչպէս «ծառայութեան» մտար:

— Ես մտայ գաղտնի ոստիկանութեան մէջ մի զարմանալի միջադէպով:

— Հետաքրքրական է:

— Մէ՛կ էլ կոնծենք:

— Կոնծե՞նք:

Երբ բաժակները նորից ու նորից դատարկուեցին, Պորֆիրիյ չարունակեց իր պատմութիւնը.—

«Արդէն ասացի, որ այդ քաժի պատճառով ընդմիշտ թողեցի Օմսկը ու տեղափոխուեցի Մոսկուա: Այն ժամանակ քանի՞ տարեկան կը լինէի որ. հազիւ տասն և ութ, քսան տարեկան մի անփորձ պատանի: Երբ Մոսկուա հասայ՝ գրպանումս մէկ թէ երկու րուբլի փող կար: Դրութիւնս օրէցօր ծանրանում էր: Թէև յուսահատուած էի, բայց Օմսկ վերադառնալ մտքովս չէր անցնում, որովհետև ինքնասիրութեան հարց կար մէջտեղ:

«Մի օր, 1906 թուի վերջերին, երբ յեղափոխութիւնը դադարելու վրայ էր, բնակարանիցս դուրս եկայ ու հէնց այնպէս, աննպատակ, քայլերս ուղղեցի դէպի Թատրոնական Հրապարակը: Այնտեղ ահագին բազմութիւն կար խռնուած: Ոստիկանութիւնը չղթայ էր կապել՝ խճողումը արգիլելու համար: Սակայն, ես մի ճարպիկ խաղով չղթայից ներս սողոսկեցի ու խառնուեցի ամբոխին: Շունը իր տիրոջ չէր ճանաչում. խումբ-խումբ խօսում ու վիճում էին. սակայն, անկարելի էր լսանալ թէ ի՞նչ է պատահել: Եղելութիւնը սրան-նրան եմ հարցընում, բայց ամէն մէկը տարբեր բան է ասում: Ամբոխը ճեղքելով անցնում եմ կենտրոնը, ուր կային մի քանի զինուած ոստիկաններ ու մի տէրտէր. միրուքը թափ տալով, քրտնած, ջղայնացած խօսում էր: Կանգնեցի թէ լսեմ, բայց սևագլեստը իր խօսքը վերջացրեց: Քիչ յետոյ ոստիկանները տէրտրոջ և երկու երիտասարդ լրէնց հետ վերցրած՝ հեռացան: Ամբոխը դեռ տնտղում էր, նոր մորթած մսի պէս: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ լինի ամբողջ պատմութիւնը... Հա՛, հա՛, հա՛...

«Երիտասարդները, վողոցով անցնելիս, անզուշաբար զարնուում են տէրտրոջ, ու առանց ներողութիւն խնդրելու՝ չարունակում լրէնց ճամբան: Քրիստոսի ծառան երիտասարդներին պախարակում է, թունալից խօսքեր թափում նրանց դէմին, իսկ երիտասարդները, բոլորովին սառնասիրտ, պատասխանում են.—

«Անցի՛ր, սևագլեստ, ժամումդ չես»:

«Այս խօսքերի վրայ՝ տէրտէրը կատաղում, փրփրում է․

«Դեռ չխրատուեցի՞ք,— ասում է նա,— դեռ խելքներդ գլուխնիդ չեկա՞ւ․ յեղափոխութիւն էիք անում, տեսա՞ք ուր հասաք և ի՞նչ եղաք»։ Երիտասարդները, իրենց հերթին, խիստ պատասխան են տալիս։ Վէճը տաքանում, մեծանում և դառնում է քաղաքական հարց։ Հետզհետէ մարդիկ են հաւաքւում, մէկ էս կողմից, մէկ էն կողմից՝ ասում, խօսում, բարկանում, մինչև որ բանը հասնում է ոստիկանութեան միջամտութեան։

«Հասկանալով եղելութիւնը և տեսնելով, որ ոստիկանները հեռացել են, ես զայրացայ և մատս թափ տալով օդի մէջ պոռացի․

«Տէրտէրների միրուքը պէտք է խուզել»։

Այս որ ասացի՝ մօտս կանգնած երկու հոգի ինձ նայեցին ու նրանցից մէկը, ձիու պէս գլուխը վեր նետելով ու բեղերը սրելով՝ ասաց․

«Դու անմիրուք ես՝ քեզանից ի՞նչ խէր»։

— Լեզուդ քե՛զ քաշիր,— ասացի ես։

— Զայնդ կտրի՛ր, լակո՛տ․ քեզ պէս փողոցային պոռոտախօսները ամէն բան փչացնում են,— պատասխանեց նա։

«Կողքիս կանգնածները նրան հաւանութիւն տուին, իսկ ես աւելի կատաղեցի, տաքացայ, բայց ի՞նչ կարող էի անել։ Օմսկ չէր, որ նրանց հաշիւը տեսնէի։ Անծանօթ քաղաք, մենակ մարդ, հազար մի չուն ու գէլ։ Աւելի լաւ է լռե՛ս, Պորֆերի՛,— ասացի մտքում,— լռիր, թէ ոչ տակից ուրիշ բան դուրս կը գայ։ Ես խոհեմ շարժուեցի, Անդրիւշկա՛, որովհետև տեսայ, թէ ինչպէ՛ս շրջապատուած եմ հակայեղափոխականներով։

«Սակայն, հաւատա՛, Անդրի՛ւշկա, որ եթէ նրանք շարունակէին խօսել ու ինձ անպատուել, արիւն կը թափէի։ Ես այն ժամանակ յեղափոխական էի և յեղափոխական էլ մնացել եմ։ Եղբօրս ասեմ, այս միջադէպից յետոյ, այնտեղից կամացուկ դուրս եկայ ու հանդարտօրէն հեռացայ։ Անմիջապէս տուն չգնացի, որպէսզի չկարծէին, թէ ես վախենում եմ։ Բաւական թափառեցի։ Երեկոյ էր։ Փողոցի ճրագները վառեցին։ Յոգնած վերադառնում էի տուն։ Երբ հասայ տան անկիւնը և ուզում էի շրջել աջ, երկու երիտասարդ, մէկը կարճ, միւսը երկար, յանկարծ դէմս ելան և նրանցից բարձրահասակը հարցրեց․—

— Ասացէ՛ք, խնդրեմ, ի՞նչ է այս փողոցի անունը։

Տուի փողոցի անունը։

— Շնորհակալ եմ,— ասաց նա։

— Զարժէ։

— Իսկ ձեր անո՞ւնը,— հարց տուեց կարճահասակը։

— Ասացի անուն-ազգանունս։

— Հետևեցէ՛ք մեզ,— ասաց կարճահասակը՝ տոնը բոլորովին փոխած։

— Ինչո՞ւ։

— Հետևեցէ՛ք,— պնդեց նա։

— Բայց ինչո՞ւ,— նորից հարցրի ես։

— Չխօսե՛լ,— կրկնեց նա։

«Անխօս հետևեցի նրանց․ սիրտս խփում էր… Կիսախաւար և անծանօթ մի քանի փողոցներ կտրելով՝ կանգնեցինք մի հսկայ շէնքի առաջ։

— Հրամեցէ՛ք,— ասաց բարձրահասակը՝ ցոյց տալով դուռը։

«Հնազանդուեցի և…

— Լաւ չե՛ս արել,— ընդմիջեց Անդրիւշկան ծիծաղելով ու բաժակները լցնելով։

— Կենացդ,— ասաց Պորֆերիյ՝ բաժակը վերցնելով։

— Անուշ։

— Նոր շիշ բաց արա՛,— հրամայեց Պորֆերին ժպտալով։

— Շարունակի՛ր,— ասաց Անդրիւշկան։

— Լցո՛ւր, մէ՛կ էլ լցուր։

Նրանք տեսներորդ բաժակները դատարկեցին այնպիսի թեթևութեամբ, որպէս թէ նոր էին բոլորել սեղանի շուրջը։ Մէկական ծխախոտ վառելով՝ Պորֆերին շարունակեց իր ընդհատուած պատմութիւնը․—

«Երեքովս ներս մտանք ու բարձրացանք երկրորդ յարկը, ուր, միջանցքում, ես ու բարձրահասակ երիտասարդը ըս-

պասեցինք, իսկ կարճահասակը մտաւ դիմացի սենեակը, որի դրան ճակատին գրւած էր·

«Գլխաւոր վերատեսուչ»:

«Քառորդ ժամ սպասելուց յետոյ՝ հրաւիրուեցի ներս: Լոյս սեղանի չուրջ նստել էր հաստափոր, կարմրաքիթ և ինքնագոհ դէմքով մի մարդ: Բարևեցի:

— Նստեցէ՛ք,— ասաց նա բարևս առնելով:

«Ես նստեցի, իսկ ինձ առաջնորդող երիտասարդները հեռացան: Գլխաւոր վերատեսուչը, այդ կեղտոտ խոզը, հարցրեց անունս, ազգանունս, որտեղացի լինելս և ուրիշ մի չարք հարցեր. հիմա չեմ յիշում: Կարո՞ղ ես երևակայել, Անդրիւշկա, որ այդ մարդը մանրամասն պատմեց, թէ ո՞ր ժամին եմ դուրս եկել տնից, ինչպէ՞ս եմ գնացել թատրոնական Հրապարակը, ո՞րպիսի խորամանկութեամբ ոստիկանական չղթայից ներս եմ սպրդել, ինչպէ՞ս եմ խառնուել ամբոխին, ի՞նչ եմ խօսել տէրտէրների հասցէին, ի՞նչ վէճ եմ ունեցել. էլ ի՞նչ դիտեմ, հազար ու մի բան:

«Պարզ էր, որ լրտեսները խիստ հետևել էին ինձ ու ամէն բան իր ժամանակին հաղորդել գլխաւորին: Վախենալու պատճառ չունէի, որովհետև անցեալս անարատ էր ու պայծառ: Երբ այդ խոզը իր խօսքը վերջացրեց, մռայլ դէմք ընդունեց, ապա ժպտաց և սիգաբար հրամցնելով՝ ասաց·—

— Ինչ որ պատմեցի՝ ճի՞շտ է:

«Ես հաստատեցի նրա խօսքերը, աւելացնելով, որ տէրտէրները լաւ մարդիկ չեն, նրանց դէմ ոխ ու կռիւ ունեմ: Նա պատճառը հարցրեց, ու ես պատմեցի իմ դժբախտ սիրոյ պատմութիւնը, իմ խոր հիասթափութիւնն ու յուսահատութիւնը: Նա մինչև վերջ լսեց ինձ, ու երբ վերջացրի՝ ասաց·—

— Ուրեմն սիրածդ տէրտրոջ աղջի՞կ էր:

— Մի՞թէ պատմութիւնս չէիք լսում,— զարմացայ ես:

— Ինչպէս չէ, լսում էի,— ասաց նա:

«Յետոյ՝ երբ երկուսս էլ լռեցինք՝ նա հարցրեց·—

— Գործ ունե՞ս:

— Ո՛չ,— ասացի ես:

— Փող ունե՞ս:

— Ո՛չ:

— Որ այդպէս է, քեզ ետ պիտի ղրկենք:

«Անդրիւշկա՛, այս որ չլսեցի՝ ներսիցս մի տաքութիւն խփեց դէմքիս, կարմրեցի, քրտնեցի և հազիւ բարկութիւնս զսպեցի. միայն կարողացայ ասել·

— Ես ձեզ չեմ հասկանում:

— Անհասկանալի ոչինչ կայ,— ասաց նա,— քեզ ետ պիտի ուղարկենք, պիտի վերադառնաս քո ծննդավայրը:

— Մոսկւա պիտի մնամ, պնդեցի վճռապէս:

— Ի՞նչպէս պիտի ապրես:

— Գործ կը գտնեմ:

— Ի՞նչ գործ պիտի գտնես, քանի որ հազարաւոր անգործներ կան:

— Ամէն տեսակ գործ կ՚անեմ, բայց Օմսկ չեմ վերադառնայ:

— Ինձ մի պզտիկ գործ պիտի յանձնեմ,— ասաց նա,— եթէ լաւ կատարեցիր, պաշտօնդ պիտի բարձրացնեմ՝ լաւ ռոճիկով:

— Ի՞նչ գործ,— հարցրի ես անհամբեր:

«Նա մտածեց–մտածեց և ասաց·—

— Վաղ առաւօտեան, ուղիղ ժամը տասին, այստեղ ե՛կ, այդ մասին կը խօսենք:

«Ուրախութեամբ համաձայնեցի և պատրաստւում էի մեկնելու, երբ նա հարցրեց·—

— Ծախսելու փող ունե՞ս:

«Ես լռեցի: Փող չունէի: Տեսնելով, որ չեմ պատասխանում, հանեց քսակը, քննեց հնչիւն դրամները ու, ոսկի հինգնոցը բռնս դնելով՝ ասաց·—

— Գնա՛ և ընթրի՛ր:

— Այդ ընթրիքի վրայ՝ լաւ կը լինի, որ մեկ–մեկ խըմենք,— կատակեց Անդրիւշկան՝ բաժակները նորից լեցնելով:

— Դէմ չեմ:

— Կենացդ:

— Անո՛ւշ:

— Շարունակի՛ր... յետո՞յ:

«Հետևեալ օրը, նշանակւած ժամին, ներկայացայ այդ հաստավիզ խոզին... Հա՛, չմոռանամ ասել, որ ամբողջ գիշե-

րը չկարողացայ քնել, ծրագիրներ էի կազմում, քանդում, նորից կազմում, նորից չհնում... Մէկ խօսքով, երկար գառանցանք... Հիմա չեմ յիշում, թէ ինչի՞ մասին էինք խօսում, բայց միտս է, որ նա հարցեր էր տալիս՝ ես պատասխանում, նա խօսում էր՝ ես լսում: Այդ յիմարը ինձ հետ երբեմն «դուք»-ով, երբեմն էլ «դու»-ով էր խօսում. ամէն բան խառնում էր իրար: Կարծեմ, հարբած պիտի լինէր, սակայն, չէր երևում: Ինչ որ է, սատանան նրա հետ. գուցէ այժմ չի ապրում, կամ ապրում է, բայց արդէն շատ ծերացած: Նա այն ժամանակ յիսունն անց պէտք է լինէր:

— Ցետո՞յ:

— Ցետոյ՝ եղբօրս ասեմ, նա բարեհամբոյր ժպտաց, մի քիչ թեքւեց դէպի ինձ ու կամացուկ փսփսաց.—

— Դու իսկական ռուս ես, այնպէս չէ՞:

— Ի՞նչ խօսք,— ասացի ես:

— Ես տեսնում եմ, որ հոգիդ դեռ չի փչացել,— ասաց նա,— անփորձ ու անմեղ երիտասարդ ես, իսկական ռուս, և դիտե՞ս, թէ քեզ նման ռուսները լինչ պարտականութիւն ունեն կատարելու հանդէպ հայրենիքի:

— Ո՛չ,— ասացի ես:

— Դէ լսի՛ր, որ ասեմ,— չարունակեց նա,— իսկական ռուս մարդը երեք սրբազան պարտականութիւն ունի կատարելու՝ ծառայել թագաւորին, աղօթել Աստուծոյ և հալածել ջհուդներին, այդ անիծած ժողովուրդին, որ ամէն տեղ և ամէն բանի մէջ աշխատում է մեր տունն ու պետութիւնը քանդելու: Ջհուդները մեզ չա՞տ են վնաս տուել: Նրանք ունեն դաղտնի ընկերակցութիւն Մայր-Ռուսաստանի բոլոր անկիւններում, որի նպատակն է սպանել ցարին, կողոպտել եկեղեցական գաղդերը, և քրիստոնեայ երեխաներ որսալ ու մորթոտել: Մեր պարտականութիւնն է այդ անծապարանների ամէն մէկ գործողութեան հետևել, իմանալ նրանց տեղը, կապը, բռնել նրանց, պատժել, ոչնչացնել: Իսկ դրա համար հարկաւոր են իսկական ռուսներ, երիտասարդ, եռանդուն և հայրենասէր ռուս մարդիկ: Ահա՛ քեզ լաւ և ազնիւ ասպարէզ, հանդիստ և ապահով ռոճիկ. կե՛ր, խմի՛ր և քեզ համար մտն եկ: Գործդ ի՞նչ պիտի լինի որ... մի երկու ջհուդի պիտի հետևես, դաղտնի և աննկատ... ահա՛ բոլորը: Այդպիսով, սի՛րելիս, թէ՛ հայրենիքիդ ծառայած կը լինես և թէ՛ պատուաւոր կապրես: Ուժը և իրաւունքը մեր ձեռքն է. քանի ցար կայ մեր երկրում և Աստուած՝ երկնքում, քեզ ո՛չ մի վնաս կամ դժբախտութիւն չի հասնի... Ի՞նչ ունես ասելու, հը՞... կարծում եմ, որ ուրախ ես, որովհետև քչերին ենք հաւատում այսպիսի գործերը: Շատերին դիտեմ, որոնք անգործութիւնից և չքաւորութիւնից ձանձրացած՝ դառնում են ոճրագործ, կամ ընկնում վատթար չրջաններ ու մեռնում կարիքի և թշուառութեան մէջ: Իսկ մեզ տալի հակառակ կողմը այլ բան ենք կարդում: Ես քեզ նման անփորձ երիտասարդ էի, երբ մտայ ծառայութեան: Մեր դըլխաւորը, ողորմի նրա հոգուն, բարի և հեռատես մարդ էր: Նա ինձ գործի դրաւ, խրատներ տուաւ... Ես նրան լսեցի և այսօր հասել եմ այս աստիճանին: Քսան և հինգ տարի ծառայել եմ թագաւորին և Մայր-Ռուսաստանին և մի էդքան էլ կը ծառայեմ, եթէ մեր Տէր Յիսուսը երկար կեանք և առողջութիւն տայ: Հապա՞, սիրելիս, նման գործեր, որ մենք չը-կատարենք՝ ո՞վ կատարի — ջհուդնե՞րը, որոնք տէր են մեր երկրի առևտուրին և ամէն ասպարէզի մէջ փայլում: Փաստաբան կ՝ուզես՝ ջհուդ է, բժիշկ կ՝ուզես՝ ջհուդ է, գիտուն կ՝ուզես՝ ջհուդ է... այդ անիծածները ի՞նչ դառան մեր դէմին:

«Ի՞նչ երկարացնեմ, Անդրիւշկա, այդ խոզը այնքա՞ն խօսեց, այնքա՞ն խրատեց, այնպէս վարպետօրէն տամարս բռնեց, որ եթէ այդ րոպէին ջհուդ ընկնէր ձեռքս՝ հոգ ու մոխիր կը դարձնէի: Կարճ կապեմ: Նա ինձ յանձնարարեց երկու երիտասարդների, որ հետս ման դան, մարդիկ ցոյց տան, տեղեր և կերպեր սովորեցնեն, աչալրջութեան, դաղտնապահութեան և խորամանկութեան դասեր տան. կարդին, կանոնին կոկեն, թրծեն և ապա մենակ թաց թողնեն կեանքի մէջ... Այդ երկու երիտասարդները ո՞վքեր լինեն աղէկ է, հը՞... Թէ իմաստուն ես դուշակի՛ր:

— Ի՞նչ գիտնամ, սատանան իրենց հետ:

— Այդ երկու երիտասարդները, թանկագին Անդրիւշկա՛, նրանք էին, որոնք երկար ժամանակ հետևել էին ինձ, նոյն այն մարդիկ, որոնց հետ վիճել էի Թատրոնական Հրապարակում: Դրանք այն սրիկաներն էին, որոնք, ժողովրդի

ներկայութեամբ, պախարակել էին ինձ՝ անւանելով լակոտ, պոռոտախօս: Այո՛, ճիշտ և ճիշտ նրանք, որոնք յեղափոխական էին ձևանում:

— Այդ՝ միշտ այդպէս է լինում,— ընդմիջեց Անդրիւշկան՝ ծանրացած ու յոգնած կոպերով:

«Մէկ խօսքով, նրանք ինձ վարժեցրին ամէն ծակուծուկը: Աչքերս չատ չուտով բացուեցին ու կարճ ժամանակում ի յայտ բերի ճկունութիւն, խորամանկութիւն և զգուշութիւն: Առաջին մարդը, որին մենակ պիտի հետևէի, ծանր ու լուրջ մի ուսանող էր: Նա կասկածի տակ էր որպէս գաղտնի տպարան պահող և ծածուկ դրականութիւն տարածող: Ցամառ ու յարատև հետապնդումից յետոյ՝ հաստատեցի, որ նա ո՛չ միայն քաղաքական գործերով չի զբաղւում, այլ մի յուսահատ, խելճ ու կրակ երիտասարդ է և ղեկավար՝ «Ինքնասպանների Գաղտնի Ընկերութեան», որի անդամները ձերբակալւեցին ու խոստովանեցին ամէն բան: Այս գործով ես յայտնի դարձայ և մեծ վստահութիւն ձեռք բերի: Մեր մեծաւորը պարզերես դուրս եկաւ, գոհ մնաց և ոռճիկս բարձրացրեց երեսուն ռուբլու... Լաւ ժամանակներ էին, այնպէս չէ՞ Անդրիւշկա... Ինում է՞ս, տօ՛...

— Պատմի՛ր, լսում եմ, սիրածիս յիշեցի՝ աչքերս փակւեցին... Նրան բաց աչքերով լաւ չեմ տեսնում:

— Էլ ի՞նչ պատմեմ, սատանան քեզ տանի, Կովկասի մեր կեանքը քեզ ծանօթ է... Տասնևչորս թւականից իրար կորցրինք ու հիմա իրար գտել ենք... Ճակատագիր է: Մեր ընկերներից չատերը այժմ չկան, ոմանք մեռան, մի քանիս սպանւեցին, իսկ մենք դեռ կենդանի ենք ու միասին... Ի՞նչ ես մտածում, Անդրիւշկա՛, չա՞տ ու չա՞տ փորձութիւններ ենք կոխ տւել, այս մէկն էլ կոխ կը տանք. մի՛ մտածիր, կեանք է, մէկ այսպէս՝ մէկ այնպէս է դառնում:

— Այդ մասին չեմ մտածում, Պո՛րֆիրիյ, աղջիկս եմ յիշում, աղջիկս, նրան սիրում էի:

— Ո՞ր աղջիկը:

— Այն սեւը, սեւը:

— Այն հայուհի՞ն...

— Կարծեմ՝ վրացուհի. սկի չեմացայ՝ ի՞նչ ազգից էր. խառն, կէս ռուս, կէս վրացի:

— Ճիշտ եմ, սոցիալ-դեմոկրատների հետ էր լինում...

— Այդ է որ կայ... Լաւ ըրատու էր...

— Բայց նա յետոյ անդամագրւեց հանրային տան:

— Ասում էին. բայց չեմ հաւատում. նրան ուզողներ կային:

— Այն ժամանակ ենթադրում էի, որ հայուհի է, և զարմանում էի...

— Հը՛... հայուհի՛, հայուհի՛, ի՞նչ հայուհի, ի՞նչ բան... ամէն ազգի կանանց հետ եղել եմ, հաչիւն էլ պահել... մէկայն հայուհի չկարողացայ ունենալ...

— Հայուհիները պնդագլուխ են... Մի անգամ հայ աղջկայ աչքով արի, ետ դարձաւ ու թքեց երեսիս... Ինչո՞ւ այդպէս արի, դիտե՞ս: Իբր թէ հայերը մեզ չատ են սիրում. փորձեցի. բայց սկի էլ չերևաց, որ ռուսասէր են:

— Այն ժամանակ հայուհիները վախենում էին, սիրելիս:

— Ո՞ւմից:

— Կուսակցութիւնից, սատանան տանի, ի՞նչպէս էր կոչւում... հա՛... Դաշնակցութիւն:

— Ա՛հ՛, Դաշնակցութիւն,—ուղղեց Պորֆիրին՝ «իւն» «ու»ի փոխելով:

— Մ՛յ քեզ կուսակցութիւն, բոլորիս սիրտը դող էր գցել... այդ անիծւածների ահից ոչ մի հայ պոռնիկ չկար անառականոցներում:

— Բացւում մի հայ պոռնիկ կար:

— Նրան սպանեցին:

— Փչի՛ր...

— Լուսահոգի Տիխոնովն է ինձ պատմել:

— Ի՞նչ եղաւ այն մէկը, որ Տիխոնովի հետ էր, այն դէր ֆոֆսանը... Ի՞նչ էր նրա անունը, Տէր Աստւած. հա՛, Պիրագով, կեղծ անունով — Լուկ:

— Նա բարձր պաշտօնի հասաւ, բայց Դաշնակցութիւնը տերորի տւեց նրան: Լաւ որսացող էր. յեղափոխականները վախենում էին նրանից:

— Ախո՛ս, ուրեմն նա սպանւե՞ց:

— Այո՛:

— Այս հայուհիները բաւական ուրս պաշտօնեայ սպանեցին, չասե՞ս...

— Այո՛, չատ են սպանել, փոխարքայից սկսած մինչեւ ոստիկան:

— Փոխարքայ չեն սպանել:

— Հաշւիը, որ սպանել են. տերորի տուին, բայց չմեռաւ:

— Էլ ինչո՞ւ են գանգատւում, թէ կոտորւում են:

— Խորամանկ ժողովուրդ է, իրենք կոտորում են, բայց դցում են ուրիշի վրայ...

— Սատանան նրանց հետ. խմե՛ինք...

— Այս բաժակը խմենք այն մարդկանց կենաց, որոնք ամէն տեղ և ամէն ժամանակ կանգնած են ջրի երեսին:

— Մեր կենացը:

— Առաջին հերթին:

— Անո՛ւշ:

— Անո՛ւշ:

— Բայց գիտե՞ս, Անդրիւշկա՛, կարծեմ, որ Աղաբէկովը հայուհի է:

— Ազգային հարց ես բարձրացնում. այժմ միայն յեղափոխական և հակայեղափոխական կայ... հա՛, հա՛, հա՛...

— Այո՛, Աղաբէկովը հայուհի է, բայց անուշ մարդ է: Երէկ բանտ եկաւ, ձեռքս սեղմեց, քէֆս հարցրեց և ուսին խփելով՝ ասաց.—

— Պորֆիրի՛չ, հոգեակս, մարդկանց ծնօտներից մի՛ խըլիր, գանկերից կամ սրտից դո՛րկ... Թո՛ղ որ Զելակովը իր մուրացին հասնի:

— Է՛հ, այդ Զելակովը մեր գահլեն տարաւ. ի՞նչպէս է հաւատում թէ կարող է ծնօտը կարկտել...

— Նա մեղաւոր չէ՛, յանցանքը այդ տխմար բժշկին է, մի անգամ չասաց — ա՛յ Զելակո՛վ, ա՛յ անասուն, ծնօտ կորցնելուց յետոյ՝ նոր ծնօտ չինել դժւար է. այստեղ ոչ Ֆրանսա է, ոչ էլ Գերմանիա:

— Զգիտե՛մ, Աստուած վկայ, այդ կլուսամարդը ի՞նչ է արել յեղափոխութեան համար, որ այդքան երես են տալիս և սիրում:

— Ասում են թէ՝ նա իր ալ բազուկը և ծնօտը կորցրել է քաղաքացիական կռիւների մէջ:

— Է՛, լա՛ւ, հիմա ի՞նչ է ուզում որ...

— Ուզում է իր ծնօտը պատւաստել:

— Այդ կարելի՞ բան է:

— Բժիշկը կարելի է գտնում:

— Էլ ի՞նչ է ուզում, թո՛ղ նորոգի, էլի՞...

— Կարծում ես հեշտ բա՞ն է. յարմար ծնօտ է որոնում, բայց մինչև այսօր չկարողացաւ ճարել...Սպանւածների ծնօտները կամ լայն, կամ նեղ և կամ ձախձախւած են լինում:

— Լաւ է առանց ծնօտի մնալ:

— Ցաւս տանի:

—Ցեղափոխական լինել և հակայեղափոխական ծնօտ ունենա՞լ, ամօթ չէ՞. ի՞նչ կ'ասեն մարդիկ. չե՞ն ասի, որ այսինչը յեղափոխական է, բայց հակայեղափոխական ծնօտ ունի:

— Ինձքան չի կարում:

— Ա՛յդպէս է, հապա ի՞նչ կարծեցիր:

— Ասենք՝ հիմա այնպիսի ժամանակ է, որ ամէն բան կարելի է. ո՛վ է հարցնո՛ղը, ո՛վ է փնտռո՛ղը:

— Ինչ ուզում են՝ անե՛ն. քարն իրենց գլխին: Մենք մէկ էլ խմե՛ինք:

— Հէ՛յ ժամանակնե՛ր, ժամանակնե՛ր. ի՛նչ օրեր ենք ապրում: Առաջ մէկ սպանութեան համար ի՛նչ դատեր, ի՛նչ գործեր, ի՛նչ վկաներ, փաստաբաններ, մէջնորդութիւն, փող, կաշառ: Իսկ հիմա՞...հիմա ի՞նչ. բոլորն էլ մարդ են սպանում:

— Ինչո՞ւ... Հիմա էլ դատ կա՛յ, դատաստան կա՛յ, հին մարդիկ, հին ժամանակներ, ոչինչ չի փոխւել:

— Հա՛, երէկւայ դատավարութիւնը ի՞նչպէս վերջացաւ:

— Բոլորն էլ մահւան են դատապարտւած:

— Ո՞վ ասաց:

— Ցիմերմանը:

— Քանի՞ հոգի են:

— Տասն և եօթ: Երկուսը պառաւներ են:

— Անպատճառ կը ներեն:

— Հա՛ւանաբար:

— Երբեք կին չգնդակահարեցինք։
— Այդ անիծվածները ամէն բանում արտօնեալներ են։
— Ինչո՞ւ. Մոսկւայում կանանց չեն խնայում։
— Տերորի գործով, այո՛։
— Կինն ի՜նչ, տերորն ի՜նչ։
— Ճշմարիտ որ...
— Այդ պառաւները ի՞նչ յանցանք ունեն։
— Չհետաքրքրւեցի։
— Միւսնե՞րը։
— Դաւադիրներ են։
— Ուրեմն, գործ ունենք՝ չասե՞ս։
— Է՛հ, բոլորն էլ աղքատ են ու տկլոր։
— Ա՛յ, սատանան նրանց տանի։
— Ե՞րբ պիտի գնդակահարւեն։
— Քառասուն և ութ ժամւայ մէջ։
— Ուրեմն, վաղը չէ՛, միւս օրը։
— Այդպէս է դատարանի վճիռը։
— Միւս օրը ի՞նչ է։
— Այսօր չորեքշաբթի է։
— Ուրեմն, ուրբաթ օր։
— Այո՛, ուրբաթ օր։
— Գրողը տանի, ուրբաթ օրերը երբեք հաւաս չունեմ մարդ սպանելու. Թարս օր է։
— Ինձ համար բոլոր օրերը մէկ են։
— Հէնց որ ուրբաթ օրերը մարդ եմ սպանում, անպայման մի անախորժութիւն է պատահում։
— Դատարկ բան է՜է՜...
— Փորձով գիտեմ։
— Իսկ ես փորձով գիտեմ, որ բոլոր օրերը մէկ են։
— Քեզ երկու դէպք պատմեմ։
— Հը՛...
— Սրանից մի ամիս առաջ երկու հոգի պիտի գնդակահարէի։ Գիշերւայ երկուսին իջնում եմ «Մահւան Նաւը»։ Ատրճանակը ձեռքս պատրաստ սպասում եմ։ Ներս են հրում առաջին գնդակահարւողը և դուռը ծածկում։ Սպրդնած, նիհար կազմւածքով, միջահասակ մի երիտասարդ։

«Ճերմակեղէններդ հանի՛ր,— ասում եմ,— ժամանակ չունեմ»։
Նա փոխանակ հանելու՝ խոյանում է վրաս, Թքում ուղիղ աչքերիս մէջ և գոռում.
«Պիղծ շուն, սպանի՛ր ինձ, սպանի՛ր ինձ»։
Ատրճանակս պայթեցնում է նրա ուղեղը։
Նախանցեալ շաբաթ վեց հոգի պիտի գնդակահարէի։ Առաջին երկուսը անբարբառ ընկան. երրորդ ու չորրորդը աղաչանքով մեռան, հինգերորդը ներս մտաւ և ծունկի եկաւ... անխօս, անբողոք վերջացան...
Գալիս է վեցերորդը. հապճեպով ուզում եմ նրա հաշիւն էլ վերջացնել առանց միջադէպի. գնդակը վրիպում է, երկրորդ գնդակը խուճափողից է անցնում. սրիկան արիւնաթաթախ յարձակւում է վրաս և ուզում է ատրճանակը բռնել։ Երրորդ գնդակին գետին է ընկնում, բայց դեռ ողջ, հայհոյում ու կանչում է.
«Մարդասպա՜ն, դահի՜ճ, մարդասպա՜ն»։
Փշրում եմ բոլորի ակռաները, բայց ոչ մի ոսկէատամ։ Ցուպւած, զայրացած դուրս եմ գալիս։ Օրն ուրբաթ էր, Թարս և չար օր...
— Քո՛ռ պատահականութիւն, ուրիշ ոչինչ։
— Այդպէս մի՛ ասի, Անդրիւշկա՛, պատահականութիւնը մէկ կը լինի, երկուս, իսկ ինձ հետ այդպիսի դէպքեր յաճախ են պատահում և յատկապէս ուրբաթ օրերը։
— Մարդասպա՜ն, դահի՜ճ... հա՛, հա՛, հա՛։
— Հապա՞, երեխա պոռում էր՝ «մարդասպա՜ն, դահի՜ճ»...
— Բոլորն էլ մարդ են սպանում, միայն մեր անունն է դուրս եկել։ Այս արդարութի՞ւն է։
— Մենք դահիճներ ենք, հօ մարդասպան չենք։ Մարդասպանը նա է, ով դահիճ չէ, բայց մարդ է սպանում։
— Փիլիսոփայութեանդ հաւանում եմ, Պորֆե՛րիյ, սակայն, մարդիկ քեզ պէս չեն դատում։
— Հաւատացի՛ր, Անդրիւշկա՛, որ մենք պատւաւոր մարդիկ ենք։ Մենք ի պաշտօնէ միայն մարդ ենք սպանում, չի-

նէր մեր պաշտօնը, ինչո՞ւ պիտի մարդ զարնէինք: Մենք մարդասպաններ չենք, այլ «սպեց»ներ:

— Ճշմարիտ ես, Պորֆի՛րիյ, մեր «սպեց»ներ ենք, բայց ոչ մարդասպանները:

Մահապարտները մեզ մօտ են ուղարկում մի քանի անգամ մեռած ու յարութիւն առած: Մենք վերջնապէս կնքում ենք նրան մահկանացուն, որով ամբողջ յանցանքի պատասխանատուութիւնը դցում են մեզ վրայ:

— Մեզ ճանաչողները մեղանից վախենում են, ինչպէս անբան և անգութ գազանից, իսկ անծանօթները մեզ վրայ նայում են այնպէս, ինչպէս իրար վրայ: Շատ անգամ իմ մէջ մարդկայինը աւելի զերակշիռ է, քան լաւ համարւած մարդկանց մօտ: Անցեալ օր, կէսօրից յետոյ, փողոցով անցնելիս տեսայ մի մուրացիկ կին, թիք տւած պատին, խողովակի մօտ, ձեռքը մեկնած ողորմութիւն էր խնդրում: Մօրս յիշեցի, խիղճս զարթնեց, տւի նրան մի արծաթ ռուբլի և սիրալիր ժպտացի: Կինը մի քանի անգամ չուռ տւեց փողը, դառն ժպտաց և դրամը վերադարձրեց: Արիւնը գլուխս խփեց, կարծեցի, որ հրաժարւում է դահիճի փողը վերցնել: Երբ պատճառը հարցրի՝ ասաց.—

— Զեմ հաւատում, կատակ էք անում:

— Կատակ չէ՛, մա՛յրիկ,— ասացի ես:

«Նա կռացաւ, որ ձեռքս համբուրի, բայց թոյլ չտւի. հազար ու մի օրհնութիւն թափեց վրաս, արտասւեց, իսկ երբ հեռանում էի՝ ասաց.—

— Աստւած երկիր է իջել՝ մարդկային կերպարանքով:

— Օդին վրադ ազդել է, Պորֆի՛րիյ,— ասաց Անդրիւշկան՝ ծիծաղելով:

— Երդւում եմ անուշ արևովդ, որ պատմածս չափազանցութիւն չէ. բառացի կրկնում եմ կնոջ խօսքերը:

— Որ այդպէս է, խմենք մուրացիկ կնոջ կենացը:

— Խմե՛նք, բայց սրանով ի՞նչ եմ ուզում ասել. սրանով ուզում եմ ասել, որ այդ մուրացիկը իր կեանքի մէջ երբեք այնպէս առատ ողորմութիւն չէր ստացել... Էլ ո՞ւր մնաց մարդկայնութիւն, գթութիւն և բարութիւն... Հը՞, դո՛ւ ասա...

— Այդպիսի զգացումները ինձ անծանօթ են: Ամէն մարդ մի դորձ է անում, մենք էլ մի դորձ, պրծաւ գնա՛ց...

— Այդ՝ այդպէս է, բայց դրա մէջ ուրիշ բան կայ:

— Ո՛չ մի բան չկայ... Հաբցիս ուղիղ պատասխանատւու. եթէ այս պաշտօնը չկատարէինք, մարդասպանութիւնը կը վերանա՞ր մէջտեղից:

— Չէր վերանայ:

— Շատ լա՛ւ, մի ուրիշ պիտի կատարէ՞ր թէ ոչ:

— Պիտի կատարէր:

— Է՛հ, հազիր մենք ենք կատարում. սրա մէջ ի՞նչ կայ որ... Դատարկ բաներ:

— Ես ուրիշ բան եմ ասում, դու՝ ուրիշ:

— Նոյն բանն ենք ասում, Պորֆի՛րիյ, միայն քո ասածը տանձն է, իսկ իմը՝ խնձոր. քիչ տարբերութեամբ երկուսն էլ պտուղներ են, ահա՛ բոլորը:

— Թողնենք այս վէճը, սատանան տանի. կեանքն ինչպէս որ է, այնպէս էլ կայ ու կը գնայ: Միայն պիտի աչքատենք, որ տակը չմնանք:

— Մա՛յ, ինչ եմ ասում. միշտ այսպէս հեծած կեանքի մէջքին:

— Մի երգ երգի՛ր,— Անդրիւշկա՛:

— Բաղաձայն եմ, Պորֆի՛րիյ:

— Երգի՛ր:

— Գիտցածս բոլոր երգերը հակայեղափոխական են:

— Երգի՛ր... յեղափոխութեան էլ՝ հակայեղափոխութեան էլ...

«Գե՛ղե՛ցիկ չե՛մ դէ՛մքով, ա՛ղքատի՛կ հագնւա՛ծ,
«Ե՛ւ հէնց դրա՛ համար է՛լ ո՛չ ոք չի ա՛ռնում ի՛նձ...
«Տա՛յ, տա՛յ, տա՛յ, տրա՛յ, լա՛յ, լա՛մ...

— Մա՛մա՛... դուռը ծեծում են:

— Ո՞վ է:

— Բա՛ց արէք, դրողը ձեզ տանի:

— Զելեակովն է, Պորֆի՛րիյ:

— Բաց արա՛ դուռը:

— Աստւում եմ այդ մարդուկին:

— Զգո՛յշ, Անդրիւշկա՛, ժամանակները վատ են:

— Բա՛րև հարբեցողներին,— ասաց Ջելեակովը ներս մտնելով ու ձեռքը մեկնելով։

— Օ՜օ՜օ՜, բարե՜ւ, բարե՜ւ,— կրկնեցին դահիճները՝ սեղմելով Ջելակովի և նրան ընկերացող բժշկի ձեռքը։

Հիւրերը գրաւեցին իրենց առաջարկուած տեղերը։ Անդրիւշկան սեղանի վրայից հաւաքեց դատարկ շիշերը և զետեղեց սենեակի անկիւնը։ Պորֆերին սեղանը մաքրեց, նոր շիշեր բաց արաւ, լեցրեց բաժակները և բեղերը արագ-արագ վեր քշտելով՝ ասաց.—

— Ընկե՛ր Ջելակով և ընկե՛ր բժիշկ, թէև ուշ, բայց ոչի՛նչ. լաւ է ուշ, քան երբեք։ Այսօր լրացաւ իմ ծննդեան երեսուն և հինգ ամեակը։ Նստած խմում և զրոյց անում. յիշեցինք ձեզ, ուզում էինք ձեր կենացը խմել՝ դուռը ծեծեցիք. ուրեմն, խմենք ձեր կենացը։ Հուռա՛, հուռա՛, հուռռա՜ա՜ա՜։

— Մինչև վերջը, մինչև վերջը, բժի՛շկ։

— Չէ՛ մինչև վերջը, մինչև վերջը. պատիժ կայ։

— Կոնծի՜ր բժի՛շկ,— ասաց Ջելակովը՝ դահիճներին իշմար տալով։

— Օղի չեմ սիրում, կոնեակ կամ գինի՝ այո՛,— ասաց բժիշկը՝ տհաճութեամբ պարպելով բաժակի մնացորդը։

— Կոնեակ էլ ունե՛նք, գի՛նի էլ, բժի՛շկ, տրամադրութիւնդ լա՛ւ պահիր, քէֆը նոր է սկսւում,— պատասխանեց Անդրիւշկան։

— Բա՛ց արա շիշերը,— հրահանգեց Պորֆերին։

— Պատրաստ եմ ծառայելու—, ասաց Անդրիւշկան՝ տեղից վեր ցատկելով և մօտենալով պահարանին։

— Խմենք բոլորի՜, բոլորի՜, բոլորի՜ կենացը։ Անդրիւշկա՛, տեղդ անցի՛ր և բաժակդ վերցրու,— ասաց Պորֆերին ոտքի կանգնած։

— Գալիս եմ։

— Միայն ո՛չ հակայեղափոխականների կենաց,— նկատեց Ջելակովը՝ իբր թէ կատակի տալով։

— Թո՛ղ կորչի՛ հակայեղափոխութիւնը,— ասաց Պորֆերին,— կեցցէ սոցիալիզմը, կեցցէ այն բազուկը, որ կռւաւ սոցիալիզմի և կոմունիզմի համար. կեցցե՛ս դո՛ւ, Ջելակո՛վ, հոգի ջա՛ն, քո կենացը. Անդրիւշկա, բաժակդ վերցրու։

— Կեցցե՜ն ջարդւող գլուխները և բազուկները,— վրայ բերաւ Անդրիւշկան՝ մօտենալով սեղանին և բաժակը վերցնելով։

— Մէկ խօսքով, յեղափոխութեան կենացը,— ասաց բժիշկը, մի բան ասած լինելու համար։

Որպէս փոխադարձութիւն՝ Ջելակովը ոտքի կանգնեց՝ ձեռքը բաժակի վրայ դրած՝ և առաջարկեց խմել Պորֆերիի կենացը։ Նա երկու խօսքով գնահատեց դահճի գործունէութիւնը և շեշտեց, որ Պորֆերին մէկն է այն վճռական, կարող և անխնայ մարտիկներից, որոնք քանի հնանան, այնքան կը թարմանան։

— Յեղափոխութիւնը,— ասաց Ջելակովը,— արիւն է, իսկ ով արիւնից վախենայ, յեղափոխական չէ, սոցիալիստ չէ, կոմունիստ չէ և թշնամի համայն պրոլետարիատին։ Ես արիւնից չվախեցայ և կորցրի իմ աջ բազուկն ու ծնօտը։ Հոգ չէ՛, ես կորցրի, բայց յեղափոխութիւնը շահեց։

Այժմ մեզ պէտք է առաջնորդի միայն մէկ նշանաբան — մեր բազուկը և հակայեղափոխականների գանկը։

Այս տեսակէտից կարող են պարծենալ միայն Պորֆերին և Անդրիւշկան, իսկ ի՛նձ և քե՛զ, բժի՛շկ, մնում է բացադանչել.

— Կեցցե՜ն յեղափոխութեան աջ և ձախ բազուկները. կենա՛ցդ Պորֆերի, կենա՛ցդ Անդրիւշկա՛։

Քէֆը շարունակւում էր...

VII

Կեր ու խումի և մարդասպանութեան վարժ դահիճները, Ջելակովին ու բժշկին հաւասար, դեռ շարունակում էին խմել, խօսել ու երգել, եռանդով ու զգաստութեամբ։

Սակայն, լուսադէմին, նրանք թէև ընկրկել էին խմիչքի ազդեցութեան տակ, բայց յամառում զգօն ձևանալ, մերթ ընդ մերթ աչքերը լայնօրէն բաց ու խուփ անելով։ Քունը սաստկօրէն ծեծում էր երկուսի թարթիչները, արթնութեան վերջին փորձերը խեղդելու համար։

— Բա՛րև հարբեցողներին,— ասաց Զելեակովը ներս մտնելով ու ձեռքը մեկնելով:

— Օ՜օ՜օ՜, բարե՜ւ, բարե՜ւ,— կրկնեցին դահիճները՝ սեղմելով Զելակովի և նրան ընկերացող բժշկի ձեռքը:

Հիւրերը դրաւեցին իրենց առաջարկւած տեղերը: Անդրիւշկան սեղանի վրայից հաւաքեց դատարկ շիշերը և դետեղեց սենեակի անկիւնը: Պորֆերին սեղանը մաքրեց, նոր շիշեր բաց արաւ, լեցրեց բաժակները և բեղերը արագ-արագ վեր քշտելով՝ ասաց.—

— Ընկե՛ր Զելակով և ընկե՛ր բժիշկ, թէև ուշ, բայց ոչի՛նչ. լաւ է ուշ, քան երբեք: Այսօր լրացաւ իմ ծննդեան երեսուն և հինգ ամեակը: Նստած իմում և դրոյց անում. յիշեցինք ձեզ, ուզում էինք ձեր կենացը խմել՝ դուռը ծեծեցիք. ուրեմն, խմենք ձեր կենացը: Հուռա՛, հուռա՛, հուռռա՛՛՛:

— Մինչև վերջը, մինչև վերջը, բժի՛շկ:

— Չէ՛ մինչև վերջը, մինչև վերջը. պատիժ կայ:

— Կոնծի՛ր բժի՛շկ,— ասաց Զելակովը՝ դահիճներին իշմար տալով:

— Օղի չեմ սիրում, կոնեակ կամ դինի՝ այո՛,— ասաց բժիշկը՝ տհաճութեամբ պարպելով բաժակի մնացորդը:

— Կոնեակ էլ ունե՛նք, դի՛նի էլ, բժի՛շկ, տրամադրութիւնդ լա՛ւ պահիր, քէֆը նոր է սկսւում,— պատասխանեց Անդրիւշկան:

— Բա՛ց արա շիշերը,— հրահանգեց Պորֆերին:

— Պատրաստ եմ ծառայելու—, ասաց Անդրիւշկան՝ տեղից վեր ցատկելով և մօտենալով պահարանին:

— Ամենք բոլորի՛ր, բոլորի՛ր, բոլորի՛ր կենացը: Անդրիւշկա՛, տեղդ անցի՛ր և բաժակդ վերցրու,— ասաց Պորֆերին ոտքի կանգնած:

— Գալիս եմ:

— Միայն ո՛չ հակայեղափոխականների կենաց,— նկատեց Զելակովը՝ իբր թէ կատակի տալով:

— Թո՛ղ կորչի՛ հակայեղափոխութիւնը,— ասաց Պորֆերին,— կեցցէ սոցիալիզմը, կեցցէ այն բաղուկը, որ կորաւ սոցիալիզմի և կոմունիզմի համար. կեցցե՛ս դո՛ւ, Զելակո՛վ, հոգի ջա՛ն, քո կենացը. Անդրիւշկա, բաժակդ վերցրու:

— Կեցցե՛ն ջարդւող գլուխները և բազուկները,— վրայ բերաւ Անդրիւշկան՝ մօտենալով սեղանին և բաժակը վերցնելով:

— Մէկ խօսքով, յեղափոխութեան կենացը,— ասաց բժիշկը, մի բան ասած լինելու համար:

Որպէս փոխադարձութիւն՝ Զելակովը ոտքի կանգնեց՝ ձեռքը բաժակի վրայ դրած՝ և առաջարկեց խմել Պորֆերիի կենացը: Նա երկու խօսքով ըրւատեց դահճի դործունէութիւնը և նշմարեց, որ Պորֆերին մէկն է այն վճռական, կարող և անխնայ մարտիկներից, որոնք քանի հնանան, այնքան կը թարմանան:

— Յեղափոխութիւնը,— ասաց Զելակովը,— արիւն է, իսկ ով արիւնից վախենայ, յեղափոխական չէ, սոցիալիստ չէ, կոմունիստ չէ և թշնամի համայն պրոլետարիատին: Ես արիւնից չվախեցայ և կորցրի իմ աջ բազուկն ու ծնօտը: Հոգ չէ՛, ես կորցրի, բայց յեղափոխութիւնը շահեց:

Այժմ մեզ պէտք է առաջնորդի միայն մէկ նշանաբան — մեր բազուկը և հակայեղափոխականների դանկը:

Այս տեսակէտից կարող են պարծենալ միայն Պորֆերին և Անդրիւշկան, իսկ ի՛նձ և քե՛զ, բժի՛շկ, մնում է բացագանչել.

— Կեցցե՛ն յեղափոխութեան աջ և ձախ բազուկները. կենա՛ցդ Պորֆերիյ, կենա՛ցդ Անդրիւշկա՛:

Քէֆը շարունակւում էր...

VII

Կեր ու խումի և մարդասպանութեան վարժ դահիճները, Զելակովին ու բժշկին հաւասար, դեռ շարունակում էին խմել, խօսել ու երդել, եռանդով ու դժասուրեամբ:

Սակայն, լուսադէմին, նրանք թէև ընկրկել էին խմիչքի ազդեցութեան տակ, բայց յամառում դեռն ձևանալ, մերթ ընդ մերթ աչքերը լայնօրէն բաց ու խուփ անելով: Քունը սաստկօրէն ծեծում էր երկուսի թարթիչները, արթնութեան վերջին ուժերը խեղդելու համար:

Զելակովը կէս գինով էր, իսկ բժիշկը, ըստ իր ժուժկալութեան, խաղաղ, հանդարտ ժպտում էր հարբածների ծամածռութիւնների վրայ, միաժամանակ հոգ տանելով, որ Զելակովը սահմանը չանցնի՝ փորձութիւն դառնալով իր դլխին:

Զելակովի այցը դահիճներին պատահական չէր: Տան և եօթի մահավճռից յետոյ, չտապել էր մի անգամ ևս խնդրել, նախազգուշացնել դահիճներին, որ նրանք խնայեն ու չջախջախեն դնչի ծնօտներն այն դնդակահարուածների, որոնք ոսկի ատամ չունեն:

Զելակովին անհրաժեշտ էր իր կորցրած ծնօտը պատաստել, նոր կզակ ու նոր դէմք ունենալ, բայց դահիճների ի՞նչ փոյթ. նրանք պաշտօնեայ մարդկանց ճշտապահութեամբ կատարում էին իրենց պարտականութիւնը:

Նրանց ասած էր — «Դնդակահարուողները յանձնւում են ձեզ. ինչ ուզում էք՝ արէ՛ք, առանց սակայն ողջ թողնելու»: Ու նրանք, կանոն դարձրած, մահապարտներին խփելուց առաջ, նրանց հագուստները, իրերն և առարկաները բաժանում իրենց միջև, մահուան սպասող զոհի ներկայութեամբ:

Յափշտակութեան տենդից մղւած, մահապարտին մերկացնելուց և սպանելուց յետոյ, դահիճները, բնական սառնասրտութեամբ և վիրաբուժի անողոք ու հատու հարւածով ձեղքում էին մեռելի որովայնը, ատամոքսն ու աղիքները և կուլ տւած ոսկի էին քննում. ապա՝ կացինով փշրում էին ենթակայի ծնօտն ու ատամնաշարերը, նոյն ողբալի նպատակով: Նրանք բաւական հարստացել էին, ու արծաթի փորձութիւնը նրանց մղում էր էլ աւելի հարստանալու, էլ աւելի անդիջող լինելու աշխարհի և մարդկանց հանդէպ:

Սկզբնական շրջանում, երբ Պորֆերին և Անդրիւշկան դեռ նոր էին սկսել մարդկային դիակներն անդամահատել ոսկի փնտռելով, Զելակովի հարցը մէջտեղ եկաւ: Նրան յայտարարւած էր, նախ քան մահապարտներին խփելը, ստուգում կատարել, թէ արդեօք ենթական ոսկի ատամ ունի՞: Ոսկի ատամ չունեցողների ծնօտը անձեռնմխելի էր մնում, Զելակովի ծնօտը պատաստելու փորձարկութեան համար: Բայց այս յանձնարարութիւնը շատ տհաճութիւնների հետ էր կապւած: Առաջին փորձը կատարեց Պորֆերին:

Այդ օրը երեք հոգի պիտի գնդակահարէին: Քաղաքական յանցաւորներ, ուժեղ, առոյգ և գաղափարական երիտասարդներ: Բանաւոր պրոպագանդ մղելու պահին՝ նրանցից մէկը ասել էր.—

«Յեղափոխութիւնը փոխվրէժ չէ՛, այլ արդարութեան և հաւասարութեան հաստատումն, իսկ արդարութիւնը ատում է բոլոր տեսակի և ժամանակների բռնակալները, վաղ թէ ուշ ձեր անկումը անխուսափելի է, և մենք՝ առաջին զոհերն ենք այդ ճանապարհի վրայ»:

Երբ այս խօսքերի հեղինակը իջաւ «Մահւան Նաւ» կոչւած սենեակը, ուր, սովորաբար, գնդակահարում էին մարդիկ, և ուր, Գոլտ ատրճանակը ձեռքին, սպասում էր Պորֆերին, մի վայրկեան զոհն ու դահիճը լրիւ նայեցին, ապա՝ դահիճը մեղմ տոնով, հարցրեց.—

— Ոսկի ատամ ունե՞ս:

— Չունեմ,— պատասխանեց երիտասարդը:

— Չե՛մ հաւատում, բերանդ բա՛ց,—հրամայեց դահիճը:

Երիտասարդը հնազանդւեց ու, երբ դահիճը մօտեցաւ նրա ակռաները գնահատելու, մահապարտը ատամների անչեղ հարւածով բռնեց դահիճի ներքևի շրթունքը և ուժգնութեամբ խածեց:

Մի ւս երկուսը հարցաքննութեան չենթարկւեցին և անխօս ընկան անվրէպ գնդակներից:

Այս դէպքից յետոյ դահիճները գլխացաւանք էին համարում Զելակովի խնդիրը կատարել:

* * *

Զելակովի և բժշկի ընկերակցութեան պատմութիւնը կարճ է:

Քաղաքացիական մի վճռական կռւի ժամանակ հրետանու ռումբը ջարդում է Զելակովի թևը և սրբում–տանում է նրա ծնօտի ալ մասը: Ցեղափոխութեան մարտիկը ուշակորոյս ընկնում է ռազմադաշտի վրայ: Կռիւը հետզհետէ սաստկանում է. իրարայինչ ուժերը նորանոր զնդեր են շպրտում պատերազմի հնոցը: Կատաղի պայքարը վերջանում է կարմիրների յաղ-

ջախիչ յաղթանակով, և հակառակորդ վիրաւորները անխնայ սպնահար են անում: Կարմիր վիրաւորները փոխադրելիս, պարզւում է, որ Զելակովը դեռ կենդանի է, բայց ծանրապէս վիրաւոր: Ցաւոնի է դառնում նաև, որ Զելակովը, դանւելով առաջին դիրքերում, հակառակորդի երկրորդ ու կենտրոնացած ուժեղ գրոհին պատասխանում է հակագրոհով, կոտրում է թշնամու թափը, կասեցնում նրա առաջխաղացումը, մինչև որ թարմ և օգնական ուժեր են հասնում:

Հիւանդանոցում նրան առանձին ուշադրութիւն և խնամք են տածում: Ենթարկելով անդամահատութեան, վիրաւոր թեւը կարում են մինչև անութը և բուժում, իսկ ծնօտը մնում է կիսատ, միշտ խնամքի ու բժշկութեան կարօտ: Մի քանի անգամ փորձում են կարել-կարկատել դէմքի մաշկւած մորթը, սակայն, բոլոր փորձերը անցնում են անյաջող: Այնուհետև Զելակովի կէս դէմքը դառնում է վիրակապերի խաչաձևութիւն, անդադար նորոգւող, բայց յարատև ու մնայուն:

Կարմիրների աստղը փայլում է. նրանք առաջ են խաղում նորանոր յաղթանակներով: Զելակովը անգործ չի մնում, մասնակցում է թիկունքի աշխատանքներին և պատասխանատու պաշտօններ է վարում ամէն տեղ. առանձին հաճոյքով խուզարկութիւններ և ձերբակալութիւններ է կատարում, որի ընթացքում երևան է հանում աներևակայելի դաժանութիւն և խստութիւն: Զինուորական կարգադրիչ է լինում հազարաւոր դնդակահարուողների:

Մի անգամ, դնդակահարութեան ժամանակ, նա տեսնում է համակրելի դէմքով, մեղմ ու բարի արտայայտութեամբ մի մարդ: Զելակովը զգացում է նրա հայեացքից. ծանօթ մտապատկերներ են անցնում նրա մտքից, ու նրան թւում է, թէ վաղո՞ւց, չո՞ւ վաղուց ինքը դանւել է այդպիսի դրութեան մէջ, բայց չի յիշում: Զելակովը հետաքրքրութիւնից մղւած մօտենում է դոհին և հարցնում.—

— Ո՞վ էք:

— Մարդ եմ, սովորական մարդ,— պատասխանում է մահապարտը:

— Զբաղմունքդ,— հարցնում է Զելակովը:

— Բժիշկ:

— Դո՛ւրս չաքքից,— հրամայում է Զելակովը:

Բժիշկը հանդարտօրէն և մահաղէմ դուրս է գալիս դընդակահարուողների երկրորդ չաքքից և կանգնում է Զելակովի ուղիղ դէմ: Զելակովը հրաման է տալիս դինուորներին հրացանի բունել մխեռներին: Հրամանը կատարւում է. մի վայրկեանի մէջ երեսուն և չորս մահապարտները ընկնում են պարիսպների տակ:

Բժիշկը յիմարացածի պէս հարցնում է,—

— Ես նո՞յնպէս պիտի մեռնեմ:

— Ո՛չ, բժի՛շկ:

— Ես պիտի ապրե՞մ,— կրկնում է բժիշկը բութ և անփայլ աչքերով:

— Այո՛, դուք պիտի ապրէք՝ ուրիշների կեանքն ու մահը ստուգելու համար:

— Ձեզ չեմ հասկանում,— ասում է բժիշկը:

Զելակովը՝ նրա ձեռքից բռնած՝ մօտեցնում է դնդակահարւածներին և ասում.—

— Ստուգեցէ՛ք սրանց և ցոյց տւէք կիսակենդանները:

Բժիշկը կատարում է Զելակովի հրամանը, ստորագրում է վճռագիրը, չմոռանալով փակագծի մէջ աւելցնել հետևեալ վկայութիւնը.—

«Երեսուն և հինգ հոգին դնդակահարեցին... Այդ խմբից մէյն ես ապաւեցի... Իբրև բժիշկ պաշտօն ստացայ նոյն պահին ստուգել մահապարտների զարկերակն ու սիրտը... Վկայում եմ, որ նրանք մեռան կրկնակի մահով»:

Երեսուն և չորս հոգու դնդակահարութիւնը տեղի է ունենում քաղաքից դուրս, մի հեռաւոր դղեակի բակում, ուր մնում էր մի վաշտ հաւատարիմ դինուոր, նշանակւած յատկապէս դնդակահարութիւնների և թռուցիկ գործերի համար: Երբ ամէն ինչ վերջանում է, Զելակովը, բժշկին վերցրած, վերադառնում է քաղաք:

Ճանապարհին, խօսակցութեան ժամանակ, Զելակովը դիմելով իր ուղեկցին, ասում է.—

— Ձեր կեանքը փրկւեց, բժի՛շկ, անշուշտ ուրախ էք:

— Ես հաչտւած էի մահուան հետ,— պատասխանում է բժիշկը,— բայց այժմ ատում եմ մահը:

— Ձեր կեանքը դեռ վտանգի տակ է,— ասում է Զելակովը, յանկարծակիի բերելով բժիշկը:

Երբ բժիշկը լռում է, Զելակովը աւելացնում.—

— Ես ձեզ ազատեցի մէկ վայրկեանի ազդեցութեամբ, բայց հիմա խղճահարւում եմ. մարդկանց մէջ ամենից շատ ատում եմ բժիշկներին, դուք բժիշկ էք և բացառութիւն չէք կարող կազմել:

Բժիշկը յամառօրէն լռում է:

Զելակովը ջղայնացած գոչում է.—

— Ինչո՞ւ չէք հարցնում պատճառը:

— Այդ ձեր գործն է, ինձ չի վերաբերում,— հանդարտ և անտարբեր պատասխանում է բժիշկը:

Ապա՝ Զելակովը՝ ձեռքին պատրաստ բռնած ատրճանակը ուղղում է բժշկին և կրակում է օդի մէջ, բժիշկը ցնցւում ու քարանում:

— Դուք վախկոտ էք, բժի՛շկ,— ասում է Զելակովը:

— Այս բեպէկս ձեր երեսի վէրքերը ցաւո՞ւմ են,— տաքութիւնակօրէն հարց է տալիս բժիշկը:

— Այո՛, բժի՛շկ, ցաւում են, բայց ի՞նչպէս իմացաք:

— Ուրեմն, ձեզ առողջացնելու դեռ յոյս կայ,— ասում է բժիշկը, ուշիղ նայելով կիսամարդու բիբերին:

Զելակովը հանդարտւում է, ատրճանակը խրում է գօտին՝ սկսում է պատմել այն կռւից, ուր վճռական դեր է խաղացել, վիրաւորւել ու ընկել անդրայ: Խօսելով իր անգամահատութեան, բժշկւելու և խնամւելու մասին, նա դժգոհում, անւանարկում է բժշկական գիտութիւնը և նրա քուրմերը: Այն կարծիքն է յայտնում, թէ բժշկութիւնը ցարդ պէտք է կարողանար մարմնական արատներն ու պակասները ուղղել, լրացնել, զարձնելով առաջւայ նման կատարեալ, բնական ու հաճելի: Իսկ դրա փոխարէն ի՞նչ է արել, ո՛չինչ, ո՛չինչ և ո՛չինչ:

Բժիշկը հակաճառում, հրաշքներ է պատմում բժշկութեան և առանձնապէս վիրաբուժական հսկայական նւաճումների մասին. պատմում թէ ինչպէս բժշկութիւնը հնարաւոր է դառնում ամենաայլանդակ արատները լրացնել ու պատւաստել. տգեղ մարդիկ գեղեցկացնել, ծերերը երիտասարդացնել և անդամ սեռերը փոխել: Բժիշկը պատմում է նաև, թէ ինչպէս

հեռաւոր Ամերիկայում, մի ծանր ոճրագործ մահւան է դատապարտւում և նրան առաջարկում են իր գլուխը յօժարակամ անդամատնական փորձի ենթարկելու այն պայմանով, որ ողջ մնալու դէպքում ազատ արձակւի:

— Բայց ի՞նչ փորձ է,— հարցնում է մահապարտը:

Նրան բացատրում են, որ մի խումբ հռչակաւոր վիրաբոյժների ներկայութեամբ և նրանց աշխատանոցում, ուր ամէն ինչ նախատեսնւած է փորձի համար, ինքը պիտի գլխատւի, որից անմիջապէս յետոյ, ակնթարթի խնայողութեամբ, բժիշկները նրա անջատւած գլուխը պիտի վերցնեն ու կարեն մարմնին:

— Եւ ի՞նչ, մահապարտը համաձայնւո՞ւմ է,— անհամբեր հարց է տալիս Զելակովը:

— Անմիջապէս չի համաձայնւում,— չարունակում է բժիշկը,— մտածում է, տատանւում և ուզում է իմանալ, թէ այդ բոլորը յանուն ի՞նչ բանի: Նրան յայտնում են, որ այդ ամէնը արւում է միմիայն յանուն մարդկային բարօրութեան և երջանկութեան: Ոճրագործը նորից մտածում. նորից տատանւում և համաձանւում է: Փորձը յաջող է անցնում, ենթական առողջանում և ամուսնանում: Ոչնչով չի երևում, որ նա մեռած և յարութիւն առած մարդ է, միայն չատ բարձրավիզ և սպիտակ օձիք է զործածում, վզի սպին ծածկելու համար:

Լսելով պատմութիւնը, Զելակովը բացագանչում է.—

— Այդ հրա՛շք է... բայց մի՞թէ ճշմարիտ:

— Բժշկութեան համար՝ անկարելի բան չկայ:

— Իսկ տարբեր գլուխ՝ տարբեր մարմնի կարելու և պատւաստելու հաւանականութիւն կա՞յ,— հարցնում է Զելակովը:

— Այդ մասին բժշկութիւնը լռում է:

— Կարճ ասած՝ իմ ծնօտը կարո՞ղ ես նորոգել, բժի՛շկ,— կտրուկ հարցնում է Զելակովը:

— Ձեր վէրքերը նայելուց յետոյ կարող եմ պատասխանել:

— Իսկ դուք մասնագիտութեամբ վիրաբո՞ւժ էք:

Բժիշկը, որ վէներական ախտերի մասնագէտ է լինում, դրական պատասխան է տալիս:

Երկու խօսակիցները վերադառնում են Զելակովի բնակարանը: Ռազմիկը քանդում է վիրակապերը և ցոյց տալիս բժշկին. վերջինս քննում է վէրքերը, լուանում դաղջ ջրով, փոչի ցանում և նորից կապկպում: Ապա՝ ծանր ու դանդաղ, յայտնում է հետևեալը.—

— Ձեր վէրքերը չուտով կը բժշկեմ, իսկ ձեր ծնօտը կարելի է նորոգել յարմար առիթով և դէխաւոր վիրահատութենից յետոյ:

— Բայց ո՞րն է այդ յարմար առիթը,— անհամբեր հարցնում է Զելակովը:

Բժիշկը բացատրում է նրան, թէ անհրաժեշտ է ունենալ վիրահատի գործիքները, դեղերը, ինչպէս նաև անդամահատնական սենեակը իր յատուկ կահ-կարասիներով: Ապա՝ որ ամենադէպքաւորն է, պէտք է յարմար ծնօտ ճարել:

— Իմ պարտքս լինի այդ ամենը ստեղծել,— ասում է Զելակովը,— միայն թէ ինձ վերադարձրէք իմ ջարդուած ծնօտը և իմ բնական դէմքը:

— Խոստումս կատարելու եմ,—ասում է բժիշկը վճռակամ:

Այս կարճ ծանօթութենից ու զրոյցից յետոյ՝ յոյսը քերում է Զելակովի հոգին, սկսում է մտածել բժշկութեան և նրա գուրմերի հրաշագործութեան մասին, միշտ իր ճախող բժշկութիւնը համարելով անկանոն և անբաւարար ժամանակի արդիւնք: Այդ ուղղութեամբ մտածելով՝ նրա յոյսը փոխուում է հաւատքի. հաւատում է իր նախկին կերպարանքի վերակառուցման, իր վերջնական ապաքինման, առանց մարմնական արատի և այդ դպիր վիրակապերի:

Ո՞վ կարող է մեղադրել Զելակովին, մի մարդ, որ իր ջահէլ կեանքը կիսել, զոհաբերել էր բարձր գաղափարի համար, ու հիմա հնարաւորութիւն ունէր ողջացած մարմնով և կեանքով ապրելու:

Անպարտ է նաև բժիշկը, որի կեանքը փրկուած էր քմահաճ մի վայրկեանի ազդեցութեամբ: Բժիշկը, իր կեանքը փրկելու կամ ժամանակաւորապէս մահը հեռացնելու մտադրութեամբ, յոյս ու հաւատ էր ներշնչել մի մարդու, որի մարմնական այլանդակութեան զուգընթաց եղծանուած ու այլանդակուած էր նաև նրա հոգին:

* * *

Այդ օրւանից, ահա՛, այս երկու մարդիկ, իրարից կախուած ու իրարից կեանք սպասող, դարձել էին երկրաբակները: Նրանք ապրում էին միասին, ուտում, քնում և հանգստանում միասին, իրար հետ էին տանը, դուրսը, ամէն տեղ:

Զելակովի համբաւը շատ չուտով տարածուեց կարմիր գծից ներս և նրանից դուրս: Նրա մասին ժողովուրդը առասպելներ էր պատմում: Ասում էին, թէ նա՛ է յեղափոխութիւնը ստեղծել, նա՛ է ցրել Սահմանադիր ժողովը, նա է վարում բոլոր կուսակցերը, տասն անգամ չունչը փչել է և տասն անգամ յարուցիւն առել:

Պատմում էին նաև, որ նրան ընկերակցում է ամերիկացի մի հմուտ բժիշկ, յատկապէս նրա համար եկած: Հաստատողներ կային, որ Զելակովը հայկական ծագում ունի, քահանայի զաւակ է, թէ նրանց տունը գանուում է բիբլիական Արարատի լանջին, թէ Աստուած նրան ղրկել է Ռուսաստան, որպէս պատուհաս — ռուս մեղաւոր ցարերին պատժելու և ռուս խեղճ ու կրակ մուժիկին ազատելու Ռոմանովների գերութիւնից:

Զելակովի անուան շուրջը հիւսուած առասպելները որոշ հիմք ունէին: Բժշկին հանդիպելուց և նրանից ներշնչելուց յետոյ՝ Զելակովը ամբողջ եղելութիւնը պատմում է իր պատասխանատու ընկերներին, աւելացնելով նաև, թէ բժշկին ազատել է գնդակահարութիւնից միայն իր ծնօտը նորոգելու խոստումով: Նրա ընկերները Զելակովին արտօնում են անելու այն, ինչ հարկաւոր է բժշկութեան և առողջութեան համար: Ու նա, այդ օրից սկսած, ազատ մտնում է բանտերը կալանաւորների ծնօտները նայելու, չափելու և ընտրելու:

Բժիշկը, որի անմեղ սուտը ճակատագրական նշանակութիւն էր ստացել իրեն համար՝ ստիպուած էր կատարելու այն ամենը, ինչ ցանկանում էր Զելակովը: Այժմ նրա պաշտօնը աւելի անիծապարտ էր, քան բուն իսկ դահիճներինը:

Կարճ ժամանակում Զելակովի սարսափը սկսում է մեծանալ, տարածուել ու բծաւորել յեղափոխութեան նշանաբանները: Կարմիրների կողմից մի դիւղ, աւան կամ քաղաք դրա-

ւելիս՝ նրա անուան սարսափը միշտ բանակից առաջ է մուտք գործել նւաճւած վայրերը: Զելակովի զարգանդը անարգել մտել է առանձնապէս բանտեր, հիւանդանոցներ, Արտակարգ Յանձնաժողովի ծուռ յարկեր, ուր հազարաւոր կալանաւորներ առ ու ծախի են նստել մահւան հետ: Պատահել են դէպքեր, երբ Զելակովը անցորդները կանգնեցնելով, բժիշկին հրամայել է չափել ճամբորդի կզակը: Զելակովը իր սպիտակ վերակաւերով տաճիկ վաթթոցաւոր, իսկ բժիշկը, միրուքով ու երկար մազերով, սև չարժուն մի կէտ, միշտ նրա հետ, միշտ նրանից անբաժան:

Այս երկու մարդուց վախեցել է ժողովուրդը, ինչպէս մահւանից: Բոլորը իրենց դռներն ու պատուհանները փակել են: Սառակ երեխաներն անգամ վախով են նայել այս ուրւականներին:

Սակայն, հասնում է ժամանակը, երբ Զելակովի անսահման սանձարձակութիւնը վերջ է դնում: Ցանուն յեղափոխութեան յաջողութեան, ժողովուրդը սիրաշահելու քաղաքականութեամբ, կարմիրները մեկուսացնում են Զելակովին, հանգստեան կանչում յեղափոխական մարտիկին, բայց բժիշկը մնում է նրա տրամադրութեան տակ: Իսկ նրա ծնօտի հայթայթման գործը սահմանափակւում է միմիայն մեռեալների կզակներով: Հետզհետէ նրա ազդեցութիւնը այնքան է ընկնում, որ Պորֆիրիի և Անդրիւշկայի պէս հասարակ դահիճները զլանում են նրա խնդիրը կատարել: Պարտադրութեան սահմանից դուրս գալով, նրա գործը դառնում է բարիկամեցողութեան խնդիր:

Ահա այս է պատճառը, որ Զելակովը, բժշկի ուղեկցութեամբ Տաննէեօթի մահավճռից յետոյ, աճապարանօք եկել էր դահիճներին խնդրելու, որ դնդակահարւածների ծնօտները չփչրեն, լոկ ոսկի ատամի համար:

* * *

Լոյսը կամաց-կամաց բացւում էր: Դահիճներից Պորֆիրին, զլուխը սեղանի ծայրին և ձեռքերը զլխի տակ դրած՝ անախորժ խռմփում էր, իսկ Անդրիւշկան, հագուստով ու մոյկերով, բերանքովար ընկած, ննջում էր իր մահճակալի վրայ, մեռելի անզգայութեամբ: Զելակովը մի հիւն, վաղեմի եղանակ տնտնալով՝ դեռ չարունակում էր լակել չիշերի վերջին կաթիլները: Բժիշկը նոյն դիրքով և ժուժկալութեամբ, ընկղմանած դիւանի մէջ, չէր կարող քնանալ, որովհետև Զելակովը խմում էր, երգում և՛ յաճախ հարցնում.—

— Հը՞, քունդ տանո՞ւմ է, բժի՛շկ:

— Չէ՛, հէնց հնպէս պառկած եմ,— պատասխանում էր բժիշկը՝ գուսպ ջղայնութեամբ:

Երբ բաւական լուսացաւ, Զելակովը մօտեցաւ Պորֆիրիին, մի քանի անգամ չուռ-մուռ տւեց նրա գլուխը, պոռաց ականջին, երգեց և, վերջապէս, գարթեցրեց:

Դահիճը, մոլորած և առանց գլուխը բարձրացնելու՝ հայհոյեց.—

— Շո՛ւն:

— Վե՛ր կաց, դե՛ւ:

— Բաց թո՛ղ, թէ չէ չիշը գլխիդ կը գայ:

— Գնում ե՛մ, ա՛յ մարդ,— ասաց Զելակովը դահիճի ուսը ուժգնօրէն չարժելով:

— Գալը էլ՝ գնալը էլ...

— Բա՛ն եմ ասում, դժոխքի գաւակ:

— Գիտե՛մ, գնա՛:

— Էս անգամ եթէ չեղաւ, գլուխդ կը ջախջախեմ,— ասաց Զելակովը՝ բարձրաձայն ծիծաղելով և ինքն իր վրայ դառնալով:

— Ջարդւողը՝ ջարդւում է, մնացողը՝ մնում:

— Ինչ եմ ասում՝ եթէ էս անգամ չեղաւ, գլուխդ...

— Է՛ս... կը ջախջախես:

— Կարկինը տո՛ւր, բժի՛շկ,— ասաց Զելակովը՝ աչքերը հաղիւ բաց-խուփ:

Բժիշկը այս անգամ վեր ելաւ, բռնեց Զելակովի թեւը, ասելով.—

— Գնա՛նք, արդէն ժամանակ է:

— Գնա՛նք, բայց այս երկու չներին ասա՛ թող մեռելների ոսկրները չկրծեն, եթէ կրծեն՝ թող մեզ էլ բաժին հանեն:

— Լա՛ւ, քա՛յլէ,— ասաց բժիշկը:

Դուրս գնալիս, Զելակովը երգում էր.—
Յեղափոխութիւնը ո՛չ կատակել,
Հարկաւոր է կրակել,
Կրակե՛լ, կրակե՛լ, կրակե՛լ...

* * *

Այդ նոյն գիշերը, երբ դահիճները քէֆ էին անում և իրենց անցեալը քրքրում, երբ Տասնևեօթը գնդակահարուողները իրենց կեանքի նախավերջին գիշերը լուսացնում բանտի խուցերում, դահճապետ Գրիշա Աղաբէկովը մի ծանր խնդիր էր լուծում:

Ռուսական հին, ահռելի բանակի յիսուն և ինը նշանաւոր զօրավարները, որպէս պատանդ, դեռ բանտարկուած էին, անորոշ ճակատագրով: Այդ ժամանակ զօրավարների ձերբակալութիւնը համարւում էր «յեղափոխութեան փայլուն նուաճումներից» մէկը, որին արժանացել էր Գրիշա Աղաբէկովը:

Յեղափոխութիւնը, Ռոմանովների դարաւոր գահը խորտակելուց և նրանց վերջին շառաւիղը սրածելուց յետոյ, տակաւին վախենում էր միապետութիւնից, որի մարմնացումն էին այս յիսուն և ինը հոգին: Այդ խստապարանոց, հաստակող և թանձրամիտ զօրավարները, որոնք, ամբողջ կեանքը ապրել էին միայն հրամայելով ու տիրելով, դեռ շարունակում էին իրենց պահել դոռոզ ու հպարտ: Նրանք, որպէս ցցուն սիւներ, տակաւ կանգուն էին մնում միապետական փլատակների մէջ: Նրանց ներկայութիւնը տհաճ էր յեղափոխութեան ու նրանք պէ՛տք է տապալուէին:

Աղաբէկովը իր ժամանակին այս կալանաւորների մասին հաղորդել էր Մոսկուա, ի պատասխան ստանալով շնորհաւորական և գոհունակութեան հեռագիր, ինչպէս նաև մի ծածկագիր, հետևեալ կարճ բովանդակութեամբ.—

«Յիսուն և ինը զօրավարները առանձնացնել՝ պահելով արթուն հսկողութեան տակ: Սպասել յատուկ կարգադրութեան»:

Սակայն, կենտրոնի «յատուկ կարգադրութիւնը» ուշանում էր: Այդ կարգադրութեամբ Աղաբէկովը կռահում էր գե-

րների պարզ փոխանակութիւն, մարդասիրական և քրիստոնէական առուծախս, անհարազատ իր խառնուածքին և բնաւորութեան: Բացի այդ՝ նա համեմատութեան էր գնում Դենիսովի մօտ գերի ընկած մի քանի կոմունիստների և կոմիսարների կեանքը ցարական զօրավարների կեանքին և արժէքին ու գտնում, որ իր ընկերների ազատումով յեղափոխութիւնը քի՜չ բան կարող է շահել, իսկ զօրավարների կործանումով հակայեղափոխութիւնը մեծ կորուստ կունենայ: Բայց այս հաշւեկշռից աւելի՝ նրա մէջ զարգանում էր փառքի անզուսպ մղումը — պատմական խոշոր դեր կատարել, դառնալ ռուսական մեծ յեղափոխութեան Մառա, անխնայ, կտրուկ:

Առարկայական պայմանների դասաւորումը նպաստում էր Աղաբէկովի ներքին մղումին: Ռազմաճակատից մխիթարական լուրեր չկային, Դենիսովի բանակը անցել էր յարձակողականի որոշ յաջողութիւններով: Տասն և Եօթի դատավարութիւնը թշնամական, բայց զուսպ տրամադրութիւն էր ստեղծել ժողովրդի մէջ: Չնայած այս բոլորին, Աղաբէկովը դժւարանում էր ընտրութիւն անել և վճռական լինել:

Այս մտածումներով՝ նա մօտեցաւ գրասեղանին, բաց արաւ իր տրամադրութեան տակ եղած ամբողջ կալանաւորների ցուցակը ու նորից աչքի անցկացրեց: Տասնևեօթ մահապարտների անւանացանկի վրայ մի մեծ ու կարմիր խաչ քաշեց, որպէս վերջացած գործ: Երկրորդ ցանկը, որի մէջ մտնում էին երեք հարիւր չորս սպաներ և ութը զինւորական պատասխանատու պաշտօնեաներ, ջոկեց ու մէկ կողմ դրաւ: Այս անւանացանկի տակ, կարմիր թանաքով ու խոշոր տառերով՝ գրուած էր.— «Հապճեպ թեկնածու»... Երրորդ ցուցակի մէջ մտնում էին բացառապէս յիսուն և ինը զօրավարները, որոնց «հաշիւը մաքրելու» խնդրով այնքա՛ն զբաղուած էր Աղաբէկովը:

Նա մօտեցաւ հեռախօսին. ուզում էր բանտի հետ խօսել, բայց զղջաց. ապա՝ Ցիմերմանի հետ խորհրդակցելու միտքը յղացաւ: Սակայն, մտաբերելով, որ Կոմկուսի քարտուղար Ցիմերմանը կարող է Մոսկւային ենթարկւելու խորհուրդ տալ՝ դարձեալ զղջաց ու սկսեց երթևեկել սենեակում:

Այդ րոպէին զարթնեց մի կին, որը պառկած էր Աղաբէկովի մահճակալում: Մերկ, սպիտակ պարանոցով, սեւ,

առատ մազորով և գեռատի, բայց դէմքի չէտյտ գծերով. նա քմահաճօրէն դարձաւ աջ կողքի վրայ և ասաց.—

— Գրի՛չա, անհանգի՞ստ ես:

Աղաբէկովը միայն ժպտաց:

— Նստի՛ր կողքիս,— ասաց աղջիկը՝ վերմակը կէսով չափ մէկդի հրելով ու հոլանի թևերը մեկնելով Աղաբէկովին:

— Գիշերը հանգիստ քնեցի՞ր,— հարցրեց երիտասարդը՝ բռնելով աղջկայ թեւը:

— Այնպէ՞ս անդորր ու խաղաղ, ինչպէս մանկութեանս ժամանակ:

— Բայց քո պատմութիւնը կիսատ մնաց:

— Ձեմ ուզում չարունակել: Ես սիրում եմ միայն դիչերը պատմել. լոյսից վախենում եմ:

— Ուզո՞ւմ ես քեզ մի գեղեցիկ անակնկալ անեմ,— ասաց Աղաբէկովը:

— Ուզո՛ւմ եմ, ուզո՛ւմ եմ,— խնդրեց աղջիկը հրէական առոգանութեամբ:

— Արիւնից չե՞ս վախենում:

— Արիւնի՞ց:

— Այո՛:

— Մարդկայի՞ն արիւնից:

— Հաւի արիւնից,— կատակեց Աղաբէկովը:

— Աա՛, աա՛,— խնդրեց աղջիկը և, ապատագրուած սարսուկի երախտագիտութեամբ, համբուրեց երիտասարդի ձեռքը, որը մեղկօրէն ընկած էր նրա բարձի վրայ:

— Կարո՞ղ ես մարդ սպանել,— հարցրեց Աղաբէկովը:

— Բայց ինչո՞ւ ես հարցնում:

— Կ'ուզե՞ս մարդ սպանել,— կրկնեց Աղաբէկովը՝ զգայնութեամբ նայելով աղջկայ աչքերի մէջ, ուր տեսնում էր վերածնուղ կեանքի սէրը, աւելի խելագար, աւելի բուռն:

— Ֆո՛ հաճոյքի համար ամէն ինչ կ'անեմ:

— Այսօր, երեկոյեան դէմ, երեք հարիւր մարդ պիտի գնդակահարեմ:

— Ցեսո՞յ, յետո՞յ,— ընդմիջեց աղջիկը, ընդոստ նըստելով անկողնու մէջ:

— Էլ ի՞նչ յետոյ. մէկի փոխարէն երեք հարիւր:

— Կը սպանեմ, բոլորին կը սպանեմ,— ասաց աղջիկը:

— Բայց զգո՛յշ, այս մասին ոչ մի...

— Ո՛չ մի խօսք, ո՛չ ոքի:

— Նոյնիսկ մեր ընկերներին:

— Ո՛չ մէկի:

— Երեկոյեան՝ արեան բաղնիք պիտի տեսնես:

— Ես սիրո՛ւմ եմ քեզ, Գրի՛չա, սիրո՛ւմ եմ քեզ: Դո՛ւ իսկական կարմիր ես, դո՛ւ յեղափոխական ես:

— Իսկ եթէ պատահաբար նրան տեսնես, կը ճանաչե՞ս,— հարցրեց երիտասարդը:

Աղջիկը մի քանի անգամ աչքերը կկոցեց, ճակատը կնճռոտեց մի բան մտաբերելու ճիդով և, ասաց,—

— Եթէ չատ փոխուած չէ, կը ճանաչեմ. նա միջահասակ է, վայելուչ կազմուածքով, թիք կեցուածքով և ձախ այտի վրայ սեւ խալով. բարեկիրթ դէմք ունի և անմեղ նայուածք:

— Ի՞նչ աստիճան ունի:

— Ինձ հետ եղած ժամանակ՝ սպայական առաջին աստիճան ունէր:

— Այժմ գօրավար դարճած կը լինի,— ասաց երիտասարդը հեգնանքով:

— Հաւանաբար, նա սրտոտ էր, ռազմասէր:

— Քեզ լքեց պատերազմի՞ց առաջ:

— 1913 թուի աշնան:

— Ուրեմն, պատերազմից մի տարի առաջ:

— Մօտաւորապէս:

— Այնուհետև ոչ մի լո՞ւր:

— Մի անգամ, 1915 թուին, նրա մօտիկ ընկերները յայտնեցին, որ գտնուում է արևմտեան ռազմաճակատում:

— Սպանուած կը լինի:

— Հաւանական է:

— Գուցէ և մեր դէմն է կռուում:

— Կարող է պատահել:

— Կամ՝ մեզ հետ է, տարբեր ճակատներում:

— Դժուա՛ր, նա պահպանողական էր, գոհ հին կարգերից:

— Ասում ես՝ չքաւոր ընտանիքից է՞ր:

— Քաղքենի:

— Այդ՝ ոչինչ չի նշանակում:

Երիտասարդը մօտեցաւ սեղանին դրելու, իսկ աղջկայ աչքերը թացւեցին, նա գլուխը դանդաղօրէն դրաւ բարձին, վերմակը քաշեց մինչև սոխինքները, ու հայեացքը յառած առաստաղին, մտքով սլացաւ դէպի հեռաւոր անցեալը:

* * *

Ամենից առաջ նա մտաբերեց իր ծնողները, որոնց այնքա՜ն սիրում էր: Այն ժամանակ դեռ երեխայ էր և մօր առաջնորդութեամբ յաճախում դպրոց: Տօն օրերին, խաղալիկներ կամ նէյրներ բաժանելիս, եղբօր հետ միշտ կռիւ ու վէճ ունէին: Եղբայրը իրենից մեծ էր ու զօրաւոր, բայց նա ապահովել էր ծնողների պաշտպանութիւնը: Զնայած եղբօր կոպիտ և անզիջող բնաւորութեան, սիրում էր նրան և հաճոյքով էր խաղում նրա հետ:

Սակայն, եղբայրը չուտով թողեց այս աշխարհը և ինքը մնաց որպէս ընտանիքի մէկ հատիկ զաւակ: Վեց տարի յետոյ մայրն էլ կորցրեց: Շա՜տ լաց եղաւ, դառն լաց եղաւ, բայց պատանեկական քաղցր ու անհոգ տարիները քամուն տուին մօր կորուստը:

Հայրիկի հետ նրա օրերը անցնում էին միապաղաղ. մայրական սէրը և խնամոտ ձեռքը պակսում էր ամէն, ամէն բան անկարգ, տակնուվրայ:

Առաւօտները տնից միասին էին դուրս գալիս. ինքը՝ դպրոց, իսկ հայրիկը պաշտօնատուն գնալու: Տունը այլեւս դրաւչութիւն չունէր, և նա ուշ էր վերադառնում: Հայրիկի ամենօրեայ հարցին, թէ «Ո՞ւր էիր աղջիկս», նա միշտ նոյն պատասխանն էր տալիս.— «Ընկերուհիներիս հետ դաս էի սովորում»:

Այդ ժամանակ արդէն արբունքի հասած, սիրուն աղջնակ էր: Հայրիկը սկսեց նրան խրատներ տալ, տնային գործ կատարելու մասին խօսեց, ուշ վերադառնալու վնասները չեշտեց, չար ու բարի տղաներից զգուշացրեց, ու նա, առաջին անգամ լինելով, զգաց, թէ մայրիկից յետոյ ինչքա՜ն օտարացել, փոխւել է հայրիկը: Նա սկսեց հայրիկից քաշւել, երկիւղել.

բայց ընկերների ու ընկերուհիների հետ ժամանակ անցկացնելու զգացումը աւելի ուժեղ էր, որի պատճառով նա սովորեց տուտ խօսել և հայրիկին խաբել:

Մի քանի տարի էլ անցաւ, ու նա մէջնակարգ դպրոցը աւարտեց, դեռ նախավերջին դասարանում սիրահարւեց մի ապայի, որին ծանօթացաւ իր ընկերուհիների միջոցով: Սիրում էր գինւորականները ու նրանց տարազը, և այս ապան մէկն էր նրանցից, որոնք տարփանքի և զգայնութեան էին մղում օրիորդին:

Սկզբնական շրջանում, երբ դեռ նոր էր ծանօթացել, ենթադրում էր, որ սա էլ կը գնայ նրանց շարքը, որոնց հետ ծանօթացել, ժամանակ անցկացրել ու հեշտ մոռացել էր: Բայց մի քանի ամիս յետոյ զգաց, որ սպան իրեն դիւր է գալիս, նրա ընկերակցութիւնից ախորժում: Հետզհետէ, որքան անցնում էր ժամանակը, այնքան մօտիկ ու հարազատ էր դառնում ապային: Երիտասարդ գինւորականի ձայնը, խօսելու եղանակը քաղցրալուր էին նրա ականջին: Ո՛չ մի պակաս չէր գտնում երիտասարդի մէջ, ու նրան թւում էր, թէ նա մի կատարելութիւն է մարդկային կերպարանքով, և ապրում էր առաջին սիրոյ բոլոր յոյզերը: Իսկ երիտասարդը, փորձ ու խորամանկ, արև ու մարդիկ տեսած, խաղում էր նրա հետ ճիշտ այնպէս և այն նպատակով, ինչպէս չա՜տ ու չա՜տ կանանց հետ:

Յետոյ՝ աղջիկը դառնօրէն յիշեց այն օրը, երբ ինքը անհուն քաղցրութիւն էր զգում նրա չոյանքից, երբ իր աչքերը կարմրել էին երիտասարդական բոցով, ու ինքը մեղկութիւն ունեցաւ անձնատուր լինելու մի մարդու, որը յետոյ իրեն սիրի տրորէը ու անցնէը:

Ապա՝ աղջիկը յիշեց իր կեանքի միւս կէսի ամբողջ ողբերգութիւնը, դառնօրէն յիշեց, թէ ինչպէս հիասթափութիւնից ու յուսահատութիւնից թողեց իր ծերունի հայրը, իրենց տունն ու տեղը և այն քաղաքը, ուր ծնւել–մեծացել էր, ուր այնքա՜ն ծանօթներ կային ու յուշեր թաղւած, թողեց այդ բոլորը ու գնաց Մոսկւա ուսանելու պատրւակով:

Հայրը չատ հակառակեց, խնդրեց–պաղատեց, որ մնայ իր քովը, մխիթարի իրեն, բայց աղջիկը անդրդւելի մնաց ու իր հետը տարաւ միայն հայրական անէծքը: Հայրը նրան բնաւ

չհասկացաւ, իսկ աղջիկը երբեք չյայտնեց իր մեծ վիշտը, իր անհուն բեկումն ու հիասթափութիւնը, իր անսահման վախը մենակութեան, հեռու, անծանօթ միջավայրում: Նա դնաց ու էլ չտեսաւ իր հայրը:

Պատերազմը վրայ հասաւ, ու մայրաքաղաքի ճոխ, փարթամ կեանքը նրան չպրտեց վատ շրջան, բարքերը էլ աւելի այլանդակուեցին, ու նա բնաւ չզղաց, թէ արդէն իջել է կեանքի ամենացած, անարդ աստիճանի վրայ:

Մոսկուա տեղափոխելուց յետոյ մի ուսանող գտաւ, իր կեանքի երազները վերակենդանացնելու ո՛ւր յոյսով. ապա՝ նրանից ձանձրացաւ, ապրեց մի վաճառականի հետ, որին չատ չուտ ձգեց, նորից ընկաւ գինուորականների անբարոյական շրջանը, դժուխեան քոյր եղաւ, մեկնեց ռազմաճակատը, նորից վերադարձաւ ու էլ ինքն իրեն չգտաւ... Նա այլևս հանրային, մատչելի կին էր...

Ռուսական յեղափոխութիւնը վրայ հասաւ, կեանքից դարնուածներն ու արհամարհուածները իրենց գլուխը բարձրացրին... Նա իրեն զգեց յեղափոխութեան հնոցը, դարձաւ կանանց կազմակերպիչ, թաղական կոմիտէի անդամ, յետոյ, որպէս զրադէտ, յեղափոխական քարոզչութեան գրասենեակում գրագրութեան պաշտօն ստացաւ: Բայց միապաղաղ կեանքից ձանձրանալով՝ նա դուրս եկաւ հրապարակներ, մասնակցեց ժողովներին, ճառեր խօսեց, աչքի ընկաւ ու երկրորդ յեղափոխութեան նախօրեակին անցաւ կարմիրների կողմը:

Այժմ նա եկել էր Հանքային Ջրերը քարոզչութեան դործը կազմակերպելու և կանոնաւորելու:

* * *

Երիտասարդը իր գրութիւնը վերջացրեց, ծրարեց ու հասցէագրեց.— «Կարմիր Բանակի ընկեր հրամանատարին»:

Ապա՝ կանչեց դրնապահ գինուորներից մէկը ու նամակը յանձնելով՝ ասաց.—

— Հասցնել կարմիր հրամանատարին:

Զինուորը անմիջապէս մեկնեց, իսկ Աղաբէկովը դուռը փակեց, ձեռքերը չփեց ինքնաբաւականութեամբ և մօտենալով մահճակալին, ասաց.—

— Այդպէս, ուրեմն, ընկե՛ր Շրէյդէր, այսօր, երեկոյեան, երեք հարիւր սպաներ պիտի դնդակահարուին:

— Նստի՛ր,— ասաց Աղա Շրէյդէրը, անկողնու վրայ տեղ տալով Աղաբէկովին:

Երիտասարդը նստեց, հանեց արծաթէ ծխատուփը, հրամցրեց աղջկան, ինքը ևս վերցրեց ու վառելով ծխախոտը, ասաց,—

— Հը՞, տրամադրութիւնդ վա՞տ է:

— Բոլորը սպանե՞ր են,— հարցրեց օրիորդ Շրէյդէրը, փոխանակ երիտասարդի հարցին պատասխանելու:

— Կան նաև մի քանի գինուորական պաշտօնեաներ:

— Նոյնպէս սպաներ են,— ասաց աղջիկը՝ ծուխը բերնից թողնելով ու քուլաների հետ խաղալով:

— Այո՛, մէկը մխսից վատ:

— Իսկ ի՞նչ եղաւ զօրավարների հարցը՝:

— Նրանց մասին դեռ կարգադրութիւն չկայ, բայց, կարծում եմ, նրանց հետ մենք հաշւի պիտի նստենք:

— Լաւագոյնն այդ է, իսկ ինչքա՞ն գերիներ ունենք Դենիսովի մօտ:

— Մի քանի տասնեակ, որոնց թւում և մի քանի կոմիսար:

— Մի քանի տասնեա՞կ,— զարմացաւ աղջիկը:

— Զինուորները չեմ հաշւում, նրանք կուում են և՛ մեզ և՛ նրանց հետ:

— Իսկ կուսակցականնե՞րը:

— Առ այժմ տասն և ութը հոգի:

— Աչէ դի՛ր դրանց վրայ, սպանուած կը լինեն:

— Դեռ պահում են, փոխանակութեան նպատակով:

— Տեղեկութիւններ ունէ՞ք:

— Ունենք:

— Կապը կանոնաւո՞ր է:

— Ցարդ կանոնաւոր էր, բայց անցեալ օր, մեր ընկերներից մէկը, որը Դենիսովի անձնական սափրիչն է, հաղորդում է որ կասկածի տակ է և ուզում է փախչել:

— Ի՞նչ պատասխանեցիք:

— Հրահանգեցինք, որ մնայ, իսկ ծայրայեղ դէպքում՝ թաղնւի:

— Լա՛ւ էք արել, մեր ռազմաճակատը նրանց թիկունքում պէտք է լինի:

Փորձը այդ է ցոյց տալիս:

— Զօրավարներից ու սպաներից բացի՝ ուրիշ ի՞նչ բանտարկեալներ կան,— հարցրեց օրիորդ Շերէյդէրը, ո՛չ այնքան հետաքրքրութիւնից մղած, որքան մի բան խնամած լինելուց:

— Տաննէնօթը մահապարտներից բացի՝ կան և մի չարք մարդիկ, որոնք պատկանում են իբր թէ «սոցիալիստական» կուսակցութիւններին:

— Նրանց ճակատագի՞րը:

— Հրացանի պիտի բռնեմ:

— Ի՞նչ են ուզում այդ սոցիալիստ-միապետականները:

— Իրանք էլ չեն հասկանում:

— Ցիմարնե՛ր:

— Աղա՛, յեղափոխութիւնը մեծ փորձաքար է անհատների, դասերի ու դասակարգերի համար: Մի ժամանակ, այդ մարդիկ, յեղաշրջում առաջ բերելու համար, գիր-գրականութիւն էին տարածում, բանտ, կախաղան, աքսոր էին գնում. իսկ այժմ, երբ յեղափոխութիւն է, երբ տապալւած ու վերջացած միապետութեան մնացորդները նորից գլուխ են բարձրացրել՝ հինը վերականգնելու համար, այդ նոյն մարդիկ, երբեմնի յեղափոխականներ, բանտն են նստած:

— Նշանակում է յեղափոխական չե՛ն եղել և չե՛ն:

— Յեղափոխութիւնը կատակ չէ:

— Եւ դո՛ւ չես կատակում, Գրի՛շա,— ասաց աղջիկը՝ հանդած սիգարը երիտասարդին տալով:

— Ջելակովի բառերն են,— վրայ բերաւ երիտասարդը,— նա մի երգ է հնարել, որը այսպէս է սկսում.—

«Յեղափոխութիւնը ո՛չ կատակել,
«Հարկաւոր է կրակել,
«Կրակե՛լ, կրակե՛լ, կրակե՛լ»:

— Ջելակո՞վ, ո՞վ է:

— Ինչ կը ծանօթացնեմ, նա մեր ընկերներից է, քաջ, կորիճ, բայց, ափսո՛ս, հաշմանդամ:

— Ի՞նչ է անում:

— Ոչի՛նչ. նա հիմա պաշտօնաթող «զօրավար» է:

— Նրան պրոպագանդի լծենք. ճառախօ՞ս է:

— Ախո՛ռ, կիսագրագէտ է, նրան հանդիսատ թողնենք:

— Ի՞նչ է, պատմութի՞ւն ունի:

— Երկա՛ր, շատ երկա՛ր:

— Է՛հ, հետաքրքիր է:

— Մեր չրջանը առանձնապէս հետաքրքիր է. այստեղ բազմաթիւ ազգեր, ցեղեր կան, կովկասեան տիպեր, որոնք դոյն ու համ են տալիս յեղափոխութեան:

— Ինտերնացիոնալ:

— Կատարելապէս:

— Կովկասեան ընկերները չա՞տ են:

— Պատկառելի, ամբողջ գործը նրանք են վարում:

— Կեցցէ՛ Կովկասը, կեցցէ՛ յեղափոխութիւնը:

Այս ասելիս՝ աղջիկը վար իջաւ մահճակալից, բռնեց Աղաբէկովի մէրուքը, համբուրեց նրան և անցաւ դիմացի սենեակը՝ լոգանք ընդունելու:

Իսկ Աղաբէկովը, մի երգ տնտնալով, մօտեցաւ հեռախօսին, դանդաղօրէն վերցրեց խողովակը ու կանչելով բանտապետը՝ հարցրեց.—

— Ի՞նչ նորութիւն: Ոչի՞նչ... Մի ժամից բանտ կը լինեմ:

* * *

Այդ երեկոյեան լրանում էր Տան և Եօթը մահապարտների քառասուն և ութը ժամը...

VIII

Ադա Շերէյդէրը լոգարանից դուրս եկաւ, փաթթւած ըսպիտակ ու մինչև կրունկները իջնող ցամքոցի մէջ: Նրա սեւ մազերը, առատ ու երկար, փռւած էին ուսերին ու ծեծում նրա մէջքը, անսովոր տեսք տալով աղջկան:

Գրիչա Աղաբէկովը, որ նստած ծխում էր ու թերթատում գնդակահարուղների անուանացանկը, լսելով աղջկայ ոտնաձայնը, գլուխը վեր բարձրացրեց, հիացմունքի ու տարփանքի խառն զգացումով մի րոպէ անթարթ նայեց նրան, ինքնաբերաբար ոտքի ելաւ և, գրկելով աղջկայ իրանը, նստեցրեց իր կողքին, դիւանի վրայ. ապա `անխօս բաց անելով արծաթէ ծխատուփը՝ առաջարկեց նրան ծխել: Աղջիկը վերցրեց ծխախոտը ու վարժօրէն վառելով՝ ասաց.—

— Երբեմն հարուստները այսպէս էին ապրում:

— Իսկ այժմ քաւում են իրենց մեղքերը:

— Այո՛, արժանաբար:

— Ցեղափոխութիւնը անողոք է:

— Անխնայ է նաև յեղաշրջութիւնը:

— Այդ օրերը անդարձ անցել են. ժամանակակից մարդը մեղկ ու զիջող չէ. համաշխարհային պատերազմը մի փորձ էր տոկունութեան և յամառութեան:

— Որից Ռուսաստանը ամենից նկուն դուրս եկաւ,— ծիծաղեց օրիորդը:

— Ամենից զգաստ և տոկուն,— վրայ բերաւ երիտասարդը,— նա վարեց համաշխարհային պատերազմը, վարում է և համաշխարհային յեղափոխութիւնը:

— Լաւ պրոպագանդիստ ես, վատ սիրահար,— ասաց աղջիկը, չոյելով երիտասարդի մազերը:

— Այդ մարզումն էլ առաջին եմ,— ասաց Աղաբէկովը՝ գրկելով աղջկան և համբուրելով նրա սեւ, խոշոր աչքերը:

— Դու՝ զեղեցիկ ես որպէս տղամարդ, Գրի՛չա:

— Իսկ դու՝ որպէս կին, Ադա՛:

— Մի ժամանակ, այո՛:

— Այժմ էլ չատ զեղեցիկ ես:

— Ձերմակ գոյնը մեզ սազում է:

— Այո՛, սպիտակ գոյնը ձեզ սազում է, բայց նա ատելի է, երբ յատուկ է հակայեղափոխականներին:

— Հաշտութեան և անմեղութեան նշան է:

— Ինչպէս հաչտ ու անմեղ են բոլոր հակայեղափոխականները:

— Ո՞րն է ամենից հաճելի գոյնը:

— Կարմիրը:

— Միայն յեղափոխութեան ժամանակ:

— Բայց դիտե՞ս ինչ, Ադա՛,— ասաց երիտասարդը մտազբաղ,— քեզ այդպէս տեսնելիս՝ գլխումս մի հրաշալի միտք ծագեց:

— Այսինքն:

— Արի՛ սպանների գնդակահարութեանը այդպէս հագուիր:

— Այսպէս ճերմա՞կ:

— Այո՛, հէնց այդպէս սպիտակ ու հերարձակ:

— Ի՞նչ իմաստ:

— Մի՞թէ չես հասկանում:

Աղջիկը գլխի բացասական շարժումով պատասխանեց:

— Ես սիրում եմ արիւնը՝ սպիտակ ֆոնի վրայ:

Աղջիկը աչքերը կկոցեց, մի րոպէ լռեց և ասաց.—

— Հիմա հասկանում եմ... իմ առաջին արեան փոխադարձութիւնը:

— Միտքս հասկացար, բայց ո՛չ այս ցամքոցով:

— Ա՞յլ:

— Այլ սպիտակ դիչերանոցով:

— Արեան բաղնիք:

— Այո՛, արիւնի վրչիւ նաև բոլոր քեզ նմանների:

— Բայց ես վախենում եմ արիւնից,— ասաց աղջիկը՝ սարսուռից ուսերը թոթուելով:

— Ամօ՛թ է, կարմիր սիւնների պաշտպանութեան տակ՝ ի՞նչ վախ:

— Անվարժ եմ թէև, բայց հաճոյքով կը պայթեցնեմ մի քանի դանկեր այն սրիկաների, որոնք հեռաւոր նմանութիւն ունեն ինձ լքող սպայի:

— Բոլոր սպաները միատեսակ են, յար և նման: Այդ կաստան, անաչխատ ու բիրտ, կեանքի միջուկն է ծծել, միշտ նեցուկ հանդիսանալով բռնակալ միապետութեան. այժմ էլ նրանք են վարում քաղաքացիական կռիւները:

— Մոսկւայում աւելի ընտիր ծխախոտներ ունէինք,— ասաց աղջիկը՝ հանդած ծխախոտը յատակին նետելով:

— Այստեղի ամենաընտիրներն են:

— Բոյր չունի:

— Դեռ անվարժ ես. կովկասեան ծխախոտը յայտնի է:

— Գուցէ:

— Դէ՛, հագի՛ր, բանտ պիտի գնանք,— ասաց Աղաբէկովը՝ բազուկի ոսկի ժամացոյցին նայելով ու ոտքի կանգնելով:

Աղջիկը հագաւ իր զինուորական չորեքը, կապեց բելգիական տասնոցը և մի քանի անգամ դառնալով հայելիի մէջ՝ ասաց.—

— Ես պատրաստ եմ:

* * *

Բանտում ահագին իրարանցում կար: Բանտապետը և նրա օգնականը կալանաւորների ցուցակներն էին դասաւորում, Աղաբէկովին դեկուցանելու համար: Մի կալանի օգնականը, յուզած ու շփոթ, դարակներն էր խառնում՝ նախորդ օրւան նոր ձերբակալածների կորուած անւանացանկը գտնելու: Բանտապետը, փոխանակ նրան մխիթարելու, չարունակ կրկնում էր.—

— Զարմանալի մարդ ես, ի՞նչ պատասխանենք, պզտիկ բան է, բայց անյարմար:

Հակառակ բանտապետի և նրա օգնականի գաղտնապահութեան և ձեռք առած նախազգուշութիւնների, Աղաբէկովի այցի լուրը արդէն շրջան էր անում բանտի միջանցքներում, առաջին և երկրորդ յարկերում, անխոհեր բոլոր սենեակներում, և հեռաւոր, խաւար խցիկներում, ուր կալանաւորները մահւան հետ էին բանակցում:

Աղաբէկովի անունը համազօր էր մահւան. նրան անւանում էին «Հայկական Ներոն»: Նրա այցի մասին առաջին անգամ լուր առին չիսուն և ինը զօրավարները, որոնք բանտարկած էին երկրորդ յարկի կենտրոնական սենեակում: Նրանք կապ ունէին դրսի հետ և համակիրներ՝ բանտում:

Այս մարդիկ թէև փետրաթափ էին, անբանակ, անկար ու մենակ, թէև սրանց ուսադիրները անարգանքով պոկուած, ու չքանչանները այլևս չէին զարդարում նրանց կուրծքը, բայց դեռ չարունակում էին իրենց պահել հպարտ ու զօռող: Նրանք իրար յարդում էին, պահելով հին զինուորական սովորութիւն-

ները և վարուելակերպը. իրար հետ «դուք»ով էին խօսում, ճանաչում հեղինակութիւնները և իրար դիմում զինուորական բարևով ու տիտղոսների յիշատակութեամբ, և այդ բոլորը անում էին զգուշութեամբ: Նրանց մէջ՝ իրենց զինուրական անցեալով, դիրքով և ազդեցութեամբ կենտրոնական դէմք էին երկու զօրավար, որոնցից մէկը եղել էր երբեմնի ռուսական ընդհանուր բանակի կայանի պետ, իսկ միւսը, թէև ենթակայ առաջինին, բայց հռչակ ունէր իր տաղանդով և մի շարք սխրագործութիւններով: Ընդհանուր կայանի պետը, Ռուսսկին, ոտքերը կախ փայտեայ մահճակալից, աջ ձեռքին կռթնած, մտածում էր, երբ հռչակաւոր Դիմիտրիեվը մօտեցաւ նրան, նստեց նրա ոտքերի մօտ ու ձեռքը թոյլօրէն չարժելով օդի մէջ, հազիւ լսելի՝ ասաց.—

— Նորութի՛ւն, Ձերդ Պայծառափայլութիւն:

— Այսի՞նքն,— ասաց Ռուսսկին, առանց իր դիրքը փոխելու:

— Երկու օր առաջ Դենիսովը նոր յաղթանակ է տարել, կարմիրները յետ են չպրտած առաջին գծից:

— Վատ է. այդ կ'անդրադառնայ մեր դրութեան վրայ:

— Մեզ կարող են տեղափոխել աւելի ապահով վայր:

— Աւելի վատ:

— Քաղաքում խուճապ չկայ, բայց Աղաբէկովը այսօր այցելում է բանտը:

— Այդ հետևանք է մերոնց յաղթութեան:

— Չեմ կարծում. նրա այցը կապ ունի Տասնևեօթ մահապարտների գործի հետ:

— Դատապարտածները դեռ չե՞ն գնդակահարուած:

— Դեռ ո՛չ, բայց այսօր լրանում է նրանց մահավճռի ժամանակամիջոցը:

— Ուրեմն— դրանցից յետոյ հերթը մեզ կը հասնի,— ասաց զօրավար Ռուսսկին, մեղմ ժպտալով:

Դիմիտրիեվը լռեց:

Ապա՝ զօրավար Ռուսսկին նստեց, ձեռքերը չփեց ու գլուխը դանդաղօրէն բարձրացնելով՝ ասաց.—

— Ի՞նչ է խօսում զօրավար Նիկողայոսովը:

— Տաքացած է երևում, վէճ ունեն,— ասաց զօրավար

Դիմիտրեւը, նայելով անկիւնը, ուր կանգնած էր զօրավար Նիկողայոսովը և արագ խօսում իրեն չընջապատող մի քանի զօրականների հետ:

— Նրան կանչեցէ՛ք, խնդրեմ:

— Ի՞նչ է պատահել, զո՛րավար,— ասաց Ռուսակին՝ դիմելով Նիկողայոսովին:

— Փոքրիկ վէճ ունէինք, Ձերդ պայծառափայլութիւն, — պատասխանեց հայազգի զօրավարը՝ դիւրորական բարևով և մեծաւորին դիւր գալու յատուկ չողոքորթուվեամբ:

— Ինչի՞ մասին:

— Թիւրիմացութիւն. ասում են՝ Աղաբէկովը հայ է:

— Հայ չէ՞:

— Բնա՛ւ, երբե՛ք:

— Ճանաչո՞ւմ էք:

— Ամենա՛լին:

— Հապա՞:

— Անւան նայած, թուրք կամ թաթար պէտք է լինի. յետոյ՝ հայը չի կարող մարդ սպանել: Հայը խաղաղ, աշխատասէր ժողովուրդ է, գործ ունի մեթրի ու ճոթի հետ:

— Այսինքն՝ չարչի է,— բացատրեց ներկաներից մէկը:

Բոլորը ծիծաղեցին, իսկ զօրավար Դիմիտրեւը ասաց.—

— Մեր երկրի հայերը կարիճ են, նրանք Սոֆիայում յեղափոխական ակումբ ունեն, ռումբ են պատրաստում և կարծեմ, մի անգամ, Սուլթանի դէմ մահափորձ են կատարել:

— Հարկաւ, ամէն ազգի մէջ աւազակներ կան, բայց մեր հայերը այդպէս չեն,— ասաց զօրավար Նիկողայոսովը:

— Այստեղ էլ հայերը յեղափոխական կազմակերպութիւն ունեն,— խօսեց զօրավար Ռուսակին,— կարծեմ նրանք կոչւում են... Տէր Աստուած, ինչպէ՞ս են կոչւում...

— Գնչակիստի,— լրացրեց ներկաներից մէկը:

— Դաշնակիստի,— սրբագրեց միւսը:

— Դաշնակցութիւն, — հեղինակաւորութեամբ պնդեց երրորդը, որ երկար էր ապրել Կովկասում:

Նիկողայոսովը գարմանքով չարժեց ուսերը և աջ ու ձախ ոլորելով երկճղանի, սեւ ու երկար մէրուքը՝ ասաց.—

— Պարոննե՛ր, ինձ մի՛ դժւացնէք, հայերն այդպիսի անուններ չունեն:

— Ձեր մայրենի լեզուն բոլորովի՞ն չգիտէք, զօրավար, — ասաց Դիմիտրեւը, ինքնաբաւական ժպտալով:

— Ի՞նչպէս չէ, գիտե՛մ,— ասաց հայազգի զօրավարը, մի քանի բառ յիշելու ճիգ դնելով:

— Կաթողիկոս,— յիշեցրեց Կովկասում երկար ապրած զօրավարը:

— Հա՛, կաթողիկոս,— կրկնեց Նիկողայոսովը,— յետոյ՝ խաչ, յետո՛ո՛, տէրտէր. յետո՛ո՛, ագչիկ. սպասեցէ՛ք, սպասեցէ՛ք, էլի՛ գիտեմ...

— Բայց ի՞նչ են նշանակում այդ բառերը, թարգմանեցէք,— ասաց զօրավարներից մէկը:

Ու Նիկողայոսովը սկսեց մէկիկ մէկիկ թարգմանել, իսկ երբ հասաւ վերջին բառին, Կովկասում ապրած զօրավարը մի բան փսփսաց Նիկողայոսովի ականջին, որի սրամիտ պատասխանի վրայ ներկաները քահ-քահ ծիծաղեցին:

Զօրավարը, տեսնելով, որ հաճոյք է պատճառում ներկաներին, ասաց,—

— Պարոննե՛ր, լսեցէք ձեզ մի անեկդոտ պատմեմ, որից կարելի է եզրակացնել, թէ հայ ասածդ ի՞նչ պտուղ է:

— Մե՛ծ ուրախութեամբ,— զո՛րավար, մեծ ուրախութեամբ,— չորս կողմից լսեցին ձայները:

Երբ բոլորը լռեցին՝ հայազգի զօրավարը պատմեց հետեւեալը.—

Մի անգամ, մի անվախ ու կորիճ հայ, իր էշը հեծած, գիւղից քաղաք է գնում: Ճանապարհին ուշանում է ու չի կարող օրը ցերեկով իր տեղը հասնել. արևը մայր է մտնում և մութը ՝իջնում: Ճանկարծ մի թուրք նրա դէմն է ելնում ու գոռում.

— Էշից վա՛յր իջիր, ա՛յ անհաւատ:

Հայը հնազանդւում է: Թուրքը նրան թալանում է:

— Հագուստներդ էլ հանի՛ր,— հրամայում է թուրքը:

Հայը կատարում է աւազակի պահանջը: Երբ հայը իր բոլոր լաթերը հանում է և մնում մերկ ձերմակեղէնով, թուրքը հարցնում է.—

— Էլ ոչինչ չունե՞ս վրադ։

— Ոչինչ չունե՛մ,— պատասխանում է մեր հայը։

— Ինչ չե՛մ հաւատում,— ասում է Թուրքը,— սպասի՛ր քեզ խուզարկեմ։

Թուրքը հային խուզարկելիս՝ նրա մէջքին կապած է դտնում մի մեծ դանակ։

— Այս դանակը ինչի՞ համար ես պահել,— հարցնում է Թուրքը։

— Նեղ օրին գործածելու համար,— պատասխանում է մեր հայը։

— Սրանից էլ նեղ օր կը լինի՞,—հարցնում է աւազակը։

— Սրանից էլ նեղ օրեր կան— ասում է հայը։

— Առակս ի՞նչ ցուցանէ զօ՛րավար,— հարցրեց Ռուսակին։

— Ա՛յն, Ձերդ պայծառափայլութիւն, որ հայից ո՛չ մարդասպան դուրս կը գայ և ո՛չ էլ գահից։

Երբ մի վայրկեան լռութիւն տիրեց, ներկաներից մէկը, որ մինչ այդ լսում էր, ասաց.—

— Զօրավարի ասածը յայտնութիւն չէ՛, հայը միշտ ստրուկ է եղել և ստրուկ էլ կը մնայ։ Այդ մասին մեր մեծ բանաստեղծը շատ դեղեցիկ տողեր ունի՝

«Դո՛ւ ստրո՛ւկ ես, դո՛ւ վախկո՛տ ես, դո՛ւ հա՛յ ես»...

Միջանգամ ոտնաձայն լսեց, ու զօրավարները լռեցին։

* * *

Երեք հարիւր սպաներ ու մի քանի զինուորական պաշտօնեաներ, որոնք բանտարկուած էին առաջին յարկի սենեակներից մէկում և ձկան նման թափուած իրար վրայ՝ Աղաբէկովի դալու լուրը չչուկով փոխանցեցին մէկմէկու։ Նրանցից ոմանք, որոնք անծանօթ էին այդ չրջանին և ձերբակալուած քայքայուած ճակատից վերադառնալու պահին, ոչ միայն մահուան վտանգը չէին տեսնում, այլ նաղ էին անում, որ իրենք ի դուր են արգելափակուած և խառնուած այն կարգի սպաներին, որոնք այս կամ այն չափով մասնակցել էին քաղաքացիական կռիւներին, եղել թիկունքում և ապրել յեղափոխութեան օրոշ փուլերը։ Կային ուրիշներ, որոնք միանգամայն անհոգ էին իրենց անպարտութեան։ Նրանք նորաւարտ սպաներ էին, առանց գնդակի ձայն՝ ու վառօդի հոտ առնելու։

Մի չարք սպաներ, որոնք ամբողջ չորս տարի եղել էին կռիւների մէջ ու գնդեր ղեկավարել, քաջարկութիւնը համարում էին նաղ չարիք, իսկ ազատութիւնը՝ կարճ ժամանակի հարց։ Սրանցից մէկը, որ լինքնավստահ էր իր ներքին ուժին ու խօսքին և որի երևակայութիւնը երբեմն բծաւորւում էր հաւանական գնդակահարութեամբ, միշտ մտածում էր այն մասին, թէ լինքը կարող է մահուան վերջին պահին խօսքը ուղղել գնդակահարող զինուորներին՝ գոռալով՝—

«Ռո՛ւս քաջարի զինուորներ, հրամայում եմ ձեզ՝ դէնքերը դարձնել դէպի հայրենիքի թշնամիները և մտնել իմ հրամանատարութեան տակը»։

Ու զինուորները,— չարունակում էր մտածել սպան,— կախարդական հոգեփոխութեամբ, պիտի ենթարկեմ լինձ, տեղն ու տեղը պիտի զինաթափեմ ու ոչնչացնեմ գնդակահարութեան եկած կոմիսարներն և «ընկերները»։ Ապա՝ այլափոխած զինուորներով ու մահից ազատած սպաներով պիտի յարձակուեմ զինապահեստի վրայ, ու անզէնները զինելով՝ չչմեղսուցիչ արագութեամբ պիտի գրաւեմ գլխաւոր հաստատութիւնները, պիտի ձերբակալեմ հակառակորդի մնացորդները և, առանց ժամանակ կորցնելու՝ չեչաակիօրէն պիտի հարւածեմ թշնամին թիկունքից։ Հրացանաձգութիւն, կռիւ, չըվոթ, խուճապ և չաղթանակ. կամաւորական բանակի չաղթականն մուտք և վարձատրութիւն։

Սպան վառ գոյներով երևակայում էր, թէ լինքը ահա՛ կանգնած է քաղաքի հրապարակում. զօրահանդէս է, Դենիսովը մեծ չուքով նրա կրծքին կախում է Գէորգեան առաջին կարգի խաչը՝ ներկայութեամբ այն յիսուն և լինը զօրավարների, որոնք մի քանի ժամ առաջ բանտարկած էին ու հիմա ազատած՝ իր քաջութեան և անօրինակ սխրագործութեան չնորհիւ։

Աչտեղ՝ սպայի երևակայութեան թելը չանկարծ խզուեց, որովհետև սպաներից մէկը, անզգոյշ ու բիրտ, կռթեց նրա

ոտքի կոչտը: Նա սթափւեց կսկծից ու ղէմքը կնճռոտ՝ ասաց իւրովի.—

— Դէ՛ արի՛ ու այս մարդկանց հետ գործ արա:

Այս կալանաւորների մէջ կար գնդապետի աստիճանով մէկը, որը չարունակ լուռ էր, բայց մեծ հետաքրքրութեամբ լսում այս ու այն խմբակի խօսակցութիւնը, սակայն անմիջապէս հեռանում՝ հէնց որ զրոյցի նիւթը զառնում էր իրենց ճակատագրի չուրջը: Կար նաև մի ուրիշ սպայ, որը միշտ հաչիւ էր անում, թէ ինքը ամենից ուշ գուրս պիտի գայ բանտից, երբ նրանց տանելու լինեն:

Մի խումբ կալանաւորներ, որոնք տեղ էին գրաւել սենեակի անկիւնում, չարունակ խօսում այն մասին, թէ իրենց ամբողջ գժբախտութեան պատճառը գօրավարներն են: Ու այսօր, երբ Աղաբէկովի գալու առիթով նորից ու նորից նոյն նիւթի չուրջն էին խօսում, նրանցից մէկը ասաց.—

— Տարօրինակ ճակատագիր և գժբախտ գուգադիպութիւն. մենք ձերբակալւած ենք գօրավար Ռուսսկիի, Դիմիտրեվի և միւս գօրավարների հետ:

— Եւ միևնոյն քաղաքում, նոյն պայմաններում,— վրայ բերաւ երկրորդը:

— Եւ միևնոյն բանտում,— յարեց երրորդը:

— Ամենից վատն այն է, որ մեր անունը կապւած է նրանց հետ,— ասաց չորրորդը:

— Սրիկանե՛ր, գնային ուրիշ տեղ բռնէին՝ ի՞նչ կը լինէր որ,— ասաց ամենից կրտսերը:

— Գուցէ այդ բարիք է, հո՛գի ջան,— նկատեց տարիքաւոր սպաներից մէկը,— Աստւած տայ ազատւենք՝ առիթ կ՛ունենանք ասելու ՝«մենք բանտ էինք նստած գօրավար Ռուսսկիի և Դիմիտրեվի հետ»:

Այդ րոպէին այս խմբակին մօտեցաւ միայն խօսակցութիւնները լսելու սիրահար գնդապետը:

Ներկաները աչքի տակով իրար նայեցան և առաջին խօսողը ղիտմամբ ասաց.—

— Այսօր գնդակահարում են Տաննէսեօթ մահապարտներին, իսկ վաղը՝ մեզ:

Այս լսելիս՝ գնդապետը ձեռքը անփութօրէն թափ տւեց ու հեռացաւ:

Ներկաները ծիծաղեցին:

— Տարօրինակ մարդ է,— ասաց խմբի անդամներից մէկը:

— Իր ջղայնութեամբ և անսովոր չարժումներով աչքի է ընկնում,— յարեց երկրորդը:

— Նկատե՞լ էք, նա մի րոպէ հանգիստ չի կարող կանգնել,— չտապեց բացատրել մի ուրիշը:

— Նրան Կովկասեան ճակատից եմ ճանաչում,— ասաց տարիքաւոր սպան,— քաջ և սրտոտ գնդապետ է. 1914 թւի թուրքերի չախչախիչ պարտութիւնից յետոյ, նրան երկրորդ անգամ հանդիպեցի Էրզրում բերդաքաղաքում, ուր նա աչխատում էր արճակուրդի գնալ: Անցեալ օր երկար խօսեցինք Սարիղամիշի կռիւների մասին: Սկզբում ինձ չճանաչեց, բայց յետոյ մտաբերեց: Առհասարակ քիչ է խօսում, բայց երբ խօսի՝ է՛լ վերջ չկայ: Առանձնապէս սիրում է պատմել իր սխրագործութիւններից:

— Ի՞նչ երջանիկ օրեր էին:

— Այո՛, պատերազմի առաջին տարին փառքի տարի էր. ամէն ճակատում յաղթական էինք: Մէկ կողմից մօտենում Բերլինին, միւս կողմից Սարիղամիշի վերջնական յաղթանակն էինք չահում, ի՞նչ յաչողութիւններ, ի՞նչ ոգևորութիւն: Բայց հաւատացէ՛ք, պարոննե՛ր, որ Սարիղամիշի կռիւները պակաս հերոսական չէին Լիէժի և Վերտէօնի կռիւներից: Ես թէեւ արևմտեան ճակատներում չեմ կռւել, բայց հաւատում եմ, որ Կովկասի կռիւները աւելի կատաղի են եղել: Երևակայեցէ՛ք, մի փոքրիկ տարածութեան վրայ մօտ կէս միլիոն զօրք, թիկունքը անապահով, Սիբիրի ցուրտ, տասնեհինգ օրւայ սնունդամարտ. դժո՛խք, կատարեա՛լ դժոխք:

Բայց հայերն էլ վատ կռւողներ չեն. նրանք բաւական մեզ օգնեցին. մի՛ակ ժողովուրդը որ մեզ բարեկամ էր: Սատանան իրենց տանի, նրանք աւելի անգութ են, քան մեր կոզակները: Հարիւրաւոր գերիներ էինք յանձնում նրաց և տեղ հասցում էին միայն տասը կամ քսան մարդ: Երբ հարցնում

էինք, թէ ո՞ւր են մնացածները՝ պատասխանը լինում էր կարճ ու կտրուկ:

— Այսքան էին, այսքան էլ բերել ենք:

Երկու հարիւրը՝ քսանի իջեցնում, իսկ հարիւրը՝ տասի. հայկական կլոր հաշիւ: Ի՞նչ կարող ես ասել. ծիծաղում էինք, նրանք էլ ծիծաղում, և հարցը փակում:

— Ուրեմն, ճշմարի՞տ է, որ Աղաբէկովը հայուկ է:

— Անկարելի է. հայը ռուսին չի սպանում, հաշիւ չկայ. նա կամ թուրք պէտք է լինի կամ ջհուդ, երկուսից մէկը: Ջհուդը արիւնից վախենում է, իսկ մէջտեղը մնում է թուրքը:

— Ջհուդները լաւ ճառ կը խօսեն:

— Նրանք կործանեցին Ռուսաստանը:

— Ռուսաստանը կործանեցին մեր չխմար ռուսները:

— Ինչո՞ւ որ:

— Չէ՞ որ Լենինը ռուս է:

— Զգո՛յշ, կամա՛ց:

— Սկի էլ՝ չէ՛: Իսկական ջհուդ է:

— Նայի՛ր, Տրոցկին ջհո՞ւդ է:

— Այո՛:

— Զինովևեվ ջհո՞ւդ է:

— Այո՛:

— Կամենեվ ջհո՞ւդ է:

— Այո՛:

— Էհ, լա՛ւ, եթէ այս բոլորը ջհուդ են, Լենինը ինչո՞ւ պիտի ռուս լինի:

— Ո՞վ դիտէ, սատանան իրենց հետ:

Ճանկարծ սենեակում իրարանցում առաջ եկաւ, ու ըսպանները փակեցին խօսակցութիւնը. բոլորը նայում էին դէպի դուռը և խուժում այդ կողմը: Դուռը կիսով չափ բացւեց ու ներս եկաւ մի երիտասարդ սպայ: Բալնեպանը աղմուկով և արագ նորից փակեց դուռը՝ չրջապատած սւինաւոր զինուորներով:

Սպան դունատ էր և ընկճած:

— Ո՞րտեղ բռնւեցիք:

— Ի՞նչպէս բռնւեցիք:

— Քաղաքում խուզարկութիւննե՞ր կան:

— Գերի՞ ընկանք:

Սպան ապուշի պէս նայում էր ներկաներին և միայն աղմուկ էր լսում. նրան թւում էր, թէ տեսիլքի մէջ է:

— Ձեզ ինչո՞ւ բռնեցին,— նորից հարցրեց մէկը՝ ձեռքի նշանով լռութեան կոչելով միւսները:

— Ես վաղուց եմ ձերբակալւած,— պատասխանեց սպան՝ աչքերը յատակին յառած:

— Ինչո՞ւ այստեղ բերին:

— Չգիտեմ. ասացին, որ իմ մահավճիռը փոխւած է տասը տարուան բանտարկութեան:

— Դուք մահա՞ն էիք դատապարտւած:

— Այո՛, Տասնևեօթ մահապարտներից եմ:

Ապշութիւն և զարմանք...

* * *

Տասնևեօթ մահապարտները երկու օրւան ընթացքում այնքան էին ապրել, որքան իրենց ամբողջ կեանքը: Մահավճռից յետոյ զարձել էին ինքնամփոփ ու քչախօս: Կօշկակարի պառաւի մազերը ամբողջապէս սպիտակել էին, նրա դէմքը խունկի պէս դունատ էր և անկենդան. մահը նրան չօշափել էր. ու նա զգում էր մահւան պաղութիւնը: Այժմ աւելի շատ էր սիրում իր հալեւորին, որովհետև վերջինս ոչ միայն չէր յիշեցնում իր կնոջ անխոհեմ քայլը, այլ վեհութեամբ մխիթարելով նրան, շարունակ կրկնում էր.—

«Աչխարհը մէկ ձեռքով չինւած չէ՛, մեծ է Աստւածը»:

Սակայն, պառաւը չէր խօսում: Նա մի զաղտնի փափաք ունէր և նրանով ապրում, բայց վախենում էր իր հալեւորին յայտնել: Երկու օր էր «այդ մասին» մտածում, և «այդ միտքը» նրան դիւր էր զալիս, թեթևացնում նրա սարսափը: Որոշել էր «այդ մասին» խօսել միայն և միայն երեկոյեան, երբ հնչի մահւան ժամը.—

«Պատրաստւեցէք դո՛ւրս ելնելու»:

Միւս կողմից՝ պառաւին տանջում էր այն միտքը, թէ կարող է ուշանալ և իր փափաքին չհասնել: Այդ տհաճ զգացումից կրծում էր շրթունքները և բերանը չիչխացնում:

— Բերանդ չորանում է, ջուր խմի՛ր, ա՛յ կնիկ,— ասաց ծերունի կօշկակարը:

— Ծարաւ չեմ,— պատասխանեց պառաւը՝ գլուխը շարժելով:

— Խօսի՛ր, սիրտս նեղանում է, մի՛ մտածիր, մեծ է Աստուածը, աշխարհը մի ձեռքով չինուած չէ՛:

Պառաւը, որ գլուխը կրթնել էր իր հալեւորի ուսին և անթարթ նայում դատարկութեան մէջ, թեթև շարժում գործեց, թոյլօրէն բռնեց ծերունու ձեռքը և խոնաւ աչքերով՝ ասաց.—

— Մի փափաք ունեմ:

— Ի՞նչ է:

— Մեղք ունեմ հոգուս վրայ:

— Բոլորս էլ մեղաւոր ենք:

— Իմ մեղքը շատ է:

— Աստուած ներող է և ողորմած:

— Ի՞նչ է անում քահանան... ասաց պառաւը՝ հանդարտօրէն գլուխը դարձնելով դէպի այն անկիւնը, ուր մենակ, գլուխը ափերի մէջ առած `մտածում էր կրօնաւորը:

Հալեւորը հասկացաւ պառաւի միտքը և, առանց պատասխանելու, մօտեցաւ քահանային, կռացաւ ու նրա ականջին փսփսաց.—

— Տէ՛ր հայր, պառաւս ուզում է ձեզ հետ խօսել:

Քահանան գլուխը ծանրօրէն վերցրեց, անխօս նայեց կօշկակարին, մէկիկ-մէկիկ դիտեց մահապարտներին ու ասաց.

— Միւսների վրայ վատ կ'ազդի:

— Զրոյցի ձեւով կատարեցէք:

— Լա՛ւ, մի քիչ յետոյ:

Կօշկակարը մօտեցաւ պառաւին, նորից նստեց ու մի քանի րոպէ լուռ սպասելուց յետոյ՝ ասաց.—

— Գալիս է, լաց չլինե՛ս, զգոյշ եղի՛ր, զրոյցի ձեւով կատարէ, որ ուրիշների վրայ վատ չազդի:

Ու կօշկակարը, ծածուկ և զգոյշ, մի բան սահեցրեց պառաւի ձեռքը՝ ասելով.—

— Քահանային տո՛ւր:

Երբ տէրտէրը ծանր քայլերով մօտեցաւ նրանց՝ պառաւը

ինքզինքը հաւաքեց երկիւղածութեամբ և տեղ տուաւ իր կողքին: Կօշկակարը հեռացաւ:

— Տէ՛ր հայր, մեղք ունեմ հոգուս վրայ,— ասաց խոստովանողը՝ հազիւ լսելի ձայնով:

— Աստուած թողութիւն շնորհեսցէ:

— Կեանքիս մէջ մէկ անգամ շնացել եմ. երիտասարդ էի, փորձութեան գնացի:

— Մարդը մեղանչական է, Աստուած թողութիւն շնորհեսցէ:

— Սուտ եմ խօսել:

— Աստուած թողութիւն շնորհեսցէ:

— Զրպարտել եմ, բամբասել:

— Մարդս զրպարտիչ է և բամբասասէր, Աստուած թողութիւն շնորհեսցէ:

— Մի անգամ հարեւանից հաւ եմ գողացել:

— Աստուած թողութիւն շնորհեսցէ:

— Մանր-մունր մեղքեր ունեմ:

— Բազում են մեղքերը մեր՝ Աստուած թողութիւն շնորհեսցէ:

Պառաւի աչքերում արցունքի կաթիլներ երեւացին, իսկ քահանան փսփսուքով աղօթք կարդաց. ու երբ վերջացրեց, նայեց աջ ու ահեակը, մի բան չանելու երեւոյթ ստացաւ, գօտիից հանեց մի փոքրիկ տուփ, աննկատ բաց արաւ ու բթամատն ու ցուցամատը իրար բերելով՝ ասաց.—

— Բերանդ բա՛ց:

— Մեղայ քե՛զ, Տէ՛ր, մեղայ քե՛զ,— ասաց պառաւը՝ սրբութիւն ընդունողի երկիւղածութեամբ:

Երբ ամէն բան վերջացաւ, պառաւը, թղթադրամը դընելով քահանայի ափը՝ ասաց.—

— Քիչ է, բայց ընդունելի համարի՛ր: տէ՛րտէր:

— Աստուած ընդունելի համարի, Աստուած թողութիւն շնորհեսցէ:

Ծերունի կօշկակարը, որ մինչ այդ երթեւեկելով աչքի տակով դիտում էր քահանային ու պառաւին, և անհամբեր սպասում ծիսակատարութեան վախճանին, անմիջապէս մօտեցաւ

նրանց, պայծառափայլ դէմքով նստեց քահանայի մօտ, և սեղմելով վերջինիս թեւը՝ ասաց.—

— Ներումը ուշացաւ, տէ՛րտէր:

— Օրհնւած, դեռ ժամանակ կայ: Ինդիրը ներումն է, ներումը ստանալուց յետոյ՝ մի քանի օր էլ մո՛ղ բանտ մնանք, ի՞նչ կայ որ...

Ապարդիւն կեղծիք: Պառաւը նրանց չէր լսում: Նա համբարձել էր երկինք, ման էր գալիս դրախտում, ծաղիկները էր քաղում. չահէլ օրիորդ էր, անմեղ, մաքուր, անբիծ: Ինչքա՜ն դեղեցիկ էր այս նոր կեանքը, և որքա՜ն դառն ու դժուան այն աշխարհը, ուր ապրել էր և որից բաժանուել դժկամութեամբ: Նա որոնում էր ծերունի կօշկակարին, բայց նրան չէր գտնում, ա՛խ, ինչպէս կ՚ուզեներ, որ կօշկակարն էլ իր հետ լինի:

— Պառաւս քնեց, տէ՛րտէր, խեղճը տառապում էր:

— Հաւատքը փրկարար է:

— Ինձ համար էլ աղօթի՛ր, տէ՛րտէր:

— Ամենագէտը սրտին կը նայի, չրթունքները անզօր են, ծե՛րուն ի:

Լռեցին:

* * *

Մահապարտ երկու տիրացուները մի՛շտ միասին էին ու քահանայից բաժան: Նրանք հաւատացած էին, որ ինչքան քահանայից հեռու մնան, այնքան իրենց գործը կը թեթևանայ: Նախորդ օրը, դատավճիռը լսելուց յետոյ, ամէն բան վերջացած էին համարում, բայց վարժապետի մէկ խօսակցութիւնը նրանց նոր յոյս էր ներշնչել:

Վարժապետը, կուռ տրամաբանութեամբ, հաստատել էր, որ առհասարակ, Օրէնսդրքի յատուկ յօդւածով, մահավճռի ժամանակամիջոցը սահմանուած է ուղիղ քսան և չորս ժամ և ոչ թէ քառասուն և ութը ժամ: Եթէ Ցեղափոխական Տրիբունալը մահավճռի գործադրութեան երկու օր է տրամադրել՝ այդ նշանակում է, որ կամ ներման հարց կայ մէջտեղ և կամ մահավճռի վերաքննութեան և փոփոխման խնդիրը: Նա այդ վճիռը անվաւեր էր համարում նաև այն պատճառով, որ դատապարտեալ չորս բանտարկեալները, թէև կանոնաւոր քննութեան չէին ենթարկուել, բայց, ի բացակայութեան, մահւան էին դատապարտուած: Եւ վերջապէս, եթէ ճիշտ է, որ իրենց պիտի գնդակահարեն, մահապարտ չորս բանտարկեալները իրենց հետ և իրենց մէջ պիտի լինէին, որովհետև միասին էին դատապարտուած և միասին էլ պիտի մեռնէին:

Բոլորը համակարծիք էին վարժապետին, հետաքրքրութեամբ լսում նրան և գտնում, որ նա չատ հասկացող և օրէնսդէտ մարդ է: Մահապարտներից մէյն երկու աւազակները միշտ հակաճառելու մի բան էին գտնում և այդ չատ վատ էր ազդում երկու տիրացուների, հօշկակարի պառաւի և իշխանուհու վրայ: Նրանք չէին ուզում լսել որևէ պատճառաբանութիւն կամ առարկութիւն, որը պիտի գայ մահւան հաւանականութիւնը չեչտելու:

Այս խօսակցութեան մէջտեղ, երբ վարժապետը, խրատխուսուած ու ոգևորուած ունկնդիրներից, ամէն կերպ աշխատում էր հարցը վճռել ի չահ գնդակահարուղների, և երբ աւազակները անպայման հակառակ տեսակէտ էին պաշտպանում, դիւղացին վիզը երկարելով խօսակիցների արանքը՝ ասաց.—

— ... Սրտի մխիթարանք... ո՛չ դու ես ճիշտ, ո՛չ նրանք. մենք բանտարկուած պիտի մնանք մինչև յեղափոխութեան վերջը:

— Ցեղափոխութիւնը ե՞րբ պիտի վերջանայ,— հարցրեց տիրացուներից մէկը:

— Ի կատարումն աշխարհի,— անմիջապէս վրայ բերաւ երկրորդ տիրացուն:

— Այդպէս չասենք, ամէն բան վերջ ունի,— խորհրդաւոր և դանդաղ պատասխանեց վարժապետը:

— Ինչի՞ են սպասում,— ասաց չարաչահը՝ դառնալով հաստատիւոր հիւանդին:

— Վարժապետը խելօք բաներ կը խօսի, բայց այդ մարդասպանները գործը կ՚ուրեն,— ասաց հիւանդը՝ անյուսօրէն չարաչահին նայելով:

— Այդ երեքը չլինէին, մենք էս օրին չէինք հասնի,— ասաց չարաչահը՝ բերանը հաստատիւորի ականջին դնելով:

— Զգո՛յշ, չլսեն:

Արհամարհական շարժում:

Այդ խօսակցութիւնից անցել էր ուղիղ մէկ և կէս օր և վարժապետի ատամները մասամբ ճչուած էին:

Գործադուլի բանւորները դեռ նրանց հետ և նրանց մէջ չէին: Աղաբէկովի բանտ գալուց յետոյ, մահապարտ երիտասարդ սպան նրանցից բաժանելով, յայտարարել էին, որ նրա մահապատիժը փոխարինւում է տասը տարւայ բանտարկութեամբ: Ու վարժապետի համարումը բարձրանում էր մահապարտների աչքում. իսկ ինքը, վարժապետը, անդադար միրուքը խառնելով ու երթևեկելով՝ նոր նախադասութիւններ էր որոնում մահապարտներին յայտնելու և նրանց յուսադրելու բարի ցանկութեամբ:

Դրանց մէջ միայն մէկը կար, որ մինչ այդ ոչ ոքի հետ ոչ մէկ բառ չէր փոխանակել:

Դա երիտասարդ աւազակն էր: Ինչպէս դատարանում, այստեղ ևս նրա միտքը զբաղուած էր միայն փախչելու ուղիներ գտնելու: Նա հազար ու մի ծրագիրներ էր կառուցել ու քանդել, բազում հնարաւորութիւններ ու արգելքներ էր նախատեսել ու մաչել, նորեր էր որոնում և ապրում էր միայն այդ աշխարհով: Քառասուն և ութը ժամը, որ միւսների համար յաւիտենականութեան չափ երկար էր, սպառել էր ակնթարթի թեթևութեամբ: Նա զբաղուած էր մտքով, հոգով, զգացումներով, աճապարում էր հանելուկը շուտ վճռել, հանգոյցը շուտ քանդել, իսկ ժամանակը հեւիհև հետապնդում էր նրան: Նա հաւատում էր, հաստատ հաւատում, որ մահւանից խուսափելու մի ելք կարելի է գտնել, եթէ ժամանակը մի քիչ երկարի, մի օրով, գոնէ մի ժամով: Նա ափսոսում էր նոյնիսկ ժամանակի կարճութեան մասին մտածելու, նրա ուղեղը պտուտակի պէս դառնում և նրան թւում էր, որ ինքը կարող է խելագարւել:

Երբ մահապարտ սպային անջատեցին ու տարան, նա սկսեց հաշւել մահապարտները. զարմացաւ. ընդամէնը տասներեք հոգի կային բանտում. նորից հաշւեց. այո՛, ընդամէնը տասներեք հոգի, ո՛չ աւելի, ո՛չ պակաս: Դրանց վրայ աւելացրեց մահապարտ չորս բանւորները, եղան ուղիղ Տասն և

եօթ հոգի... Տասն և եօթ հոգի. սպան ևս աւելացրեց եղած թւի վրայ, եղան տասն և ութը հոգի: Նա դառնօրէն ժպտաց, զգաց, որ ինքը կորցրել է հաւասարակշռութիւնը և դատողութիւնը:

Գլուխը թափ տւեց, աչքերը մի քանի անգամ թարթեց ու նորից սկսեց հաշւել:

Տէրտէրն ու տիրացուները — երեք. երկու պառաւները — հինգ. կօշկակարը, գիւղացին ու վարժապետը — ութը. բուրժուան ու սպեկուլանտը — տասը. շատ աղէկ, տասը, տասը, տասը, յետոյ՝ մենք երեք — տասներեք. սպան — տասնևչորս. չորս բանւորները — տասնևչորս, չորս էլ՝ տասնևութը: Զհաւատալով հաշւին՝ աւազակը այս անգամ սկսեց հաշւել բացականերից և վերջացրեց ներկաներով:

Մահապարտները ուղիղ տասնևութը հոգի էին, բայց դատւել ու դատապարտւել էին իբրև Տասն և եօթ հոգի:

Աւազակը զարմացաւ, ու մի հաճելի սարսուռ անցաւ նրա մարմնով: Ապա՝ նա զգուշութեամբ դիտեց մահապարտներից իւրաքանչիւրին այն մտավախութեամբ, թէ չլինի՞ իրեն հասկանան:

Հանդարտութիւն և սառնութիւն ստացաւ տեսնելով, որ բոլորն էլ մտասուզւած և անտարբեր են մէկը միւսի հանդէպ: Վարժապետը վեհապանծօրէն ճեմում էր, մէկ ձեռքը միրուքին՝ իսկ միւսը՝ կանթած:

Տարէց աւազակները սիրում էին կրտսեր աւազակին, ափսոսում նրան և մխիթարում.—

«Կորիճ եղի՛ր, կը փախչենք դեռ գնդակահարութեան վայրը չհասած»:

Ու երիտասարդը վստահօրէն մօտեցաւ իր ընկերներին և նրանց մի անկիւն տանելով՝ ասաց.—

— Ես ազատւում եմ:

— Ի՞նչպէս,— հարցրեց առաջինը:

— Ես ազատւում եմ,— կրկնեց երիտասարդը՝ ուրախ աչքերով:

— Կամա՛ց, լսում են,— նախազգուշացրեց երկրորդը:

— Բայց ի՞նչպէս,— նորից հարցրեց առաջինը:

— Մենք ուղիղ տասն և ութը հոգի ենք, բայց պիտի գնդակահարուեն տասն և եօթ հոգի:

Եւ աւազակները սկսեցին խորհրդակցել...

IX

Երբ ինքնաշարժը մօտենում էր բանտի դարբասին, Գրիգոր Աղաբէկովը կռացաւ դէպի Ադա Շրէյդէրը և ասաց.—

— Ահա՛ բանտը:

Պահակ երկու զինուորները, որոնք նախապէս գիտէին Աղաբէկովի այցելութեան մասին, հրացանները պատրաստ բռնեցին ու զգաստ կեցան, մինչև որ եկուորները մօտեցան իրենց:

— Բա՛րև կարմիր զինուորներին,— ասաց Աղաբէկովը՝ ինքնաշարժից իջնելով ու մօտենալով պահակներին:

— Բա՛րև,— մի ձայն կրկնեցին զինուորները:

— Բա՛նտ պիտի գնանք,—ասաց երիտասարդը ժպտալով:

— Ցո՛յց տուէք արտօնագիրը,— ասաց պահակներից մէկը՝ քայլ գիտնալով, որ կարգապահութիւնն ու խստապահանջութիւնը դիւրեկան է Աղաբէկովին:

Աղաբէկովը և նրան ուղեկցող Ադա Շրէյդէրը ցոյց տուին իրենց կարմիր արտօնագիրը: Կարգապահութեան ցուցամոլ զինուորը Աղաբէկովի արտօնագիրը մի քանի անգամ շուռ տւեց այս ու այն կողմը և՝ խիստ գննելով նրա խակ ստորագրութիւնը՝ ասաց.—

— Ձիշտ որ Աղաբէկովի ստորագրութիւնն է. կարո՛ղ էք գնալ:

Երիտասարդը՝ արտօնագիրը վերցնելով ու ինքնաբաւական նայելով օրիորդ Շրէյդէրին՝ ասաց.—

— Ես արտօնւած եմ. գնա՛նք:

Երբ այցելուները ներս անցան ու անյայտացան, զինուորներից ցուցամոլն ասաց.—

— Հին ժամանակն էլ այսպէս էինք անում և քաջալերանք ստանում:

— Վարպետօրդի ես. այնպէս ցոյց տուիր, որ իբր թէ նրան չես ճանաչում:

— Այդպէս պէտք է վարուել. թող իմանայ, որ իր ստորագրութիւնը իրենից աւելի ծանօթ է:

— Հետը եղածը լա՛ւ կատր էր,— ասաց օրիորդի արտօնագիրը ստուգողը՝ կասկածելի ծամածռութեամբ:

— Մեզ չի հասնի...

— Հապա ի՞նչ գիտցար. կարծում էիր, որ յեղափոխութիւնը կարմիր խնձո՞ր պիտի բերի:

— Էս աշխարհի բանը Թարս է, Աստուած վկայ. հին ժամանակ ամէն բան վայելում էին ջոջերը, հիմա՝ էլի՛ ամէն բան նրանք են վայելում:

— Սո՛ւտ է, ամէն բան սուտ է. զինուորը միշտ զինուոր կը մնայ... մերը էդպէս է:

— Մի հարցնող լինի թէ՝ արածն ի՞նչ է. մի երկու թուղթ է ստորագրում — սրա՛ն բռնեցէք, նրա՛ն խփեցէք, պրծաւ գնաց. բռնողը մենք, խփողը՝ մենք. էդ եղաւ գո՞րծ:

— Տասնոցն էլ կապել է կողքին:

— Մարդ է զարմացնում:

— Հապա էդ քա՞ծը...

— Աւտոմոբիլին նայի՛ր. սկի իրենց կեանքում աւտոմոբիլ նստե՞լ են:

— Լա՛ւ աւտոմոբիլ է, հէչ չարժի, հէչ չարժի՝ նիկոլայեան մի քանի հազար արժի:

— Ի՞նչ հազար, մի քանի միլիոն:

— Հիմակւան փողը փոչի է:

— Բայց դիտե՞ս ում աւտոմոբիլն է:

— Ծը...

— Զօրավար Ռուսսկիինը:

— Էդ լա՛ւ է: Ինչպէ՞ս նրանք բռնեցին. մի ժամանակ Աստւած էին մեր գլխին... էդպէս է, հա՛... նրանք մեր հոգին կերան է՛է՛:

— Յեղափոխութիւնը միայն էդ օգուտն ունեցաւ:

— Նրանց հետ են նաև մի քանի հարիւր սպաներ:

— Ա՜խ ես դրանց…

— Սպաները իմ սիրտը դաղել են։

— Ո՞ւմ սիրտը չեն դաղել։

— Իմս շատ են դաղել․ լսի՛ր, քեզ մի բան պատմեմ։

— Հը…

— Լաւ յիշում եմ․ մի օր, յեղափոխութիւնից էսպէս մէկ թէ երկու ամիս առաջ, Մարուսիայի հետ անցնում եմ։ Կուտ ենք չրթում ու քաղցր զրուցում։ Փողոցում լի մարդ․ աջ եմ նայում՝ սպայ, ձախ եմ նայում՝ սպայ, բարևի՛ր, հա՛ բարևիր։ Խօսակցութիւնն էլ, թարսի պէս, եկա՜ւ էնտեղ հասաւ… Ես ասում՝ «ա՛յ Մարուսիա, ե՞րբ»… Նա ասում է․ «դեռ համբերի՛ր»։ Ես ասում եմ՝ «մինչև ե՞րբ համբերեմ»… Քածը ծիծաղում է, ես էլ եմ ծիծաղում։ Էս նեղ ժամանակ, մա՛րդ ես, մոռանում ես բարև տալ, մէկ սպայ չէ՛, երկուսը չէ՛, երեքը չէ՛, շնից շատ։ Սիրտս էլ՝ թըք-թըք խփում է։ Մէկ էլ տեսնեմ, մի նորաւարտ սպայ, նոր համազգեստով, նոր սուր կապած, առջևս ցցւեց ու Մարուսիայի ներկայութեամբ ինձ մէր հայհոյելով՝ ասաց․—

— Ասա՛ անունդ։

Ասացի։

— Գունդը։

Ասացի։ Նա գրեց և թուղթն ու մատիտը գրպան դնելով ու կրկին հայհոյելով՝ ասաց․—

— Ուրիշ անգամ լաւ կը բարևես։

Դրանով հարցը չփակւեց։ Միւս օրը ինձ բանտարկեցին և ուղիղ վեց օր ու վեց գիշեր մկների հետ էի։

— Այդ դեռ ոչի՜նչ։ Ինձ հետ պատահածը սկի պատմել չի գայ։ Մի անգամ, պատերազմի երկրորդ տարին, ինձ շտապ գործով ղրկեցին մեր գնդի համհարզներից մէկի մօտ, որը նոր միայն դեր-գնդապետի աստիճան էր ստացել։ Ըստ սովորութեան նրան «պարոն համհարզ» ասացի, փոխանակ «պարոն դեր-գնդապետ» ասելու։ Եւ ի՞նչ ես կարծում, այդ ոչինչ բանի համար՝ ինձ երեք շաբաթ պատժարան կոխեցին։ Էդ օրւանից սպաները աչքիս փուշ դարձան։

— Ցեղաշրջումը հէնց դրանից էլ սկսւեց։

— Զինւորի յարգը չիմացողը էս օրին կ՛ընկնի․ դէ՛, թո՛ղ գնան ու իրենց եփածը ուտեն։

— Մեզ՝ շան տեղ էին դնում։

— Հը՛, շան տեղ՝ շունը աւելի յարգի էր։

— Է՜է՜ ես դրանց…

— Հաւատն անիծեմ…

* * *

Բանտապետն ու նրա օգնականը ոտքի վրայ էին, երբ Գրիշա Աղաբէկովն ու օրիորդ Տրէյդէրը ներս մտան բանտապետի գրասենեակ։

— Ահա՛ կարմիր բանտապետները․ ծանօթացէ՛ք,— ասաց երիտասարդը՝ խօսքը օրիորդին ուղղելով։

Ծանօթացան։

— Ի՞նչ նորութիւններ,— հարցրեց երիտասարդը։

— Նորութիւններ չկան,— շտապեց պատասխանել բանտապետը,— միակ նորութիւնն այն է, որ ձեր կարգադրութիւնից անմիջապէս յետոյ Տասն և Եօթի հետ մահւան դատապարտւած սպան, որ կիսամեռ էր ու գունատ, փոխադրւեց սպաների բաժանմունքը։

— Անշուշտ յայտնւած է, որ նրա մահւան պատիժը փոխարինւում է տասը տարւայ բերդարգելութեան։

— Եւ ի՞նչ…

— Մահապարտները հաւատացին։

— Հա՛, հա՛, հա՛…

— Բացի աւազակներից։

— Իսկ ի՞նչ են պատմում մեր լրատուները։

— «Զօրավար» լրատուն ասում է, որ զօրավարները իրենց զուսպ են պահում, հաւատալով Դենիսովի յաղթանակին, բայց դրա մէջ գտնում են իրենց կործանումը։

— Յետո՞յ։

— Դրսի հետ դեռ յարաբերութեան մէջ են, նոյն մարդկանց միջոցով։

— Նոր դերակատարներ չկա՞ն։

— Չկան։

— Հակողութիւնը թուլացնել՝ նորեր որսալու համար:
— Այդ մասին աչալուրջ ենք:
— Էլ ուրիշ ի՞նչ են խօսում:
— Հա՛, զօրավարները մի հետաքրքիր վէճ են ունեցել:
— Ինչի՞ մասին:
— Այն մասին, թէ դուք հա՞յ էք, թո՞ւրք, թէ՞ հրեայ:
— Ցիմարնե՛ր... և ի՞նչ:
— Գործին անտեղեակները ձեզ հրեայ են ընդունում, իսկ դրսի հետ կապ պահող զօրավարները հաստատել են ձեր ծագումը: Զօրավար Նիկողայոսովը բողոքել է այդ որակման դէմ, պնդելով, որ դուք կամ թուրք և կամ թաթար էք:
— Բայց ինչո՞ւ թուրք կամ թաթար:
— Նա պատճառաբանել է, թէ հայը չի կարող մարդ սպանել. թէ հայը խաղաղ, աշխատասէր ժողովուրդ է. թէ նա գործ ունի միայն մեքր ու ճոթի հետ. թէ նա վախկոտ է, ստրուկ է, խեղճ է:
— Այդ ի՞նչ զօրավար է:
— Հայ է, բայց հայերէն չգիտէ. դուցէ յիշէք, ընկե՛ր Գրիչա, նա այն բարձրահասակ, երկճղանի, սեւ ու երկար մրուքով զօրավարն է, որ հարցաքննութեան ժամանակ միշտ պատասխանում էր —
«Տակ տոչնօ» (հրամանք ես):
— Ցիչեցի՛. իսկական գեներալ, ցարական գեներալ:
— Իսկ սպանների լրատուն պատմում էր, որ նման խօսակցութիւն ունեցել են նաև Կովկասեան ճակատ եղած մի քանի սպաներ, քիչ-չատ ծանօթ հայերին:
— Եզրակացութի՞ւնը:
— Հայերին ծանօթ սպաները պնդել են, թէ հայը թուրքին՝ և նոյնիսկ մեր կողակին հաւասար մարդասպան է, բայց ռուսի վրայ ձեռքի չի բարձրացնի:
— Ինչո՞ւ:
— Ինչո՞ւ. պատճառաբանել են, թէ «հաչիւ չկայ», թէ հայը իր չահն ու վնասը լաւ դիտէ, թէ ռուսին սպանելը իր հաշուին չի դայ:
— Ուրեմն բանտարկեալները ազգային հարցո՞վ են զբաղած:

— Այո՛:
— Վե՞րջը, իմ հարցը առկա՞խ է մնացել,— հարցրեց դահճապետը, նոյն հեգնական ժպիտով:
— Կամ թաթար կամ հրեայ. աւելի չուտ թաթար, որովհետև հրեան միայն լաւ ճառ կը խօսի, ասել են:
— Ես դրանց հայ, հրեայ և թաթար ցոյց կը տամ,— ասաց երիտասարդը՝ ժպտալով:
— Անուղղեայ են մնացել,— յարեց Շրէյդէրը, նոյնպէս ժպտալով:
— Դրանց միայն գերեզմանը կ'ուղղէ:
— Իսկապէս որ...
— Էլ ուրի՞շ, ընկե՛ր բանտապետ:
— Ուրիշ ոչի՛նչ, ընկեր Գրիչա:
— Հա՛, նոր մարդիկ են ձերբակալւած, ո՞վքեր են:
— Հայեր են, բայց ոչ մէկ բառ ռուսերէն չգիտեն:
— Հայեր, և ռուսերէն չգիտե՞ն:
— Այո՛:
— Ի՞նչ հայեր են:
— Գաղթականներ՝ տաճկաց Հայաստանից:
— Ի՞նչ յանցանքով:
— Գրգռիչներ են:
— Կանչեցէ՛ք, ուզում եմ դրանց տեսնել:

* * *

Բանտապետը իր մխիթարի օգնականին կարգադրեց, որ պահակ զինուորների հսկողութեամբ կալանաւոր հայերը դրաւսենեակ բերուին: Իսկ Աղաբէկովը դառնալով օրիորդին՝ ասաց.
— Ընկե՛ր Ադա, ներողութիւն, քեզ մենակ պիտի թողնենք: Ահա՛ քեզ «ծախսւածների» և «թեկնածուների» ցուցակը՝ նրանց կարճ կենսագրութիւններով, զբաղուի՛ր, մինչև վերջացնեմ:
Օրիորդը բաց արաւ «մահւան» դէրքը ու սկսեց թերթատել, իսկ Աղաբէկովը՝ թևանցուկ, բանտապետին միւս սենեակը տանելով՝ ասաց.—
— Լսի՛ր, ընկեր, մենք գործակիցներ ենք, և դուք ամէն

բանի պէտք է տեղեակ լինէք. սակայն, ո՛չ ոքի և ո՛չ մի խօսք...

— Ո՛չ մի խօսք, կատակ հօ չէ՞:

— Նոյնիսկ օգնականիդ ոչինչ չպիտի ասել:

— Նոյնիսկ օգնականին, այո՛:

— Բանն այն է, որ մեր ճակատի գործերը լաւ չեն. Դենիսովը ուժեղ յարձակողականի է անցել և մեր նահանջը օրերի խնդիր է: Այդպէս մի՛ զարմանաք, ձեզ լաւ պահեցէ՛ք:

— Մենակ ենք:

— Այսպիսի նահանջներ շատ ենք ունեցել, այս ո՛չ վերջինն է և ոչ էլ առաջինն է. յեղափոխութիւն է, քաղաքացիական կռիւներ են. նահանջը պարտութիւն չէ, ինչպէս և առաջխաղացումը՝ յաղթանակ: Վճռական և բախտորոշ կռիւը պիտի մղւի Ցարիցինի տակ, ուր մերոնք, Ցեղկոմի կարգադրութեան համաձայն, կենտրոնացնում են մեր կարևոր բոլոր ուժերը:

— Հասկանալի է:

— Բանտը վերջնականապէս պիտի մաքրւի: Այս գիշեր այդ գործով պիտի զբաղւենք: Առաջին հերթին և առաջին նըւագ՝ սպաները. նրանց մաս առ մաս պիտի առաքել, յայտարարելով, որ գնում են հարցաքննութեան կամ զօրամասեր գետեղւելու համար: Ազօթարանը դեռ չբացւած՝ զօրավարները պիտի առաքւին՝ յայտարարելով, որ տեղափոխւում են Թիֆլիս: Իսկ մինչ այդ, կէս գիշերին, Տասն և Եօթը մահապարտները պիտի գնդակահարւեն, որոնց համար Պորֆերին և Անդրիւշկան բաւական են:

— Ի հա՛րկէ, բաւական են. մահապարտները կիսամեռ են, անուժ:

— Այս բոլորից յետոյ,— շարունակեց Աղաբէկովը մըտածելով,— անհրաժեշտ է մահապարտ չորս բանւորները փոխադրել Տասն և Եօթի սենեակը, Թիւրիմացութիւններից խուսափելու համար: Տասն և Եօթը մահապարտներին առաքելուց կէս ժամ առաջ՝ պառաւներին անջատել ու պահել բանտում. լաւ է, որ այդ մասին ևս խիստ գաղտնապահութիւն լինի:

— Այլ խօսքով, պառաւները ազատել մահւանից:

— Անջատել նրանց,— շեշտեց երիտասարդը՝ չուզենալով կրկնել «ազատել» բառը:

Գրասենեակում ոտնաձայն լսւեց: Կալանաւոր գաղթականներն էին:

— Եկան,— ասաց բանտապետը:

— Նորից կրկնեմ,— վերջացրեց երիտասարդը՝ աճապարանօք,— լինել գաղտնապահ, սառնարիւն և խիստ, որպէս թէ ոչինչ չես լսել և ոչինչ չգիտես:

— Անշո՛ւշտ, բնական է:

* * *

Երեք գաղթական կալանաւորներ, մէկը միւսից առողջ ու պարթև, շարքով կանգնած էին, երբ Գրիշա Աղաբէկովն ու բանտապետը ներս մտան գրասենեակը: Երկու սւինաւոր զինւորները հրաման ստացան կանգնել դրսի դրան:

— Նստեցէ՛ք,— ասաց Գրիշա Աղաբէկովը, դիմելով կալանաւորներին:

Գաղթական բանտարկեալները նստեցին:

Օրիորդը զարմանքով դիտում էր այդ կիսավայրենի մարդկանց, որոնց դէմքի վրայ ոչ միայն երկիւղ չկար, այլ ինքնավստահութիւն և համարձակութիւն: Այդ զգացումը նրանց վարակել էր երեք գլխաւոր պատճառով. նախ՝ որ տաճկական բանտում չեն և գործ չունեն տաճիկների հետ. երկրորդ՝ գաղթական են և ամէն բան ներելի է նրանց. իսկ երրորդ՝ որ բանտարկւած են ռուսների ձեռքով և նրանց ճակատագիրը կախւած է մի հայից, որի համբաւը լսել էին, առանց նրան ճանաչելու: Հրճւանքով լսեցին հայերէն «նստեցէք» բառը. բայց նրանց շփոթութեան էր մատնում երիտասարդի դէմքը, որի վրայ հայկական ոչ մի ցայտուն գիծ կար: Նրանից նստել հրամցնելուց յետոյ, երիտասարդը, կռացած օրիորդի վրայ, պատասխանում էր նրա մի քանի հարցերին «մահւան» գրքի թերթիկները շրջելով:

Գաղթականները, որ մինչ այդ ուշի-ուշով դիտում էին ներկաներին, մի կարևոր բան կռահելու միտումով, գլուխգլխի բերին, և նրանցից մէկը, խորհրդաւոր ու հազիւ լսելի, ասաց.—

— Աղաբէկովն ըլլալու է:

— Ի՞նչ լմանաս, ջանըմ,— ասաց երկրորդը:

— Իշխանաւորի մը պէս խօսեցաւ դինւորներուն հետ:

— Ռուս է, չէ պատերազմին Թերևս Հայաստան գըտնուած է և հայերէն բառ մը սորված է,— ժխտեց երրորդը և ամենից հեղինակաւորը:

— Ինչ ալ ըլլայ, հայ մը տեսած է, հայուն հետ եղած է. ատիկա ալ բան մըն է, պապամ. բայց կը պնդեմ, որ ան հայ ըլլալու է, վասնզի ռուսը «նստեցէք» բառը անանկ մաքուր չի կրնար ըսել:

— Համբերութիւն ունեցէք, ջանըմ, վայրկեան մը վերջ ատ ալ կ'լմնցնի,— ասաց հեղինակաւոր դպրոցականը՝ գլուխը ծանրօրէն բարձրացնելով ու նախկին դիրքն ընդունելով:

Միւսները ուզում էին դեռ խօսակցութիւնը շարունակել, բայց Աղաբէկովը յանկարծակի և ճկուն շարժումով ետ դարձաւ, նստեց երեք կալանաւորների դիմաց ու խօսքը բոլորին ուղղելով՝ ասաց.—

— Ռուսերէն գիտէ՞ք:

— Զենք գիտեր,— պատասխանեց հեղինակաւորը:

— Ո՞ր տեղացի էք:

— Տաճկահայ ենք:

— Ո՞ր չրջանից:

— Տրապիզոնի կողմերէն:

— Ի՞նչպէս է, որ ընկել էք Ռուսաստան:

— Տրապիզոնի ջարդերէն լուր չունի՞ք... չէ ատ ջարդերէն ետքը Բաթում եկանք. հոն ժամանակ մը ապրեցանք, անկէ ալ հոս եկանք, երբ ամենքը կը վախչէին տաճիկներէն:

— Ի՞նչ էք անում այստեղ:

— Գաղթական մը ի՞նչ կրնայ ընել... Սանկ կերպով մը կ'ապրինք...

— Ատ չէ՛, ամմա հրամանքդ հայ ըլլալու էք, անանկ չէ՞,— հարցրեց այն մէկը, որը առաջին անգամ պնդում էր երիտասարդի հայ լինելը:

— Որոշ գործ չունէ՞ք,— չարունակեց հարցաքննել երիտասարդը՝ առանց պատասխանելու ուղղուած հարցումին:

— Ձեռքի վրայ առուծախս ընելու միտք ունէինք, բայց

անկարելի է ատ կռիւներուն պատճառով,— պատասխանեց հեղինակաւոր դպրոցականը:

— Ինչո՞ւ կը հարցնեմ, դիտէ՞ք,— բացատրեց Աղաբէկովին հայ ենթաղրողը,— վայրկեան մը առաջ ընկերներուս հետ սանկ պզտիկ վէճ մը ունեցանք ձեր անձին վրայ. ես կ'ըսէի, թէ դուն հայ ըլլալու ես. ընկերներս կը հակառակէին՝ ռուս ըլլալնիդ պնդելով: աղէկ է, որ հայ էք, մեր ուզածն ալ ատ է: Անանկ չէ՞ մի:

— Ատ ի՞նչ լաֆ է, ջանըմ, հարկաւ մեր ուզածը ատ է,— հաստատեց հեղինակաւորը, գարմանքով և իբր թէ վիրաւորուելով:

— Ատ չէ հարցնելու չէիր, վրայ բերաւ երկրորդը:

— Գէշ բան մը չըսի՞ եա՛:

— Չէ՛, գէշ բան մը չըսիր, ամմա ըսելու չէիր,— ասաց երկրորդը,— յայտնի է, որ պարոնը հայ մըն է. Թերևս ինքը Աղաբէկովն է, զոր պատիւ ըրած է մեզի տեսնալու, սակայն, չի վախչիր ըսել. ատ ալ իր ազնուութիւնն է:

— Շուտ ե՛ս ալ ատ կ'ըսեմ, պապամ, որ պարոնը Աղաբէկովն է:

Երբ գաղթականները իրենց վէճը վերջացրին, Աղաբէկովը դէմքը խոժոռեց, հարցնելով.—

— Ձեզ ինչո՞ւ ձերբակալեցին:

— Մեզ ձերբակալեցին,— ուզում էր սկսել առաջինը...

— Ատկէ առաջ՝ ըսեմ որ,— ընդմիջեց երկրորդը...

— Պատճառ մը չկար մեզի ձերբակալելու,— վրայ բերաւ հեղինակաւորը:

Աղաբէկովը ընդմիջելով կալանաւորներին՝ ասաց.—

— Մէկ-մէկ խօսեցէ՛ք:

Ու գաղթականները իրենց խօսքը դիջեցին հեղինակաւորին:

— Կը հարցնէք, թէ մեզի ինչո՞ւ ձերբակալեցին,— ըսկսեց հեղինակաւորը, մերթ ընկերներին ու մերթ Աղաբէկովին նայելով,— աղբօրս ըսեմ, ատիկա դաւաճան հայու մը գործ է: Ասկէ չորս-հինգ օր առաջ՝ չուկային մէջ կեցած կը խօսէինք մեր բախտին վրայ: Երիտասարդ հայ մը մօտեցաւ մեզի, ձեռքի վրայ մանրունք կը ծախէր: Մեզի առաջարկեց բան մը

գնելու. տաճկահայ մըն էր: Ես կոճակ մը գնեցի, ասոնք ալ բաներ մը գնեցին, ըսելով, թէ տաճկահայ մըն է, գաղթական մըն է թո՛ղ հայի մը դրամ վաստկի: Ծօսք-խորթթա ըրինք առ ու ծախսի վրայ: Ան ըսաւ, թէ առ ու ծախսով սանկ կերպով մը կ'ապրի, բայց սա խառնակութիւնները գործը կ'աւերեն: Աւտր վրայ խօսքերնիս դարձաւ մեր ջարդերուն վրայ, ստ թուրքերուն գազանութիւններուն վրայ. ռուսերուն մասին խօսեցանք, պոլշևիկութիւնը մէջ տեղ ընկաւ, Հայաստանի մասին աւել-պակաս բաներ մը ըսաւ: Մենք աւտր չհաւնեցանք, ան ալ մեր ըսածներուն չհաւնեցաւ...

— Հայաստանի մասին ի՞նչ ասաց,— հարցրեց Աղաբէկովը:

— Հայաստանի մասին ըսաւ, թէ Հայաստանը հակայեղափոխական կառավարութեան ձեռքը կը գտնւի և թուրքերը կը ջարդէ: Մենք ալ ըսինք, թէ աղէկ կ'ընէ, վասնզի թուրքերը մեզի չատ ջարդած են: Անիկա, վոխանակ մեզի համակարծիք ըլլալու, մեզի հակայեղափոխական կը յայտարարէ: Ծօ՛, կ'ըսեմ, 30 տարի սուրը դրօշակին ծառայած եմ, մազերս ճերմըկեր են յեղափոխական գործերուն մէջ, դուն հիմա ինձ յեղափոխութի՞ւն կը սովրեցնես: Անիկա իր կարճ խելքով մեզի կը համոզէ, թէ այն յեղափոխութիւնը, որ մենք կ'ընէինք Տաճկահայաստանին մէջ, տարբեր է աս յեղափոխութենէն, և կը պնդէր թէ աս յեղափոխութիւնը աղքատին և հարուստին յեղափոխութիւն է: Մենք ալ կ'ըսէինք, թէ մէյ մը սա մեր ժողովուրդը ազատենք տաճկին դերութենէն և ապա աղքատին ու հարուստին հարցը մէջտեղ նետենք: Փառք Աստուծոյ, հարուստներ չունինք քի՛: Մանթաչով մը ունէինք, ան ալ Ռուսաստան կը գտնւէր: Լսածնուս նայելով `ան ալ բարեգործութիւն կ'ընէր, ազգին համար եկեղեցիներ կը չինէր, դպրոցներ կը բանար, ասոր անոր ձեռք կը մեկնէր. աւտր ալ ազգային գործ մըն է: Աւտր ալ չըննէր նէ՛, մէկ մարդուն համար `ազգ մը չի կրնար յեղափոխութիւն ընել:

— Է՛ բոլշեւիկներուն մասին ի՞նչ էր խօսում,— հարցրեց Աղաբէկովը, առանց դէմքի գծերը փոխելու:

— Պոլշեվիկութիւնը, կ'ըսէր, ազգին չի նայիր, ան բոլորին հաւասար կը նայի. մենք աւտր հակառակը գիտենք. լսած ենք, թէ պոլշեվիկ հայ մը, ռուս գինուորներուն գլուխն անցած և խմբապետ Համազասպին հետ միացած՝ թուրքերուն դէմ կը կուէր և գանոնք կը ջարդէր: Եթէ ատանկ չէ նէ՛, հայ մը, որ պոլշեվիկ կը դառնայ և թուրքին ու հայուն մէջ խըտրութիւն չի դներ, անիկա պարզապէս ազգին դաւաճանն է: Անանկ չէ՞ մի,— հարցրեց գաղթականը, չեչտակի նայելով Աղաբէկովի աչքերի մէջ, նրա հաւանութիւնն առնելու անխախտ հաւատքով:

Սակայն, երիտասարդը, անթարթ աչքերով՝ հարցրեց.—

— Յետոյ էլ ի՞նչ խօսեցիք:

— Ալ ի՞նչ խօսեցանք,— հարցրեց հեղինակաւոր գաղթականը `խօսքը ուղղելով իր ընկերներին:

— Պարոնին անձին վրայ խօսք ըրինք,— յիշեցրեց առաջին գաղթականը, որ մինչև այդ հետաքրքրութեամբ լսում էր իր ընկերոջը:

—Շատակ է, ձեր անձին վրայ ալ՝ խօսք ըրինք,— չարունակեց հեղինակաւորը,— ըսինք թէ չտէ պարոն Աղապէկովն ալ պոլշեվիկ մըն է, բայց ազգին համար կը գործէ, վասնզի էջմիածնեցի ըլլալնիդ գիտէինք: Ա՛խ, ապրէինք տէ՛, մէյ մը ձեզ հետ էջմիածին աղւոր պատյտ մը ընէինք: Կաթողիկոսին, հարկաւ, չատ առիթներով տեսած կ'ըլլաք: Ան հիմա ծերացած ըլլալու է: Անանկ չէ՞, պարոն Աղապէկով: Սակայն, ան Սրբմեանին չի հասնիր: Կ'ըսեն, ռուսասէր մըն է. աւտր ալ քաղաքականութիւն է, քաղաքականութիւն մը, որ դուք ալ կը վարէք և աղէկ կ'ընէք: Հայ մը պէտք է որ պոլշեվիկ ալ ըլլայ, Դենեկինցի ալ ըլլայ. սա յոյներուն պէս քաղաքականութիւն վարելու է, վասնզի կը կորչինք, ա՛խպար, կը կորչինք, եթէ ատանկ չըննենք, ան մը ժողովուրդ ենք: Թէև ռուսէն ալ խէր մը չկայ մեզի եա՛: Եթէ ռուսը ուզէր նէ՛, մէկ օրւան մէջ կը գրաւէր Տրապիզոնը և կ'ազատէր քրիստոնեայ ժողովուրդ մը. աւտր ալ չըըին: Աւտ ամենը, կ'ըսեն, ռուս նշանաւոր զօրավարներուն գործն է. զօրքը եա ու առաջ կը տանէին՝ սանքի թէ չեն կրնար տաճիկին յաղթել: Մէջերնին Լօրիս-Մելիքով մը կամ Շուլկովնիկով մը չկար քի հայուն արիւնը գլուխնին գարնէր ու մէկ հուճումով ազատէր տաճկաց Հայաստանը, ինչպէս ըրին Ղարսի կռիւներուն տակեն: Հաւատացէ՛ք, պարոն Ա-

ղապէկով, խոշերնիս կուգար, երբ կը լսէինք, թէ ռուս զօրականներ կը ջարդէք, ատիկա ալ դաշնակցական գործ մըն է, ազգային գործ մը: Դաշնակցականները մէկ–մէկ կը զարնէին, դուք խումբերով կը ջարդէք. անոնց գործը դուք կը շարունակէք: Ամմա, անանկ ընելու է քի՛, չկարծուի, թէ հայ մը ռուս կը կոտորէ. ինչ ալ ըլլայ, ռուսէն աւելի՝ Թուրքն է մեր Թշնամին. անոնք մեզ կոտորեցին և դեռ կը շարունակեն կոտորել:

— Լաւ են անում, որ կոտորում են ձեզ պէս քեալադժօղներին,— ասաց Աղաբէկովը՝ զայրոյթը զսպել չկարողանալով:

— Եա՛, ի՞նչ կ'ըսէք, պարոն Աղապէկով,— բացագանչեց գաղթականը՝ զարմացած ու այլշած:

— Կատակ կ'ընէ, ջանըմ,— ասաց երկրորդը:

— Ձեզ նմաններին կոտորելուց առաջ՝ լեզուն պէտք է կտրել,— ասաց Աղաբէկովը՝ նոյն ցասումով:

Գաղթականները իրար նայեցան և իրար հասկցան:

— Մի՛ բարկանաք, կ'աղաչեմ,— ասաց հեղինակաւորը:

— Ինտո՞ր չբարկանայ, ջանըմ, ա՛յնքան կը խօսիս, որ մարդուն սիրտը կը հատցնես:

— Անանկ է նէ՛; ա՛լ ըսելիք չունիմ:

— Դեռ ասելիք ունի՞ք,— պոռաց Աղաբէկովը,— ասացէ՛ք տեսնեմ, ի՞նչ գործով էք ուղարկւած այս կողմերը:

— Պարոն Աղապէկով, մի՛ բարկանաք, կ'աղաչենք. ան տակէն գլխէն բաներ մը ըսաւ, որ հոս ըսելու չէր,— ասաց առաջինը՝ կեղծ ժպիտը դէմքին:

— Երեքդ էլ Դաշնակնե՞ր էք,— հարցրեց Աղաբէկովը, տոնը մեղմած:

— Կուսակցութեան մը պատկանիլը եղած է զուտ ազգին շահուն համար,— պատասխանեց երկրորդը:

— Հարցիս ուղիղ պատասխանեցէ՛ք, դաշնա՞կ էք թէ ո՛չ:

— Հայրս առենօք Արմենական եղած է,— սկսեց հեղինակաւորը,— մեծ եղբայրս Հնչակ էր, որը զոհ գնաց Գումգափուի դէպքին: Անոր վրէժը լուծելու համար ՝ես ալ Դաշնակցական եղայ, վասնզի ազգը նոր զոհեր կը պահանջէր:

Ասով ըսել կ'ուզեմ որ, Դաշնակցական եղած ենք՝ չէ թէ մեզի համար, այլ ազգին համար:

— Ուրեմն դուք Դաշնակցութեան անդա՞մ էք, և զուր չէ, որ ձերբակալւած էք,— ասաց Աղաբէկով սպառնալից:

— Դաշնակցութեան անդամ ենք՝ ըսաւ նէ՛, դուն համակիր հասկցիր,— ասաց երկրորդը,— վասնզի տեռոր կատարած չենք, ռումբ ձգած չենք, չաէ դէշէն–աղէկ ինքզինքնիս պաշտպանած ըլլալու համար՝ սանկ–նանկ քանի մը Թուրք սպանած ենք:

Այս խօսքի վրայ Աղաբէկովը ոտքը յատակին խփեց և ամբողջ ուժով գոռաց.—

— Աւանտիւրի՛ստ սրիկանե՛ր, ամբողջ մի ժողովուրդ կոտորել ուիք և դեռ խօսո՞ւմ էք:

— Պարո՛ն, եղբա՛յր, արիւնիդ մի՛ պղտորէք, կ'աղաչեմ,— յարեց երրորդը,— ան՝ անդամ եմ՝ ըսաւ նէ՛, ատ՝ համակիր եմ՝ կ'ըսէ նէ՛, դուն չեզոք հասկցիր, վասնզի Թուրք սպանելը միայն կոմիտէին գործը չէ՛ քի. ատ ամէն հայուն պարտքն է:

Աղաբէկովը՝ աչքերը լայն բաց արած՝ դիտում էր խօսող գաղթականին, իսկ վերջինս ենթադրելով, որ նա հարց տալու կը պատրաստուի, շարունակեց.—

— Պիտի հարցնես, թէ ինչո՞ւ չեզոք ենք: Երբ աս մեծ պատերազմը ծագեցաւ, տարի մը ետք, Թուրքերը մեզի կոտորել սկսան, գեղեցիկ կիները և կոյսերը տարին, բռնաբրեցին, երեխաները ծով նետեցին, այրերն ալ խումբերով ջարդեցին ձորերուն մէջ: Հազիւ քանի մը տասնեակ մարդիկ ազատեցան: Մենք ալ ատոնց պէս ազատեցանք, լեռը բարձրացանք, կատաղի կռիւ մղելով Թուրք զօրքերուն և խուժանին դէմ, և ատանկով գլուխնիս պահեցինք: Մեր մէջ Հնչակ ալ կար, Դաշնակ ալ. ատկէ չեզոքութիւն մը եկաւ վրանիս: Վերջապէս, ի՞նչ գլուխդ ցաւցնեմ, ռուսերը եկան, մենք լեռներէն վար իջանք: Ժամանակ մը ռուսերը կեցան, մենք սկսանք մեր օլուխ–չօճուխը փնտռտել: Ատ ատենն էր, որ Ռուսաստանին մէջ յեղափոխութիւն ծագեցաւ և ռուսաց ցարը, աթոռ վրայ բարկանալով, պոլշեւիկութեան հրաման հանեց ու իր զօրքերը ետ քաշեց: Մենք ալ ռուսերուն պէս մեր զէնքերը նետեցինք և

աբռզին հետ վախչելով՝ չունչերնիս բաթում առանք: Շտէ աս է մեր կարճ կենսագիրը. մենք քիչ կ՚ըսենք, դուն չատ հասկըցիր: Այս ամենէն եաքը ձեզի կը մնայ մեզ ազատել կամ նորէն բանտ նետել. ատիկա ալ ձեր կամքէն և աղնուութենէն կախուած է:

— Այդ բոլորէց յետոյ դեռ չէ՞ք թքում Դաշնակցութեան վրայ և Դաշնակցակա՞ն կը մնաք, հա՞,— ասաց Աղաբէկովը՝ ցուցամատը ծանրօրէն թափ տալով և ատամները կրճտելով:

— Պարոն Աղապէկով, կ՚աղաչեմ, ոտքդ կը պագնեմ, մի՛ բարկանար, մեզի հասկցիր,— ասաց երկրորդը մեղմ տոնով, — թուրքերը մեզի կոտորեցին ոչ թէ անոր համար, որ Հնչակ էինք կամ Դաշնակ, այլ անոր համար, որ հայ էինք. դուն թուրքերը չես ճանչնար, բայց մենք կը ճանչնանք:

— Հապա Դաշնակ հայդուկները ինչո՞ւ ձեզ օգնութեան չեկան,— ասաց Աղաբէկովը:

— Ջանըմ, աս որչափ Դաշնակցութեան պոչէն բռնած կ՚երթաք,— պատասխանեց դաղթականը արդէն զայրացած,— ըսինք քի— Հնչակ ալ եղած ենք, Դաշնակցական ալ. աս ամենը եղած է՛նք, չէ՞ ազգին համար եղած ենք, Հայաստան մը ստեղծելու համար եղած ենք: Է՛, դուն Դաշնակցական եղած չե՞ս, պարոն Աղապէկով. հայ մը կա՞յ, որ Դաշնակցական եղած չըլլայ. Դաշնակցութիւն, վաթան ի՞նչ ըսել է, ազդ ըսել է:

Աղաբէկովը անխօս, բայց զայրացած, ոտքի ելաւ ու դառնալով բանտապետին՝ ասաց.—

— Սրանց պատժարան գցեցէ՛ք:

* * *

Բանտապետը կանչեց սէնտուր զինուորները և դաղթականներն եաև գցած՝ առաջնորդեց պատժարանը: Կալանաւորները չէմացան, թէ ինչ ասաց Աղաբէկովը, բայց զգացին, որ նա սաստիկ բարկացաւ:

Երբ նրանց խցիկի դուռը գոցուեց, և փականը չռինդով իջաւ դրան վրայ, հեղինակաւոր դաղթականը ասաց.—

— Առանկ խօսելու չէիր:

— Ջանըմ, ի՞նչ ըսի քի, անոր սիրտը առնել ուզեցի:

— Գործերնիս դէշ ընթացք մը ստացաւ,— ասաց երբորդը:

— Կրնայ ըլլալ, որ սա փուչտը Աղապէկով չէ:

— Ան ըլլալու է, ջանըմ. ըսինք Աղապէկովն ես, չէ՛ չըսաւ. էջմիածնեցի ըլլալը յիշեցուցինք, ատոր ալ բան մը չըսաւ. չէ՞ ան ըլլալու է:

— Ասանկ ալ հա՛յ կ՚ըլլա՞յ, հա՛յութիւն կ՚ըլլա՞յ:

— Ծօ՛, աս ի՞նչ հայ է, թքնեմ ասոր հայութեան վրայ. լրտեսութիւն կ՚ընէ իր ցեղակիցներուն վրայ, Մոսկոփին կը ծառայէ հաւատարիմ չան մը պէս. չէ՞ պաշտօն մը ձգած են ձեռք, պաշտօն մը, որ միայն պատւազուրկ հայ մը կրնայ ընել. ատոր բռնել տուր, անոր զարկ, մէկալին բանտ ձգէ: Այս պաշտօո՞ն է:

— Ձգէ՛, բէ՛, ատոր ատենը չէ. ընելիքներուս մասին մտածենք:

— Ինչո՞ւ սիրտդ կը հատցնես. ծօ՛, ասքան բաներէն եաքը, բա՞նտը պիտի մեզի վախցնէ:

— Շտէ դուն ըսիր քի՝ փուչտ մըն է, ամէն դէչութիւն կրնայ ընել:

— Դուն անոր խօսքերուն մի՛ նայիր. ան մեզի դէչութիւն չի կրնար ընել:

— Աղէկ կ՚ըլլար, որ չիփ-չիտակ ըսէինք, թէ Դաշնակցական ենք:

— Շտէ ըսինք, ջանը՛մ, չիտակ խօսքը իշուն կ՚ըսեն, ան հասկցաւ, աղէ՛կ հասկցաւ. ատոր համար էր որ չարունակ Դաշնակցութեան պոչէն բռնած կ՚երթար:

— Ան Դաշնակցական ըլլալնուս համար չէր, որ կը բանտանար, այլ աս չարչէն անոր դէչ լուրեր տւած է, վասնզի անիկա իր բերնէն խօսք մը փրցուց, որուն վրայէն աննկատ անցանք:

— Ի՞նչ ըսաւ քի:

— Անիկա հարցուց, թէ ի՞նչ գործով աս կողմերը ղըրկւած ենք. աս խօսքին մէջ մեծ իմաստ մը կայ:

— Ի՞նչ կը կարծես. ատով ի՞նչ կասկածներ կրնայ անուցել:

— Կոմիտէին դաշտնի գործերուն ակնարկը կ'ընէ:

— Թերևս մեզ տեռորիստներ կարծած է և ատ վախէն մղւած՝ ատանկ խօսք մը փախուցեր է բերնէն:

— Բայց ատիկա չեմ յիշեր:

— Ես ալ ատանկ խօսք մը չեմ յիշեր:

— Ձեզի բան մը կ'ըսեն նէ՛, հաւատացէք:

— Պարապ բաներով մի՛ սրտնեղիք, դուք ան ըսէք, թէ ի՞նչ ընելու ենք:

— Կոմիտէին կերպով մը լուր տալու է:

— Է՛հ, հոս կոմիտէ կա՞յ որ, ի՞նչ դիտնանք. օտար տեղ, օտար քաղաք:

— Ի՞նչ կ'ըսես, Ջանըմ, ինչո՞ւ տղայի մը պէս կը խօսիս. աշխարհին մէջ անկիւն մը կա՞յ, որ Դաշնակցական կոմիտէ չըլլայ, ան ալ ատանկ տեղ մը, ռուսին ծոցին մէջ, բուն կուբին վայրը:

— Է՛, ըսենք թէ կայ. ինտո՞ր տեղեկութիւն տանք, որո՞ւ միջոցով տանք:

— Բանտապետին բան մը տալու է:

— Ետքը, ախպօրս ըսեմ, նամակ մը գրենք Կոմիտէին:

— Է՛, գրեցինք, ե՞տքը. ինտո՞ր հասկցնենք սա ռուս բանտապետին, թէ նամակը որո՞ւ տալու է, քանի որ Կոմիտէին ուր ըլլալը չենք գիտեր:

— Պապա՛մ, կեցի՛ր, բան մը կ'ըսեմ նէ՛, հարկաւ ատ ամենը խորհած ըլլալու եմ: Ա՛ս նամակը կը գրենք, կուտանք բանտապետին ու կըսենք, որ նամակը տանի Յոտորլուբցի փուռճի Մուկուչին: Նամակը անոր ձեռքը հասնելուն պէս՝ ան մէյ մը կը կարդայ. կարդալէն ետքը, ա՛լ ապահով ենք, որ նամակը տեղը կը հասնի:

— Ատոր ըսելիք չկայ. հիմա նայինք, թէ ի՞նչ պիտի գրես սա նամակին մէջ:

— Էն գլխէն կը գրեմ, թէ ամենուն յայտնի Կոլոտ Գէորգը, որ ատենօք «Վրէժ» խումբին անդամ եղած է և վահազն Վարագի հետ բանտ նստած է, Սահմանադրութեան հրուչակումէն ետքը ազատած է, բայց ձեռնունայն նստած չէ: Տեղահանութեան ատեն լեռ ելած է և ուրիշ փախստականներուն հետ, ամբողջ երկու տարի, չէրքէզներուն դէմ անհաւասար

կռիւ մղած է: Ռուսներուն նահանջին ատեն կովկաս անցած է, ու հիմա փուչուի մը պատճառով բանտ ինկած է:

Քու մասին ալ կ'ըսենք քի՛, Ղանթարճի Արթին աղային տղան՝ Յակոբը, որ ենթակոմիտէին անդամ եղած է Սահմանադրութենէն ետքը, պատւաւոր կերպով կատարած է իր պարտականութիւնները, սակայն, առւտուրին մէջ վնաս կրելով՝ Ռիզէ գաղթած է և հոն հաստատւած է մինչև պատերազմը: Վերջն ալ ջարդերէն ազատւելով, Ունիա փախած է և յոյներուն մօտ ապաստանած է: Ատոնց տեղահանութեան ատեն՝ լեռ քաշւած է և յոյն խմբապետ Սակիի մարտիկներուն միանալով՝ տաճիկներուն դէմ կռիւ մղած է:

Գալով քեզի, Միսաք, կը գրենք քի՛, դուն ատենօք Հընչակեան եղած ես, սակայն, Հնչակեաններուն անմխիթարութենէն ձանձրացած՝ Դաշնակցութեան մէջ մտած ես: Պատերազմի ատեն գինւոր գացած ես և անկէ փախչելով՝ լեռը ելած և ամենուն պէս պատւով կռւած ես: Ու հիմա, ատ նոյն փուչուին պատճառով բանտ նետւած ես:

— Ի՞նչ կ'ըսէք, ասանկ աղէկ չէ՞ մի:

— Շատ աղէկ է: Ետքը՞...

— Է՛, չտէ, ետքն ալ կ'ըսենք քի՛, մեզի հարցաքննեց հայ մը (անիծեալ ըլլայ): Սկզբէն անոր պարկեշտ հայ մը կարծելով՝ քիչ մը անկեղծ խօսեցանք, եղբօր մը պէս մեր ցաւերը պատմեցինք. ետքէն հասկցանք, որ կը սխալինք եղեր և մեզի գէշութիւն մը պիտի ընէ: Ագգին համար գոհւելնիս բան մը չէ, ամմա, սա պարադաններուն մէջ իշու նահատակ ըլլալնիս ցաւ կը պատճառէ մեզի, վասնզի ասքան փորձութիւններէն ու չարչարանքներէն ետքը, օտար երկրի մը մէջ, գալ ու մեռնիլ գաւառան հայու մը ձեռքով՝ անպատիւ կը սեպենք: Ուստի, ասով կը խնդրենք պատւարժան Կոմիտէէն, որ ան իր ընելիքը ընէ ու մեզ ազատէ այս չունչին ձեռքէն:

— Գէ՛որգ, ատ ամենը աղէկ է, ամմա, սա «չունը» մէջտեղէն հանէ:

— Ինչո՞ւ, Ջանըմ, ինչո՞ւ պիտի հանեմ, չուն չէ հապա ի՞նչ է:

— Կը խորհիմ, թէ նամակը անոր ձեռքը իյնայ նէ՝ գէչ կ'ըլլայ:

— Ջա՛նըմ, բան մը կ՚ըսեմ նէ՛, հարկաւ խորհած ըլլալու եմ… Նամակը Կոմիտէի ձեռքը իյնայ նէ՛, զաթէն ազատած ենք. իսկ սա չունին ձեռքը անցած պարագային՝ անոր սիրտը անանկ դող մը պիտի մտնէ քի, մեզ սպանելու մտքէն վազ կ՚անցնէ: Վասնզի, վերջն ալ պիտի ըսեմ քի, հակառակ պարագային եթէ աս նամակը ձեզի չհասնի, ու մենք խոս նահատակուինք, ան ատեն, կ՚աղաչենք, որ Կոմիտէն մեր վրէժը լուծէ այս Վասակէն ու մեր արիւնը պարապի չէգէ…

— Ա՛տ ալ իրաւ է,— ասաց մէկը:

— Դէ՛, չտէ գրէ՛,— ասաց միւսը:

X

Աշնան արևի վերջին շողերը անհետացան հորիզոնից: Մութը, ահաւոր ճիւաղի նման, իր թևերը յաղթականօրէն թափահարեց լեռների գագաթին և իջաւ դաշտերի ծոց, անցաւ անտառներով ու, ամէն օրւայ պէս, ծանրօրէն թխսեց գիւղերի, աւանների և քաղաքների վրայ:

Մարդիկ անկողին մտան նորից արև տեսնելու յոյսով: Երկիրը լռեց:

Այդպէս չէր սակայն այն քաղաքը, ուր բանտերը լայն բերան հևում էին մարդկային հոգսերի ներքև, ուր մահը,— բժշկի համարձակութեամբ և ընտանի, ազատ շրջում էր ամէն տեղ, և ուր կեանքը, գունատ ու հալածական, թափառում էր տնից-տուն, անկիւնից-անկիւն, բայց կայան չէր գտնում:

Կեանք ու արև տենչացող մարդկանց մի մասը, անաղմուկ ու դաւադիր, սպառազէն ու արնակոյս, հետզհետէ քաղաք էր իջնում: Նրանք գալիս էին խմբերով, կարգապահ, հև ի հև ու վճռական: Նրանցից ամէն մէկը գիտակցում էր, որ բոլորը միասին հաւաքուած չեն կարող մի մազ անգամ ստեղծել, սակայն բոլորը համոզուած էին, որ կարող են և ընդունակ մարդկային մի գլուխ թռցնելու: Ու դրա համար էլ գալիս էին հաստատակամ և անմեկին:

Մի քանի օր առաջ քաղաքում յայտարարուած էր պաշարողական դրութիւն և ընդգծումով շեշտուած, որ երեկոյեան

ժամը եօթից յետոյ տնից դուրս գալը խստիւ արգիլուած է: Ու մարդիկ, սարսափահար, իրենց գործերը կատարելու համար ոչ միայն վեց, վեց ու կէս, եօթից տասը պակաս-ի հաշիւը մոռացել էին, այլ և ժամը չորսից ու հինգից վար իջնելը համարելով մեծագոյն յանդգնութիւն ու չռայլութիւն, իրենց տների նիգերը գցում էին միշտ երկու ժամ առաջ, յայտարարուած օրէնքից:

Այս յայտարարութեան զուգընթաց՝ քաղաքում զանազան լուրեր էին շրջում: Խօսւում էր նոր և խիստ զօրահաւաքի, ինչպէս և դաւադրութիւնների ու ապստամբութեան մասին, սակայն ոչ ոք գիտէր, թէ ի՞նչ է կատարւում: Քաղաք բերուած ձիաւոր և հետիոտն զօրքը աւելին չգիտէր, քան ինչ որ լսում էր ու գիտէր ժողովուրդը:

Մի ժամ յետոյ քաղաքը պաշարուած բերդի տեսք ունէր: Կարմիր հրամանատարը ձիաւոր մի քանի ջոկատներին հրահանգ տուաւ, որ օղակեն քաղաքի հեռաւոր ծայրամասերը, և ոտաւոր զինուորների մի մասը ցրեց քաղաքում՝ բռնելով գըլխաւոր փողոցները. իսկ ձեռնառումբերով ու գնդացիրներով սպառազէն վաշտը անաղմուկ կանգ առաւ բանտի առաջ:

Զինուորներին հրամայուած էր չխօսել ու չծխել, և նրանք անբարբառ հնազանդւում էին:

Կարմիր հրամանատարը մտաւ բանտը և, բանտապետին գտնելով իր աշխատանոցում, ասաց.—

— Անշուշտ ձեզ յայտնի է ամէն բան:

— Մենք պատրաստ ենք,— ասաց բանտապետը, աւելորդ բան չխօսելու համար:

— Մենք ևս,— նկատեց հրամանատարը ժպտալով:

Ու բանտապետը, երեք հարիւր սպաների ցուցակը վերցրած, միականի օգնականի հետ և տասը զինուորների ուղեկցութեամբ, անցաւ կալանաւոր սպաների բաժանմունքը և, բաց անելով նրանց սենեակի դուռը՝ ասաց.—

— Պարոնա՛յք սպանե՛ր, պատրաստուեցէք հարցաքննութեան, առաջին նուագ՝ հարիւր հոգի:

Երեք հարիւր սպաները, որոնք իրար գլխի վրայով նայում էին բանտապետին ու շունչը քաշած լսում էին նրան,

տեղից էջարժեցին, ու նրանցից ոչ ոք խօսք դատաւ պատասխանելու:

— Պարոնա՛յք սպանե՛ր,—կրկնեց բանտապետը,—դուրս եկէք հարցաքննութեան գնալու, առաջին նւագ՝ հարիւր հոգի:

— Ինչո՞ւ ոչ բոլորը,— լսեց մի ձայն:

— Ձո՛ւտ տեխնիկական հարց է,— ասաց բանտապետը,— բոլորը պիտի գնան:

— Լաւ է ցուցակը կարդալ,— նկատեց սպաներից մէկը՝ ենթադրելով, որ ինքը առաջին նւագի մէջ չէ:

— Միևնոյն է, բոլորս էլ պէտք է գնանք,— հակաճառեց մի ուրիշը, հաստատ իմանալով, որ առաջին գնացողներից է:

— Ի՞նչ էք շատ խօսում և գործը բարդացնում, ես ահա,— ասաց այն սպան, որը չարունակ հաշիւ էր անում թէ ինքը ամենից ուշ դուրս պիտի գայ բանտից, երբ իրեն տանելու գան:

— Ես նո՛յնպէս,— ասաց մի ուրիշը, խռնւած կալանաւորները ճեղքելով և առաջ գալով:

Սրանց միացան նաև մի քանի հոգի, համոզւած լինելով. որ բանտից կամովին դուրս գալը մեղմացուցիչ նշանակութիւն ունի հարցաքննութեան ժամանակ:

Երբ մի տասնեակ լրացաւ, բանտապետը երկու զինւորի հրամայեց նրանց տանեն, ու դառնալով կալանաւորներին՝ ասաց.—

— Պարոնա՛յք, լսեցէ՛ք, կարդում եմ ցուցակը. դուրս եկէ՛ք:

Սպաները չէին յապաղում:

* * *

Առաջին հարիւրակը, սւինէ օղակի մէջ առնւած, գնում էր լո՛ւռ և անաղմուկ: Տները հետզհետէ նօսրանում էին, և դաշտից վչող քամին զգալի դառնում:

Կալանաւորները կանգնեցրին քաղաքի օրանոցի առջև, ուր, հին օրերին, պատերազմի վերջին ոճով, վայլուն կոճակներով ու չքանշաններով մարդիկ, մի մե՛ծ գործ ու անհրաժեշտութիւն կատարելու եռանդով, իրենց նմաններին սովրեցնում էին մարդասպանութեան բոլոր եղանակները: Այժմ այդ

հսկայ չէնքը թափուր էր ոչ նրա համար, որ նոր ժամանակների նոր մարդիկ համոզւել էին, թէ մարդ սպանելը վատ բան է, այլ աւելի քան անհրաժեշտ է:

Բացի մի քանի ջոկատից, որ այնտեղ էր բերւած «գիշերւայ գործը» հսկելու համար, չէնքի սենեակներից մէկում նստած, հանդարտ ու անխռով, խօսում այլ մարդիկ, որոնք «այդ գործը» համարում էին մարդկային բարօրութեան ամենանպատակալի էջերից մէկը:

Նոյն կարգով և զգուշութեամբ օրանոցը փոխադրեցին նաև միւս երկու հարիւրից աւելի սպաները:

Ընդարձակ դահլիճի կէսը զբաւեցին կալանաւորները, իսկ միւս կէսը՝ նրանց առաջնորդող սւինաւոր զինւորները և չէնքում պահակ կանգնած ջոկատներից մի մասը:

Երկու բանակներ՝ դէմ առ դէմ. մէկը զինւած ու վրէժխնդիր, իսկ միւսը՝ անպաշտպան ու կալանաւոր: Ճակատագրի հեգնանքով երբեմնի հրամայողները դատապարտւած էին անմռունչ հնազանդելու, իսկ յաւէտ հնազանդողները եկել էին հրամայելու: Նոյն բախտի կատակով, մարդասպանութիւն ուսուցանող ասպետները իրենց իսկ կաշւի վրայ պիտի զգային մարդ զարնելու բոլոր ձևերը: Սակայն, երկուստեք մարդիկ էին, ապրելու և չնչելու հաւասար իրաւունքներով:

Դահլիճը ներկայանում էր որպէս կենդանի դերեզման, սպասումի ծանր կափարիչով: Բոլորը ակնապիշ նայում էին դէպի դուռը, և ամէն մի չչուկ երկիւղածութեամբ լսում: Կալանաւորներից մէկը, այդ սպանիչ լռութեան մէջ, երևի իրեն ճնշող հարցերին պատասխանելու խորասուզումով, աւելի քան լսելի, երկու անգամ արտաբերեց.—

«Ո՛չ, ո՛չ»:

— Ի՞նչ պատահեց,— հարցրեց նրա հարևանը, ընդհանուր ծիծաղի մէջ:

— Ի՞նչ պատահեց որ,— կրկնեց կալանաւորը, ապուշի արտայայտութեամբ:

Հարևան կալանաւորը դարձաւ դէպի չփոթւած սպան և բերանը նրա ականջին դնելով՝ ասաց.—

— Մի՛ վախեցաք, ոչինչ չկայ:

— Բայց ի՞նչպէս հասկացաք, որ «այդ մասին» եմ մտածում,— հարցրեց խռովայոյզ սպան:

— Ենթադրում եմ:

— Դուք ասում էք, թէ ոչինչ չկայ. կա՛յ և շա՛տ բան կա՛յ,— ասաց խոկացող սպան՝ հարևանին մի անգամ ևս հակառակը պնդել տալու մղումով:

— Կրկնում եմ, ոչինչ չկայ, մի՛ վախենաք:

Սպան ուզում էր նորից հակաճառել, բայց վախենալով, որ իր խօսակիցը կարող է համաձայնել, լռեց:

Խզւած լռութիւնը շարունակւում էր և հետզհետէ աղմուկի փոխւում: Հսկիչ զինւորները նոյնպէս խօսում էին, իսկ կալանաւորները դոհ, որովհետև նախկին անդորրութիւնը նրանց սարսափ էր պատճառում: Մահը խռովում էր բոլորի հոգին, բայց ոչ ոք կ'ուզէր այդ մասին պարզ խօսել:

Առաջին շարքում կանգնած սպաները չէին մասնակցում ընդհանուր աղմուկին: Նրանք խուսափում էին իրար հետ խօսելուց կամ փսփսալուց, և այդ անում էին միմիայն նրա համար, որ ուղիղ իրենց դէմ կանգնած զինւորները մի բան չլսեն կամ կռահեն: Նրանք ոչ միայն խուսափում էին ուշադրութեան առարկայ դառնալուց, այլ և աշխատում անհոգ, միամիտ և հանդարտ ձևանալ:

Երկրորդ շարքը իրեն աւելի ապահով էր զգում. Նրանցից ոմանք մտաբերում էին պատերազմական տեսութեան այն կէտը, ուր ասւած է թէ՝ կռւի ժամանակ, եթէ նախապէս շինւած դիրքեր ու խրամներ չկան, պէտք է աշխատել շինել, իսկ եթէ այդ անհնար է, նախընտրելի է թաղնւել թուփերի և քարերի ետև, որքան էլ նրանք աննշան լինեն: Ու հիմա, երկրորդ շարքը, իր առաջ կանգնած ունէր մարդկային մի շղթայ:

Այդ կարգով, հետագայ շարքերը ապահովութեան աւելի մեծ յոյսեր էին սնուցանում:

Նախավերջին շարքում կանգնած էր խօսակցութիւնների սիրահար գնդապետը և այն սպան, որը բանտից ուշ դուրս գալը համարում էր ապահովութիւն, բայց բանտից դուրս եկաւ առաջին և կամովին՝ միշտ ապահովութեան հաշւով:

Վերջին շարքումն էին Տասն և Եօթի հետ մահւան դատապարտւածը, ինչպէս նաև այն սպան, որը բանտում ծրագրում

էր գնդակահարութեան րոպէին իր խօսքը ուղղել զինւորներին և գոռալ.—

«Ռուս քաջարի՛ զինւորներ, հրամայում եմ ձեզ՝ զէնքերը դարձնել դէպի հայրենիքի թշնամիները և անցնել իմ հրամանատարութեան տակ»:

Այս մարդը տակաւին որոճում էր իր ծրագիրը աւելի հանգամանօրէն, աւելի վստահ և յաջողութեան աներկբայ: Սակայն, այժմ նրան մտահոգում էր այն պարագան, թէ ինքը, դժբախտաբար, կանգնած է վերջին շարքում և իր ձայնը կարող է խեղդւել ՝հէնց որ կրակը բաց անեն, հէնց որ բարձրանայ առաջին ընկածների կամ վիրաւորների ճիչն ու աղաղակը: Նա մտածեց անցնել առաջին շարքը, բայց զղջաց: Նախ՝ այդ տեղափոխութիւնը կարող էր ուշադրութիւն գրաւել, յետոյ, ինքը կարող էր առաջին զոհերից մէկը լինել:

Երկար մտածելով գտաւ, որ վերջին շարքերում մնալը ոչ միայն դժբախտութիւն չէ, այլ մի բարիք և իր ծրագրի յաջողութեան պայմաններից առաջինը:

«Եթէ մեզ գնդակահարեն կամ սւինահարեն,— մտածում էր նա,— երկու դէպքում դեռ ողջ կը մնամ,— արիւն, արցունք, ողբ, աղաղակ, գնդակահարող զինւորների խղճահարումը և այս ամենից յետոյ, իմ ահեղ, սթափեցնող հրաւէրն ու կանչը.—

«Ռուս քաջարի՛ զինւորներ, հրամայում եմ ձեզ՝ զէնքերը դարձնել դէպի հայրենիքի թշնամիները և անցնել իմ հրամանատարութեան տակ»:

Ու սպան սկսեց անհանգստանալ, որ ամէն բան այնպէ՞ս դանդաղ է ընթանում: Նա բարձրացաւ մատի ծայրերի վրայ և վիզը երկարելով ուզեց տեսնել պահակ զինւորները, բայց երեսուն շարք գլուխների վրայից երևում էին միայն զորշ փափախներ, կարմիր աստղերով: Տասն և Եօթի հետ մահւան դատապարտւած սպան, որ կանգնած էր նրա ձախ կողմը, և իրեն վերածնւած զգում, հարցրեց.

— Եկա՞ն:

— Դեռ ոչ:

— Ինչո՞ւ են ուշանում:

— Դիտմամբ— մեզ չարչարելու համար:

— Գուցէ մեր հարցաքննութիւնը երկու օր տեւի։

— Աւելի. երեք հարիւր հոգի ենք։

— Օրական հարիւր հոգի՝ էս ձեզ երեք օր, եթէ միայն կարճ քննեն։

— Տեսնե՛նք, հարցաքննում են թէ՞ հրացանաքննում,— կատակեց ուսուցիչը։

Մահապարտ սպան, որ երկու օր մահը ապրել էր իր բոլոր սարսափներով, միայն ժպտաց։

— Չէ՞ք հաւատում,— հարցրեց ուսուցիչը։

— Ինձ ներելուց յետոյ այդ մասին չեմ մտածել։

— Ներում կը լինէր, եթէ ազատ արձակէին։

— Գուցէ մի օր ազատ արձակեն։

— Բայց ե՞րբ։

— Չգիտեմ. ես բոլորովին արդար եմ։

— Պատերազմի և յեղափոխութեան ժամանակ ի՞նչ արդար, ի՞նչ մեղաւոր։

— Բայց մեզ դատեցին. յետոյ իմ մահավճիռը փոխեցին տասը տարուան բանտարկութեան։

— Իսկ ձեզ ինչո՞ւ փոխադրեցին մեր բաժանմունքը։

— Երևի յարմարութեան համար, բացի այդ, սպայ եմ։

— Ծիծաղելի բաներ էք ասո՛ւմ, այդ դեռ չի նշանա...

— Ա՛ս՛ս՛... եկան...

* * *

Մէկ ակնթարթում դահլիճը լռեց։ Ներս մտնողը մի զինուոր էր, կոկիկ հագնուած, մի քանի արծաթ մեդալներով։

— Ի՞նչ է, ախոռում հօ չէ՞ք, ուղի՛ղ կանգնեցէք,— հրամայեց զինուորը՝ խօսքը կալանաւորներին ուղղելով։

Շարժումի ալիքը անցաւ մէկ շարքից միւսը։ Զինուորը աչքի անցկացրեց երեսուն շարքերը և չնայած կալանաւորները կանգնած էին քանոնի պէս շիտակ և անշարժ, բայց նա հարկ համարեց ասելու.—

— Չորրորդ շարքի՝ աջից երրորդ զինուորի ոտքը ծուռ է։

Ուղղումը վայրկենապէս։

— Վեցերորդ շարքի՝ ձախից երկրորդ զինուորի կռնակը դուրս է ցցւած։

Ուղղում։

— Մի քիչ ե՛տ։

— Շա՛տ եղաւ։ Լա՛ւ է։

Ապա՝ զինուորը՝ տեսնելով, որ կարգը կատարեալ է և ինքը նկատողութիւն չունի անելու, կանգնեց այդ վեց հարիւր աչքերի դէմ և խրոխտ ու վրէժխնդիր ձայնով՝ ասաց.—

— Եւ դո՛ւք սպաներ էք, հա՞... ուղի՛ղ կանգնել դեռ չգիտէք։

Նրա ետև կանգնած զինուորները ժպտում էին, գլուխները խորհրդաւոր շարժելով։

Այդ լռութեան մէջ դուռը բացւեց ու ներս եկաւ Գրիշա Աղաբէկովը և կարմիր հրամանատարը։ Նրանք նայեցին, փըսփսացին, ապա՝ հրամանատարը զգոյշ և անլսելի մի քանի պատւէրներ տւեց կարգադրիչ զինուորին և ամէն բան գտնելով կարգին՝ դուրս ելաւ։

Աղաբէկովը, նստելով լայն պատուհանի մօտ, որ ընկած էր հրացանակիրների և կալանաւորների մէջտեղը, սկսեց ծխել և անթարթ նայել առաստաղին։

Էլեկտրական լոյսը ողողում էր դահլիճը։ Ոչ ոք չէր շնչում ու վայրկեանները դանդաղ էին սահում։ Այդպէս տեւեց քառորդ ժամ. դուռը նորից բացւեց և այս անգամ ներս մտաւ մի կին։ Նա հագած էր ճերմակ և անբիծ գիշերանոց. պարանոցը կիսաբաց և թևերը մինչև արմունկները հոլանի. սև մազերը շռայլօրէն փռւած էին կռնակին և ուսերին։ Մէջքը երիզում էր կարմիր ժապաւէն, որի ծայրերը իջնում էին մինչև ծնկները մի թոյլ հանգոյցով։ Ոտքերին ունէր ծակոտիկ հողաթափներ, սպիտակ դուլպաներով։

Կատարեալ հրեշտակ, նազան ատրճանակով։

Աղա Շրէյդէրն էր։

Աղջիկը ժպտում էր, բայց նրա ժպիտը խառն էր դառնութեան և ցասումի շեշտով։ Նա հանդարտ կանգնեց կալանաւորների առաջ և նոյն հանդարտութեամբ՝ ասաց.—

— Դո՛ւք կանչւած էք բժշկական քննութեան, որից յետոյ անմիջապէս ճակատ պիտի մեկնէք։ Այսքան ժամանակ

կուել էք միապետութեան և բռնակալութեան համար, սրանից յետոյ պիտի կուէք սոցիալիզմի և ազատութեան համար: Եւ որովհետև ժամանակը կարճ է և ինձ յանձնարարուած է ձեզ քննել միասին և միևնոյն ժամանակ, ուստի հրամայում եմ՝ պահե՛լ այս լռութիւնը, մնա՛լ անշարժ և առաջին հերթին հանել գլխարկները:

Գլխարկները վար իջան:

— Գլխարկները դնել յատակին:

Կալանաւորները կատարեցին աղջկայ հրամանը:

— Հա՛նել վերարկուները և վայր դնել նոյն կարգով. իւրաքանչիւրը իր առաջ:

Վերարկուները վայր դրին:

— Հանուե՛լ, ամբողջապէս հանուե՛լ,— հրամայեց Ծրէյդէրը,— կօշիկները և գուլպաները նոյնպէս:

Կալանաւորները զարմանալի ճշտութեամբ, լո՛ւռ և անաղմուկ հանւում էին. հանւում տենդագին աճապարանօք և նոր հրաման լսելու հետաքրքրութեամբ:

Երբ այդ էլ վերջացաւ, և սպաները մնացին միայն ճերմակեղէնով, առաջին շարքում կանգնածներից մէկը, մեղմ ձայնով, հարցրեց.—

— Ճերմակեղէնները նո՞յնպէս:

— Չխօսե՛լ,— գոռաց աղջիկը,— բոլորովին մերկանա՛լ ու սպասել:

Մի վայրկեանում մարդկային ամօթխածութիւնը սարսափահար կառչած էր յատակին...

Ապա՝ Աղա Ծրէյդէրը՝ դառնալով իր ետև կանգնած զինուորներին՝ հրամայեց.—

— Կարմի՛ր զինուորներ, ձեզանից տասը հոգի թող առաջ գան:

Տասը հոգի առաջ եկան:

— Ցանձնեցէ՛ք ձեր հրացանները միւսներին:

Հրամանը կատարուեց:

— Միւս սենեակը փոխադրեցէք առաջին տասնեակի հագուստները,— կարգադրեց նա, ատրճանակը շարժելով:

Կալանաւորների առաջին շարքի հագուստները փոխա-

դրուեցին. մինչ զինուորների վերադարձը, աղջիկը խօսքն ուղղելով առաջին շարքի սպաներին՝ հրամայեց.—

— Մի քայլ յա՛-ռա՛ջ:

Կալանաւորները զինուորական կանոնով ու համաչափ առաջ եկան և կանգնեցին հաւասար գծի վրայ:

Հանդերձահաւաք տասը զինուորները վերցրին նաև երկրորդ շարքի հագուստները: Սրանք եւս մի քայլ առաջ եկան՝ աղջկայ հրամանով:

Ու այդպէս, շարք առ շարք, զինուորները հաւաքեցին ու տարան բոլորի հագուստները և վերադառնալով՝ նորից վերցրին իրենց հրացանները, ու կարգադրիչ զինուորը դահլիճի դուռը փակեց և բանալին գրպանը դրաւ:

* * *

Կալանաւորները անթարթ նայում էին աղջկան, որն անշարժ կանգնած լռութիւնն էր ընկնդրում:

Նրանցից ոմանք տեսնում էին, թէ ինչպէս այդ ճերմակաւոր աղջկայ առատ, սև մազերը հետզհետէ անհետանում, թէ ինչպէս նա մերկացաւ, թէ ինչպէս նրա կաշին ու մսերը, գագաթից սկսած մինչև մատի ծայրերը, դանդաղ ու միակերպ, հալւում, իջնում ու չքանում էին ծալք առ ծալք, և մարդկային կերպարանքի տեղ երևում էր միայն մարդկային կմախք, խոռոչաւոր և ահարկու..

Մահը կանգնած էր դահլիճում, աղջկայ դիմակով:

Տեսիլքը չքացաւ աղջկայ մէկ շարժումով: Կալանաւորները շունչ քաշեցին և նրանցից մէկը դուրս գալով շարքերից և մօտենալով Աղա Ծրէյդէրին՝ ասաց նրա ականջին.—

— Ես լրտես եմ մերոնց կողմից, իմ կեանքը վտանգի մէջ չէ՞:

— Դիմեցէք Աղաբէկովին,— ասաց աղջիկը, հազիւ լսելի ձայնով:

Լրտեսը մօտեցաւ Աղաբէկովին, որ անդադրում ծխում էր, և կռանալով՝ ասաց.—

— Ես լրտես եմ մերոնց կողմից՝ իմ կեանքը վտանգի մէջ չէ՞...

— Սպա՞յ ես,— հարցրեց Աղաբէկովը:

— Ա՛յո, կարմիր սպայ:

— Դեռ պաշտօնդ լրացած չէ՛,— ասաց Աղաբէկովը՝ տհաճ արտայայտութեամբ և խօսակիցը վռնտելու չարժումով:

Լրտես սպան վստահ քայլերով մօտեցաւ կալանաւորներին և դրաւեց իր տեղը:

Սդա Շրէյդէրը անցաւ երեսուն չարք առնական մերկութիւնների միջով և իւրաքանչիւրին չզլացաւ հեչտանքի իր հայեացքը, աքօղած անտարբերութեան և անմեղութեան կեղծիքով:

Սպաներից ոմանք, ի տես այս ամենի, յիշում էին ռուս վաւաչոտ կայսրուհու արարքները և նրանց յաջորդող անվերջ ու խորհրդաւոր սպանութիւնները: Վախի, սպասումի և յոյսի դղրդումները հաչտօրէն պարում էին ամէն մէկի դէմքում, հետաքրքրութեան անդուսպ մղումով:

Երբ Սդա Շրէյդէրը հասաւ նախավերջին չարքը, դարմանքով տեսաւ մէկը, որն աջ ձեռքով ծածկել էր իր մերկութիւնը և վերամբարձ նայում դատարկութեան մէջ:

Ունկնդրելու սիրահար դնդապետն էր:

— Ո՞վ էք դո՛ւք,— հարցրեց աղջիկը:

— Մա՛րդ եմ,— պատասխանեց դնդապետը՝ հանդարտ եղանակով:

— Ձեռքը վա՛ր,— հրամայեց աղջիկը:

— Ես ոչ մի հիւանդութիւն չունեմ,— պատասխանեց դնդապետը:

— Ձեռքը վա՛ր, թէ ոչ ուղեղդ կը պայթեցնեմ,— պընդեց աղջիկը, ատրճանակի փողը դնդապետի ճակատին դրած:

Դնդապետը սպրտանեց, մի քանի անգամ աչքերը թարթեց, կարծես տեսիլքը ցրելու ճիգով, և արեան վայրկենական խուժումով տաքացաւ, կարմրեց և իր ձայնի ամբողջ ուժով՝ գոռաց.—

— Պոռնի՛կ...

Ու դնդակը վերցրեց նրա դանկը... իսկ մարդկային արեան կաթիլները գունաւորեցին աղջկայ սպիտակ դիչերանոցը:

Վաղուց սպասած ազդանչանը տրւած էր:

Զինուորները սովնամարտի ճկունութեամբ առաջ թռան ու մերկ մարդիկ, չարք առ չարք ընկնում էին սովնի հարւածներից. մնացածները հետզհետէ կծկւում և խտանում դէպի ետ, դէպի գահլիճի խորը, պաշտպանւելու խելագարութեամբ և մահւան ահարկու կանչով:

Աղջիկը ջղայնօրէն պարպում էր իր վերջին գնդակները, այդ տեսարանից ազատւելու փութկոտութեամբ:

Սովնահարութիւնը կատարւում էր արագ և անխնայ. կալանաւորները գետին էին թափւում մէկը միւսի ետևից. օդակը հետզհետէ նեղանում, իսկ վիրաւորների ու ողջերի կանչն ու կսկիծը խտացնում էր օդը:

Զոհերից ոմանք իրանց արմունկները դործածում էին որպէս վահան, ուրիշները գետին փռւում սովնիներից խուսափելու համար: Զինուորները առաջանում էին վիրաւորների և դիակների վրայով:

* * *

Գրիչս Աղաբէկովը հանդարտ դիտում էր այդ անհաւասար պայքարը՝ նման այն հրամանատարի, որն ապահով տեղ կանգնած, վստահ իր դէնքի յաջողութեան, միայն սպասում է մարտի վախճանին:

Այդ ընդհանուր աղմուկի միջից նրա ականջին հասնում էին միայն մի քանի բացագանչութիւններ, չարունակ կրկնւող, բայց միշտ կիսատ ու անկապ.

«Ռուս քաջարի՛ զինուորներ... ձեր դէնքե՛րը, ձեր դէնքե՛րը»... «կեա՛նքը... իմ կեա՛նքը... մոռացե՛լ էք»:

Ապա՝ բացագանչութիւնները մերթ խաչաձևւում իրար, մերթ հիւսւում իրար, դառնալով անկապ, անիմաստ, բայց աղեխարշ:

Արիւնը առատօրէն հոսում էր տախտակամածի վրայ, նախ փոքրիկ լճակներ կազմելով և ապա՝ յամրընթաց վտակներ, ամէն ուղղութեամբ:

Մարդասպանները քայլ առ քայլ առաջանում էին արեան ծանծաղուտով, իսկ աղջկայ հոդաթափները արիւնը փոխանցում էին նրա սպիտակ դուլպաներին... ու նրա ճերմակ դի-

չերանոցի քղանցքները տակաւ առ տակաւ կարմրում կոյր արեան չիթերից:

Յաղթական դինւորների կրունկների տակ ընկած մի ծանր վիրաւոր զառանցում էր:

Նա տեսնում էր, թէ ինչպէս իր մայրը, բազկատարած ու սարսափահար, վազում էր իրեն գրկելու. զղում էր մօր կանչը, տեսնում նրա արցունքները, բայց չէր լսում նրա ձայնը: Իր գանկը խշշում էր ջրվէժի աղմուկով:

Արևը մայր էր մտնում. խաւարը իջնում էր... սակայն, նա այժմ ճրագներ էր տեսնում, աղօտ, մարւող ճրագներ, որոնք փոխւում էին աչքերի, աչքեր, որոնք բոց էին ժայթքում, և ինքը լողում էր այդ բոցերի մէջ, բայց չէր այրւում, միայն տաք էր, շնչահեղձ տօթ:

Նրա չրթունքները չորացել էին, տոչորւում էր պապակից, լղում էր յատակի արիւնը, բայց ամէն բան հատնում, վերջանում: Վիրաւորը նորից աչքեր տեսաւ, այս անգամ մի զոյգ աչքեր, բարի և անմեղ. նրանք լո՛ւռ արտասւում էին, յետոյ լայնացան, դարձան երկու աղբիւր, վճիտ, զուլալ ջրերով. նա խմում էր այդ ջրից, անվերջ խմում ու չէր կշտանում. ապա՝ հանւեց ու նետւեց ակունքը իր ջերմութիւնը մարելու համար: Սակայն, ջուրը յորդում և խորանում էր աւելի ուժգնութեամբ, նրա ոտքերը կտրւեցին յատակից, ու նա քշւում էր ալիքներից. հեղեղատ էր, կատաղի հեղեղատ, ամէն ինչ ծածկւեց ջրով: Նա մի երկու անգամ լսաւ ջրի յատակը, յետոյ բարձրացաւ, բայց արդէն յոգնած, ուժասպառ, նա խեղդւում էր, նրա շունչը կտրւում:

Կալանաւորների կէսը արդէն ընկած էր և դեռ ընկնում էին. մարդկային պուրակը ճարճատում էր. պատին յենւածներից մէկը, խրոխտ և ուժեղ ձայնով, գոռում էր.—

— Գրո՛հ դէպի պատուհանը, գրո՛հ դէպի պատուհանը:

— Փրկութիւնը պատուհանն է, փրկութիւնը պատուհանն է,— կրկնում էր մի ուրիչը:

Աղաբէկովը լսելով այս խօսքերը, ատրճանակը հանեց և դինւորներին նախագդուշացնելու համար՝ գոռաց.—

— ընկերնե՛ր, գո՛յչ, դէպի պատուհան, փակեցէք անցքը:

Այս նախագդուշութիւնը կոտրեց դինւորների թափը ու մերկ ամբոխը, երրորդ անգամ լսելով, «գրո՛հ դէպի պատուհանը», իրագործեց այն մէկ մարդու վճռականութեամբ, մի հսկայ մսաղունդի պէս, երիցս անգամ տնտղաց ու ռազմական հուռայով խուժեց դէպի պատուհանը, փրկութեան վերջին փորձն սպառելու համար:

Սակայն նրանց չարքերը աւելի ու աւելի նօսրանում էին: Մարդկային առաջին ալիքը փշրւեց դեռ պատուհանը չհասած, ուրիշները եկան և յաջողեցին ջարդել պատուհանի փեղկերը, բայց ոչ մէկը չկարողացաւ իր մահը պատուհանից դուրս գըտնել: Բայց խեղդները չէին պակասում. նրանք գալիս էին իրար հրելով, իրար ուսերի վրայով. ամէն մէկը ճգնում էր արագացնել իր փրկութիւնը, ի հաշիւ տկար ու անճարակ մարդկանց:

Զինւորները չփոթւած էին. նրանցից ոմանք դեռ իրենց սւինները չբաշած վիրաւորների և սպանւածների կրծքից, գլխից և պարանոցից, գալիս էին ուրիշները, ոստում հրացանները վրայ, կոխոտում զոհերն ու զահիճները և այրւում ու ընկնում խելագար թիթեռնիկների պէս:

Վերջապէ՞ս, մի քանի տասնեակից միայն երեք հոգի կարողացան դուրս նետւել պատուհանից, իսկ երեք հարիւրի վերջին մնացորդները դեռին թափւեցին՝ արդէն «անզօր» սւինների մէկ, երկու և աւելի հարւածներով:

* * *

Փոթորիկն անցաւ...

Զինւորները կանգ առան:

Ոչ ոք չէր խօսում. իրենք իրենց դիտում. արիւնաթաթախ էին բոլորը: Մի վայրկեան յետոյ միայն զգացին, որ դեռ վիրաւորներ կան: Ոմանք ծանր ու աղերսարշ տնքում էին, իսկ երկուսը մղում իրենց հոգեվարքի վերջին պայքարը:

— Լռեցրէ՛ք վիրաւորները,— ասաց Աղաբէկովը, երեսի մկանների կծկումով ու ձեռքի արհամարհական չարժումով:

Կարգադրիչ զինւորը նայեց իր քով կանգնած զինւորներին, ժպտաց և նրանց աչքով արեց:

Զինուորները լո՛ւռ, բայց չկամութեամբ մօտեցան վիրաւորներին...

— Նաև աստուձեցի՛ք... դեռ ողջեր կարող են լինել,— աւելացրեց Աղաբէկովը:

— Անհոգ եղի՛ք,— ասաց կարգադրիչը:

Սպա Շրէյդէրը դունատ էր ու յոգնած: Նա յենւել էր պատին՝ ձեռքը ճակատին:

Աղաբէկովը մօտեցաւ նրան, մեղմօրէն բռնեց աղջկայ արմուկը և կեղծ ժպիտով՝ ասաց.—

— Ապրի՛ս, դնանք:

— Զգո՛յշ, վայր եմ ընկնում, գլուխս դառնում է,— ասաց աղջիկը: Երիտասարդը ամուր բռնեց Շրէյդէրի անուշ թից և համարեայ քարշ տալով՝ նրան տարաւ միւս սենեակ:

* * *

Կէս ժամ յետոյ արիւնոտ դահլիճը մտաւ անծնօտ Զիլակովը՝ բժշկի ուղեկցութեամբ, իսկ մի քանի զինուորներ դրսից երկու դիակ փոխադրեցին ներս:

Պատուհանից դուրս նետուող երրորդ ու վերջին սպան մխայն ազատուած էր:

* * *

Գիշերը ծերանում էր: Սպաներին տանելուց յետոյ բանտը ապրում էր մահուան տենդը:

Տան և Եօթ մահապարտները, դիչերւայ պէս, դիչերւայ հետ հաղորդակցում էին:

Կէս ժամ առաջ դրանց բաժանմունքն էին փոխադրւած դործադուլի պարագլուխ չորս բանւորները:

Վարժապետի վրայ ունայնութիւն էր իջել, նա այլևս ապարդիւն էր համարում մահապարտներին յուսադրել և մխիթարել: Նրա ասածները ճչտւում էին ի վնաս բանտարկեալների, որի պատճառով բարւոք էր համարում լռել՝ պահելով իր տոկունութիւնը, առնասրտութիւնն ու համարձակութիւնը:

Կօշկակարի պառաւը, խոստովանութիւնից յետոյ, աւելի

ծանրացել էր· նրա գլուխը դառնում էր հազար ու մի ազմուկով, դառանցում էր անվերջ: Աներևոյթ հոգիները նրան բարձրացնում էին մինչև երկինքը և յանկարծ այնտեղից բաց թողնում: Նա գլորւում էր դունդի պէս՝ ամենածանր վայրկեաններ ապրելով: Գահավիժման րոպէին դդում էր, թէ ինչպէս լինքը վայր էր ընկնում, միաժամանակ մտածելով, որ գոնէ գլխի վրայ չընկնի... Բայց ընկնում ու գլորւում էր նա տաք ու պաղ քրտինքի մէջ: Երբ հասնում էր գետին, նորից էին բարձրացնում, կրկին թողնում ցած, բայց նա որևէ ցաւ չէր զդում և նոյնիսկ չէր յիշում, թէ մարմնի ո՞ր կողմի վրայ ընկաւ...

Եւ այսպէս նրան չարչարում էին, բայց նա չէր մեռնում: Վերջին անգամ նա գերաններ էր տեսնում, հաստ, անճոռնի գերաններ, որոնք լողում էին օդի մէջ:

Ծերունի կօշկակարը սրբում էր պառաւի քրտինքը և նրա ամէն մի ցնցումին որպէս արձագանգ՝ չարունակ կըրկնում էր.—

— Ի՞նչ եղաւ քեզ, ա՛յ պառաւ, վե՛ր եկ, հերիք է վատ երազներ տեսնես:

Բայց ծերունին նկատում էր, որ պառաւը հետզհետէ սառչում է:

Աւազակների խորհրդակցութիւնը վերջացել էր: Կալանաւորների թւական թիւրիմացութիւնը օգտագործելու համար՝ նրանք որոշել էին իրենց կրտսեր ընկերը թաղցնել մահճակալների մէկի տակ, հէնց որ դուռը բանան և իրենց անունները կարդալով՝ հրաւիրեն մահուան: Այս որոշման հետևանքով կրտսեր աւազակը թաղնւած էր այն վայրկեանից, երբ նրանց բաժանմունքի դուռը բացել ու ներս էին հրել մահապարտ և ըմբոստ բանւորները:

* * *

Միջանցքում ոտնաձայն լսւեց· մահապարտները անչունչ ունկնդրում էին· եկողները կանգ առան դրան առաջ, յետոյ լսւեց մի բուռ բանալիների չռինդը և կողպէքի երկու դարձ: Եկւորները ներս մտան, ու բանտապետը վառեց իր ձեռքի

ճարպամոմը և բանալով մահապարտների անուանացանկը՝ ասաց.—

— Պատրաստուեցէք դուրս գալու:

— Դէպի ո՞ւր,— հարցրեց վարժապետը:

— Ինձ հրամայուած է բանտարկեալներին տեղափոխել Թիկունք,— պատասխանեց բանտապետը:

— Լաւ է այստեղ մնանք,— հակաճառեց դիւղացին:

— Այստեղ մնում են միայն երկու պառաւները,— ասաց բանտապետը և սկսեց կարդալ մահապարտների անունները:

Առաջին անունը կօշկակարինն էր:

— Պառաւս հիւանդ է,— ասաց ծերունին,— չեմ կարող նրան թողնել:

— Առա՛ջ եկէք,— հրամայեց բանտապետը:

— Իսկ հիւա՞նդը,— ասաց կօշկակարը՝ առանց տեղից շարժուելու:

— Նրան յանձնեցէք իշխանուհու հոգացողութեան, առաւօտեան բժիշկ պիտի կանչենք:

Իշխանուհին անգալով մօտեցաւ կօշկակարի պառաւին և նրա թոյլ գլուխը առնելով իր գիրկը և խօսքը ուղղելով կօշկակարին՝ ասաց.—

— Դուք գացէք, ես կը նայեմ:

Կօշկակարը թաց աչքերով երկու անգամ համբուրեց պառաւի ճակատը և դառնալով իշխանուհուն՝ կամացուկ ասաց.—

— Պառաւիս կ'ասես, որ հանդերձեալում միասին կը լինենք:

Ապա՝ հերթով կարդացեցին միւսների անունները:

Գործադուլի պարագլուխ բանւորներից մէկի անունը կարդալով, միւս երեքը ընդհատ միացան նրան, առանց սպասելու իրենց անւան յիշատակութեան:

Ամենից վերջ աւազակների անունները կարդացեց. երկու տարէցները առաջ եկան. իսկ բանտապետը կրկնեց կրասեր աւազակի անունը:

— Լրիւ ենք,— ասաց մէկը:

— Այս մէկը չկա՛յ, այս մէկը,— ասաց բանտապետը նորից կարդալով թաղնւած աւազակի անունն ու ազգանունը:

— Տասն և եօթը հոգի ենք, Տասն և եօթս էլ այստեղ,— պնդեց միւս աւազակը:

Բանտապետը ուզում էր նորից կարդալ բացակայի անունը, բայց առաջին աւազակը նրա ուշադրութիւնը վրիպեցնելու համար՝ ասաց.—

— Աչխարհին յայտնի է, որ Տասն և եօթը հոգի ենք, հիմա ձեղանից նոր անո՞ւն էք հնարում:

— Կարծեմ մէկը պակաս է,— նորից կրկնեց բանտապետը:

— Այո՛, մէկը պակաս է և դա սպան է, որին երէկ տապաք. էդպէս չուտ մոռացե՞լ էք «հաչիւը»,—հեգնեց աւազակը:

Բանտապետը մի րոպէ մտածեց, աչքերը արագ արագ թարթեց և ճակատի ու գանկի կաչին մի քանի անգամ չարժելով՝ ասաց.—

— Բայց մի՞թէ այստեղ Տասն և եօթը հոգի կայ:

— Ինչ խելօքն էք. ինչո՞ւ Տասն և եօթը, մէկը որ հանենք էլի Տասն և եօ՞թը կը մնայ:

— Այսինքն՝ Տասն և վեցը,— ուղղեց բանտապետը:

— Այո՛, այստեղ Տասն և վեց հոգի պէտք է լինի,— հաւելեալ պատասխանեց աւազակը,— չէ՛ք հաւատում, հաշուենք...

— Ուրեմն, գրչի թիւրիմացութիւն է,— ասաց բանտապետը, երբ աւազակը հաշուեց ներկաները:

— Լսո՞ւմ էք, պարոննե՛ր,— ասաց աւազակը բարձր ձայնով,— սրանք մարդ են սպանում գրչի թիւրիմացութեամբ, թո՛ւ... սրիկանե՛ր, ղահիճնե՛ր, մարդասպաննե՛ր...

— Լռի՛ր, անպիտա՛ն,— սաստեց գինւորներից մէկը, հրացանի կոթը սպառնալից վեր բարձրացնելով:

Բանտապետը, որ վորձած աղէտ էր հին օրերի, գինւորին հանդարտութեան հրաւիրեց. և իր պաշտօնը առանց անախորժ միջադէպի կատարելու համար՝ հանդարտ և մեղմ տոնով՝ ասաց.—

— Այստեղ ե՛ս եմ բանտապետը, յետոյ՝ բանտարկեալը ինձ է հայհոյում. երկրորդ՝ ես ձեր օգնութեան չդիմեցի, և երրորդ՝ չի կարելի բանտարկեալների հետ այդպէս վարուել, մանաւանդ որ սրանք օրէնքով դատապարտուած են:

Այս քաղցր խօսքերի ազդեցութեան տակ, տիրացուներից մէկը, որի հոգին դեղնած տերևի պէս տարուբերւում էր մահուան շնչից և բանտապետը, մոմը ձեռքին, նրան թւում էր հոգեհանգիստ կարդացող մի բարի քահանայ, համարձակութիւն ստացաւ հարցնելու.—

— Բայց մեզ ո՞ւր էք տանում:

— Արդէն ասացի, որ ձեզ տեղափոխում ենք Թիկուռնքը,— պատասխանեց բանտապետը՝ դէմքին աւելի բարութիւն և մեղմութիւն տալով:

— Այստեղ չիմարները չկան,— վրայ բերաւ աւազակներից մէկը,— մեզ տանում էք «մսխելու»...

— Առա՛ջ չարժւեցէք,— հրամայեց բանտապետը:

* * *

Ու բանտարկեալները դոյդ-դոյդ, սղմած իրար, դուրս եկան միջանցքը. իսկ բանտապետը նոյն չհինդով վակեց դուռն այն սենեակի, ուր մահճակալի տակ պահուըտած էր երիտասարդ աւազակը և ուր իշխանուհին լո՛ւռ արտասուում էր մթութեան մէջ և նրա արցունքի կաթիլները ջերմօրէն թափւում էին կօշկակարի պառաւի մահարոյր ճակատին:

XI

Մուքն ու մահը յամրընթաց հետևում էին Տասն և Եօթը մահապարտներին: Նրանք քայլում էին ծանր ու դանդաղ. նրանցից ոմանք արդէն նկուն էին հոգով, մի քանիսը դեռ հրաշք սպասում. ոմանց մէջ ապատւելու յոյսը, վիզը կորած հաւի պէս, տակաւին թպրտում էր, ուրիշներ սոսկալի ծարաւ էին զգում, լիզելով իրենց չորացած քիմքն ու շրթունքները: Ոմանք մտազբաղ էին և տեսիլքի մէջ երազներ տեսնում: Նրանցից չատերին թւում էր, թէ վազում են հև ի հև, բայց չեն կարող մխանների հասնել: Ցաճախ դինուորներից մէկին ու մէկի խիստ սաստումը սթափեցնում էր կալանաւորներին:

— Հասէ՛ք, իրար հասէ՛ք, ետ մի՛ մնաք:

Ու մահապարտները, ամէն անգամ, արիւնի հոտ առած հօտի նման, չտապում էին իրար հասնել, խռնւում իրար, կոխոտում իրար անզգալաբար, ապա՝ կանգ առնում, սպասելով առաջին զոյգի երթին, նորից նօսրանում, դարձեալ կծկւում և այսպէս շարունակ:

* * *

Առաջին երկու զոյգը կազմում էին գործադուլի պարագլուխ չորս բանւորները: Սրանց բանականութիւնը տակաւին իշխում էր զգացումների վրայ, թէև յուսահատութիւնը նրանց մղում էր լիակատար անճնաւորութեան: Աւազ բանւորը, որ նման օրեր չատ էր տեսել, յաճախ սրախօսութիւններով խզում էր նրանց մտահոգութեան թելը և նրանց ուշադրութիւնը ցրիւ էր պահում, որպէսզի մահուան մասին քիչ մտածեն:

Այս չորս բանւորները, իրար ճկոյթից բռնած, հետևում էին առջևից գնացող չորս սուսերամերկ զինուորներին և անպատասխան էին թողնում աւազ բանւորի կատակները:

Թանձր մուքը նրանց դէմքերի արտայայտութիւնը ծածկում էր,— դէմքեր, որոնց վրայ մահը իր վրձինն էր չարժում:

Աւազ ու փորձ բանւորը, տեսնելով որ իր սրախօսութիւնները անպատասխան են մնում, որպէս նշան մտատուգութեան, յուսահատութեան և մահուան սարսափի, բերանը մօտեցրեց իր ճկոյթ բռնած բանւորի ականջին և համարեա անլսելի՝ ասաց.—

— Սրանից ուղիղ տասն և հինգ տարի առաջ, ճիշտ այսպիսի մի մութ գիշեր, չղթայակապ, մեզ Սիբիր էին քշում:

— Բայց պատարանը ձեզ մահուան չդատապարտեց,— ասաց բանւորը:

— Ի՞նչպէս չէ,— ստեց աւազ բանւորը,— կախաղանի վճիռ ստացանք, բայց, չգիտեմ ինչ մեքենայութիւններով, մեզ աքսորի ղրկեցին ճիշտ այն գիշերը, երբ լուսաբացին կախադան պիտի բարձրանայինք:

— Մի՞թէ այդպիսի բան կարող է պատահել:

— Նման դէպքեր սովորական են. ա՛յ քեզ օրինակ մեզ հետ մահուան դատապարտւած սպան, որի վճիռը փոխւեց տա-

սը տարւայ բանտարկութեան: Ինչո՞ւ սպան և ոչ երկու պառաւները, որոնք բանտ մնացին, վոխանակ մեզ հետ լինելու:

— Պառաւները... նրանց գործը ուրիշ է:

— Ո՛չ մի ուրիշ գործ չկայ. բռնակալների նպատակն է սարսափ տարածել, լինի բանտ թէ աքսոր, կախաղան թէ գընդակահարութիւն, պառաւ թէ երիտասարդ:

Այս ասելիս՝ աւազ բանւորը մի քանի անգամ ջերմօրէն սեղմեց իր խօսակցի ձեռքը և շարունակեց.—

— Սիրելիս, այն ժամանակ ես նոյնպէս յուսահատ էի և ինձ թւում էր, թէ ամէն մի կայանում կարող են մեզ կախել. բայց այդ յուսահատութիւնը ինձ համակում էր միայն դիւերները. հէնց որ աղօթարանը բացւում էր, ու ես նայում արևի առաջին ճառագայթներին, կեանքը հոսում էր իմ երակներում, մռայլ մտքերը յօդս ցնդում, ու ես ինձ զգում էի ուրախ ու անհոգ: Հիմա ես նոյն օրերն եմ յիշում:

— Իրաւ թէ մութի մէջ մարդս լրջանում է,—նոյն վըստահութեամբ պատասխանեց կրտսեր բանւորը:

— Շատ ճիշտ ես,— հաստատեց աւազ բանւորը,— մարդու հետ այդպէս է պատահում մէկ մութի մէջ, մէկ էլ՝ պէտքարանում: Բանւորը դուսպօրէն ծիծաղեց:

Աւազ բանւորը, խրախուսած իր յաջողութիւնից, երես ետ դարձրեց և նոյն կատակը կրկնեց միւս դոյդ բանւորների, բայց սրանք, վոխանակ ծիծաղելու, պահեցին լրենց լռութիւնը և, որպէսզի զգացնել չտան դառն յուսահատութիւնը, նրանցից մէկը գլուխը երկարացրեց աւազ բանւորի ուսին ու հանդարտ տոնով հարցրեց.—

— Հիմա ժամը քանի՞սը կը լինի:

— Կէս գիշերը անց է,— պատասխանեց աւազ բանւորը:

— Աղամայ մութն է:

— Արշալոյսը դեռ շատ հեռու է:

Ապա՝ աւազ բանւորը իր ազատ ձեռքը երկարեց ետև և խարխափելով բռնեց հարցատու բանւորի ձեռքը:

* * *

Այս երկու դոյգին հետևում էին տէրտէրն ու գիւղացին: Տէրտէրն ալ ձեռքով խաղում էր իր լանջախաչի հետ,

սպանիչ լռութեամբ: Նա այժմ քրքրում էր իր անցեալը, մի լուսաւոր կէտ գտնելու դուր ճիգով: Նա ապրել էր կեղծիքի և խաբեբայութեան մէջ, արել էր այն, ինչ որ անում են բոլորը:

Միակ մխիթարական կէտն այն էր, որ քահանայ ձեռնադրելուց շատ առաջ, երբ դեռ պատանի էր, իր տատն և աստւածավախ մօր ազդեցութեան տակ, անկասկածելի էր գտնում Աստուծոյ գոյութիւնը: Հաւատում էր, որ նա ստեղծել է երկինքն ու երկիրը և նրանց մէջ եղած ամէն բան, հաւատում էր նոյնպէս, որ կան բարի ու չար ոգիներ, գոյութիւն ունի Արքայութիւնն ու Դժոխքը, ինչպէս և հանդերձեալ կեանքը: Սակայն, քահանայ դառնալուց յետոյ, այս ամենը նրա համար կորցրել էին լրենց նշանակութիւնը. և այդպէս սիստեմատիկ ապրել ու գործել էր ամբողջ քառասուն տարի: Աստուծոյ մասին նա ոչ մի նոր պատկերացում չէր ստեղծել, քան այն, ինչ որ մնացել էր մանկական յիշողութիւնից:

Ծիրանի հագած մի ծերունի, երկար, վառահեղ, սպիտակ մէրուքով, բազմած ամպերի մէջ և շրջապատած հրեշտակների դունդերով,— մի Աստուած, որին նա տեսնում էր միայն խորանի ճակատին և եկեղեցու պատերին:

Այժմ, մահուան ճանապարհին, տէրտէրը, նորից ու նորից վերյիշելով այս բոլորը, հայհոյում էր Աստծուն իր մըտքում ու չէր վախենում:

— Ի՞նչ ես մտածում, տէ՛րտէր,— ասաց գիւղացին կամաց ձայնով:

— Ո՛չինչ, զաւակս, մեծ է Աստուածը, նա մեզ հետ է:

— Փա՛ռք նրա զօրութեան, բայց մեղաւոր եմ, տէ՛րտէր,— ասաց գիւղացին խղճալի ձայնով:

— Հաւատա՛, զաւակս, հաւատքը փրկարար է:

— Բայց մեղաւո՛ր եմ, տէ՛րտէր, մեղաւո՛ր,— նորից կրկնեց գիւղացին:

— Ջրհեղեղը իր արիւնով մաքրեց մեր մեղքերը,— պատասխանեց քահանան, միշտ խաղալով լանջախաչի հետ:

— Մեղաւո՛ր եմ, տէ՛րտէր, բայց այս գործով անմեղ եմ:

— Աստուած իր սիրածներին և հաւատացեալներին կը

պատժէ, իսկ մեղաւորներին և չարերին կը ներէ. այդպիսով նա կը փորձէ առաջիններին և դարձը կը բերէ երկրորդներին:

— Օրհնուած լինի Նրա կամքը,— ասաց դիւղացին՝ անհուն մխիթարանքով:

Քահանան լռեց, իսկ դիւղացին սկսեց երազել:

* * *

Տէրտրոջ ու գիւղացու եռևից գալիս էին տիրացուները: Ձեռքերը հիւսած փորին, անխօս քայլում էին, միշտ աշխատելով խուսափել գինուորների սաստումներից: Առջևից կամ եռևից լսուղ ամէն մէկ չշուկը լսում էին սարսափով և իրար սեղմւում: Նրանք ճգնում էին մի բառ, մխիթարական մի խօսք լսել, որ իրենց դուրս հանէր երկմտութիւնից: Ու երբեք չկարողացան ճշտել թէ մահա՞ն են գնում, աքսո՞րի, թէ տեղափոխւում ուրիշ բանտ:

Սպայի անջատումը և պառաւների բանտ մնալը նրանց պահում էր չփոթութեան և անորոշութեան մէջ: Այդ էր պատճառը, որ տէրտրոջ ու գիւղացու կարճ խօսակցութիւնը նրանք ունկնդրում էին լարուած ուշադրութեամբ, երբեմն կրնկակոխ մօտենում նրանց, բայց գինուորների քայլերը և նրանց պայտերի աղմուկը խլացնում էր ամէն բան:

Տիրացուներից համեմատաբար աւելի տոկունն ու սրտոտը կարողացել էր միայն մի քանի բառ լսել.— Աստուած, Քրիստոս, մեղաւոր, հաւատք և փրկութիւն:

Երբ տէրտէրն ու գիւղացին լռեցին, նա դիմեց վախկոտ տիրացուին և գգուշաբար հարցրեց.—

— Ի՞նչ լսեցիր:

— «Արիւն» խօսքը ականջիս շատ էր ընկնում,— պատասխանեց վախկոտը:

— Ի՞նչ արիւն, ի՞նչ բան. գիւղացին խոստովանում էր, իսկ տէրտէրը հաւատքի ու փրկութեան մասին խօսում,— ասաց սրտոտ տիրացուն:

— Ուրեմն... մենք ո՞ւր ենք գնում,— հարցրեց վախկոտ տիրացուն՝ բռնելով ընկերոջ թևը:

— Ի՞նչ ես անում, ա՛յ մարդ, քեզ լա՛ւ պահիր, երեխայ հօ չես, ինչի՞ ես դողում,— ասաց սրտոտը՝ համարեա քարշ տալով վախկոտ տիրացուին:

— Ծնկներս ծալւում են, չեմ կարող:

Քիչ յետոյ գինուորները նրան դուրս բերին մահապարտների շարքից և նրա թևերից բռնած տանում: Տիրացուն անվերջ օրօրւում էր նման հարբածի, ու նրա ծնօտը ծեծում էր կուրծքը:

* * *

Մի չշուկով մահապարտները իրար փոխանցեցին տիրացուի ուշաթափութիւնը.— «Ցխսուն և ութը ժամ ոչինչ չէր կերել»:

— Մարդկային խիղճը մեռել է, պառաւս բանտում մահամերձ, այստեղ մարդիկ են մեռնում, բայց էլի մեզ չարչարում են,— նկատեց կօշկակարը:

— Անիծած լինի մարդը,— խօսեց վարժապետը, որ քայլում էր կօշկակարի կողքին,— մարդը՝ մարդուն գայլ,— ասում է լատինական առածը:

— Գայլը, որ կշտանայ, անվտանգ է, իսկ մարդը, կուշտ թէ քաղցած, վտանգաւոր է,— ասաց կօշկակարը՝ շատ հաւանելով իր խօսքին:

— Ճշմարիտ է,— հաստատեց վարժապետը, և ուզում էր լռել, երբ կօշկակարը հարցրեց.—

— Իմաստուն մարդ ես, վարժապե՛տ, ասա՛, մեզ ո՞ւր են տանում:

— Եթէ սրանց խօսքին հաւատանք, մեզ տեղափոխում են ուրիշ տեղ, իսկ իմ ներքին ձայնը, որ ինձ բնաւ չի խաբել, այլ բան է ասում,— պատասխանեց վարժապետը՝ կոտրած ու յուսահատ ձայնով:

Վարժապետը սպասում էր, որ կօշկակարը անհամբեր հարցնի.—

«Իսկ ի՞նչ է ասում ձեր ներքին ձայնը»:

Փոխանակ այս հարցի՝ կօշկակարը խորհրդաւոր եղանակով հարցրեց.—

— «Պատրա՞ստ» ես, վարժապե՛տ, հաշիւներդ մաքրե՞լ ես այս անցաւոր ու փուճ աշխարհի հետ:

Վարժապետը սարսռեց, ցնցեց ուսերը և ինքն իր մէջ բարկացաւ. զգաց, որ կօշկակարն իրեն ուղիղ էր հասկացել, և, որպէսզի կարականապէս ժխտի այդ դառն ճշմարտութիւնը, ասաց.—

— Իմ պատասխանի և ձեր հարցի մէջ տրամաբանական կապ չկայ. ես ուրիշ բան եմ ասում, իսկ դուք տարբեր բան հասկանում. դա լեզուական սխալ է:

— Տպէտ մարդիկ ենք, վարժապետ, չատ բարակ մի՛ մանէք:

— Այդպէս մի՛ ասէք, բար՛բեկամ, ամէն բան իր օրէնքն ու կանոնն ունի: Իմ ամբողջ դասը հիմնուած էր քերականական մի պտիկ սխալի վրայ. եթէ ինձ ուղիղ հասկանային, ես այս վորձութիւնից ազատուած էի:

Կօշկակարը ուզում էր իր հարցը կրկնել, բայց ենթադրելով, որ վարժապետը կարող է նորից առարկել, բարւոք համարեց լռել:

* * *

Զարաչահն ու հաստափոր հիւանդը միասին էին քայլում: Նրանք չէին խօսում:

Զարաչահը աշխատում էր իր կողքի գինւորի հետ բարեկամանալ, բայց նրա բոլոր փորձերը անյաջող էին անցել: Գինւորներին խստագոյնս արգելւած էր կալանաւորների հետ զրուցել:

Սակայն, չարաչահը յուսահատ չէր: Նա գիտէր, որ լոկ խօսակցութեամբ բարեկամանալ ապարդիւն է. մտածում էր գինւորին մի քանի արծաթ տալ, բայց խոհեմութիւն էր համարում դրամը խնայել աւելի կարևոր ծանօթութեան և նեղ պարագայի համար. ուստի նա բաւականացաւ գինւորին միայն ծխախոտ առաջարկելով:

Գինւորը լռեց ի պատասխան համաձայնութեան:

Զարաչահը անմիջապէս հանեց ծխատուփը և երկու սիգար մեկնեց գինւորին:

Գինւորը խարխափելով վերցրեց սիգարները և զգուշութեամբ ասաց.—

— Մխելն արգելւած է:

— Ափիդ մէջ ծխի՛ր,— պատասխանեց չարաչահը՝ նոյն զգուշութեամբ:

Գինւորը կեղծ հազալով փակեց խօսակցութիւնը, իսկ չարաչահը ափի մէջ վառեց լուցկին ու ագահութեամբ սկսեց ծխել:

— Մխի՛ր, էլի ունեմ,— նկատեց չարաչահը՝ քաջալերւած գինւորի թուլութիւնից:

— Հասէ՛ք, իրար հասէ՛ք,— հրամայեց գինւորը՝ միաժամանակ վերցնելով չարաչահի վառած սիգարը:

Զարաչահը զղջունավարի փոխանցեց սիգարը և մեծ բաւականութեամբ վերստին ետ ստացաւ:

Հաստափոր հիւանդը գիտէր իր ուղեկցի մտաղրութիւնը և անհամբեր սպասում էր խօսակցութեան վախճանին:

Զարաչահը այժմ իրեն համարձակ էր զգում ուղղակի գործի անցնելու, բայց չգիտէր, ի՞նչպէս և ի՞նչ հարցով սկսի:

Փոքր ընդմիջումից յետոյ, նա մի քանի անգամ հազաց, սկսեց աղմուկով քայլել, որպէս թէ ուժասպառ է, թուքը կուլ տւեց, բերանը չփչփացրեց, ի նշան ծարաւութեան, և աւելի մօտենալով գինւորին՝ ասաց.—

— Սարսափելի ծարաւ եմ, չուտ տեղ հասնէինք, մի քիչ ջուր խմէի:

— Իսկ ես քաղցած եմ,— նկատեց գինւորը՝ փոխանակ «չուտ կը հասնենք» պատասխանելու:

— Երևի հեռու տեղ պիտի գնանք, այնպէս չէ՞:

— Մի քանի վայրկեանից կը հասնենք,— պատասխանեց գինւորը:

— Ուրեմն քաղաքո՞ւմ պիտի մնանք,— հարցրեց չարաչահը՝ մօտենալով իր կէտ նպատակին:

— Քաղաքում, ի հարկէ:

— Բայց ինչո՞ւ են տեղափոխում,— հարցրեց չարաչահը՝ այս անգամ աւելի կամաց և զգուշաւոր:

— Գլի՛տեմ, էլ մի՛ խօսէք,— պատասխանեց գինւորը՝ իր ուսը կալանաւորի ուսին տւած և բերանը՝ համարեա նրա ականջին:

— Ի՞նչ է ասում,— հարցրեց հաստափոր հիւանդը՝ տեսնելով, որ խօսակցութիւնը ընդհատւեց:

— Այստեղ պիտի մնանք։

— Բայց ինչո՞ւ են տեղափոխում։

— Չգի՛տեմ, էլ մի՛ խօսէք,— պատասխանեց չարաշահը՝ ինքնաբերաբար կրկնելով գինուորի խօսքերը։

— Աւելի՛ բարեկամացիր, մեզ պէտք կը գայ,— նկատեց հաստափոր հիւանդը։

— Մի՛ խօսիր, համբերի՛ր։

Հիւանդը երեսը խաչակնքեց՝ վստահ իր ուղեկցի կարողութեան, քիթը վեր քաշեց աղմուկը շատացնելու և իրենց փախուստը ուրիշների ուշադրութիւնից վրիպեցնելու մտահոգութեամբ, ապա՝ սկսեց նոր թափով քայլել։

* * *

Երկու աւազակները կազմում էին մահապարտների վերջին զոյգը։

Նրանք հաստատ հաւատում էին, որ իրենց տանում են գնդակահարութեան. համոզուած էին նոյնպէս որ, եթէ նոյնիսկ ներման հրաշք պատահի, իրենք ներում և փրկութիւն չունեն։

Սակայն, նրանց ուժեղապէս օրօրում էր այն յոյսը, որ իրենք, անգամ վերջին րոպէին, կարող են և ընդունակ փախչելու փորձ կատարել՝ ազատուելով կամ մեռնելով փախուստի ճանապարհին։ Այս պատճառով նրանց կամքն ու միտքը ջլատուած չէր, ու նրանք մտածում, խորանում էին միմիայն այս ուղղութեամբ։

Պարագաները նպաստաւոր էին նրանց համար։ Մութ, անտեսանելի գիշեր, անշղթայ, անկապ։

Աւազակները հաւատացած էին, որ նման գնդակահարութիւնները կատարւում են քաղաքից դուրս, լուսաբացին և որոշ ձևականութիւններով. հետևաբար նոյնը պիտի կատարւի և իրենց հետ, քանի որ օրինական ճանապարհով են մահավճիռ ստացել։

Քաղաքում փախչելու փորձը համարում էին վտանգաւոր, որովհետև ամէն փողոցի անկիւն պահակներ կային, ինչպէս և լսում ձիերի դոփիւնը հեռաւոր փողոցներից. զգում

էին, որ պահակութիւնը խիստ ուժեղացուած է։ Քաղաքի տըներն ու փողոցները նրանց թւում էին մէկ-մէկ ծուղակներ. շարժւելու և վազելու ազատութիւնը սահմանափակուած էր. իսկ ընդհակառակը, քաղաքից դուրս, լայնարձակ դաշտերում և անտառներում, ուր նրանք երկար ժամանակ հարուածող «կանաչներ» էին, իրենց զգում էին այնպէս, ինչպէս ձուկը ջրի մէջ։

Աւազակները անհամբեր էին։ Նրանք ցանկանում էին գնդակահարութեան վայրը հասնել նախ քան լուսանալը, աղամամութին կամ մթնաշաղին։ Ճանապարհի ամէն մէկ յապաղումը նրանց ջղայնացնում էր. ու նրանք, բիրտօրէն, յաճախ խուփ էին տալիս իրենց առջևի զոյգին, կոխոտելով նրանց գարշապարները և կամ գլուխը նրանց կռնակին զարնելով։

Չարաշահի և հաստափոր հիւանդի բողոքներին՝ նրանք միշտ միևնոյն պատասխանն ունէին.—

— Մեզ էլ են կոխկրտում, ետ մի՛ մնաք։

Ու մահապարտների օղակը, աւազակների մղումով, երբեմն կծկւում էր, խտանում, բայց միշտ մնալով պահակների միօրինակ շղթայի սահմանում։

* * *

Վերջապէս, պահակները կանգ առան քաղաքի անբանուկ փողոցներից մէկում, ուր կանգնած էր եռյարկանի մենաւոր մի տուն։

Առանց ազդանշանի տան դուռը բացւեց ու մահապարտները ներս մտան։

Այդ տունը Չեկայի գրագրութեան մէջ յայտնի էր «Մահւան Նաւը» անունով. վերջին կայան, ուր, մարդիկ, վաղ թէ ուշ, անխուսափելի կերպով մահ պիտի գտնէին։ Դրա համար էլ նոյն հիմնարկութեան գրագրութիւնների մէջ, մահապարտներին «մխուած» էին համարում, փոխանակ «թեկնածուների»։

Այստեղ էին սպանւում ամենածանր յանցագործները. ինչպէս, օրինակ, արդարութիւնից ճառող միամիտներ, ազատութեան մասին խօսող անխոհեմներ, արիւնի դէմ բողոքող յիմարներ, խաղաղութեան և կուլտուրայի կղմնակից մտաւո-

բականներ, ինչպէս նաև պետական պաւաճաններ, գողութեան վարժ ստահակներ, խառնակիչ–լրտեսներ, մամոնայի երկըրպագու չարաչահներ և հուսկ ուրեմն դրամանենգներ։

Մահապարտները նոյն կարգով առաջնորդւեցին տասներկու աստիճան ցած իջնող մի ներքնայարկ։

Առաջին և ընդարձակ սենեակը, ուր նրանք չունչ առին, հռչակաւոր «սպասարանն» էր, որտեղից զոհերը կանչւում էին բուն սպանդանոցը, իսկ այս վերջինը, իր կարգին, երեք աստիճանով ցած էր սպասարանից և անդուռ։

Ծարպամոմը աղօտ լուսաւորում էր սպասարանը․ անկիւններից մէկում գետեղւած էր հաստ խողովակով վառարան։ Այս սենեակի մէջ բացւում էր մի այլ դուռ, որի ճակատին կարմիր և խոշոր տառերով գրւած էր․—

«Կարգադրիչ»։

Այս խորհրդաւոր տան բոլոր պաշտօնեաները, հասարակ պահակից սկսած մինչև Կարգադրիչը, անսեթևեթ էին, դաժէկ, կոպիտ ու բիրտ։ Երկու զինուոր, կանգնած դրան վրայ, տանձ էին ուտում և կատակներ անում։

Մահապարտները թափւած էին յատակին։ Զորս բանւորները պպզել էին մի անկիւն։ Տկար տիրացուն ընկած էր երեսի վրայ և հազիւ շնչում․ նրա բերնից դեղին ջուր էր հոսում։ Իսկ ոմանք, յարմար տեղ չգտնելով՝ մնում էին ոտքի վրայ։ Աւազակները յուսախաբ էին։ Վարժապետը ջղայնօրէն երթևեկում էր։ Գիւղացին նստած էր քահանայի կողքին և աշխատում էր նրան մի չասւած բան, մի գաղտնիք յայտնել, բայց զգուշանում էր միւսների ուշադրութիւնը գրաւել։

Լռութիւնն ու սպասումը հիւսւած իրար, ճնշում էին օդը։

Խոնաւութիւն ու գարշահոտութիւն ուղխօրէն զարնում էր բոլորի քթին։

Լռւթիւնը սպանիչ էր։

* * *

Զարաչահը, ըստ իր սովորութեան, մօտեցաւ պահակներին և կամաց ձայնով ասաց․—

— Տանձի վրայ մէկ–մէկ ծխախոտ։

Զինւորները վերցրին ծխախոտը և նրանցից մէկը ճըզմեց սիգարի պոչը, վառեց և ասաց․—

— Լաւ թութուն է։

— Ընտիր ծխախոտ է,— պատասխանեց չարաչահը։

Զինւորները ինքնաբաւական ծխում, և ամէն անգամ ծուխը բաց թողնելով՝ դունչերը վեր բարձրացնում, խաղալով քուլաների հետ։

— Բերանս չորացած է,— նորից խօսեց չարաչհաը,— այստեղ ջուր կա՞յ։

Պահակները իրար նայեցին, և նրանցից մէկը պատասխանեց․—

— Այստեղ ջուր չկայ, իսկ բերելու համար վեր չենք կարող բարձրանալ՝ պաշտօնի վրայ ենք։

— Շա՛տ ծարաւ եմ,— կրկնեց չարաչահը, խղճալի ձայնով։

— Մի քիչ համբերեցէք, հիմա կարգադրիչը կը գայ։

— Բայց մեզ ինչո՞ւ են այստեղ բերել,— հարցրեց չարաչահը, վստահ զինւորների բարեացակամութեան։

Պահակներից իւրաքանչիւրը այդ հարցի պատասխանը թողեց միւսի վրայ։ Իսկ չարաչահը, աւելի հետաքրքրութեամբ, նորից հարցրեց․—

— Մեզ ինչո՞ւ են այստեղ բերել, չեմ հասկանում։

— Աստւած վկայ, չգիտենք․ հիմա «կարգադրիչը» կը գայ։

— Երկա՞ր պիտի մնանք այստեղ։

— Չէ՛, այստեղ բանտարկեալներին երկար չեն պահում․ բայց հիմա կառավարիչը կը գայ… չգիտեմ, ինչո՞ւ այսքան ուշացաւ,— ասաց պահակը ականջ դնելով դուրսից լսւող ձայնին։

— Ոտնաձայն է լսւում, մարդ է գալիս։

— Անցէ՛ք ձեր տեղը,— խստօրէն հրահանգեց զինւորը՝ խօսքը չարաչահին ուղղելով։

Եկողը կարգադրիչն էր, թիկնապահով։

Մահապարտները, կեր սպասող անասունների պէս, անմռունչ, ակնապիշ նայեցին դէպի դուռը։

Ծաղկատար, անբեղ, անմիրուք և միջահասակ մի մարդ

էր կարզադրիչը: Անսպառ եռանդ կար նրա չարժուձևերի մէջ: Ներս մտնելով, մի ակնարկով դիտեց մահապարտները և դառնալով պահակներին՝ հարցրեց.—

— Բոլորը այստե՞ղ են:

— Բոլորը,— պատասխանեց պահակներից մէկը:

— Տասն և չո՞րս:

— Տասն և չորս:

— Շա՛տ լաւ:

Ապա՝ կարզադրիչը գրպանից հանեց թուղթ ու մատիտը, ինչ որ բան գրեց և տալով պահակներից մէկին, ասաց.—

— Ի սէր Աստուծոյ, այս տոմսակը հասցրէք Պորֆիրիին կամ Անդրիւշկային: Զարմանալի մարդիկ, դիտեն, որ այսօր «գործ» կայ և չեն երևում:

— Իսկ եթէ տանը չլինե՞ն:

Զելակովին հարցրէք:

— Եթէ այնտեղ էլ չլինե՞ն:

— Տոմսակը հասցրէք Ազարէկովին. նա հեռախօսով կը գտնի:

— Շա՛տ լաւ,— ասաց գինուորը և աչխոյժ չարժուձով վեր բարձրացաւ:

Կարզադրիչը մահապարտների միջով անցաւ իր սենեակը, ուր հագիւ մի սեղան և մի աթոռ պարունակող տեղ կար. բաց արաւ դարակը, վերցրեց սևակող տետրակը և գլուխը մի քանի անգամ քերելով՝ գրեց.—

«Տասն և եօթը մահապարտներից միայն տասն և չորս հոգի գնդակահարեցին այս գիշեր»:

Վերջացնելով գործը, կարզադրիչը հապճեպ ոտքի կանգնեց և խօսքը մահապարտներին ուղղելով՝ ասաց.—

— Պարոննե՛ր, պատրաստուեցէք: Ով ինչ ունի գրելու իր ընտանիքին, հարազատներին կամ բարեկամներին, թո՛ղ գրի: Եթէ գրամ ունէք և թանկարժէք իրեր, նոյնպէս յանձնեցէք: Անուններ և ազգանուններ պարզ գրեցէ՛ք: Թուղթ ու մատիտ չունեցողները կարող են ստանալ:

Ի պատասխան կարզադրիչին, մահապարտներից դիւղացին, դողդոջ ու երկիւղած ձայնով՝ ասաց.—

— Աղօ՛ր թիր, Տէր-Հա՛յր:

Ու մահապարտները, կախարդական մէկ չարժումով և միասնաբար, ծունկի եկան:

— Աստուա՛ծ, օգնիր մեզ,— հազիւ արտասանեց քահանան, և նրա հետագայ խօսքերը խեղդուեցին արցունքի մէջ:

* * *

Դահիճ Պորֆիրին եկաւ: Ինչպէս միշտ, այս անգամ էլ կոնծած էր, բայց սովորականից աւելի քիչ, որովհետև դեռ ցերեկը նրան յայտնած էր, որ «գործ» ունի:

Ներս մտնելով՝ նա մի ակնարկ ձգեց մահապարտներին, որոնք կիսամեռ, անխօս ու գլխիկոր խոկում էին. յօնքերը վեր նետեց, հեղնական ժպիտով նայեց պահակ գինուորներին և բարձրաձայն ասաց.—

— Հանուեցէ՛ք, պարոններ:

— Հանուեցէ՛ք,— կրկնեց կարզադրիչը:

— Ինձ կանչում էք, բայց դեռ պատրաստ չէք,— նկատեց դահիճը՝ խօսքը կարզադրիչին ուղղելով:

Կարզադրիչը, քմահաճոյք տանող մարդու համբերութեամբ և հարկաւոր մարդու չվշտացնելու փափկանկատութեամբ, ժպտաց և մեղմ տոնով ասաց.—

— Ուզած վայրկեանիդ «մարդ» կը ստանաս: Ես արդէն կարզադրած եմ, որ պատրաստ լինեն:

— Շա՛տ լաւ, տեսնենք,— ասաց դահիճը՝ խորապէս գգալով իր և իր «գործ»ի կարևորութիւնը:

Այս ասելիս, նա դանդաղօրէն վար իջաւ երեք աստիճաններից և մտնելով սպանդանոցը, վառեց ճարպամոմը, կապեց արիւնաներկ և կաշիի չափ կարծրացած գոգնոցը, վերցրեց «Գոլտ» տարճանակը և վառելով ծխախոտը, սպասեց առաջին գոհին:

Մահապարտները տենդագին հանուում էին: Նրանցից իւրաքանչիւրը ուզում էր առաջինը մերկանալ: Ոմանք ջղային դրգիռի ազդեցութեամբ այնքան էին աճապարում, որ կօշիկի կապերը, կոճակները, գօտին և այլ կապանքներն արձակելը դարձել էր նրանց համար հանելուկ. ամէն բան խառնուում էր և նրանց թուում, թէ դանդաղ են մերկանում. բայց իրօք նրանք

արագ էին հանում, աւելի արագ, քան մարդկային արտա–րանքը պահանջում է։

Մահապարտներին դիտողը այն տպաւորութիւնն էր ըստանում, թէ նրանցից ամէն մէկը կամենում է առաջինը մեռնել. բայց երբ բոլորը մերկացան, և կարգադրիչը հրամայեց, որ նրանցից մէկը գնայ, ոչ միայն տեղից շարժուող չեղաւ, այլ, ովքեր մօտիկ էին կանգնած սպանդանոցի երեք աստիճաններին, ետ-ետ քաշուեցին և խտացան սենեակի հակառակ կողմը։

— Ի՞նչ է, կատա՞կ էք անում,— բարկացաւ դահիճը՝ գլուխը սպանդի դռնից երկարելով։

Կարգադրիչը, դահիճի խօսքերը իր հասցէին ուղղուած համարելով, դիմեց երկու զինուորներին ասելով՝

— Չե՛ն ուզում կամովին գնալ, զօրով տարէ՛ք։ Վերցրէ՛ք այս մէկը, որ ընկած է յատակին՝ հիւանդ ձեւանալով։

Զինուորները րոպէապէս վերցրին տիրացուին և զգացին, որ գործ ունեն դիակի հետ։

— Մե՛ռած է,— ասաց զինուորներից մէկը, իր հոգում հրճուելով, որ կարգադրիչը անարդար է։

— Ողջ թէ մեռած՝ մէկ է. պէտք է գնդակահարել։ Քաշեցէ՛ք այստեղ,— ասաց դահիճը՝ կանգնած նոյն դիրքի մէջ։

Երբ տիրացուի դիակը հասաւ դահիճին, սա զայրացած բռնեց մեռեալի ճտից և ներս շպրտեց նրան, որից յետոյ լըսուեց ատրճանակի առաջին պայթիւնը և դահիճի կատաղած ձայնը.—

— Հետեւեալը։

— Հետեւեալը, պարոննե՛ր,— կրկնեց կարգադրիչը,— զարմանալի մարդիկ էք, մէկ վայրկեան ուշ կամ շուտ, միեւնոյն է բոլորդ պիտի «գնաք», ի՞նչ էք սպասում։

Սակայն, բանտարկեալները ոչինչ չէին լսում. նրանք սրտատրոփ սպասում էին, թէ զինուորները որի՞ն պիտի տանեն։ Զարաշահը անթարթ ու հայցական նայում էր զինուորներից մէկին, որի հետ խօսել էր, ծխախոտ տուել և այժմ օգնութիւն էր սպասում. բայց զինուորը տհաճութիւն էր զգում նրան տեսնելիս, և նրա աղերսական հայեացքից ազատուելու

համար, աչքերը յառեց գետին և բռնելով չարաշահի թեւը. ասաց.—

— Ի զուր է սպասել, գնացէ՛ք։

— Մի քիչ սպասեցէք. ինձ ներում պիտի գայ,— ասաց Զարաշահը՝ անյոյս լիզելով շուրթերը և հետեւելով զինուորին։

Ներս մտնելով սպանդի սենեակը՝ Զարաշահը ուզում էր նորից կրկնել իր խօսքը, բայց գնդակը ցրիւ տուեց նրա գանկը։

— Հետեւեալը,— նորից լսուեց դահիճի խռպոտ ձայնը։

Ու մահապարտներից վարժապետը առաջին մարդն էր, որ ինքնակամ առաջ եկաւ, ձեռքի թուղթը մեկնեց կարգադրիչին, հանդարտօրէն վար իջաւ երեք աստիճաններից ու, երբ դահիճը նրան տեսաւ, բացագանչեց.—

— Բրա՛ւօ։

— Ինձ սպանի՛ր, բայց դէմքս չայլանդակես,— ասաց վարժապետը, կրօնաւորի խորհրդաւորութեամբ ձեռքը բարձրացնելով։

— Այստեղից կը զարնեմ,— ասաց դահիճը ժպտալով և ատրճանակի փողը վարժապետի սրտին դնելով։

Վարժապետը աչքերը ամուր փակեց, իսկ դահիճի գընդակը ծակեց զոհի աչքը և ծոծրակից դուրս եկաւ։

Վարժապետի օրինակին հետեւեց նաեւ քահանան։ Նա փառահեղ էր։ Երկար միրուքը իջնում էր շապիկի վրայ և նրա տակից երեւում արծաթ լանջախաչը՝ ոսկի նուրբ շղթայով։ Նրա դէմքը գունատ էր, բայց անդորր, սուրբի տեսք ունէր։

Երբ քահանան հանդարտօրէն առաջ եկաւ և ուզում էր սանդուխներից իջնել, տիրացուն շտապեց նրա ականջին փըսփըսալ.—

— Միասին լինենք, տէ՛ր հայր։

— Հե՛տեւիր ինձ,— ասաց քահանան, բոլորովին լսելի ձայնով։

— Նրանցից յետոյ ես եմ,— ասաց գիւղացին՝ խօսքը կարգադրիչին ուղղելով։

Վերջինս գլխի դրական շարժումով պատասխանեց։

Տէրտէրն ու տիրացուն միասին դիմաւորեցին դահիճին։

Զնայած, որ քահանան աւելի առաջ էր կանգնած, բայց

դահիճը տիրացուին սպանեց և դառնալով քահանային՝ ասաց.—

— Աչդ արձակի՛ր, ախ՛րտէր:

Քահանան, փոխանակ չղթան արձակելու, վզից հանեց լանջախաչը, յանձնեց դահիճին, խաչակնքեց նրա երեսը և աչքերը յառած դէպի երկինքը՝ ասաց.—

— Տէ՛ր, ների՛ր սրան:

Գիւղացին սեմին կանգնած էր, երբ քահանան ծալուեց ոտքերի վրայ և ընկաւ:

— Առաջ ե՛կ,— հրամայեց դահիճը:

— Աստուա՛ծ քեզ պատժի,— ասաց գիւղացին՝ ծունկի գալով:

Դահիճը նախ՝ ատրճանակի կոթով հարուածեց գոհին, գետին գլտորելով, ապա՝ հրացէնի փողը դնելով գիւղացու ականջին՝ երկու անգամ կրակեց:

Սակայն, դահիճը, փոխանակ «հեռևեալը» կանչելու, բղաւեց.—

— Սպասե՛լ:

Նստեց անկիւնի աթոռի վրայ, հանեց ծխատուփը, վառեց ծխախոտը և, որպէսզի զգացնել չտայ, որ ինքը արտասովոր յոգնածութիւն է զգում, սկսեց ատրճանակը լեցնել՝ աւելորդ աղմուկով: Նա մոռացել էր գիւղացու անէծքը, բայց տէրտէրոջ խօսքերը ասեղի պէս ծակում էին նրա սիրտը: Մտասուզեց...

Ծերունի կօշկակարը, կանգնած եռաստիճան սանդուխի գլխին— հերթի էր սպասում. նա ափսոսում էր, որ տէրտէրոջ ու տիրացուի հետ մեռնելու առիթը վախցրել էր. գիւղացուն երանելի էր դանում: Հիմա ուզում էր առիթից օգտուել, բայց դահիճի լռութիւնը անհանգստացնում էր նրան: Նա ուշադիր ունկնդրում էր լսելու մահուան կանչը, բայց, անվստահ իր լսողութեան, յաճախ նայում էր կարգադրիչին և գինուորներին՝ ստուգելու դահիճի հրաւէրը: Նրանք նոյնպէս սպասում էին:

Միւս մահապարտներից չորս բանւորները, որոնք սկզբից և եթ տեղ էին բռնել սպասարանի անկիւնը, վառարանի խողովակի տակ, ուր աւելի մութ էր, ծրագրում էին գիմադրու-

թիւն ցոյց տալ և յետոյ մեռնել, սակայն նրանց մէջ համաձայնութիւն չկար: Նրանցից երկուսը ապարդիւն էին դանում այդ, առարկելով, որ վայրկենական մահը կարող է խոչտանգի փոխուել. յետոյ վճռեցին ցոյց կատարել բացագանչութիւններով, հէնց որ հերթը իրենց հասնի. ապա՝ որոշեցին երգել և երեք անգամ կրկնել «Մէջադայնականի» հետևեալ յանկերգը.—

«Սա մեր վերջին և վճռական կռիւն է»:

Աւագ և փորձ բանւորը լսում էր իր ընկերներին և գլխով հաւանութիւն տալիս. նա ուրախ էր ճևանում, չատ քիչ էր խօսում և իր անելիքը որոշ էր:

«Այդ մասին» նա իր ընկերներին ոչինչ չյայտնեց: Միայն նկատելի էր, որ հանւելուց յետոյ մի չա նստած էր ձախ ձեռքը չապիկի տակ պահած: Մերթ ընդ մերթ, երբ միւս բանւորները կանգնում էին կամ հետաքրքրւում գնացողներով, աւագ բանւորը կիսով չափ դառնում էր դէպի պատը և աջ ձեռքի ցուցամատը չարժում պատի վրայ:

Վերջապէս, նորից լսուեց դահիճի ձայնը.—

— Հետևեալը:

Կօշկակարը փշաքաղուած մազերով վար իջաւ և տեսնելով դահիճին՝ ասաց.—

— Զա՛ւակս, խնդիրս կատարի՛ր:

Դահիճը, որի դէմքի վրայ մեղմութիւն և կարեկցութիւն կար, հարցրեց.—

— Ի՞նչ է խնդիրդ:

— Թո՛ղ որ ուզածս ձևով պատկեմ, յետոյ սպանիր:

Դահիճը տարօրինակ նայեց ծերունին, գլուխը չարժեց, աչքերը կքեց ու ասաց.—

— Պատկի՛ր, ոնց ուզում ես:

Ծերունին նայեց դէմքերին, որոնք անկարգ քաշուած էին իրար վրայ, նայեց յատակին, որ ամբողջապէս արիւն էր, մի չոր և անարիւն տեղ դտաւ, նստեց, երիցս խաչակնքեց երեսը, պառկեց կռնակի վրայ, ձեռքերը խաչեց կրծքին ու աչքերը դանդաղ փակեց...

— Հետևեալը,— նորից լսուեց դահիճի ձայնը:

Երկու աւագակները վճռական քայլերով առաջ եկան և

ուզում էին միասին իջնել, բայց կարգադրիչը երկրորդին կանգնեցրեց ասելով.—

— Մեկ-մեկ, մեկ-մեկ:

Ու այդպես եղավ:

— Շո՛ւն,— լսվեց սպանդանոցից:

Բայց ատրճանակի երկու պայթյունը խեղդեցին զոհի մյուս խոսքերը:

Երկրորդ ավազակը հարձակվեց կարգադրիչի վրա և բռնեց նրա վիզը, բայց զինվորի սվինը նրան վայր գլորեց:

Այդ աղմուկի վրա, դահիճը դուրս թռավ իր որջից, վերավորին քաշեց ներքև, որից հետո լսվում էր մարդասպանի մռլտոցը և ատրճանակի հարվածների ձայնը:

— Հետևե՛լը,— գոռաց դահիճը՝ բառի վերջին վանկը երկարացնելով, որի մեջ և՛ ցասում և՛ վրեժխնդրություն կար:

Հաստափոր հիվանդը հայցող արտայայտությամբ ու սովորականից ավելի հևալով, ներկայացավ մարդասպանին: Նա միայն մեկ բառ կարողացավ արտասանել.—

— Անմեղ եմ:

Մի վայրկյան հետո «Մահվան Նավը» թնդում էր «Ինտերնացիոնալով». երեք երիտասարդ բանտարկյալները երիցս կրկնեցին երգի հանկերգը.—

«Սա մեր վերջին, վճռական կռիւն է»:

Նրանք ուզում էին նորից կրկնել, բայց սվինները ուղղված էին նրանց բերաններին, ու կարգադրիչը գոռում էր.—

— Լռեցե՛ք, ձեզ ասում եմ, լռեցե՛ք:

— Զա՞ք՝ եկել ենք համերգ լսելու,— ասաց դահիճը, երբ բանտարկյալները լռեցին:

— Անցե՛ք,— հրամայեց կարգադրիչը, ձեռքի արհամարհական շարժումով:

Բանտարկյալները իրար ետևից կանգնեցին եռաստիճան սանդուղքի գլուխը:

— Գնա՛,— հրամայեց կարգադրիչը՝ խոսքը առաջին բանտարկյալին ուղղելով:

— Ե՛կ,— ասաց դահիճը՝ ատրճանակը շարժելով:

— Թը՛րխկ, Թը՛րխկ:

— Երկրորդը՛:

— Գնա՛:

— Թը՛րխկ, Թը՛րխկ:

— Երրորդը՛:

— Գնա՛:

— Թը՛րխկ, Թը՛րխկ:

— Վերջացա՞վ,— հարցրեց դահիճը:

— Վերջինն է,— պատասխանեց կարգադրիչը և դառնալով դեպի ավագ ու փորձ բանվորը՝ ասաց.—

— Հերթը ձերն է:

Ոչ մի ձայն:

— Հերթը ձերն է,— կրկնեց կարգադրիչը՝ միաժամանակ մոտենալով ու բռնելով մահապարտի ձախ ձեռքը:

Անշարժություն:

— Սատկել է,— ասաց կարգադրիչը՝ դիակը սենեակի մեջտեղ քաշելով:

Նրա սպիտակեղենը արյունաթաթախ էր և դեռ արյուն էր հոսում, թույլ ու ջրախառն:

Քննեցին ու տեսան, որ մահապարտը բացել էր իր բազկերակը: Բանվորի նստած տեղը, վառարանի մոտ, գտան մի փոքրիկ ու հատու գմելի:

Սակայն, ոչ ոք նկատեց, որ նույն անկյունում, պատի վրա, արյունով գրված էր.—

«Մենք տապալեցինք ցարիզմը, կը տապալենք և բոլշե–ւիզմը»:

* * *

Լուսաբաց էր: Քաղաքից շատ հեռու, խուլ կերպով և ընդմիջումներով, լսվում էր համազարկերի ձայնը:

Ցիսուն և ինը զորավարներն էին գնդակահարվում:

Իսկ քաղաքի պատերին հայտարարություններ էին փակցված, որոնց մեջ նույն բովանդակությամբ և լակոնական ոճով, գրված էր.—

«Այսօր, լուսաբացին, գնդակահարուեցին պրոլետարիատի թշնամի Տասն և Եօթը հակա-յեղափոխականները, որոնք մահուան էին դատապարտուած Յեղափոխական Տրիբունալի վճռով»:

XII

Զելակովն ու բժիշկը, որոնք կէս գիշերին գնացել էին դօրանոց սպանուածների ծնօտները ջոկելու, այժմ դուրս էին գալիս չէնքից, երբ արևը արդէն չառագունել, և նրա առաջին ճառագայթները ընկել էին քաղաքի վրայ:

Զելակովը սովորականից ուրախ էր: Երեք հարիւր ծնօտներից միայն երկուսը յարմար էին գտել կիսատ մարդու դէմքը նորոգելու: Բժիշկը սղոցել էր այդ ծնօտները, և Զելակովը կրում էր գինուորական պայուսակում:

Ցաջող որսից վերադարձողների տեսք ունէին թէեւ, բայց բժշկի ներքնաշխարհը միշտ խռովայոյզ էր, առանց դադարելու տալու:

— Բժի՛շկ, դու չգիտես, մարմնական արատը ամէն մարդու մէջքը կոտրում է,— ասաց Զելակովը, երբ նրանք վողոցումն էին.— տե՛ս, ահագին գործեր եմ կատարել, կրակ ու բոցի մէջ եմ ընկել, բայց որովհետև այսպէս այլանդակ եմ, ամենքը ինձանից խուսափում են, կարևորութիւն չեն տալիս, ասելով՝ «հաշմանդամ է»: Այս բոլորը թէև ականջովս չեմ լսել, բայց գիտեմ, որ կ'ասեն: և ինչո՞ւ չասեն, ես էլ լինէի՝ կ'ասէի:

— Հիմա նայեցէ՛ք,— ընդմիջեց բժիշկը,— ես որ ասում եմ ամէն բան կարելի է, դուք չէք հաւատում. կարծում էք, թէ ձեզ խաբում եմ: Եթէ անդամահատութեան յարմար դործիքներ լինէին, եթէ դեղ և դեղօրայք լինէին, մի քանի հիմուտ բժիշկներ ունենայի հետս, ձեզ այնպէս բժշկէի, որ տեսնողները չճանաչէին:

— Հա՛, ի՞նչ պիտի ասէի, բժի՛շկ, դո՛ւ յիշեցուր:

— Ասում են հաշմանդամ էք և խուսափում են:

— Հետու չգնանք. վերցնենք անցեալ օրւայ դէպքը: Միասին գնացել էինք Պորֆիրիյի և Անդրիւշկայի մօտ: Գնացել էնք այս գործով: Տեսա՞ք ինչպէս էին պատասխանում: Առաջ ինձ «չուն» ասողին, չան վայ կ'անէի, բայց հիմա ի՞նչ կարող եմ անել:

Է՛հ՛, յեղափոխութիւնն էլ իր ցաւոտ կողմերն ունի: Մի Պորֆիրիյ, մի Անդրիւշկա աւելի յարդ ու պատիւ ունեն, քան Զելակովը: Նրանց արածը ի՞նչ է որ, մի քանի մարդ են գարնում, էն էլ՝ երբ Տրիբունալը դատ-դատաստան անի ու վճիռ տայ:

Ես այդպէ՞ս եմ մարդ սպանել. հազարներ եմ ջնջել մի վայրկեանի մէջ: Հետու չգնանք. փառք Աստուծոյ, աչքովդ տեսար, թէ քեզ հետ եղածներին ինչ արի: Բայց հաւատա՛, բժի՛շկ, աչքս որ քեզ բռնեց, սիրտս ասաց.

«Այս մարդը ափսոս է, այս մարդը հարկաւոր է»:

Տե՞ս, ինչպէս եմ մարդ ճանաչում: Դո՛ւ ասա՛, եթէ իմ տեղը ուրիշը լինէր, քեզ կ'ազատէ՞ր.—

— Չէ՛:

— Մ՛յ, տեսնո՞ւմ ես:

— Ասում էք բժշկութիւն,— չարունակեց բժիշկը, Զելակովին ընդմիջելով,— բժշկութիւնը այժմ հեչտացել է: Պատերազմի պատճառով, անդամահատութեան համար շատ դիակներ կան: Առաջ պոկւած կաշի պատւաստելով, նոր քիթ դնել և ծնօտ նորոգել հազւագիւտ դէպքեր էին. հիմա սովորական բաներ. որքան մարդասպանութեան և այլանդակութեան տեխնիկան յառաջանայ, նոյնքան աւելի կը զարգանայ մարդ նորոգութեան արւեստը: Այս պատերազմի ընթացքում այնպիսի բուժումներ են կատարւել, որ մարդս ապշած կը մնայ: Սրանով ուզում եմ ասել, որ եթէ ձեր ծնօտի պատւաստումը անյաջող անցնի, դրա միակ պատճառը միջոցների և յարմարութիւնների բացակայութիւնն է: Միտքս աւելի պարզեմ: Օրինակ, ենթադրենք, որ ձեր ծնօտը պատւաստել եմ և ամէն տեսակի փորձեր յաջող են: Բայց չէ՞ որ ձեզ հարկաւոր է առնւազն քսան և մէկ օր անշարժ մնալ, չուտել, չխմել, նոյնիսկ չխօսել, որպէսզի պատւաստման պրոցեսը կատարւի նորմալ և անընդհատ: Ասացէ՛ք, կարո՞ղ էք քսան և մէկ օր սոված մնալ, մանաւանդ դո՛ւք, որ խորոված շատ էք սիրում, մի բան, որ ակռաների և ծնօտի չափազանց չարժում է պահանջում:

— Ի՞նչ քսան և մէկ օր, հօթը օր էլ չեմ կարող դիմանալ:

— Տեսնո՞ւմ էք. սա արդէն աննպատակ պարապայ է, իսկ եթէ մենք Բերլին, Փարիզ կամ Նիւ Եորք լինէինք՝ քսան մէկ

որ չէ՝ քառասուն մէկ օր ձեզ ետեւից կը կերակրէինք, և դուք առիթ չէիք ունենայ ծնօտ շարժելու:

— Աշխարհի բաներ են, էլի՛, քանդուած լինի մեր Ռուսաստանը... Դեռ ասում են, թէ Գերմանացի և Ֆրանսացի զինուորները լաւ են կռուում, ինչո՞ւ լաւ չպիտի կռուեն. եթէ մարդս այլանդակութեան վախը չունենայ, հրաշքներ կը գործի:

— Հապա՛, այսպէս է, սիրելիս, մենք ամէն բանով ետ ենք եւրոպացիներից: Հեռու չէ այն օրը, երբ նրանք մարդ պիտի չլինեն, իսկ մենք մի քիթ չենք կարող պատուաստել: Ահա՛ այդ ծնօտները. թարմ, ապագայ խոստացող ծնօտներ. փոխանակ նոյն րոպէին նրանց հականեխական ջուրը դնելու, նետել ենք պայուսակ և տանում որպէս անեփ միս: Միջոցներ չունենալը այսպէս է:

— Ասում են՝ Աղաբէկով, Աղաբէկով, քո Աղաբէկովն ի՞նչ է որ,— ասաց Զելակովը կամաց, դէս ու դէն նայելով, — ամէն բան տեղն է, այս էլ կը հրամայի, այն էլ, և ամենքից կը սիրուի: Մի քանի հարիւր մարդ է դնդակահարում, և ամբողջ Կարմիր Բանակը ճակատից քաշել ու լեցրել քաղաքը:

Ես այդպէ՞ս կ'անէի:

Բնա՛ւ, երբե՛ք: Մի տասնեակ հերիք է, որ Զելակովը իր արածն անէր: Հազարներ եմ խփել մի քանի տասնեակով: Բոլորն էլ գիտեն, որ փորձառու եմ, բայց մի անգամ չտեսայ կանչէին և խորհուրդ հարցնէին:

— Քիչ առաջ ինձ թւաց, որ հրացանի ձայներ էի լըսում: Դուք էլ լսեցի՞ք,— հարցրեց բժիշկը, խօսակցութեան նիւթը փոխելով:

— Զօրավարների հաշիւն են տեսնում,— պատասխանեց Զելակովը՝ ձեռքի անփոյթ շարժումով:

— Կարծեցի, որ թշնամին մօտեցել է քաղաքին, նկատեց բժիշկը, զարմանքը թաքցնելով:

— Դեռ այդ վախը չկայ, բայց ո՞վ է իմանում, գուցէ այդ օրն էլ տեսնենք... Սխալ է ճակատից զօրք քաշել-բերել, ինչ է մի քանի քոսոտ են սպանում:

— Հրամանատարութիւնը անխելք չէ՛. այդ բոլորը նըկատի են առել:

— Տէրն իրենց հետ, բայց այս ի՞նչ յայտարարութիւն է, բժի՛շկ,— ասաց Զելակովը՝ կանգնելով պատին փակցրած յայտարարութեան առաջ:

Ու բժիշկը բարձրաձայն կարդաց.—

Ա Զ Դ

Այսօր, լուսաբացին, գնդակահարուեցին պրոլետարիատի թշնամի Տասն և Եօթը հակայեղափոխականները, որոնք մահուան էին դատապարտուած Յեղափոխական Տրիբունալի վճռով:

ԱՐՏԱԿԱՐԳ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

— Հը՛, բան կայ, բանոց,— նկատեց Զելակովը, երբ բըժիշկը վերջացրեց ընթերցումը:

— Ուրեմն, այս գիշեր քաղաքը մաքրուած է ամէն տեսակ հակա-յեղափոխականներից,— ասաց բժիշկը՝ Զելակովին դուր գալու համար:

— Այդ՝ վաղուց պիտի անէին, բայց լաւ է ուշ, քան երբեք:

— Ի հա՛րկէ:

— Քունդ չի՞ տանում, բժի՛շկ:

— Յոգնած եմ:

— Կը հանգստանանք, յետոյ համով թէյ կը խմենք,— ասաց Զելակովը, երբ նրանք մօտենում էին իրենց բնակարանին:

* * *

Քաղաքը վաղուց զարթնել էր, բայց հազւադիւտ անվախներն էին միայն փողոց իջել:

Այդ գիշերուան անցուդարձը և առաւօտեան լսուած համազարկերի ձայնը ժողովուրդը համարում էր նահանջի նախանշան կամ նոր դաւադրութիւն՝ ձերբակալութիւններ ու խուզարկութիւններ սկսելու համար:

Դեռ լոյսը չբացուած, ճակատից քաղաք բերուած զօրամասերը նորից վերադարձել էին դիրքերը:

Չարագուշակ լռութիւն և խաղաղութիւն էր տիրում

ամէն կողմ: Ժողովուրդը յամառում էր դուրս գալ, չնայած որ կարմիրները ամէն կերպ աշխատում էին ցոյց տալ, թէ ոչինչ կայ: Հակասական չշուկները լրջան էին անում ժողովուրդի մէջ: Ոմանք Թիկունքի ապստամբութեան մասին խօսում, ուրիշները խոշոր դէպքեր էին նախատեսնում: Աւելի ուրիշները նոր ու չտեսնուած բան էին դուշակում: Իսկ շատերը անտարբեր էին դէպի ամէն բան:

Սակայն, ոչ ոք չէր խօսում նոյն դիշերւայ անցքերի մասին, որովհետև ոչ ոք դիտէր:

Մի ժամ յետոյ, Տանս և Եօթը զինադադարների լուրը վերջ տուեց չշուկներին և ենթադրութիւններին, ու ժողովուրդը այդ օրն ինքն իրեն ապահով զտաւ նոր անակնկալների հանդէպ:

Զինուորական երաժշտախումբը չուտով հրապարակ իջաւ, յեղափոխական երգեր նւագելով: Տների դռները բացուեցին, ու առաջին անգամ դուրս եկան ծխավաճառ չարչիները, անվարտիկ երեխաները, քաղաքի սառահակները, կաթնավաճառ պառաւներն ու հաշմանդամ զինուորները: Հետզհետէ քաղաքը կենդանութիւն էր ստանում, մինչ կոմկուսի քարտուղար Ցիմերմանը պատրաստւում էր մխինդում ճառ ասելու:

Այդ պահուն, քաղաքի հակառակ կողմից, երևաց մի ինքնաշարժ, որի մէջ օրօրւում էին մի կին և մի տղամարդ, զինուրական համազգեստով: Նրանց դէմքի վրայ անքնութիւն և յոգնածութիւն կար, ու նրանց աչքերի արտայայտութիւնը պղտոր էր:

Այրը՝ Գրիչա Ազարէկովն էր, իսկ կինը՝ Սդա Շերէդէրը:

Նրանք գալիս էին յիսուն և ինը օրաւարների զնդակահարութեան վայրից:

Երբ ինքնաշարժը կանգ առաւ Ազարէկովի կացարանի առաջ և նրանք վար իջան, երիտասարդը դարձաւ մեքենավարին ու ասաց.—

— Երեք ժամ յետոյ, այստեղ կը լինէք:

Մեքենավարը չպատասխանեց, բայց նրա հայեացքի մէջ կարծես կարդացւում էր.—

«Բնական է, երբ ուզէք, այստեղ պիտի լինեմ»:

Երիտասարդն ու օրիորդը դանդաղօրէն վեր բարձրացան

աստիճաններից ու, երբ հասան սենեակի դրան, պահակ երկու զինուորները իրենց ժողվեցին և առաջինը բարևեցին, ըստ հին սովորութեան: Երիտասարդը, փոխանակ նրանց բարևն առնելու, ժպտաց, սեղմեց պահակների ձեռքը և մեղմօրէն ասաց.—

— Հը՛, ի՞նչպէս էք:

— Առանց ձեզ տխուր է,— չտապեց պատասխանել պահակներից մէկը, որը իրեն լաւ էր զգում միայն երիտասարդի բացակայութեանը:

— Ոչի՛նչ, լաւ կը լինի՛,— ասաց Ազարէկովը և նախքան դուռը զոցելը՝ յարեց.—

— Ոչ ոքի չեմ ընդունում:

Զինուորները գլխով հաւանութիւն տւին:

Երբ դուռը զոցւեց, կեղծաւոր պահակը երիտասարդի ու աղջկայ հասցէին ձեռքի անվայել չարժում զործեց և մօտենալով ընկերոջ՝ ասաց.—

— Եւ այս՝ կոչւում է յեղափոխութիւն:

Յեղափոխութեան մարտիկները յոգնաբեկ ընկան մահճակալի վրայ և մի վոքը լռութիւնից յետոյ, Սդա Շերէդէրը ասաց.—

— Յանձինս յիսուն և ինը զօրավարների, կարելի է ասել, որ ցարիզմը վերջնականապէս ջախջախւեց:

— Մասամբ միայն, որովհետև դեռ կայ և զործում է Դենիսովի վոհմակը:

— Բայց այդ զօրավարները որքա՛ն վախկոտ էին, Տէ՛ր Աստուած,— ասաց Շերէդէրը՝ մեծագոյն բաւականութեամբ ներս քաշելով ծխախոտի ծուխը:

— Ցիսուն և իննից միայն երկու հոգի իրենց վայել կերպով պահեցին:

— Այսինքն:

— Ռուսսկինն և Նիկոդայոսովը:

— Դրանցից ո՞րն էր որ բացատրեց.—

«Մեռնում եմ թագաւորի և Աստուծոյ համար»:

— Հէնց ինքը Նիկոդայոսովն էր:

— Ցարական իսկական զօրավար, բայց նայած ազգանունին, ռուս չպէտք է լինէր:

— Հայ էր, բայց հայերէն չզիտէր. բանտում, իմ ազ-

դային պատականելութեան մասին Նիկողայոսովը պնդել էր, որ ես կամ թուրք, կամ թաթար եմ, բայց ո՛չ երբեք հայ:

— Ինչո՞ւ:

— Նրա կարծիքով— հայը անկարող է մարդ սպանել,

— Բայց ինչո՞ւ:

— Իբր թէ հայը սարուկ է և վախկոտ:

— Ինչո՞ւ քեզ հայ են կարծել և ոչ հրեայ:

— Վիճել են և սպանները· նրանք պնդել են, որ հրեայ եմ:

— Հա՛, սպանների մերկացման ժամանակ նրանցից մէկը մօտեցաւ ինձ և ինչ որ բան ասաց· հիմա չեմ յիշում· ես քեզ մօտ ուղարկեցի: Ի՞նչ էր ասում,— հարցրեց աղջիկը, այդ ամենը երազի պէս յիշելով:

— Սպանութիւնից առա՞ջ:

— Այո՛, այո՛:

— Հա՛, նա լրտես էր, սպանների մէջ:

— Ի՞նչ էր ասում:

— Ցնչեցնում էր, որ ինքը մեր կողմից նշանակուած է լրտես· բայց ես ասացի, որ իր պաշտօնը դեռ վերջացած չէ:

— Եւ ի՞նչ, սպանե՞ց:

— Ի հարկէ, նրան ազատել մեղք էր:

— Կոմունի՞ստ էր:

— Այո՛, ցարական երբեմնի սպայ, այժմ կոմիսար:

— Եւ չազատե՞ց:

— Ո՛չ· լրտեսը ամէն տեղ և ամենի համար լրտես է: Նրանց չպէտք է խնայել:

— Ես կ՚ազատէի նրան:

— Լրտեսները հարկաւոր մարդիկ են, բայց ես վախենում եմ և ատում նրանց:

— Զարմանալի դատում:

— Այդ ՝այդպէս է, սիրելի Աղա, բայց դու չատ մեծ տոկունութիւն՝ երևան բերիր սպանների ազինահարութեան ժամանակ:

— Եւ երևակայի՛ր... առաջին սպանութիւնն էր...

— Ցեղափոխութիւնը այդպէս է· յեղափոխութեան մէջ վախկոտները յախուռն և սրտոտ են դառնում, իսկ սրտոտները՝ զգոյշ ու վախկոտ:

— Սակայն, դիտե՞ս ինչ, Գրիշա՛, հաւատա՛, որ այս դիւերսայ արիւնոտ դէպքերը մազի չափ չեն ազդել ինձ, որովհետև այդ բոլորը ինձ թւում է տեսիլք, մի ծանր երազ, որից ես զարթնել եմ:

— Կը մոռացի՛, չուտով կը մոռացի:

— Գուցէ մոռացի, բայց մէկ բան միշտ պիտի մնայ իմ յիշողութեան մէջ որպէս անջնջելի արձագանգ:

— Այսինքն:

— Այն, որ սպաններից մէկը ինձ «պոռնիկ» անուանեց:

— Դատարկ բան· մահապարտների հայհոյանքը վիրաւորական չէ· այդ նրանց լրաւունքն է և վերջին խօսքը:

— Բայց սա հայհոյանք չէ՛, սա նախատինք է· եթէ նա ինձ հայհոյէր որպէս կնոջ, գուցէ մոռանայի· սակայն, այդ խօսքը ասեղի պէս խրուած է ուղեղիս մէջ:

— Ես քեզ չեմ ըմբռնում:

— Հիմա ինձ հետաքրքրում է մի բան,— չարունակեց օրիորդը ՝չրջելով կրծքի վրայ և երեսը բաբեխ մէջ խրած,— եթէ գօրութիւն ունենայի հրաշք գործելու, այդ սպային յարութիւն կը տայի, կը կանչէի առանձին սենեակ և կը հարցնէի, թէ ինչո՞ւ «այդ խօսքն» ասաց:

— Դու արդէն գառանցում ես, Ադա՛,— ասաց երիտասարդը՝ ձեռքը աղջկայ ծոծրակին դրած:

— Հաւատա՛, որ այդպէս պիտի վարուէի:

— Ախոռս, որ վնտռածդ չգտար:

— Այո՛, կ՚ուզէի նրան տեսնել:

— Այս օրը աւելի պայծառ է· երեք ժամից ճակատ պիտի մեկնեմ,— ասաց երիտասարդը՝ խօսակցութեան նիւթը փոխելով:

— Իսկ ես գօրանոց պիտի գնամ: Սպանուած սպաններին տեսնելու: Այդ սպան ինձ ծանօթ է թւում, թէև նրա դէմքը չատ էր փոխուած:

«Պոռնիկ»:

XIII

— Նո՛ւ, ի՞նչ կայ, գնդա՛պետ,— հարցրեց զօրավար Դենիսովը, երբ սպայակոյտի պետ Վոլգովը մօտեցաւ նրա սեղանին, իր ամենօրեայ զեկուցումը տալու:

— Ձերդ Գերազանցութիւն, նախապատրաստական աշխատանքները յաջողութեամբ վերջացել են,— սկսեց գնդապետը,— այժմ մեր բանակը կազմ ու պատրաստ է յարձակման անցնելու բովանդակ ճակատի վրայ: Պահեստի զօրքը արդէն հասել է ռազմաբեմ և հանգստանում է. պակաս զօրամասերը լրացուած են: Արձակուրդ առած սպաները, որոնք անյապաղ ետ էին կանչուած, վերադարձել են իրենց զօրամասերը: Կենտրոնական ճակատը ուժեղացուած է մէկ ու կէս հրետանային բաժնով և քսան երկու գնդացիրներով: Աջ թեւը նորոգուած է թարմ ուժերով: Այնտեղ է առաքուած նաև Դոնեան ձիաւոր կոզակների մի հարիւրեակ, Լեախաչեվի հրամանատարութեամբ: Ձախ թեւում զգալի փոփոխութիւններ չեն եղել, բացի հինգերորդ գումարտակից, որին փոխարինել է եօթերորդը, իր նոր սպայական կազմով: Ռազմամթերքի և պարէնի առաքումը խիստ կանոնաւորուած է: Ճակատում տասն և հինգ օրուայ պահեստի մթերք է ամբարուած, որը լիապէս կարող է բաւարարել զօրքին անգամ այն պարագային, եթէ թիկունքից նոր առաքումներ չկատարեն:

Կռուի նոր ծրագիրը կազմուած է և ղրկուած բոլոր զօրամասերի հրամանատարական կազմերին: Զօրքի տրամադրութիւնը բարձր է և հրամանատարութիւնը՝ վճռական: Ամբողջ ճակատը անհամբեր սպասում է Ձերդ Գերազանցութեան հրամանին:

— Իսկ հակառակորդի մասին ի՞նչ նորութիւններ:

— Հակառակորդի շարժումները նոր ոչինչ չեն պարզում: Երէկուայ հաղորդագրութիւնները մնում են որպէս նոր և վերջին տեղեկութիւններ:

Գնդապետի պատասխանի վրայ՝ զօրավար Դենիսովը աչքերը կկոցեց, նայելով ուղիղ մէկ կէտի, իսկ գնդապետը կռահելով, որ նա ուզում է վերյիշել երէկուայ հաղորդագրութիւնները թշնամու մասին, շարունակեց.—

— Ըստ երէկուայ տեղեկութիւնների, որոնք մի տեսակ ստուգումն ու լրացումն են մեր երկար հետախուզութիւնների, թշնամին երեք օր է, որ սպասողական դրութեան մէջ է և ոչ մի շարժում կամ գործողութիւն երեւան չի հանում, ըստ որում կարելի լինի ճշտորոշել նրա նպատակները: Սակայն, ենթադրւում է, որ նա մասամբ ծանօթ է մեր պատրաստութիւններին և, նախապէս կշռելով իր ուժերը, որոշել է մեր յարձակողականը դիմագրաւել ինքնապաշտպանութեամբ:

— Դատարկ խօսքեր և ենթադրութիւններ,— նկատեց զօրավարը,— գուցէ նա մեզանից աւելի շատ է պատրաստուած յարձակողականի, ի՞նչ գիտենք: Իսկ ի՞նչ են ասում մեր լրտեսները:

— Հաստատում են այն, ինչ որ ասացի, Ձերդ Գերազանցութիւն:

— Լրտեսներին քիչ հաւատք ընծայել. պէտք է անդադար հետախուզութիւն կատարել: Այդ կողմից, դժբախտաբար, մեր բանակը կոյր է ու խուլ:

— Այդ մասին նոր և խիստ հրաման կը տամ:

— Է՛է՛, էլ ուրի՞շ:

— Այսպէս է ճակատի դրութիւնը, Ձերդ Գերազանցութիւն,— շարունակեց շտաբի պետը,— գալով թիկունքին, պէտք է ասել, որ ժողովուրդի համակրութիւնը մեր կողմն է, ի բաց առեալ որոշ խաւի խառնակիչներից, որոնք հետզհետէ մաքրւում են:

Վերջերս ձերբակալուած են հակառակորդի մի քանի գործակալներ, որոնք ունեցել են յատուկ նպատակ բանակի մէջ քարոզչութիւն մղելու և բոլշեւիկեան գրականութիւն տարածելու: Դասալքութեան դէմ ձեռք առնուած խիստ միջոցները տուել են որոշ արդիւնք, բայց այդ հիւանդութիւնը դեռ արմատապէս բուժուած չէ, որովհետև դասալիքները ըստ արժանոյն չեն պատժւում, շնորհիւ մեր մարդասիրական և քրիստոնէական ներողամտութեան:

— Այո՛, ներողամտութիւնը ռուս մուժիկը համարում է թուլութիւն և վախկոտութիւն. պէտք է լինել անողոք ու խիստ. ազատագրուած ճորտը աւելի վտանգաւոր է, քան ազատութեան մէջ մեծացած աւազակը:

— Այդ բանը չհասկացան մեր ցարերը:

— Այդ յիմարութիւնը Ալէքսանդր Երկրորդից է սկսւում:

— Եւ քաւութեան նոխազ դարձաւ Նիկոլայ Երկրորդը:

— Խոստութեան մասին էք խօսում, բայց ցարդ չկարողացաք կարուկ լինել,— շարունակեց զօրավարը,— ի՞նչ եղան, վերջապէս, դերի կարմիրները, դասալիք զինուորները և կարմիրների կողմն անցնելու վորձ կատարող դաւաճանները:

— Ձերդ Գերազանցութեան հրամանով՝ զինուորական դատարանը կազմւեց իմ նախագահութեամբ, որն անմիջապէս գործի սկսի անցնէր, բայց նոր առաջխաղացութեան նախապատրաստութիւնների հետևանքով և զլխաւորապէս կարմիրների ճեռքը դերի ընկած յիսուն և լինը զօրավարների կեանքը չվտանգելու նպատակով, ժամանակաւորապէս, կարմիրների և դասալիքների դատավարութիւնն ու գնդակահարութիւնը յետաձգւեց Ձեր իսկ կարգադրութեամբ:

— Ը՛ը՛, այդպիսի բան եղել է, հա՞,— ասաց զօրավարը՝ եղածն յիշելու ծամածռութեամբ:

— Այդպէս հաճեցիք կարգադրել սրանից տասն և հինգ օր առաջ,— պնդեց սպայակոյտի պետը:

— Զարմանալի մարդիկ են,— նորից խօսեց զօրավարը, գլուխը կատաղօրէն թափ տալով,— ի՞նչպէս ընկան կարմիրների ծուղակը... յիսուն և լինը զօրավար... Դրանց մէջ մէկը չկա՞ր, որ վտանգը նախատեսէր. ապշեցուցիչ ապիկարութիւն և անճարակութիւն:

— Եւ չես հասկանում, թէ ինչո՞ւ բոլորը հաւաքւել էին միևնոյն քաղաքում:

— Որպէս թէ հանգստանում էին:

— Եւ այդ այն ժամանակ, երբ Մայր Ռուսաստանը ճեռքից դնում է:

— Ճակատագի՛ր, ի՞նչ ասես:

— Եւ դրանց մէջ են զօրավար Ռուսսկինն ու Դիմիտրիևը:

— Ցաւն այդ է:

— Ինչքա՞ն պէտք է ակլոր ու ոտաբոպիկ կարմիրներ դերի վերցնել, որպէսզի նրանք համաձայնւեն փոխանակութեան:

— Կարծում եմ, որ կարմիրները ոչ մի փոխանակութեան չեն համաձայնւի. պատանդների կեանքը ստոյգ վտանգի մէջ է և նրանց կարելի է ազատել միայն յանկարծական և չեշտակի յարձակումով:

— Յանկարծական և չեշտակի յարձակումով,— կրկնեց զօրավարը՝ մտազբաղ,— հեշտ է այդպէս ասել:

Մի վայրկեան լռութիւնից յետոյ, զօրավարը ցուցամատով և բթամատով չփեց քիթը, աչքերը փակած, նոր ծխախոտ վառեց և, բերանքաց նայելով առաստաղին, ասաց.—

— Ուրեմն, այդ չրջանի զեկավարը մի հայուկ է, այնպէս չէ՞:

— Այդ խակ է, Ձե՛րդ Գերազանցութիւն:

— Հը՛ը՛... մի հայուկ, և ինչե՛ր է անում:

— Աւելի չուտ, նա Զեկայի պետն է,— սրբագրեց Վոլդովը:

— Այդ միևնոյնն է,— ասաց զօրավարը, ճեռքը ուժգին թափահարելով,— Զեկայի պետը նշանակում է զեկավար. բոլոր մնացեալները խրտուիլակներ են միայն:

— Այդ էլ ճշմարիտ է, Ձերդ Գերազանցութիւն. նրանց մօտ Զեկան ամէն ինչ է:

— Բայց— իրօք նա հայո՞ւկ է:

— Այդ որոշապէս ստուգւած է, Ձերդ Գերազանցութիւն:

— Ինչպէս է կոչւո՞ւմ, մոռացել եմ նրա ազգանունը:

— Աղաբէկո՛վ:

— Աղաբէկո՛վ... հայկական անո՞ւն, չեմ կարծում. հայերը առ հասարակ կոչւում են՝ կարապետ, Այրապետ, Կիրակոս, այնպէս չէ՞, գնդապետ,— ասաց զօրավարը՝ հեգնական ժպիտով:

— Ճշմարիտ է, Ձերդ Գերազանցութիւն. արևմտեան ճակատում մի հայ սպայ ունէինք, որ կոչւում էր Կիրակոդով. լաւ սպայ էր, սիրում էինք նրան. հաւատարիմ էր, որպէս չուն, և կատաղի հայատեաց՝ որպէս գայլ:

— Այո՛, հայերը մեր հաւատարիմ շներն են. նրանք երբեմն հաջում են մեզ վրայ, բայց ռուսական մահակը տեսնելիս, կաղկանձում:

— Սակայն, այժմ այդպէս չէ՛, Ձերդ Գերազանցութիւն.

ժամանակները փոխուել են. երէկւայ կաղկանձող չունը այսօր կարող է խածնել. հայերը դեռ մեզ հարկաւոր են:

— Անչո՛ւշտ, դրա համար էլ Զուլխէլեան Հանրապետութիւնը դերագասում ենք Կուկուռուզեան Հանրապետութիւնից:

— Նրանք մեզ ծանր հաշիւ պիտի տան, երբ ամբողջացնենք Մայր Ռուսաստանը:

— Եւ ամենից առաջ՝ կլինտօ վրացիները, որոնք Պետական Դուման դղրդացնում էին միջազգայնական յանկերգով ի հաշիւ ռուս բանուորի ու մուժիկի, իսկ այսօր, նստած փոխարքայութեան մայրաքաղաքում, ազգային ձու են ածում: Ցիմար ենք եղել. չենք ճանաչել մեր իսկական թշնամիներն ու բարեկամները:

Մինչ զօրավարը չարունակում էր խօսել, սպայակոյտի պետ Վոլդովը իր ձեռքը բռնած թղթերն էր քրքրում, մի կարևոր բան գտնելու փութկոտութեամբ: Երբ զօրավարը վերջացրեց իր խօսքը, դնդապետը չտապեց ասել.—

— Զեկուցմանս մէջ մոռացայ ասել, Զերդ Գերագանցութիւն, որ Ադէեվը իր հաղորդագրութեան վերջում աւելացնում է հետևեալը.—

«Երէկ գիշեր, մօտաւորապէս ժամը չորսին, հակառակորդի զօտիից մեր առաջաւոր դիրքերն անցած պահուն՝ ձերբակալուած է մի ծպտեալ երիտասարդ, որ իր իսկ ասելով ըստպայ է և ազատուել է մահւանից զօրանոցի պատուհանից լրեն վայր նետելով ու փախչելով: Նրա պատմածին նայած, նա մէկն է այն քաղաքական յանցաւորներից, որոնք մահւան դատապարտեցին Յեղափոխական Տրիբունալի վճռով: Սակայն, նրա մանրամասն հարցաքննութիւնը մեզ բերեց այն եզրակացութեան, որ նա մի ճարպիկ լրտես է. նրա ասածների մէջ ընդհանուր կապ չկայ, և նրա տւած տեղեկութիւնները չինծու են ու հակասական: Երիտասարդը, խիստ հսկողութեան տակ, ճամբայ է հանւած»:

— Իսկ ո՞ւր է այդ երիտասարդը,— չտապեց հարցնել զօրավարը:

— Պէտք է որ տեղս հասած լինէր,— պատասխանեց դնդապետը,— բայց չգիտեմ, ինչո՞ւ չկայ:

— Զարմանալի մարդիկ էք: Անմիջապէս հեռախօսել բոլոր կայանները ու հասկանալ, թէ ո՞ւր է հասել կալանաւորը և ինչո՞ւ է ուշանում: Հրամայեցէք, որ ապահով և անյապաղ տեղս հասցնեն:

— Լսում եմ, Զերդ Գերագանցութիւն:

Սպայակոյտի պետը անմիջապէս կանչեց հերթապահ սպան և ուզում էր նոյնութեամբ կրկնել զօրավարի հրամանը, բայց հերթապահը կանխելով նրան՝ ասաց.—

— Ներողութիւն, պարոն դնդապետ, ճակատից ուղարկւած կալանաւորը արդէն տեղս է հասել. ի՞նչ էք կարզադրում:

Դնդապետը փոխանակ սպային պատասխանելու, հարցական նայեց զօրավարին, իսկ վերջինս անմիջապէս յարեց.—

— Այստե՛ղ բերել:

— Բերել այստե՛ղ,— կրկնեց սպայակոյտի պետը:

— Լսում եմ,— ասաց հերթապահը, վարժօրէն դառնալով և ոտքերը իրար խփելով:

* * *

Տասն և եօթը մահապարտների անդամ սպան, իրօք որ ծպտւած էր մինչև վերջին թելը:

Երեք հարիւր սպաների ջարդի գիշերը, զօրանոցի պատուհանից իրենց վար նետողներից երրորդն ու վերջինը լինելով, կոյր պատահականութեամբ ընկել էր դիակներից մէկի վրայ և ազատւել: Այդտեղից փախչելով, նա կարողացել էր ինքն իրեն ձգել կողակների մի փոքրիկ աւան, դեռ լոյսը չբացւած: Առաջին տունը, ուր նա դիմել էր ապաստարան գըտնելու, նրան ներս չէր ընդունել, ենթադրելով, որ քաղաքից փախած մի խեղճ է: Երկրորդ տունը նրան մերժել էր, առանց նոյնիսկ դուռը բաց անելու:

Վերջապէս, գիւղի հեռաւոր ծայրում ընկած մենաւոր մի խրճիթ հիւրընկալում է մահւանից խուսափող սպային:

Տանտիրուհին, որբևայրի մի պառաւ, ծածկում է նրա մերկութիւնը հազար ու մի լաթերով, ինքնաեռ է դնում և արցունքով լսում է երիտասարդի ողբերգական ամբողջ պատմութիւնը: Ապա՝ սպայի խնդրանքով, կանչւում է գիւղի աւագը և ծանօթանում դառնաղէտ եղելութեանը: Երիտասարդին

ազատելու և գիւղը չվտանգելու համար, մի գիշեր, երկու հմուտ կոզակների ուղեկցութեամբ, սպան անցնում է կարմիրների ռազմադիծը և յանձնւում է կամաւորական Բանակի առաջին պահակներին: Իսկ վերջիններս, քաջագործութեան չքանչան ստանալու անաչառութեամբ և նիւթական նւէր ձեռք ձգելու ակնկալութեամբ, բոլորովին հակառակ վկայութիւն են տալիս փախստականի մասին, նրան ներկայացնելով որպէս մի լրտես, որն ոչ թէ յանձնւել է ինքնակամ, այլ ձերբակալւել է հակառակ իր ցանկութեան:

Սպան՝ ցնցոտիների մէջ աւելի հիւծւած էր երևում: Նրա դէմքը դունատ էր որպէս կաղամբի միջուկ, ու մազերը երկարել և անխնամօրէն դուրս թափւել հունացած վարսախիչ տակից: Իսկ նրա ընդհանուր արտայայտութեան մէջ իր հասակին անհամապատասխան փառահեղութիւն կար, որը նսեմացնում էր մահուան սարսափից ու տառապանքից մնացած հոգսի վերջին հետքերը:

Մահւանից ազատւելով, նա դարձել էր բարի, ներողամիտ և լայնախոհ: Մարդկանց վատ արարքները նրան այլևս չէին վշտացնում, որովհետև նա հաստատ համոզւած էր, որ եթէ իւրաքանչիւր մարդ ոչ թէ երկու անգամ մեռնի ու յարութիւն առնի, ինչպէս ինքը մեռել ու յարութիւն էր առել, այլ բաւական է, որ միայն մէկ անգամ տեսնի մահը և նորից վերադառնայ այս կեանքին, ու աշխարհումս այլևս վատութիւն ու չարիք չի լինի: Այժմ նրան թւում էր, թէ մարդիկ ամէն պարագայի և ամէն առիթով իրաւունք ունեն և կարող են նրան ձերբակալել. և որովհետև այժմ կրկին ձերբակալւած էր, վախենում էր ազատ արձակւել, նորից չձերբակալւելու համար:

Նա անխախտ հաւատում էր, որ ճշմարտութիւնը, վաղ թէ ուշ, պիտի յայտնւի. գիտէր նաև, որ մարդկանց ըմբռնած ազատութիւնը ոչնչով չի տարբերւում բանտային կեանքից, դրա համար էլ նա չատ մտահոգւած չէր ազատւելու մասին, ինչպէս և չէր սրտնեղում, երբ ազատազուրկ էր:

Կալանաւորը իր ուղեկից երկու զինւորների հետ, նստած չաթի առաջին յարկաբաժնի սենեակներից մէկում, սպասում

էր նոր կարգադրութեան, երբ հերթապահ սպան ներս մտնելով ու սիրալիր ժպտալով ասաց.—

— Պատրաստւեցէք ներկայանալու Նորին Գերազանցութեան:

— Պատրաստ եմ,— ասաց կալանաւորը,— բայց, նախ քան այդ, խնդրում եմ մի բաժակ ջուր:

— Վերև ջուր կը խմէք. իսկ քաղցած չէ՞ք,— հարցրեց սպան՝ նոյն սիրալիր ժպիտով:

— Քաղցած եմ, բայց ախորժակ չունեմ, կէսօրւայ պարէնը ստացայ, սակայն չկերայ:

— Մի՛ վախենաք, զօրավարը լաւ մարդ է, հարկաւոր է միայն ամէն բան ճշգրտօրէն պատմել,— ասաց հերթապահը, երբ նրանք սանդուխներից բարձրանում էին:

Կալանաւորը, հերթապահ սպայի խօսքի մէջ փորձարկութիւն գտնելով, դառնօրէն ժպտաց և կանգ առնելով՝ ասաց.—

— Ես այնքա՞ն ճշմարիտ եմ խօսում, որ մարդիկ ճըշմարտութեան չեն հաւատում, որովհետև նրանց իննսուն տոկոսը ստասէրներ են:

— Բայց դուք ճշմարտութիւն խօսեցէ՛ք,— ասաց հերթապահը, բնաւ չանդրադառնալով սպայի ասածին:

Վեր բարձրանալով, կալանաւորը երեք բաժակ ջուր խմեց, ձեռքով սրբեց բերանը, գլխարկը վար առաւ և, հերթապահի առաջնորդութեամբ, ներս մտաւ ընդարձակ, մաքուր ու չքեղ կահաւորւած մի սենեակ, ուր զօրավար Դենիսովը և սպայակոյտի պետ Վոլդովը սպասում էին:

Կալանաւորը զինւորական բարևով ողջունեց ներկաները:

— Զինւորական բարևը դեռ չէ՞ք մոռացել,— հարցրեց զօրավարը կեղծ ժպիտով և կանխապէս վատ տրամադրւած:

— Ինչո՞ւ պիտի մոռանամ, Ձերդ Գերազանցութիւն,— պատասխանեց փախստականը, անտարբեր հայեացքով:

— Հիւա՞նդ էք:

— Ո՛չ:

— Հասարակ զինւո՞ր էք:

— Ո՛չ, Ձերդ Գերազանցութիւն, սպայ:

— Սպայութեան չնորհք չունէք:

— Այո՛, սպաս եմ:

— Ձեր սպայութիւնը հաստատող վաստաթղթեր ունէ՞ք:

— Չունե՛մ, Ձերդ Գերազանցութիւն:

— Ի՞նչպէս հաւատանք ձեզ:

— Որպէս զինուորական՝ իրաւունք ունէք չհաւատալու, իսկ որպէս մարդ՝ պարտաւոր էք հաւատալ. ես սպաս եմ:

Զօրավարը սաստկօրէն պիտի զոռար սպային վրայ, եթէ անմիջապէս չանդրադառնար հարցաքննութեանը, որ պէտք է վարէր զգո՛յշ և խորամանկ:

Ուսաի, իր զայրացկոտ ձայնը մեղմելով հարցրեց.—

— Ձեզ ի՞նչպէս յաջողուեց անցնել մեր ռազմաղիծը:

— Այդ իմ կեանքի ամենաանչուն միջադէպն է, Ձերդ Գերազանցութիւն. ես երկու անգամ մեռել եմ և յարութիւն առել:

— Պատմեցէ՛ք ամբողջը,— հրամայեց զօրավարը:

— Թո՛յլ տուէք նստելու, Ձերդ Գերազանցութիւն. ուժերս ինձ չեն օգնում,— ասաց կալանաւորը:

Զօրավարը, առանց խօսելու, ձեռքով հաւանութեան նշան արաւ, իսկ Վոլգովը, իր աթոռը կալանաւորին տալով, նստեց ուրիշի վրայ:

Ու կալանաւոր սպան պատմեց ամբողջ պատմութիւնը:

* * *

Երբ սպան վերջացրեց, զօրավար Դենիսովը՝ ասաց.—

— Այնուամենայնիւ դուք դեռ հակազդութեան տակ պիտի մնաք:

— Լսո՛ւմ եմ, Ձերդ Գերազանցութիւն:

Ապա՝ զօրավարը, խօսքը Վոլգովին ուղղելով՝ յարեց.—

— Սպային առանձին պահել ու հոգ տանել:

— Հրամանք ես, Ձերդ Գերազանցութիւն:

Երբ կալանաւորը հերթապահ սպայի հետ դուրս ելաւ, զօրավար Դենիսովը ծանրօրէն ոտքի կանգնեց և իր խիղճը հանգստացնելու համար՝ ասաց.—

— Ուրիշ ի՞նչ կարող էի անել, զնդապետ, ժամանակները այնքան են փոխուել, որ մարդկանց չի կարելի հաւատալ:

— Լաւագոյն կարգադրութիւնն էր, Ձերդ Գերազանցութիւն. նման պատմութիւններ միշտ կարելի է յերիւրել, Աւդէեվի բնագրէն աւելի ուժեղ է. նա գտնւում է առաջաւոր դիրքերում:

— Սատանան նրան տանի, ի՞նչ բնագրէ. մարդը բոլորովին արդար է, տառապել է մեզ համար և պիտի տառապի մեր ձեռքով. ուղղակի ամօթ է, բայց ի՞նչ կարող ենք անել:

— Թո՛ղ մի քիչ հանգստանա՛յ, ո՛չինչ, մեր սպաները տոկուն են:

— Ուրեմն, սրա պատմելով, զօրավարներին զնդակահարած պիտի լինեն:

— Սպաների զնդակահարութիւնը հաւանական է, բայց զօրավարներինը՝ չեմ կարծում:

— Ինքներդ ասացիք, որ կարմիրները փոխանակութեան չեն համաձայնի,— ասաց զօրավարը բարկացած,— եթէ այդպէս է, նրանց ինչո՞ւ պիտի խնայեն:

— Շատ դժուար է ամէն բան ճշտել, Ձերդ Գերազանցութիւն. մեզ հարկաւոր է յանկարծական յարձակումով քաղաքը գրաւել:

— Երեկոյեան պէտք է ճակատը լինենք, յարձակողականը սկսելու համար,— ասաց զօրավարը, երկար տատանումից յետոյ:

— Լսո՛ւմ եմ,— ասաց սպայակոյտի պետը՝ հրճւանքով:

— Մեր մեկնումը պէտք է լինի գաղտնի:

— Այդ մասին միջոցներ ձեռք կ՝առնեմ:

— Ճակատի հրամանատարներին միայն ծածկագրով հաղորդել իմ մեկնումի ժամը, խստիւ արգիլել հանդիսութիւնները:

— Լսո՛ւմ եմ:

— Շօֆերին կարգադրել, որ ինքնաշարժի սարք ու կարգը նայի և հին ռետիններն փոխի:

— Լսո՛ւմ եմ:

— Երեկոյեան ժամը վեցին ամէն բան պէտք է պատրաստ լինի, եօթին մեկնելու համար:

— Լսո՛ւմ եմ:

— Այդպէս, ուրեմն:

— Լսո՛ւմ եմ:

XIV

Հետևեալ օրը, լուսաբացին, Պետերբուրգ քաղաքը ընկած էր Կամաւորական Բանակի ձեռքը:

Արշաւող զօրքի ամբողջ ջանքերը՝ կտրել կարմիրների նահանջի ճիծը՝ ապարդիւն էին անցել. հակառակորդը վախուստի էր դիմել ժամանակին, քաղաքը թողնելով արիւնի և սարսափի մէջ:

Ցարճակուղ գնդերից մէկը, որին խնդիր էր տրւած ամենից առաջ և ամենից շուտ ազատել կալանաւորները, կանգ առաւ բանտի դրան:

Բռնութեան տունը խաղաղ էր մենաստանի պէս. այնտեղից ոչ մի ձայն չէր լսւում:

— Սատանան տանի, մի՞թէ բոլորին ջարդել են,— ասաց հրամանատարը:

— Բանտարկեալները քաղաքագէտ են ու զգոյշ. նրանք դուրս կը գան միայն այն դէպքում, երբ վստահ են ազատութեան,— վրայ բերաւ սպաներից մէկը:

Զինուորներին հրամայւեց կանգնել պատուհանների տակ և բարձրաձայն ազդարարել կարմիրների վախուստը և Կամաւորական Բանակի մուտքը: Սակայն, ապարդիւն. բանտը խուլ էր ու համր:

— Ջարդեցէ՛ք դուռը,— հրամայեց գնդի հրամանատարը:

Ու զինուորները, հրացանները պատրաստ բռնած, ներս խուժեցին բանտը, բայց լռութիւն և ամայութիւն դառն ամէն կողմ: Ապա՝ նրանք լեցուեցին միջանցքը, որտեղից խոնաւութիւն և գարշահոտութիւն էր փչում: Կիսախաւար խցիկները պարապ էին, իսկ զինուորները չարունակ դոռում.—

— Դո՛ւրս եկէք, բա՛նտարկեալներ, ձեզ ազատութիւն ենք բերել:

Վերջապէս, զինուորները ներս մտան Տասն և Եօթը մահապարտների սենեակը, ուր գտան կօշկակարի պառաւել դիակը, ինչպէս նաև պառաւ իշխանուհին՝ ուժասպառ և մի անկիւն կծկւած, և երիտասարդ աւազակը, որը սկսեց աղիողորմ կանչել.—

— Ինձ ո՞ւր էք տանում. ես չե՛մ ուզում մեռնել, չեմ ուզում մեռնել, ես մայր ունեմ:

— Ի՞նչ ես խօսում, ա՛յ մարդ, ազատւած ես, ազատւած, դուրս ե՛կ:

— Գժւել է,— ասաց գինուորներից մէկը,— վերցնենք նրան:

— Ես չե՛մ ուզում մեռնել. ինձ ո՞ւր էք տանում, ինչո՞ւ էք խաբում:

— Տղե՛րք, վերցրէք սրանց,— հրամայեց ներկայ սպաներից մէկը՝ մատնացոյց անելով աւազակին և պառաւ իշխանուհուն:

Երբ զինուորները աւազակին գրկելով վեր բարձրացրին, նա մի քանի անգամ ոտքերը յամառօրէն թափահարեց դատարկութեան մէջ, որից յետոյ, աղմուկի միջից, հազիւ լսւում էին նրա չքմեղանքի վերջին խօսքերը.—

— Ես արդա՛ր եմ, արդա՛ր եմ ես:

Աւազակի մաքառումները և նրա անյոյս աղաղակը ոչ մի կասկած չէին թողել պառաւ իշխանուհու սրտում. նա այլևս հաւատացած էր, որ իրենց տանում են մահւան: Ու երբ երկու զինուոր մօտեցան նրան, վերցնելու, նրա ձգւած ջղերը թուլացան, գլուխը ընկաւ ձախ ուսին ու նա իր օրհասականը կնքեց հետևեալ երեք խօսքով.—

— Մեղա՛յ քեզ, Տէ՛ր...

* * *

Երեք հայ գաղթականները, որոնք նետւած էին բանտի հեռաւոր պատժարաններից մէկում, ուր հազիւ երեք հոգու կանգնելու տեղ կար, այդ ամբողջ իրարանցումից և կանչերից ոչինչ չէին հասկանում:

Սակայն, կռահում էին, որ դէչ բաներ են կատարւում: Դռների խորտակումը, զինուորների աղաղակը և նրանց պատւոր մոյկերի աղմուկը գաղթականներին զգացնել էր տալիս հայկական ջարդերի ու կոտորածների սարսափը: Նրանք սղմւել էին իրար ու նրանց միջև տեղի էր ունենում հետևեալ զրուցատրութիւնը:

— Էչ նահատակ եղա՛նք, պրծանք,— ասաց նրանցից մէկը՝ անյոյսօրէն:

— Այնպէս գէշ տեղ մը կոխած են, որ չենք կրնար չարժիլ,— վրայ բերաւ միւսը:

— Ուրիշ տեղ ըլլայինք՝ նէ՛, ի՞նչ պիտի կրնայինք ընել, Ջանըմ:

— Տղայի պէս կը խօսիս, բէ՛, ուրիշ տեղ ըլլայինք՝ նէ, հարկաւ, փախչելու փորձ մը կ՚ընէինք:

— Ուրկէ՞ պիտի փախչէիր Ջա՛նըմ:

— Ատ ալ հարցնելի՞ք բան է, ծօ՛. չէ սենեակ մը ըլլար, պատուհանը փողոցին վրայ, քիչ մըն ալ ժամանակ ունենայինք, ազատուելիս ապահոված էր:

— Անոնք քեզի չափ խելք չունի՞ն, Ջա՛նըմ. պատուհանը անանկ կը չինեն, որ փախչի՞ս:

— Ինչ պատուհան ալ որ ըլլայ, ժամ մը բաւական է փողոց նետուելու:

— Մէկ ժամուան մէջ ի՞նչ կրնանք ընել, Ջա՛նըմ. տղայի մը պէս ինչո՞ւ կը խօսիս:

— Է՛հ, ժամ մը քի՞չ է. մէկ ժամուան մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ, ծօ՛:

— Պարապ խօսք կ՚ընե՛ս:

— Մեզ մնացեր է՝ մահուընէ առաջ դիմադրութիւն մը ընել և այնպէս մեռնիլ,— ասաց հեղինակաւոր գաղթականը:

— Շահ աս էր պակաս. դիմադրութիւն ըրինք ու տեսանք...

— Ամէն մէկը թո՛ղ իր դլխին ճարը տեսնէ, Ջա՛նըմ... հայ չե՞նք...

— Սիրտս անանկ կը վկայէ, որ մեզի բան մ՚ալ չի ըլլար, եթէ երբեք այդ փուչրը ռուսներուն հետ չըլլայ:

— Ատիկա հրաշք մըն է:

— Մ՛ա՛մ... մեզի կուգան:

Պատժարանը բացուեց: Գաղթականները լրար եռևից դուրս եկան մռայլ ու մահադէմ, իսկ զինուորները նրանց ժըպտալով՝ ասում էին.—

— Ուրախ եղէ՛ք, ազատա՛ծ էք, ազատա՛ծ:

Հեղինակաւոր գաղթականը տեսնելով, որ Աղաբէկովը

զինուորների հետ չէ և, ենթադրելով, որ նրանք մի կարևոր բան են հարցնում, չտապեց պատասխանել.—

— Ա՛րմէն, Ա՛րմէն... ռուսկի նի գաւարի:

Զինուորներից մէկը անմիջապէս սեղմեց հեղինակաւոր գաղթականի ձեռքը և նրանց ուրախացնելու բարեմտութեամբ ու ձեռքի երթալ-գալու չարժումով՝ ասաց.—

— Բոլշևիկ ո՛ւո՛ւչչա... Դենիկին սիւդա...

— Օ՛խ, խառաչօ՛, խառաչօ՛,— պատասխանեց հեղինակաւոր գաղթականը՝ դառնալով իր ընկերներին՝ աւելացրեց.—

— Ասոնք Դենիկինցիներ են, ծօ՛:

Նրանց դէմքի վրայ սարսափից ուրախութեան անցնելու մի ժպիտ ցոլաց:

Գաղթականները, դուրս ելնելով բանտի դարբասից, անվստահօրէն յետ նայեցին, դիտեցին աչ ու ահեակը ու, երբ համոզուեցին որ իրօք ազատուած են, նրանցից մէկը, զգուշաւոր ձայնով, ասաց.—

— Ձեզի չըսի՞, որ կ՚ազատինք:

— Ալ մի՛ ըսեր, հրաշք մըն էր,— յարեց երկրորդը:

— Այս ամենուն մէջ Կոմիտէին մատը ըլլալու է,— վրայ բերաւ երրորդը:

* * *

Լուսանում էր: Աչնան արևի թոյլ ճառագայթները, հետզհետէ ցրելով հորիզոնի թափանցիկ մուխը, պսակագարդեցին բարձրաբերձ լեռների կատարները, իջան բլուրների վրայ, քնքշօրէն սրբեցին նորածիլ արտերի ու մարգագետինների արցունքը, ողջունեցին քաղաքի ծխնելոյզները և տանիքներից ու կտուրներից սահելով՝ ընկան լերկ մայթերի վրայ, ուր մարդկային արիւնի և արցունքի չիթերը դեռ չէին չորացել:

Ժողովուրդը վախենում էր փողոց իջնել, ենթադրելով, որ կարմիրները նոր խաղ են սարքում, նոր մարդիկ որսալու:

Հակառակորդը դրաւել էր քաղաքը առանց դիմադրութեան և դնդակ արձակելու. իսկ այդ խաղաղ փոխանցման մէջ բնակիչները դաւադրութիւն և փորձութիւն էին տեսնում:

Սակայն, կարճատեւ նախազգուշութիւնից յետոյ, ժողովուրդը ողողում էր փողոցներն ու հրապարակները. շատերը, տօնական անկեղծութեամբ, ողջագուրւում էին. պառաւները ուրախութեան արցունք էին սրբում. կորուստ ունեցողները դիմում դէպի բանտը. ստահակ երեխաները խելայեղօրէն ճըչում ու կանչում էին. իսկ երիտասարդները անխնայ պատռոտում էին պատերին փակցուած կարմիրների վերջին ազդարարութիւնը, ուր բառացի և կարճ ասուած էր.—

«Բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն...

«Մենք հեռանում ենք քաղաքից, նորից դրաւելու վճռականութեամբ: Թողնում ենք այստեղ մեր աչքն ու ականջը. վա՛յ նրանց, ովքեր մեզ հետ չեն»...

Վերջապէս, շատ շուտով, յայտնի դարձաւ զօրանոցում, քաղաքից դուրս և «Մահուան Նաւի» մէջ կատարուած ոճիրները: Ամբոխը խուժում էր այդ վայրերը տեսնելու սպանուածները: Ուրախութիւնն ու վիշտը քայլում էին թեւանցուկ:

Ազգաբնակչութիւնը դուրս էր փխսում փախուստի թափօրից ետ մնացած և այս ու այն կողմ ծուարած կարմիրներին, որոնք հակառակորդի ուժը աւելի ապահով էին համարում, քան ժողովրդի ցասումը: Ձերբակալուած էին մի քանի աննշան անձնաւորութիւններ, ինչպէս նաև հռչակաւոր Ցիմերմանը իր հռետորական պայուսակով, որի մէջ գտել էին մի քանի քիլօ գողացուած քինին:

Դենիսովը իր սպայակոյտով ժամանեց քաղաքը և ընդունեց արքայավայել մեծարանքով:

Հետեւեալ օրը զոհերը թաղեցին մեծ շուքով: Թէև կեանքը կրկին մտաւ իր ընթացիկ հունը, բայց յաղթողները չմոռացան նորից արիւն թափել՝ յանուն արդարութեան և խաղաղութեան:

* * *

Կարգադրուած էր, որ կարմիր ռազմագերիները՝ իրենց կոմիսարներով, դաւաճան զինուորները՝ իրենց սպայով և դասալիքները անյապաղ փոխադրուեն այն քաղաքը, ուր կարմիրները հրացանի էին բռնել երեք հարիւր սպաները, յիսուն և ինը զօրավարները, ու Տասն և Եօթը մահապարտները:

Եւ ահա՛, մի գեղեցիկ առաւօտ, երբ արևը իր կենսատու ճառագայթները ցանել էր բնութեան վրայ, երբ բանտը զարթնում էր նրա առաջին շողի թափանցումով, կալանաւորներին ազդարարուեց, որ պատրաստ լինեն մեկնելու:

Վերջին անգամ լինելով, նրանց արտօնուած էր տեսնել իրենց հարազատներն ու ազգականները:

Ընդհանուր ուրախութիւն կար բանտում ու այդ առանց պատճառի չէր: Ոմանք ուրախ էին պարզ փոխադրութեան համար. ուրիշներ ցնծում էին, որ վերջապէս պիտի որոշւի իրենց ճակատագիրը. աւելի ուրիշներ հաւատում էին, որ ազատուելու են, որովհետև Դենիսովի բանակը յաղթական է:

Դրանց մէջ միայն մէկը կար, որի դանկը հեւում էր հոգսերի ծանրութեան տակ: Նրա մտածողութեան բոլոր ճանապարհները գնում, հասնում էին մինչև մահուան անդունդը:

Դա զօրավար Դենիսովի անձնական սափրիչն էր, որը մնացել էր թշնամու թիկունքը լրտեսի պաշտօնով, և իր արհեստի բերումով թափանցել էր մինչև գլխաւոր սպայակոյտը: Բացի այդ՝ սափրիչը մեղադրւում էր նաև այն բանի համար, որ նա պարտաւորութիւն էր ստանձնել ածելիով կտրելու Դենիսովի կոկորդը՝ հէնց որ փախչելու առիթը ներկայանայ: Սակայն, սափրիչը միանգամայն անպարտ էր այս վերջին մեղադրանքից, բայց որովհետև լրտես էր, հարցաքննիչը, առանց խղճահարուելու, այդ մեղադրանքը փաթթել էր նրա վիզը:

Դասալիք հինգ զինուորները իրենց մեկնումի լուրը ընդունեցին այնպէս սովորական և անտարբեր, ինչպէս եթէ նրանց ասէին՝ «այս սենեակից փոխադրուեցէք միւսը»: Թւում էր, թէ նրանք ամէն բանի հետ հաշտուած էին, անվախ ու անընկճելի. միակ բանը, որը նրանց սարսափ էր ազդում, այդ կեանքն էր, որի մէջ տեսնում էին անջնջելի դատարկութիւն և յաւիտենական ամօթ:

Ջեկայի գործակալը միշտ ենթադրում էր, որ իրեն հալածում են, ուզում են խեղդել, և խեղդել յատկապէս մութի մէջ, որ անկարող լինի ճանաչելու ոճրագործը: Նա չէր հաղորդակցում իր կարմիր ընկերների հետ, փախչում էր նրանցից, հայհոյում նրանց. խօսում էր անկապ, անկանոն և անընդհատ. երբեմն լռում էր, հանդարտում, բայց յանկարծ

գոռալու և թաքնվելու պայմանով. չատ յաճախ ականջները խցանում մատներով... զարկեցէ՛ք, խփեցէ՛ք... լռութի՛ւն, լռութի՛ւն...

Գործակալը վերջին դիշերները ապաստանում էր այն անկիւնը, ուր տեղափոխուած էին հինդ դասալիքները. սրանց մօտ նա հոգեկան անդորրութիւն և խաղաղութիւն էր գտնում: Դասալիքները նրա հետ խօսում էին անցաւոր աշխարհի մասին, յաւիտենական խաղաղութեան մասին, խօսում էին այն մասին, թէ ինչպէս Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ, խաչ բարձրացաւ և իր արիւնով մաքրեց մարդկային մեղքերը... Երկա՛ր, շա՛տ երկար պատմում էին, թէ ինչպէս նա ներող է և գթառատ, անյիշաչար է և սիրող: Գործակալը լսում էր այդ բոլորը և նրան թւում էր թէ բոլորովին նոր բան է լսում, նոր բան է հասկանում: Սակայն, նա կապիկի չափ մոռացկոտ էր, չատ քիչ բաներ էին մնում նրա յիշողութեան մէջ:

Բանտարկեալներից չատերը, հեռու վայրերից լինելով, այդ քաղաքում չունէին հարազատներ, բարեկամներ և նոյնիսկ հասարակ ծանօթներ:

Կալանաւորներից միայն կոմիսար Մելիքովը և Դենիսովի անձնական սափրիչը կանչուեցին վերջին տեսակցութեան: Այցելութեան եկել էին Մելիքովի և սափրիչը կանայք:

Երբ բանտարկեալները երեացին երկաթէ ճաղերի առաջ, սափրիչի կինը սկսեց հեկեկալ, իսկ նրա օգնականը, ուրախ ձևանալով, բարևեց, ձեռք մեկնեց իր վարպետին և աւելացրեց.—

— Աստուած տա՛յ, լաւ կը լինի, հոգ մի անէք:

— Բանը բանից անցել է, լաց մի՛ լինիլ,— ասաց սափրիչը, խօսքը իր կնոջը ուղղելով:

— Ձեզ ո՞ւր պիտի տանեն,—հարցրեց կինը, արցունքները սրբելով:

— Երեխաներին ինչո՞ւ չբերիք,— հարցրեց սափրիչը, փոխանակ պատասխանելու:

Կինը խեղդուեց արցունքի մէջ, իսկ օգնականը չտապեց պատասխանել.—

— Ձուզեցինք գարթեցնել, ժամանակ չկար:

Ապա՝ կինը ղլուխը աւելի մօտեցրեց վանդակ-պատուհանին, իսկ օգնականը նրանց չխանգարելու համար՝ երկու քայլ ետ քաշուեց՝ ասելով՝ «խօսեցէ՛ք»...

Մելիքովի և նրա կնոջ խօսակցութիւնը վէճի բնոյթ ունէր:

— Դու հա՛յր ես և ամուսին, դու պա՛րտաւոր ես դիջել:

— Ես չե՛մ կարող դիջել, չե՛մ կարող,— ասաց Մելիքովը,— ես ոչ խելագար եմ և ոչ սրիկայ:

— Այդպէ՛ս ձևացիր. այդ դիջումն արա՛ ի սէր պատուոյ մօրդ, ի սէր երեխայիդ:

— Անկարելի է:

— Խնդրագրի մէջ գրել եմ, որ ջղային ես, անհոգմալ և մի՞թէ այդ ճշմարիտ չէ՞. կռիւ, արիւն, հոգեկան և մարմնական զրկանը քեզ զարձրել են ջղային, անհոգմալ: Զիջող եղի՛ր, աղաչում եմ, պաղատում, զիջող եղի՛ր:

— Արդէն ասել եմ և նորից կրկնում. վա՛տ ես արել՝ իմ մասին դիմում կատարելով նրանց. ո՛չ ես զիջողն եմ և ո՛չ էլ նրանք՝ ներող. ինչ որ լինի՝ թո՛ղ լինի:

— Խղճա՛ մեզ, Սա՛շա, խղճա՛ մեզ,— ասաց տիկին Մելիքովը, ու սևեռուն աչքերով սկսեց դիտել իր ամուսնու դէմքը, որ այդ րոպէին արտացոլում էր կրօնաւորի մոլեռանդութիւնը:

— Այդ մասին չխօսենք. դու լաւ մարդ ես և լաւ մայր, բայց վատ քաղաքացի,— ասաց Մելիքովը՝ բռնելով իր կնոջ ձեռքը:

— Հարցաքննութեան գոնէ մեզմ եղի՛ր, ես ամէն բանի պատրաստ եմ քեզ ազատելու կամ յանցանքդ մեղմելու:

— Հարցաքննութեան ժամանակ կարող եմ միայն թքել նրանց երեսին:

— Ուրեմն, ամէն բան անում ես, որպէսզի քեզ պատժեն:

— Ինձ մղում ես այդ բանին:

— Ինչպէ՞ս, ի՞նչ ես խօսում, Սաշա՛, ի՞նչ ես խօսում,— ասաց կինը՝ կարմրելով:

— Ցարական գօրավարը ուզում է ինձ ազատել... այդ տարօրինակ է, յանուն ի՞նչ բանի... այդ միայն քեզ և նրան է յայտնի...

— Եւ ասում ես, թէ խելագար չէ՞ս:

— Ես կասկածում եմ,— ասաց Մելիքովը՝ աչքերը գետին յառած և կերկերացող ձայնով:

— Ուրեմն, այդպէ՞ս· չատ չնորհակալ եմ:

— Այո՛, ես կասկածում եմ, և այդ բանն ինձ մղում է անհաչտ լինելու, թէկուզ կործանումի գնով:

— Ժամանակը լրացաւ,— գոռաց բանաի վերահսկիչը:

— Համբուրի՛ր երեխային և մայրիկին,— ասաց կոմիսար Մելիքովը՝ առանց դեռատի կնոջ նայելու:

Կնոջ ուսերը ցնցուեցին, դուսպ արցունքով:

— Երեխաներին համբուրի՛ր,— ասաց սափրիչը՝ բռնելով իր կնոջ գլուխը և համբուրելով արցունքից ողողած նրա այտերն ու շրթունքները: Ապա՝ ձեռք մեկնելով իր օգնականին՝ յարեց·—

— Խանութին և երեխաներին լա՛ւ նայիր:

— Անհոգ եղի՛ր, վա՛րպետ, Աստած տա՛յ՝ ամէն բան լաւ կը լինի:

* * *

Այն բանտը, ուր իրենց մահուան վերջին օրերն էին հաչուել երեք հարիւր սպանները, յիսուն և ինը զօրավարները և Տաան և Եօթ մահապարտները, որպէս «հակայեղափոխականները», այժմ, նոյն ճակատագրի հեղինակով, իր ծոցն էր հիւրընկալում կարմիրները իրենց կոմիսարներով, գործակալներով ու համակիրներով, որպէս խռովարարներ, օրինազանցներ և ժողովրդին ու պետութեան վնասակար տարրեր:

Եկող ու գացող բռնաւորներից իւրաքանչիւրը իրեն էր վերապահում արդարութեան պաշտպանութիւնը, առանց արդարութիւն գործելու, նոր օրէնք էր բերում, անօրէն լինելով, և միշտ պատճառ էր գտնում մարդիկ պատժելու, ինքը յաւէտ յանցապարտ լինելով:

Եւ այդ կարգով պատժելու էին բերւած տաան և ինը կոմունիստները, տաան և մէկ գինուորները իրենց սպայով, որոնք փորձել էին անցնել հակառակորդի գօտին, և հինգ դասալիքները, որոնք եօթը ամբողջ տարի գէնքի և մահուան հետ

էին խաղացել, բայց, այնուամենայնիւ, մեղադրւում էին որպէս վախկոտներ ու դասալիքներ:

Երբ այս կալանաւորները ներս մտան բանտի ընդհանուր սենեակը, այնտեղ գտան ութը կարմիր բանակայինները և հռչակաւոր Ցիմերմանը:

Բանտարկեալներին յատուկ հոգեբանութեամբ՝ սրանք չատ ուրախացան, տեսնելով նոր մարդիկ և նոր բախտակիցներ: Ցիմերմանը հարւանցի ճանաչում էր կարմիրներից չատերին, իսկ քաջածանօթ՝ կոմիսար Մելիքովին:

Ամէն մի խմբակը յարմար տեղ գրաւեց: Հինգ դասալիքները նորից նախընտրեցին մի անկիւն քաչել· սրանցից անբաժան էր Զեկայի գործակալը: Չինացիները դարձեալ ըսկսեցին իրենց կախարդական խաղերը՝ ուրախացնելով բանտարկեալներին: Ցիմերմանն ու Մելիքովը աննկատ առանձնացան:

— Սրանք բոլորը կոմունիստնե՞ր են,— հարցրեց Ցիմերմանը:

— Մեծ մասը,— չտապեց պատասխանել Մելիքովը,— միայն հինգ հոգի հասարակ դասալիք:

— Դեռ ձեզ չե՞ն հարցաքննել:

— Դեռ ո՛չ: Մեզանից միայն սափրիչն է հարցաքննւել· նա մեղադրւում է նաև Դենիսովին սպանելու կասկածով: Այդպիսի հրահանգ եղե՞լ է,— հարցրեց Մելիքովը:

— Այդպիսի կարգադրութիւն չէր կարող լինել, քանի որ ժխտում ենք անհատական տեռորը:

— Նրա դրութիւնը ծանր է:

— Բոլորս էլ հաւասարապէս պատասխանատու ենք· Աղաբէկովը, առանց կենտրոնական կոմիտէի գիտութեան և հակառակ Մոսկւայի կարգադրութեան, սարսափելի ջարդ սարքեց:

— Պատանդ զօրավարները գնդակահարւա՞ծ են,— հարցրեց Մելիքովը՝ յանկարծակիի գալով:

— Կարծեմ, առաջին հերթին:

— Աչքերնիս՝ լո՛յս,— ասաց Մելիքովը՝ գլուխը ծանրօրէն չարժելով:

— Հապա՛, այդ անգլուխ խմաստակը, է հաչիւ բան-

տարկած մեր ընկերների, ուզում է Մառայի փառքը վատակել:

— Գուցէ այդ անհրաժեշտ էր յեղափոխութեան յաջողութեան տեսակէտից,— ասաց Մելիքովը ՝երկար մտածելուց յետոյ:

—Նրանց միշտ կարելի էր սպանել:

— Փոխանակութեան դէպքում, նրանք կ'ազատուէին:

— Կ'ազատուէինք և' մենք:

— Նրանցով հակայեղափոխութիւնը շատ բան պիտի շահէր, իսկ մեզանով յեղափոխութիւնը քիչ բան պիտի կորցնի:

— Ճիշտ այդպէս էր մտածում և' Աղաբէկովը, բայց նա՝ ձեզ բոլորիդ հաշւում էր ոչ աւելի, ոչ պակաս, քան սոցիալ-դեմոկրատներ:

— Փա'կենք այս խօսակցութիւնը,— ասաց Մելիքովը՝ վրդովւած:

— Առանձնապէս վատ էր արտայայտւում քո մասին,— շարունակեց Ցիմերմանը՝ Մելիքովի հետաքրքրութիւնը շարժելու նպատակով:

Բայց Մելիքովը, փոխանակ հետաքրքրւելու, ձեռքը արհամարհանքով թափահարեց և տհաճ արտայայտութեամբ՝ ասաց.—

— Այո', յեղափոխութեան շրջանում դաժան և արիւնուշտ ձեռքերը աւելի արժէք են ստանում, քան մտածող և իդէալիստ գլուխները. Աղաբէկովը մէկն է այդ արիւնոտ թաթերից:

Ցիմերմանը ուզում էր պատասխանել, բայց, լսելով բանտարկեալներից մէկի ահռելի գոռոցը, սարսափով հարցրեց.—

— Ո՞վ է:

— Մանրանկարը Աղաբէկովի. խենթացել է, խղճում ենք նրան, բայց մեզանից վախենում է:

— Մեր աշխատակիցների՞ց է:

— Այո':

— Չեկիստների և լրտեսների վախճանը այդ է: Նրանք կարևոր են մեզ համար, բայց ատում եմ նրանց:

— Լրտեսներն ու դահիճները ամենաթշուառ արարածներն են, որոնց միայն կարելի է արգահատել:

— Արգահատե՞լ՝ այդ նշանակում է արժէքաւորել մարդկանց, որոնք բնաւ տեղ չպէտք է ունենան այս արևի տակ:

— Վիճում ենք մի հարցի մասին, որ շատ յարաբերական է,— ասաց Մելիքովը և, մի րոպէ լռելուց յետոյ, յարեց.

— Բայց դու ա'յն ասա', ի՞նչպէս պատահեց, որ ձերբակալուեցիր:

— Յայտնի է քեզ,— սկսեց Ցիմերմանը,— իմ և Աղաբէկովի յարաբերութիւնները լաւ չէին և աւելի վատացան, երբ զգացի, որ նա իր յայտնի և անյայտ շներով հետախուզում է իմ ամէն մի քայլը...

— Մի՞թէ կարելի է այդպէս արտայայտուել ընկերոջ մասին,— ընդմիջեց Մելիքովը:

— Վիրաւորական ոչինչ կայ,— շարունակեց Ցեկայի քարտուղարը,— լրտեսները շնից աւելի ցած են. Նրանք հետեւում էին ինձ եղբայրական համբոյրով և գաղափարական դիմակով: Ինքս չգիտէի, թէ Աղաբէկովը ի՞նչ ցեխով է ուզում արատաւորել իմ յեղափոխական մաքրութիւնը: Յետոյ միայն իմացայ, որ ես իբր թէ չարաշահութեամբ եմ պարապում, օգտւելով իմ դիրքից: Բանն այն է, որ ես, որպէս պատասխանատու ընկեր, միշտ մտահոգութեան առարկայ եմ դարձրել մեր ընկերների և բանակի սուր կարիքները. այդ կարիքներից ամենաանհրաժեշտը քինինն է: Միշտ և ամէն տեղ աշխատել եմ այդ դեղը խնայել և պահել՝ քաջ գիտակցելով, որ մի օր մեր բանակը նրա սուր կարիքը կը զգայ: Նահանջի օրը, փոխանակ Աղաբէկովի պէս կծիկ դնելու, վազում եմ դեղի մի մասը հետս վերցնելու, բայց դուրս գալիս՝ տեսնում եմ թշնամու ուխները: Վերջը յայտնի է դառնում, որ Կարմիր Բանակը նահանջել է առանց քաղաք մտնելու, իսկ ես այդ մասին լուր չունեմ: Վաղը եթէ դատի ելնենք և քինինի հարցը մէջտեղ գայ, ճակատագրի հեգնանքով, մեր ընկերները պիտի ասեն.— «Արդարացան մեր ասածները, նա քինինի չարաշահ էր»:

Բայց խիղճս հանդիստ է, ամէն բան արել եմ յեղափոխութեան համար, մեր բանակի և մեր վերջնական յաղթանակի համար: Ապագայ պատմաբանին է մնում գնահատելու իմ աշ-

խաւանքը: Իսկ այժմ պատահականութեամբ ընկայ թշնամու ձեռքը:

— Այդ մասին կարելի էր առաջ մտածել,— նկատեց կոմիսար Մելիքովը՝ դէմքի տհաճ արտայայտութեամբ:

— Ցանկարծակիի եկայ,— պատասխանեց Ցիմերմանը՝ սրբելով ճակատից հոսող քրտինքը:

— Ինչ որ է,— ասաց Մելիքովը,— կարևոր փաստաթղթեր հօ չե՞ս ունեցել հետդ:

— Թղթապանակումս դատն իմ նոր պատրաստած ճառը, որը պիտի արտասանէի յաջորդ միտինգում:

— Այդ՝ կարևոր չէ՛:

— Աւելի քան կարևոր է:

— Նրանց համար կարևորն այն է, որ մենք կոմունիստներ ենք և դու՝ ցեկայի քարտուղարը:

— Այո՛, բայց մենք կարող ենք պաշտպանուել որպէս իդէալիստ կոմունիստներ,— ասաց Ցիմերմանը:

— Մենք ոչ մի պաշտպանութեան կարիք չունենք, ընկե՛ր Ցիմերման, հասկացի՛ր. մենք պէտք է թքենք ցարական դատաւորների երեսին և ասենք —

«Մենք պիտի ջախջախենք ձեր գլուխները, հէնց որ առիթ և հնարաւորութիւն ունենանք»:

— Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում,— ասաց Ցիմերմանը՝ համարեա դողալով,— դա հայկական յամառութիւն է և անհեռատեսութիւն:

— Ոչ հայկական է և ոչ էլ հրեական, այլ մարդկային, յեղափոխութիւնը «պահեստուք» չէ:

— Լա՛ւ, լա՛ւ, հանգստացի՛ր,— ասաց Ցիմերմանը,— ջղային ես. այդպէս չենք վարուի:

— Ուրեմն մենք իրար չենք հասկանում,— նկատեց Մելիքովը,— վակենք այս վէճը:

Զին կալանաւորները դեռ չարունակում էին զբաղեցնել միւս բանտարկեալները, մինչ սափրիչը, գլուխն առած երկու ձեռքերի մէջ՝ մտածում էր:

Օրը հասնում էր, մութը աննշմար լցնում, իսկ քառասուն և հինգ կալանաւորները պատրաստւում էին դիմաւորել այս նոր բանտի առաջին գիշերը:

* * *

Կալանաւորների ճակատագիրը վճռած էր: Նրանք պիտի հրացանի բռնէին առանց դատաստանի: Նրանցից քառասունը մեղքրում էին որպէս կոմունիստներ, իսկ հինգը՝ որպէս պարզ դասալիքներ:

Այս մարդկանց բախտը վճռած էր զինուորական մի խորհրդաժողովում, որին մասնակցել էին զօրավարներ Կալուխին, Շէյդման և Գորոդեցկին:

Սկզբում ժողովականները համակարծիք էին եղել կոմունիստներին զնդակահարել հրապարակով, իսկ հինգ դասալիքներին կախաղան հանել ռազմաճակատում, բանակի ներկայութեամբ, բայց ենթադրելով, որ այդ կարող է հակառակ անդրադարձում ունենալ ժողովրդի և բանակի վրայ, վճռել էին վարուել կարմիրների պէս և նրանց եղանակով, այսինքն՝ հինգ դասալիքներին զնդակահարել հրապարակով և յայտարարել բոլորին, իսկ կոմունիստներին սուսերահար անել բանտի բակում, առանց ազդարարութեան...

XIV

Դենիսովի գլխաւոր շտաբի պետ Վոլգովը չհամութեամբ վեր ելաւ անկողնից:

Նախորդ օրւայ ժողովը նրան էր յանձնարարել քառասուն և հինգ կալանաւորների մահավճռի գործադրութիւնը: Նա այդ ծանր պարտականութիւնը ստանձնելուց յետոյ, փոխանակ նոյն երեկոյեան տուն վերադառնալու և իր խղճի հետ հաշիւ նստելու, հանգիստ սրտով մնացել էր ակումբը և ամբողջ գիշերը թուղթ էր խաղացել:

Եւ այժմ, զարթնելիս, չէր մտածում այն մասին, թէ յանուն ի՞նչ բանի և ի՞նչ իրաւունքով մի յիսնեակ մարդ պիտի սպանի: Նրան մտատանջում էր այն միտքը, թէ ի՞նչպէս եղաւ, որ տարուեց թղթախաղի մէջ, երբ տանելու հաւանականութիւնը աւելի մեծ էր: Նորին Գերազանցութիւնը իրեն «բը-

թամիտ» էր անուանել, առանց նոյնիսկ ժպտալու: Նա այդ վիրաւորանքը կը մոռանար, ինչպէս մոռացել էր չատ անպատուութիւններ, եթէ միայն վստահ լինէր, որ զօրավարի բարկութիւնը իջել է և ինքը նրա աչքում նոյնն է, ինչ որ առաջ:

Նախ քան դործի անցնելը, նա ուզում էր գոնէ մի անդամ երևալ զօրավարի աչքին, ստուգելու նրա տրամադրութիւնը, բայց կարևոր պատրւակներ չէր գտնում: Մտածեց մահապարտների խնդրով ներկայանալ, սակայն, վախենալով, որ նոր առիթ կը տայ զօրավարին `կրկնելու նոյն որակումը, այդ մտքից վազ անցաւ: Գնդապետը հաւատ չունեցաւ հեռուն մտածելու և, որպէս արհամարհանք, ձեռքը թափահարեց օդի մէջ, վառեց ծխախոտը ու կոկորդի ամբողջ ուժով՝ գոռաց.—

— Ի՞նչ եղաւ ձեր թէյը:

Կինը, լսելով ամուսնու ձայնը, սեղանատնից դուրս եկաւ և ուրախ ձայնով՝ ասաց.—

— Ջա՛նիկս, ամէն բան պատրաստ է. ինչո՞ւ ես ղշայնանում:

— Գո՛րծ ունեմ, գո՛րծ,— ասաց գնդապետը,— ուշանում եմ, հասկանո՞ւմ ես:

— Զօրավարի՞ն պիտի տեսնես,— հարցրեց կինը՝ քընքշօրէն բռնելով ամուսնու ձեռքը:

— Զօրավա՛ր, զօրավա՛ր, ի՞նչ զօրավար, ամէն բան ես եմ անում, բայց նրա անունն է դուրս եկել: Նա մի «բթամիտ» գինուորական է, ընդունակ միայն հրամայելու:

— Տ՛ա՛ա՛... աղախինը չլսի,— ասաց կինը՝ ձեռքը դնելով ամուսնու բերնին:

— Նրան գո՛ւրս ուղարկիր մի գործով, այսօր վատ եմ տրամադրւած:

Երբ ամուսինները մենակ մնացին, կինը թէյ լեցրեց, խնամքով դրեց գնդապետի առաջ և նստելով նրա կողքին՝ ասաց.—

— Ջա՛նիկս, ինչպէս երևում է, քո և զօրավարի միջև սև կատու է անցել:

— Բութ մարդ է, բո՛ւթ. խաղալ չգիտէ և ղշայնանում է:

— Ի՞նչ է պատահել, ի՞նչ:

— Ի՞նչ պիտի պատահի: Երէկ՝ նստած խաղում էինք: Զօրավար Կալուխինը, առաջնութիւնը վերցնելով, չերվայով լինն առանց կոզերի յայտարարեց: Ես գնացի նրան կործանելու մտադրութեամբ. եկաւ և՝ Նորին Գերազանցութիւնը նոյն յիմարութեամբ: Կալուխինը դուրս պրծաւ. ես ազատւեցի, իսկ նա ընկաւ ահագին ռեմիզով: Շէյդմանը ծիծաղեց, իսկ նա, չկարողանալով զսպել իր բարկութիւնը, դարձաւ ինձ և ձեռքը սեղանին դարնելով՝ գոռաց.—

— Բթամի՛տ, խաղալ չգիտես. մի՛ խաղայ:

— Է՛հ, ինչ կայ որ,— ասաց կինը մեղմ տոնով,— յաճախ ինքդ ես ասել, որ նրա ամէն մի հայհոյանքը օրհնութիւն է .այս անգամ ինչո՞ւ ես վիրաւորւել:

— Գործի մէջ հայհոյել՝ ուրի՛շ բան է, խաղի մէջ՝ ուրիշ:

— Նա քեզ սիրում է և յարգում, բայց մի օր առելի պիտի գառնաս՝ խաղի պատճառով. չգիտեմ, ի՞նչ ես գտել ակումբում:

— Սրանից յետոյ թո՛ղ աղաչի, որ նրա հետ խաղի նստեմ:

— Կը նստե՛ս, կը նստե՛ս, առանց աղաչելու էլ կը նստես,— ասաց կինը՝ մի չտ ուրախ տրամադրութեամբ:

— Կը տեսնե՛նք,— ասաց գնդապետը, իբր թէ ոխակալ տոնով, բայց իրապէս համակարծիք լինելով կնոջ:

— Այսօր, երևի, դրա համար ես չուտ վեր կացել,— ասաց կինը՝ չոյելով ամուսնու ծոծրակը:

— Այդ մասին սկի չեմ էլ մտածել. այսօր մի քանի սրիկայ դասալիքներ պիտի գնդակահարեմ. այդ է պատճառը, որ չուզեցի երկար պառկել:

— Ի՞նչպէս, դո՞ւ, անձամբ,— զարմացաւ կինը՝ աչքերը լայնօրէն բացած:

— Այո՛, ես, անձամբ. յետոյ ի՞նչ:

— Մի՛ անի, ի սէր Աստուծոյ, մի՛ անի, ձեռքերդ մի՛ արիւնոտի:

— Թէյ լեցրո՛ւ, խելքդ չի հասնի:

Հասարակ գինուորի գործ:

— Ես նրանց հասարակն ու յատուկը ցոյց կը տամ:

— Դիրքիդ և պաշտօնիդ վայել գործ չէ. երևի Նորին Գերազանցութիւնն է կարգադրել, որ ղրանով քեզ նսեմացնի. թղթախաղի հետևանք:

— Ցի՜–մա՛ր,— ասաց զնդապետը ժպտալով,— այդ կարգադրութիւնն եղաւ խաղից առաջ, իսկ գօրավարը ինձ «բթամիտ» անուանեց խաղի ժամանակ: Էլ ո՞ւր մնաց՝ պատճառն ու հետևանքը:

— Զգի՛տեմ, չգի՛տեմ, միայն թէ այդ գործը ուրիշին յանձնի՛ր,— ասաց կինը՝ իրական ախորժակով:

— Լա՛ւ, մի՛ տրտմի, կատակում եմ թէև, բայց ուրախութեամբ կը զնդակահարէի նրանցից մի քանիսին. կոմունիստներին առաւել ևս:

— Մի՞ևնոյնն է, սպանութիւնը սպանութիւն է, դասալիք լինեն թէ կոմունիստ:

— Մենք քրիստոնէապար ենք վարուում, իսկ նրանք՝ բարբարոսաբար: Պէտք է տեսնէիր, թէ ի՛նչ գազանութեամբ էին յօշոտել երեք հարիւրից աւելի սպաները, յիսուն և ինը գօրավարները (ասենք՝ նրանց տեղն էր) ու Տառն և Եօթը խեղճ ու կրակ մարդիկ, իբր թէ մեզ համակիր:

— Գլխաւորներին՝ պատժեցէ՛ք, ղրան ղէմ չեմ:

— Գլխաւորնե՛ր... հե՛չտ է ասել, նրանք թողել փախել են. ոճիրների հեղինակը մի հայուկ է. կոմունիստների մեծ մասը օտարազգիներ են, իսկ մեր յիմար մուժիկները նրանց հետ են, ի՞նչ ասես:

Հայե՞ր... բայց նրանք մեզ համակիր են: Ցիչո՞մ ես, կո՛ւեա,— չարունակեց կինը,— երբ մենք դեռ նշանած էինք, մեզ գանազան պարգիւմներ էր բերում մի հայ, որին անուանում էինք «աղուո սաուանայ» և նա շատ էր բարկանում: Լաւ օրեր էին, չէ՞:

— Ցիչո՛մ եմ: Իսկ դու յիչո՞մ ես, երբ մի օր նրան անուանեցի «հայուկ», նա մտածեց-մտածեց և հեղինակաւոր տոնով՝ ասաց.—

«Եթէ ես՝ «հայուկ», դու՝ «ռուսուկ»:

— Հէ՛յ ծիծա՛ղ, ծիծա՛ղ, լաց էլ լինում: Լաւ մարդ էր, բայց պարգիւմները թանգ էր վաճառում, անիծածը:

— Հիմիկւայ հայերն այդպէս չեն. նրանցից մէկը Ռուսաստանի քթին այնպիսի պարգիւմ դրեց, որ յաւիտեանս չենք մոռանայ... յիսուն և ինը գօրավար, Տէ՛ր Աստուած, և ի՛նչ գօրավարներ, ամբողջ Ռուսաստանի էկսը:

— Ամէն ազգի մէջ էլ վատ մարդիկ կան:

— Աստ՛, յիմարներ ինչո՞ւ էք մի տեղ հաւաքւել:

— Ի՞նչ իմանային խեղճերը:

— Ա՛խ թէ Դենիսովը նրանց հետ լինէր. այդ «բթամիտ» և անպէտք մարդը:

— Այդպէս մի՛ ասի, ախոռս է:

— Խօսք է, ասում եմ, էլի՛. դուցէ այսպէս աւելի լաւ է, Աստուած գիտէ: Սակայն, մի բան ճշմարիտ է, որ գօրավարները այլևս անկարող են փրկել Ռուսաստանը: Այս կործանուղղ երկիրը էլի՛ մենք պիտի փրկենք, մե՛նք, հասարակ սպաներս: Այսօր չտաբի պետ եմ, բայց վաղը կարող եմ հրացան վերցնել:

— Ա՛յդ էր պակաս, որ հասարակ գինուոր գառնայիր. աւելի լաւ է թող կործանւի այդպիսի երկիրը, ուր ոչ մեծ կայ, ոչ փոքրը:

— Շատախօսեցինք, ու ես ուշացայ,— ասաց զնդապետը՝ դաստակի ոսկէ ժամացոյցին նայելով ու ոտքի կանգնելով:

* * *

Արևը բարձրացել էր հորիզոնի վրայ, երբ զնդապետ Վոլդովը դուրս եկաւ տնից ու քայլերը ուղղեց դէպի գօրանոց: Տօնական օրերի պէս, այդ օրն էլ նա հագել էր իր նոր զգեստը և կապել արծաթազօծ սուրը, որի ճայնը խառնւելով չարքների աղմուկին՝ բիւրս ուժի պատկառանք ազդելով անցորդներին: Աչ ու ձախ մայթերից անցնող գինուորները բարևում էին նրան, առանց սակայն արժանանալու նրա ուշադրութեան: Նա, իրապէս, ոչինչ չէր մտածում, բայց մտածկոտ էր երեւում: Հասնելով գօրանոց, նա մտաւ հերթապահ սպայի գրասենեակը և այնտեղ գտնելով միայն գինուորական պաշտօնեային, հարցրեց.—

— Ո՞ւր է հերթապահ սպան:

— Վերևն է, պարո՛ն գնդապետ,— ասաց պաշտօնեան՝ բարևի կանգնած:

— Կանչե՛լ,— հրամայեց Վոլդովը:

Երբ հերթապահ սպան ներս եկաւ, գնդապետը առաջինը ձեռք մեկնեց նրան, որպէս մեծաւոր, և սպայի առաղջութիւնը հարցնելուց յետոյ, գինուորական պաշտօնեայի ներկայութեամբ, ասաց.—

— Նստի՛ր, Կուզմինսկի, սի՛րելիս:

— Նոր բա՞ն կայ, պարոն գնդապետ,— ասաց Կուզմինսկին՝ նրան ծխախոտ առաջարկելով:

— Նոր ոչինչ կայ, հին պատմութիւն է, բայց նոր է սեղանի վրայ դալիս:

Վոլդովը իր խօսքը ընդհատեց և գլխի նշանով հասկացրեց գինուորական պաշտօնեային, որ դուրս գնայ:

— Ի՞նչ պատմութիւն է,— հարցրեց Կուզմինսկին:

— Ի՞նչ պէտք է լինի որ, սատանան տանի, այսօր այդ հինգ դասալիքները պէտք է գնդակահարել հրապարակով. եկել եմ այդ գործով:

— Այդ հեշտ է,— ասաց հերթապահը արհամարհանքով, բայց երէկ ի՞նչ է պատահել քո և զօրավարի միջև:

— Ո՞վ պատմեց:

— Կարծեմ, Պլեհնեովը պատմեց:

— Լսեցի՝ երէկ քէֆ էք արել, առանց ինձ,— ասաց գնդապետը, փոխանակ իրեն ուղղած հարցին պատասխանելու:

— Չա՛, շատ ափսոսացինք. դիտէինք, որ «նրանց» հետ թղթախաղի ես բռնած:

— Լաւ կը լինէր, որ ինձ էս յայտնէիք, վեր կը կենայի սեղանից և այդ անախորժութիւնը չէր պատահի:

— Բայց չմոռացանք քո կենացը կոնծել:

— Երէկ՝ զօրավարն էլ իմ կենացը խմեց թղթախաղի մէջ, բայց հաւատա՛, Կուզմինսկի, որ եթէ սեղանի վրայ մի չիշ լինէր՝ կը ջարդէի այդ «բթամիտ» մարդու ճակատին:

— Ցիմարութի՛ւն,— ասաց Կուզմինսկին, ընկերական տոնով,— ծերունի է, մի բան է ասել, չարժէ վիրաւորուել:

— Բայց խաղի մէ՞ջ:

— Միևնոյն է, խաղի մէջ թէ ուրիշ տեղ: Ձե՞ռ յիշում, մի անգամ էլ Շէյտմանին է ասել նման բան:

— Կարծես վիրաւորելու մտքով չի՞ ասել:

— Ո՛չ մի յետին միտք չէ ունեցել:

— Ես չեմ հաւատում, բայց չպէտք է ասէր:

— Դատարկ բա՞ն... քեզ աւելի է սիրում, քան զօրավարներին:

— Կարծում է՞ս,— հարցրեց գնդապետը, Կուզմինսկիին նոյն բանը կրկնել տալու մտադրութեամբ:

— Ձեմ կարծում, այլ հաստատ գիտեմ,— ասաց Կուզմինսկին:

— Երևակայի՛ր, Կուզմինսկի՛, սի՛րելիս, դէպքը պատահեց հետևեալ կերպով: Նստած խաղում էինք: Նա բաւական տարուել էր և յօնքի մազերը ոգնեփչերի պէս ցցել: Կալուխինը երրորդ ձեռքն էր տանում, և չորրորդ ձեռքին չերվայով լինը առանց կոզերի յայտարարեց՝ խաղը վերջացնելու դիտաւորութեամբ: Ես վխտա գնացի, նրան կործանելու վճռականութեամբ. եկաւ և Նորին Գերազանցութիւնը նոյն յիմարութեամբ: Իմ դրութիւնը վատ էր, նրանը էս առաւել, բայց եկաւ, կարծելով, թէ բոլշևիկների դէմ է կռւում:

Կալուխինը դուրս եկաւ փառաւորապէս, ես ազատուեցի, իսկ նա ընկաւ ահագին կորուստով: Սրա վրայ, Շէյտմանը, այդ քաֆթառ դևը, սկսեց քա՛հ-քա՛հ ծիծաղել, իսկ Դենիսովը, չկարողանալով զսպել իր զայրոյթը, դարձաւ լինճ և ձեռքը սեղանին խփելով՝ գոռաց.—

— Բթամիտ, խաղալ չգիտես, տունդ նստի՛ր:

— Դատարկ բան է՛է՛,— ասաց Կուզմինսկին, նոյն անտարբերութեամբ,— չպէտք է վիրաւորուել, նրանց հետ խաղալը արդէն մի մեծ պատիւ է, իսկ հայհոյանքը՝ համակրութեան նշան:

— Ասացի, որ չեմ վիրաւորուում, բայց այս անախորժ դէպքը պատահում է զօրավարի աստիճան ստանալուս նախօրեակին. ա՛յս է, որ ինձ տանջում է:

— Ընդհակառակը, սիրտդ չահելու համար՝ այդ բանը աւելի չուտ կը լինի:

— Ինչ որ է, սատանան իրեն հետ: Լաւ մարդ է, բայց բո՛ւթ է, բո՛ւթ. խաղալ չգիտէ:

— Կալուխինը լաւ է խաղում:

— Ի՞նչ ես ասում. Կալուխինը կատարեալ վարպետ է, սառնասիրտ և լաւ բնաւորութեան տէր:

— Այդպէս է առհասարակ. լաւ խաղացողներն ու խմողները լաւ մարդիկ են:

— Փորձած ճշմարտութիւն է:

— Երէկ՝ մենք ևս անախորժութիւն ունեցանք, բայց կոնեակը չուտով ամէն բան հարթեց,— ասաց Կուզմինսկին:

— Այսինքն:

— Բաւական խմել էինք և չարունակում կենացները: Աւդէեվը ուշ եկաւ: Որպէս սեղանապետ, յանձինս նրա, առաջարկեցի խմել ճակատի սպանների կենացը: Ուրախ աղաղակներով բաժակները վեր բարձրացան: Աւդէեվը իր պատասխան ճառի մէջ յարձակուեց թիկունքի սպանների վրայ՝ նրանց անւանելով մեղկ ու թոյլ: Պլեհանովը նրան ընդմիջեց, ասելով.

— Ցաղթանակը և՛ թիկունքին է և՛ ճակատին:

— Ո՛չ, ճակատին է,— պնդեց գնդապետը:

— Թի՛կունքին է,— յամառեց Պլեհանովը:

— Ճա՛կատինն է:

— Թի՛կունքինն է:

Սրանք՝ քիչ էր մնացել խառնէին իրար: Ձայնս կտրւել է. չիշերն ու բաժակները հարբած թափւում են: Վե՛րջապէս, սրանց ստիպում ենք թևանցուկ խմել ու քէֆը չարունակել:

— Այդ յիմարը չատ է երես առել:

— Թիկունքի կարևորութիւնը անտեսում է:

— Զգիտէ, որ իսկական ճակատը, ուր մղւում է կատաղի մարտը, թիկունքն է, և միմիայն թիկունքը:

— Մենակ նա չէ՛, ճակատի սպանները, ընդհանրապէս, երկարաշունչ են:

* * *

— Ինչ որ է, փակենք այս խօսակցութիւնը,— ասաց գնդապետը,— նրանք աւանակներ են, որոնց դեռ պիտի հեծնենք. դո՛ւ այն ասա՛, ի՞նչպէս անենք, որ այս դասալիքների գնդակահարութիւնը և՛ ազդեցիկ լինի և՛ փառաւոր:

— Ի՞նչ ասեմ. միայն նրա՞նք են գնդակահարւում:

— Ես առաջարկում էի, որ կոմունիստներն էլ հրապարակով գնդակահարենք, բայց այդ զառամեալ և վախկոտ զօրավարները, զանազան նկատառումներով, յարմար գտան, որ նրանց ոչնչացումը լինի գաղտնի:

— Զգիտեմ, ի՞նչից են վախենում:

— Իբր թէ ժողովրդական յուզումից:

— Ժողովուրդ... ժողովուրդը ի՞նչ բան է, հարկաւոր է նրան մի՛շտ տրորել. նա չէ՞ր այս լաբիրինթոսը ստեղծողը, հիմա էլ վտում է մեր եռեից:

— Համաձայն եմ:

— Անուրանալի ճշմարտութիւն է:

— Նրանք էլ համաձայն են. բայց ի՞նչ ասես, իբր թէ քաղաքականութիւն են վարում:

— Ցիմարնե՛ր, չգիտեն, որ քաղաքականութիւնը թընդանօթի բերանն է, իսկ կարգն ու կանոնը՝ մեր կրունկները:

—Անհետացող դինւորականութեան վերջին մնացորդները. օրինակ, յիսուն և ինը հաստատւելիները... ոչխարի պէս մորթւեցին, փոխանակ թիկունքը կազմակերպելու և հակառակորդին հարւածելու:

— Ֆանի՞ հոգի են կոմունիստները:

— Ուղիղ քառասուն:

— Կոմիսարներո՞վ հանդերձ:

— Բոլորը:

— Ո՞ւր պիտի սպանւեն:

— Բանտում, նոյն եղանակով և ձևով, ինչպէս մեր զոհերը:

— Այդ մեր պատասխանն է կոմունիստներին:

— Ընդօրինակութիւն՝ վախկոտ բոլշևիկների:

— Ի՞նչ եղաւ այն կոմիսարի կինը, կարծեմ զօրավարը նրա չուրջը չատ էր դառնում:

— Լաւիկն է... բայց բան դուրս չեկաւ...

— Լա՛ւ կազմւածք ունի:

— Սիրուն է:

— Թուլամորթնե՛ր…

— Նորին Ծերութեան համհարզը աւելի յաջողութեան մէջ է. մի օր, ռազմական գործողութիւնների նախօրեակին, անժամանակ գնում եմ զեկուցման և միջանցքում հանդիպում համհարզին ու կոմիսարի կնոջ, որոնք կանգնած քաղցր խօսում են։ Գործս վերջացրած դուրս եմ գալիս, համհարզը, ձեռքերը իրար շփելով և ինքնաբաւական՝ ասում է.—

— Գնդա՛պետ, ծուռ աչքով ես նայում ինձ։

— Հը՜, խէր ըլնի, ասում եմ, մէջտեղը բան կա՞յ։

— Չէ՛, Աստուած վկայ, բան չկայ. գեղեցիկ է, խօսում եմ հետը։

— Ծօ՛, ա՛նտէր, ասում եմ, հին գայլին խաբե՞լ կը լնի։

— Չէ՛, Աստուած վկայ, ասում է, ու ծիծաղից կոտրւում։

— Ցիմար սպայ է,—ասաց Կուզմինսկին դառնութեամբ,— ա՛յ դրան պէտք է ճակատ քշել, Աւդէեվի հսկողութեան ներքոյ… կնամոլ է և վախկոտ։

— Հերթը դրան պիտի հասնի, վաղո՛ւց մտածել եմ այդ մասին։

— Աւդէևը մասամբ ճիշտ է։

— Նա էլ մի բան չի, ի սէր Աստծոյ, լաւ սպաներ չունենք, եթէ ոչ հիմա Մոսկւայի տակ կը լինէինք։

— Մի օր տեղափոխւենք ճակատը, գնդա՛պետ,— ասաց Կուզմինսկին, ինքնավստահ շեշտով։

— Վերջ ի վերջոյ այդ է մեր անելիքը, եթէ մեր գործերը այսպէս դանդաղ ընթանան։ Հաւատա՛, որ Մոսկւային շատ եմ կարօտել։

— Հէ՜յ, ժամանակնե՛ր, ի՜նչ քէֆեր, ի՜նչ ուրախութիւններ։

— Այդ ժամանակները նորից կը գա՜ն, հեռու չէ՛ այդ օրը…

— Լա՛ւ բանակ չունենք, կարգապահութիւնը խախտուած է, զինւորները՝ անվստահելի։ Հին օրերի մէկ զօրաբաժինը հերիք էր Մոսկւան գրաւելու համար։

— Նոյնն է և՛ հակառակորդը, իրար գտել ենք։

— Բայց մուժիկները մեր մէջքը ջարդում են, մուժիկները։

— Որտեղ հաց՝ այնտեղ կաց, ա՛յս է նրանց հոգեբանութիւնը։

— Կուռ բանակը ամէն բան է։

— Դրա համար՝ անխնայ կռիւ դասալիքների դէմ։

— Զարմանում եմ, որ այդ հինգ դասալիքները դեռ շնչում են։

— Նորին Ծերութեան յիմարութիւնը։

— Եւ դեռ դատ-դատաստան էին ուզում անել. դասալիքը ի՞նչ, դատը ի՞նչ։ Խաղաղ ժամանակ հօ չէ՞։ Զի կուռում, գնդակը ճակատին՝ պրծաւ-գնաց։

— Ապա՛, քե՛զ տեսնեմ, Կո՛ւզմինսկի, այսօր դրանց ճակատին մի այնպիսի գնդակ դնել, որ ժողովուրդը ապշի և բանակը՝ զարմանայ։

— Այդ շատ հասարակ գործ է։ Ես չեմ հասկանում, թէ ի՞նչ արտակարգ միջոցի մասին ես խօսում։ Հինգ հոգի են՝ տասը զինւոր և տասը փամփուշտ՝ պրծաւ-գնաց։

— Չես հասկանում, այստեղ մի նրբութիւն կայ,— ասաց գնդապետը, խորհրդաւոր եղանակով,— ժողովի մէջ ես այդ կարծիքին էի, բայց զօրավարները ուզում են մի տեսակ ծիսակատարութեան կերպարանք տալ այդ պարզ գործին, իբր թէ մեզ համար իւրաքանչիւր ռուս մարդու կեանքը թանգ արժի, թէ մենք վրէժխնդրական ոգի չունենք, թէ մենք այդ ամենն անում ենք միմիայն ժողովրդի և հայրենիքի բարօրութեան համար, և անում ենք ափսոսանքով ու հարկադրանքի տակ։

Իսկ կոմունիստների հետ մեր հաշիւը կը տեսնենք առանձին— առանց ծիսակատարութեան և սիրաբանութեան։

Մէկ խօսքով, սա մի լաւ առիթ է ժողովրդին ցոյց տալու, որ մեր թղթերը բաց են նրա առաջ, որ մենք արդար ենք և գիտենք պատժել յանցաւորներին, ժողովրդի ներկայութեամբ և նրա մասնակցութեամբ։

— Հանդիսաւոր գնդակահարութիւնների մասնակցել եմ և փորձառութիւն ունեմ։

— Ուզածս այդ է։

«Լաւ յիշում եմ. մի անգամ, ռազմաճակատում, մեր գնդի դաշտային հեռախօսի հերթապահ երեք զինուորները, փոխանակ անմիջապէս պատասխանելու, երրորդ զանգահարութեան միայն մօտենում են հեռախօսին: Առանց այլևայլութեան սրանք յանձնւում են դաշտային դատարանի:

«Մնդիրը մութ է մնում թէև, բայց փաստը մէջտեղն է:

«Դատարանը գնդակահարութեան վճիռ է արձակում: Զինուորները դաստաւորելու և կարգապահութիւնը պողպատի վերածելու վճռականութեամբ, որոշում ենք մահապարտներին գնդակահարել հրապարակով և գնդի ներկայութեամբ: Ինձ կարգադրիչ են նշանակում. իսկոյն գործի եմ անցնում: Բանակատեղից որոշ տարածութիւն հեռու, դէպի թիկունքը, փորել եմ տալիս երեք գերեզմաններ, երեք նշանատախտակներով, իւրաքանչիւրի վրայ գրել տալով զինուորի անունը և յանցանքը: Գումդը, սպաների առաջնորդութեամբ և անդէն, հրապարակ ենք հանում որպէս լո՛ւռ հանդիսատես: Ցետոյ՝ չարել եմ տալիս երեք գնդացիր գերեզմանների ուղղութեամբ. ապա՝ բերում տասը լաւ նշանառու զինուորներ և կանգնեցնում գնդացիրների բերանը այն նախազգուշութեամբ, որ եթէ զինուորները յանկարծ հրաժարւեն կրակելու, հող ու մոխիր դարձնեմ և՛ հրաժարուողներին, և՛ մահապարտներին:

«Եւ ահա՛, ամէն բանը պատրաստ է, օդը զեղեցիկ, լռութիւնը՝ սարսափելի:

«Գնդի հրամանատարը, շտաբի սպաներով, կանգնած է հեռուն և զարմանալի հետաքրքրութեամբ դիտում է կարգադրութիւններս: Նրանց մօտ են գնդի քահանան, երկու բժիշկ և գթութեան մի քանի պողնիկ քոյրեր: Ջնայած որ ամէն բան պատրաստ է և կարող եմ գործի սկսել, բայց դիտմամբ յապաղում եմ, աւելի տպաւորութիւն և պատկառանք ազդելու համար:

«Վերջապէս, հինգ սուսերամերկ զինուորների և մի սպայի կարգադրում եմ, որ մահապարտները բերեն:

Բերում են:

«Նրանց դանդաղօրէն և հանդիսաւոր առաջնորդում եմ փորած գերեզմանների մօտ և իւրաքանչիւր մահապարտին կանգնեցնում իր անուան նշանատախտակի և փոսի առաջ:

«Երեսակա՛յր վայրկեանը:

«Իմ ձեռնոցները աւելի ճերմակ չեն, քան այդ երեք դանցառուները: Նրանցից երկուսը լաց են լինում, իսկ մէկը քարացել է: Նրանց առաջնորդող սպային նշան եմ տալիս, որ կապի մահապարտների աչքերը: Լացողները հնազանդւում են, իսկ քարացածը հրաժարւում, աղաղակելով.—

«— Ես վախկոտ չե՛մ, վախկոտ չե՛մ ես:

«Երկրորդ նշանիս վրայ՝ սպան մահապարտների կռնակը դարձնում է դէպի մեզ, իսկ երեսը՝ դէպի գերեզմանները: Լացողները հնազանդւում են, իսկ քարացած զինուորը դարձեալ հրաժարւում է, կուրծքը ցուցական չարժումով դուրս նետելով:

«Զինուորի այս արարքը ինձ չատ է դիւր գալիս. լեցւում եմ հպարտութեամբ և դգում, որ մենք զինուոր ենք գնդակահարում և ոչ թէ վալասի կտոր:

«Մէ՛կ, երկո՛ւ, երե՛ք, հրացանները որոտում են՝ մահապարտներին զարձնելով ծեծած քուֆթա:

«Հա՛, մոռացայ ասել, որ լալկան զինուորները վերջին անգամ խոստովանում և սրբութիւն են առնում քահանայից, իսկ քարացած զինուորը մերժում է՝ նոյն յամառութեամբ:

— Տնաշէ՛ն, էլ ի՞նչ քարացած, դուք գնդակահարել էք մի հազւագիւտ ասպետ,— ասաց Վոլդովը՝ ինքն ևս կուրծքը դուրս նետելով:

— Ձեր ուզածը նման մի հանդէս պէտք է լինի, այնպէս չէ՞,— հարցրեց Կուզմինսկին, խօսքը վերջացնելով:

— Համարեա թէ,— համաձայնւեց գնդապետը,— միայն այն տարբերութեամբ, որ այս գնդակահարութիւնը պիտի վերջնել աւելի լայն չափով, որովհետև, այստեղ, որպէս ականատես, հանդէս պիտի գայ նաև ժողովուրդը:

— Ամբոխը,— ուղղեց Կուզմինսկին:

— Ասենք՝ ամբոխը:

— Մէկ խօսքով,— ասաց հերթապահը,— ամէն բան կը սարքեմ, իսկ ընդհանուր կարգադրիչի պաշտօնը կը թողնեմ քեզ, գո՞հ ես...

— Աւելին չեմ ուզում, Կո՛ւտմինակի, սի՛բելիս, միայն ինձ պարզերես պահես:

— Անհոգ եղի՛ր, բայց մի քէֆ պիտի տաս:

— Փա՛ռաւոր քէֆ:

* * *

Մի ժամ յետոյ ամբողջ քաղաքին յայտնի էր, որ այդ օրը ծանր յանցագործներ պիտի դնդակահարուեն հրապարակով, սակայն, ոչ ոք դիտէր, թէ ո՞վքեր են մահապարտները և քանի՞ հոգի:

Լուրերը ծագում էին առնում կրպակներից, խանութներից և դլխաւորապէս չուվայից ու տարածւում ժողովրդի մէջ՝ կաթնավաճառ պառաւների, լրագրավաճառ երեխաների, ծխնելոյզ մաքրող հալեւորների և քաղաքի ստահակների միջոցով:

Խօսւում էր այն մասին, թէ դնդակահարուողները մի քանի կոմիսարներ են, Աղարէկովի դլխաւորութեամբ, որոնք ձերբակալուած են նահանջի ճանապարհին և որոնց դերեվարութեան լուրը ցարդ դաղտնի է պահւել, ժողովրդին անկնկալ անելու համար:

Լուրեր էին չրջում նաև, թէ մահապարտները մի խումբ դաւադիրներ են, որոնք նպատակ են ունեցել Դենիկովին սպանել՝ սղոցելով նրա կոկորդը: Կային մարդիկ, որոնք հաստատ էին, թէ հրացանի պիտի բռնուեն Պորֆերին, Անդրիւշկան և անծնօտ Զելակովը՝ բժշկի ընկերակցութեամբ:

Ըե այսպէս, լուրերը, ըստ մարդկանց ճաշակի ու ցանկութեան, տարածւում ու մեծանում էին, դրդռելով հանդիսատես ամբոխի երևակայութիւնը:

Այս լուրերից ո՞րն էր ճիշտը, ոչ ոք դիտէր, ինչպէս և անծանօթ էր մնում թէ դնդակահարուողները իրօք հինդ դասւիքներ են: Սակայն, մի բան անկասկած էր, որ այդ օրը մարդիկ պիտի դնդակահարէին արևի լոյսով և բոլորի ներկայութեամբ:

Կուտմինակին իր ամբողջ համառութիւնն ու փորձառութիւնը հրապարակ էր նետել այդ օրւայ մահահանդէսը դարձնելու արտակարդ և ահագնեցիկ: Արդէն պատրաստ էին հինդ դերեզմանները երենց ադդատախտակներով, որոնց վրայ դրւած էին մահապարտների անուններն ու յանցանքը: Տախտակներից չատ բարձր, օդի մէջ, կամարաձև, փողփողում էր լայն ու սպիտակ մի ժապաւէն՝ հետևեալ մակադրութեամբ:—

«Մա՛հ ժողովրդի թշնամիներին»:

Քաղաքի ամբողջ դօրքը, ընդարձակ տարածութեան վրայ, պարիսպել էր թատերաբեմը: Միայն դերեզմանների եռևի կողմը ազատ էր թողնւած՝ դնդակների տեղատարափի համար: Շղթայից ներսը չարւած էին տասն և չորս դնդացիրներ, իւրաքանչիւրի գործածութեան յատկացած լինելով մի սպայ և երկու դինուոր: Գնդացիրներից որոչ հեռաւորութեան վրայ՝ դետեղած էին մէկ դաշտային և երկու լեռնային թնդանօթներ, որոնց հսկում էին սուսերամերկ պահակները: Հեծելազօրքը հանդարտօրէն չրջում էր օդակից դուրսը՝ կարդ պահպանելու հրահանգով:

Ամբոխը, ճաչից յետոյ, կերած ու խմած, անասունի դոհունակութեամբ, օրօրւում էր լայն խճուղիի վրայ և անդադրուկ խառնում օդաչղթայի եռև, յարմար տեղ դրաւելու մտահոդութեամբ:

Վոլդովը չրջում էր չղթայից ներսը, անվերջ կարդադրութիւններ անելով:

Նա քրտնած ու կարմրած էր ապարդիւն ճիդերից ու անհանդստութեան ծարաւից: Աչխատում էր սառնարիւն երևալ, բայց ներքնապէս յուդւած էր, և յուդւած էր ոչ թէ նրա համար, որ քիչ յետոյ իր մատի մէկ չարժումով հինդ մարդ պիտի մեռնէին, այլ լոկ նրա համար, որ այդ ամբողջ դօրքն ու ժողովուրդը լսում էր նրան և անթարթառ կատարում նրա ամէն մէկ հրամանը: Նա խորապէս ապրում էր այդ ամբողջ հանդիսաւորութիւնը և դգացած էր անկեղծօրէն, որովհետև այն համոդումն ունէր, թէ լինքը չատ կարևոր և անհրաժեչտ մարդ է, ինչպէս և արժանի դինուորական՝ դօրավարի աստիճանով:

Գնդակահարութիւնը նչանակւած էր կէսօրից յետոյ, ժամը ուղիղ երեքին: Վճռական վայրկեանը մօտենում էր. դօրքն ու ժողովուրդը տենդագին հետաքրքրութեամբ վէտ վէ-

տում: Հանդիսավայրը եկող ամէն մի կառք, ինքնաշարժ և մարդկանց մի խմբակ զառնում էր հազարաւոր անհամբեր աչքերի խուզարկութեան կէտ, և «մահապարտներն են» չչուկը փոխանցւում էր բերնէ-բերան, բայց միշտ յուսախաբութեան զառնութեամբ:

Արարողութիւնից կէս ժամ առաջ հանդիսավայրը ժամանեցին երկու քահանայ և մէկ տիրացու՝ խաչով-աւետարանով: Ինչ յետոյ եկաւ նաև դիահանձնիչ բժիշկը իր երկու երիտասարդ օգնականներով: Գնդապետ Հոլդովը այս դէխաւոր դերակատարներին դիմաւորեց մեծարանքով և նրանց առաջնորդեց իրենց յատուկ տեղերը:

Ամբոխը աւելի և աւելի անհամբեր էր զառնում: Նորեկները նրան զբաղեցնում էին միայն մի քանի վայրկեան, որից յետոյ, նա, մսուրին կապւած ու խոտի սպասող եզան նման, աչքերը յառում էր դէպի այն կողմը, որտեղից պիտի երևային մահապարտները:

* * *

Այդ միևնոյն ժամանակ բանտում ուրիշ բան էր կատարւում:

Կուզմինսկին, որպէս օրէնքի կարդադրիչը, որպէս մահապարտների առաջին հարցաքննիչը և դաշտային դատարանի անդամը, անձամբ գնացել էր բանտը, զնդակահարուողներին առաջնորդելու:

Նա այժմ աղօտ կերպով յիշում էր հարցաքննութեան մանրամասնութիւնները, բայց անկարող էր մտաբերել դասալիքների տառապած և համարեայ միատեսակ դէմքերը:

Սակայն, որոշակէս պատկերացնում էր, թէ ինչպէս այդ գորշ ու միատեսակ մարդիկ, հարցաքննութեան ժամանակ, իրենց պահում էին համարձակ, անվախ և բիրտ: Յիշում էր նաև, թէ ինչպէս նրանցից ամէն մէկը, իր խօսքը վերջացնելով, հարկ և պարտականութիւն էր համարում պարզ, որոշ և վճռական կրկնել.—

«Մենք կը մեռնենք, սակայն մարդ չենք սպանի»:

Նա յիշում էր այս ամենը, որպէս վաղեմի դէպք, մի հի՛ն յուշ, անխմաստ և անբնական: Այժմ նրան զբաղեցնում էր այն միտքը, թէ դասալիքները ի՞նչպէս պիտի ընդունեն այն սարսափելի «լուրը», որ պիտի արտասանէր միայն երեք բառով.—

«Դո՛ւբ պիտի գնդակահարւէք»:

Այսպէս մտածելով, Կուզմինսկին ինքնիրեն գտաւ բանտի զրասենեակում, ուր բանտապետը նստած գրում էր:

— Բա՛րև,— ասաց Կուզմինսկին՝ ձեռքը մեկնելով ծերունուն:

— Բա՛րև, Կուզմինսկի, բա՛րև,— ասաց բանտապետը՝ ժպտալով:

— Պատրա՞ստ էք:

— Ես պատրաստ եմ, բայց ինչո՞ւ այսքան ուշ. երեքը անց է:

— Մի ժամ թող աւել ապրեն, ի՞նչ կայ որ:

— Ինճողումից չուտ կ'ազատւենք,— ասաց բանտապետը, անհոգօրէն փախցնելով ճանճը, որ երրորդ անգամն էր նստում նրա դրչածայրին:

— Որքան ո՛ւշ, այնքան աւելի ազդեցիկ և հետաքրքրական:

— Այդ ուրիշ բան է:

— Հապա ի՞նչ կարծեցիք. այսպիսի հանդէս ամէն ժամանակ չենք ունենայ:

— Ասում են՝ ամբողջ քաղաքը թափւել է դաշտը:

— Այդ էր պակաս, որ չզային:

— Լա՛ւ է, դասալիքները կը խրատւեն:

— Կալանաւորները դիտե՞ն, որ պիտի զնդակահարւեն:

— Մեզանից բացի ոչ ոք գիտէ, այդպէս է կարգադրւած:

— Վոլդո՞վն է կարգադրել:

— Հրամանը նա է ստորագրել:

— Օ՛ն, ուրեմն, գործի,— ասաց Կուզմինսկին, ձեռքերը չփելով:

— Ձեր խոնարհ ծառան եմ,— ասաց ծեր բանդապետը՝ վերցնելով բանալիների խուրձը:

Դուրս գալով բակը, Կուզմինսկին տասը զինուորներից

հինգը իր հետ վերցրեց ու գիմեցին դէպի կալանաւորների սենեակը:

Դուռը բացուելուն պէս՝ Զեկայի ուսանող գործակալը, որ կուչ էր եկել դասալիքների անկիւնը, օտարոտի ճիչ արձակեց և փարուելով դինւորներից մէկին, ասաց.—

— Եկա՛ն, եկա՛ն:

Կուզմինսկին չփոթուեց, բայց բանտապետը նրան դիմելով, հազիւ լսելի՝ ասաց.—

— Կիսախե՛նթ է, ուշ չղարձնել:

Շշուկը լռութեան փոխուեց, երբ Կուզմինսկին ըրպանից հանեց մի նեղ թղթի կտոր և, առանց կալանաւորներին նայելու, ասաց.—

— Բանտարկեալներից նրանք, որոնց անունները կարդում եմ, թո՛ղ առաջ գան:

Ու նա դանդաղ, բայց խրոխտ ձայնով կարդաց դասալիքների անունները:

Կալանաւորները հեզաբար առաջ եկան և չարուեցին Կուզմինսկիի դիմաց: Սպան նայեց այս հինգ դէմքերին, նայեց նրանց անթարթ ու բարուքեամբ լի աչքերին և փոխանակ առելու՝ «գո՛ւք պիտի դնդակահարուէք», իր կամքին հակառակ, ասաց.—

—Հետևեցէք ի՛նձ:

Բանտարկեալները դուրս եկան:

Թէև Կուզմինսկին քայլում էր յաղթականօրէն, բայց նրա դանկում չփոթ կար և սրտում՝ խռովք:

— Այդ ի՞նչպէս եղաւ,— մտածում էր նա,— որ ես չըկարողացայ ասել այն, ինչ որ կանխորոշել և ծրագրել էի, և ասացի այն, ինչ որ բնաւ չէի մտածել: Պատկառա՞նք՝ բնա՛ւ, չփոթուքի՞ն. երբե՛ք, վա՞խ. բայց ումի՞ց. դասալիքների՞ց, որոնք դնդակից դողում և մահաւանից խուսափում են:

Ո՛չ այս, ո՛չ այն, այլ պարզապէս արդահատանք, վայելչութիւն, դուցէ և խորհրդաւորութիւն... «Հետևեցէք ի՛նձ»... Մի՞թէ այս խօսքերի մէջ աւելի ահարկու, աւելի սորտափելի իմաստ չկա՞յ, քան որ պիտի ասէի,—

«Դուք պիտի դնդակահարուէք»:

Աւելի խորը իջնելով իր հոգու յատակը, Կուզմինսկին

դտաւ, որ այդ մարդիկ վախկոտ չեն, դասալիք էլ չեն,— մարդիկ, որոնք եօթը տարի վառօդի ծուխ են շնչել և թնդանօթի որոտ լսել... Բայց ինչո՞ւ չեն կռուել, ինչո՞ւ...

Ու մի ձայն միշտ նրան յուշում էր.—

«Մենք կը մեռնենք, բայց մարդ չենք սպանի»:

Յիմարութիւն և անիմաստ պատճառաբանութի՛ւն... Զինւորը միշտ պիտի կռւի, քանի կռիւ կայ, քանի դեռ մահը բացակայ է. իսկ սրանք չեն կռւել, չնայած որ կռիւ կայ և մահը բացակայ է:

Կուզմինսկին վճռեց նրանց յայտնել այն, ինչ որ չէր կարողացել ասել բանտի սենեակում, միւսների ներկայութեամբ: Բայց մի րոպէ յետոյ միտքը փոխեց՝ այդ ծանր պատասխանատուութիւնը թողնելով Վոլդովին:

* * *

Երբ կալանաւորները արդէն կանգնած էին բանտի լայն ու ընդարձակ բակում, ուր դինւորները իրենց ատինները ցցել էին արևի աչքերին, ուր լոյս կար և ջերմութիւն, ուր բանտարկեալները նորից-նոր ապրում էին կեանքի և ազատութեան քաղցրութիւնը, Կուզմինսկին հանդիսաւոր և հեղնական եղանակով՝ ասաց.—

— Ուրեմն, ի՞նչ... դուք վճռել էք չկռւե՞լ:

Լռութիւն:

— Վճռել են չկռւել... Թուլամորթնե՛ր,— կրկնեց Կուզմինսկին, կարծես բանտարկեալներին խօսել տալու նպատակով:

Նորից լռութիւն:

— Ինչո՞ւ չէք խօսում, ի՞նչ է պատահել,— ասաց սպան, արդէն զայրացած:

— Ոչինչ ունենք ասելու,— ասաց վերջապէս դասալիքներից մէկը,— արևը այնպիսի հաճելի ջերմութեամբ է թափանցում ոսկորները, որ ուրիշ բանի մասին չեմ մտածում:

— Մեզ արդէն հարցաքննել էք,— վրայ բերաւ երկրորդ դասալիքը՝ մեղմ տոնով,— եթէ մեզ նորից հարցաքննելու էք տանում, պատրաստ ենք:

— Ձեր բախտը արդէն վճռւած է,— ասաց Կուզմինսկին,

հետաքրքրութեամբ դիտելով կալանաւորների դէմքը:

Բանտարկեալները լռութեամբ պատասխանեցին, իսկ Կուզմինսկին ջղայնացած շարունակեց.—

— Եւ վճիռը չատ ծանր է:

— Մեզ ոչինչով կարող էք սարսափեցնել,— պատասխանեց դասալիքներից աւելի ազդեցիկը:

— Եթէ այդպէս է,— ասաց սպան դայրացկոտ ձայնով,— պիտի յայտնեմ, որ դաշտային զինուորական դատարանը ձեզ դատապարտել է մահուան:

— Մենք կը մեռնենք, բայց մարդ չենք սպանի:

— Այսօր դուք պիտի մեռնէք:

— Այսօր մենք պիտի ապրե՛նք,— ասաց ազդեցիկ դասալիքը ու նրա մազերը փշաքաղեցին, և աչքերը լեցուեցին արտասուքով:

— Առաջ անցէ՛ք,— հրամայեց սպան արհամարհանքով:

Դասալիքները անխօս առաջ անցան, իսկ տասը զինուորները չրջապատեցին նրանց:

Կուզմինսկին կանգնեց խմբի առաջ, սուրը քաշեց պատեանից զինուորական ճկուն չարժումով ու գոռաց.—

— Պա՛տ-բա՛տա. յա՛-ռա՛յ. մէ՛կ, երկո՛ւ, մէ՛կ, երկո՛ւ:

Դարբասի փեղկերը չռինդով բացուեցին ու խումբը դիմեց դէպի Գողգոթան:

Այն պարագան, որ դասալիքները քայլում էին մէկ-մէկ, սեղմ չրջանակի մէջ, նրանց զրկում էր իրար հետ խօսելու հնարաւորութիւնից: Մահապարտները մտազբաղ էին, բայց ոչ ընկճուած: Նրանք հաւատացած էին, որ սպայի յայտարարութիւնը ջղայնութեան կամ վատութեան արդիւնք է, ինչպէս նաև համոզուած էին, որ ոչ մի ժամանակ և ոչ մի երկրում, առանց դատի ու դատաստանի, մարդ չեն սպանի, այն էլ իրենց նման մարդիկ, որոնք եօթը տարի չարունակ ծառայել էին ցարին ու ժողովրդին, իսկ հիմա ուզում են դնալ Նազովբեցու եռւից: Սակայն, նրանք չէին կարողանում հասկանալ, թէ իրենց ո՞ւր են տանում և ինչի՞ համար:

Այդ պատճառով, դասալիքներից վերջինը, որ քայլում էր պահակներից մէկի հետ համընթաց, համարձակութիւն ունեցաւ կամացուկ ասելու.—

— Ես սիրում եմ արևը, մարմինս տաքանում է, ես միշտ մրսում եմ:

Զինուորը, փոխանակ նրան պատասխանելու, ձեռքը բերնին խուփ դրաւ և ժպտաց:

— Ձեր պետը չի լսում,— ասաց կալանաւորը, գլուխը չարքից դուրս նետելով և Կուզմինսկիի կողմը նայելով:

— Զինուոր ես՝ դիտես մեր հալը,— պատասխանեց պահակը, առանց գլուխը թեքելու:

— Ո՞ւր են տանում մեզ,— հարցրեց կալանաւորը յամառօրէն:

— Ջօրանոց,— ասաց պահակը՝ կարճ խօսելու համար:

— Հեռո՞ւ է:

— Քաղաքից դուրս:

— Իսկ ինչո՞ւ համար են տանում:

Պահակը, տեսնելով, որ խօսակցութիւնը երկարում է, սուլելու ձևով չրթունքները քաղեց, աչքերը լայն բացաւ և յօնքերը մի քանի անգամ վեր նետեց:

Դասալիքը լռեց:

Խումբը գնում էր դանդաղ և միօրինակ: Կուզմինսկին, առանց իր պաշտօնական ձևն ու դիրքը փոխելու, քայլում էր խմբի առջևից և որոշ տարածութեան վրայ: Նա հոգեկան անդորրութիւն ունէր, զոհ էր, որ իր որոշումը յայտնել էր կալանաւորներին, դեռ գնդակահարութեան վայրը չհասած:

Քաղաքի տները նօսրանում ու հատնում էին. հետզհետէ երևում էր մահուան դաշտը, ուր ամբոխը այնպէ՛ս ակնդէտ ըսպասում էր զոհերին:

Երբ կալանաւորները բաց դաշտ դուրս եկան և առաջին անգամ տեսան այն հոծ զանգուածը, որ բռնել էր ահագին տարածութիւն, իրար նայեցին, իրար հասկանալու համար...

Մահապարտներից վերջինը, չկարողանալով պահել իր անհանդստութիւնը, նորից դիմեց ծանօթ պահակին,—

— Ի՞նչ կայ այստեղ:

— Զդիտեմ,— ասաց պահակը, նորից ձեռքը բերնին խուփ դնելով:

Կալանաւորը մռայլւեց. Նրա ճակատի յանկարծական քրտինքը, առաւօտեան ցօղի պէս, փայլում էր արևի ճառագայթներից:

* * *

Քանի մահապարտները մօտենում էին բազմութեան, այնքան աւելի էին դղում այն վախը, երբ մարդիկ ունենում են վտանգից առաջ:

Միայն առջևից գնացող դասալիքն էր, որ այդ բոլորը տեսնում էր ու չէր դղում: Նա քայլում էր ուղիղ կուզմինկիի ետևից, անդադար նայելով նրա թիկ հասակին և մարմնի զանազան շարժումներին, յաճախ աշխատելով զսպել իր ծիծաղը:

Նրան թւում էր, թէ ինքը գտնւում է հայրենի գիւղում: Փոքրիկ, կայտառ երեխայ է, ճիշտ ու ճիշտ այն տարիքի մէջ, երբ մեծ հաճոյք և բաւականութիւն էր դղում «գինւոր» խաղալ: Ցիշում էր, թէ ինչպէս ինքը մեծ ձգտում և հաւատ ունէր «զօրավար» դառնալու. քայլել այնպէս և խումբը առաջնորդել այն ձևով, ինչպէս քայլում և առաջնորդում էր կուզմինկին: Սակայն, հակառակ իր անհուն վախապին և ցանկութեան, նրա մեծ ընկերները, չարունակ նրա վզակոթին տալով, նրան բերում ու կանգնեցնում էին շարքի մէջ, որպէս սոսկական գինւոր, միշտ ենթակայ և միշտ հնազանդ: Ա՛խ, ինչպէս կուզենար, գոնէ մէկ անգամ, մէկ վայրկեան խումբը կառավարել և Պաւլուշկային հրամայել—

— Պաւլուշկա, տե՛ղդ անցիր, ուղի՛ղ քայլիր:

Նա երբեք «զօրավար» չդարձաւ Պաւլուշկայի պէս, բայց դրա փոխարէն նա լաւ տաղ էր ասում: Ժամ էր գնում և սարկաւագ Պոպովը սիրում էր նրան. չապիկ էր հագնում և ղրքկալի կողքին մոմ բռնում: Հիմա Պոպովը ծերացել է, տէրտէր է ձեռնադրւել, իսկ Պաւլուշկան այժմ չկայ. նա մի օր պատկեց ու էլ վեր չկացաւ:

Երբ նրան թաղեցին, ինքը կանգնել էր քահանայի կողքին և բերանաց դիտում, թէ ինչպէս քահանայի ցանցառ ու կճատ միրուքը չարժւում էր Աւետարան կարդալիս կամ չարական երգելիս:

Ինքը լաց չեղաւ Պաւլուշկայի վրայ, բայց խղճաց, ափսոսաց նրան, այդ ահռելի «զօրավարին», որ միշտ խումբը առաջնորդում էր կոկոզավիզ և գայլացկոտ:

Մահապարտը չիչեց նաև շատ ուրիշ դէպքեր, ժամանակագրական կարգով պատկերացրեց իր ամբողջ կեանքը և ափսոսանքով դառաւ, որ իր լաւագոյն տարիները անցել են «գինւոր» խաղալով:

Ցիչելով այս բոլորը, նա մի անգամ ևս դիտեց կուզմինկիի թիկ հասակն ու չարժումները: Նրան թւաց, թէ այդ մարդը ճիշտ ու ճիշտ Պաւլուշկան է, մեծացած, հասակաւոր ու ռազայի պաշտօնով: Բայց ինքը նոյնն է մնացել, միշտ սոսկական գինւորի դերում, միշտ հնազանդ ու պատժւող գինւոր, որին դարձեալ Պաւլուշկան է առաջնորդում, և առաջնորդում է նորից–նոր դէպի դաշտը, դէպի գիւղի մօտակայ պուրակը, ուր նրանք իրենց փչրւած «գէնքերն» էին նորոգում, գիւղը վերադառնալուց առաջ:

Մանկութեան օրե՛ր, երջանիկ օրեր...

Մահապարտը դուցէ դեռ չարունակէր երազել, եթէ կուզմինկին չանկարծ ետ դառնալով չբղաւէր.—

— Գինւորնե՛ր, դա՛ատ:

* * *

Խումբը մօտենում էր հանդիսաւոր բազմութեան, որին ժապաւինել էին ձիաւոր պահակները:

Դէմքերի անծայր ծովի վրայ՝ չարժական ու կլոր ապակիներ: Մահապարտները որքան մօտենում էին ամբոխին, այնքան աւելի նրանց վախը փոխւում էր ամօթի, նւաստացման: Նրանցից ոմանք ուզում էին խաղաղ մահ, անդորը ու լռիկ մի վայրկեան, երբ յոշնածները քուն են մանում, յաւիտենական քուն:

Ամբոխը ճեղքւած էր, և գինւորները, չարժական ցանկապատի պէս, կանգնած էին աջ ու ձախ, մարդկանց ճնշումը արգիլելու համար:

Վոլգովը ցցած էր այդ ճեղքի բերանը՝ մահապարտ-

ներին ընդունելու և առաջնորդելու դէպի հրապարակը, ուր թարմ զերեզմանները լայնաբերան սպասում էին:

Լռութիւնը ահագնեցիկ էր:

Կալանաւորները կանգ առան Կուզմինսկիի մէկ չարժումով:

Վոլգովը հանդարտօրէն և հանդիսաւոր մօտեցաւ Կուզմինսկիին, երկու սպանները, անծանօթ չների նման, իրար հոտոտացին, իրար մի բան ասացին, որից յետոյ Վոլգովը խումբը առաջնորդեց դէպի հրապարակը:

Ժողովուրդը, որ ճամբայ տալու համար երկու մասի էր բաժանւած, երկու հսկայ ալիքի պէս իրար զարնուեց, հէնց որ անցաւ վերջին մահապարտը և վերջին պահակը:

Հասնելով հրապարակը, Վոլգովի կարգադրութեամբ և Կուզմինսկիի գլխաւորութեամբ տասը պահակները մի քանի քայլ ետ քաշուեցին ու կանգնեցին դոյդ դոյդ:

Ապա Վոլգովը, բարձր, բայց դողդոջ ձայնով դիմեց հինգ դասալիքներին և քանդերորդ անգամ լինելով, կրկնեց հետևեալ անգիր արած վճիռը.—

«Յանուն արդարութեան, յանուն Մայր Ռուսաստանի և նրա մեծ ժողովուրդի շահերի պաշտպանութեան, Զինուորական Դաշտային Դատարանս, անկողմնակալօրէն քննելով հինգ դասալիքների գործը իր բոլոր մանրամասնութիւններով, վճռեց ձեզ դատապարտել մահուան, գնդակահարութեան միջոցով»:

Մահապարտները մի վայրկեան անշարժ իրար նայեցին և արցունքով փարուեցին իրար, իսկ հինգերորդը ծունկի եկաւ:

Ամբոխի մէջ երևացին թաշկինակներ և լսւում էին բացագանչութիւններ.—

— Մա՛հ նրանց, մա՛հ թուլամորթներին:

Յետոյ՝ Վոլգովի նշանով, երկու քահանաները առաջ եկան՝ ուշացած որսկանների պէս:

Երբ կրօնական արարողութիւնը վերջացաւ, դասալիքները հոգևկան թեթևութեամբ ոտքի ելան, և նրանցից մէկը, պայծառակերպ դէմքով, նայելով գնդապետ Վոլգովին՝ ասաց.—

— Սուրբ գործածողը՝ սրով կը գնայ:

Երկրորդը յարեց.—

— Աւետած է՝ մի՛ սպանիր:

Գնդապետը, ի պատասխան նրանց, երկու անգամ չարժեց գլուխը և խօսքը մահապարտներին ուղղելով՝ ասաց.—

— Հետևեցէք ինձ:

Ու մահապարտները հեզութեամբ գրաւեցին իրենց տեղերը, ամէն մէկը իր յանցատախտակի տակ:

Վոլգովը հրամայեց նրանց աչքերը կապել, բայց մահապարտները հրաժարուեցին: Վերջին վայրկեանին, երբ գընդապետը ուզում էր գնդակահարութեան նշան տալ, ազդեցիկ դինուորը, ձեռքերը տարածելով դէպի զօրքն ու ժողովուրդը, իր ձայնի ամբողջ ուժով գոռաց.—

— Վկայ եղէ՛ք, որ մեզ սպանում են՝ մարդ չսպանելու համար:

* * *

Տասը վայրկեանից դիպուկ բժիշկը պաշտօնական արձանագրութիւն էր կազմում այն մասին, թէ 10րդ գնդի հինգ դասալիք դինուորները իրօք գնդակահարուած են հրապարակով:

* * *

Հետևեալ օրը, լուսաբացին, Վոլգովի և Կուզմինսկիի հրամանով և նրանց մասնակցութեամբ, բանտում սուսերահար էին եղել քառասուն կոմունիստները:

Մահանից առաջ նրանց ստիպել էին երգել «Աստուած պահեա գկայսր», իսկ նրանք մեռել էին «Միջազգայնական» երգելով:

Իմ հերոսներից ոմանք այժմ չկան, իսկ չատերը դեռ ապրում են գալոց օրերի լաւագոյն յոյսերով:

Նրանցից զօրավար Դենիսովը, անբանակ, մաչուած ու ծերացած, իր յուշերն է թղթի քաշում, միապետական արխիւը յանձնելու համար:

Գնդապետ Վոլգովը, ապրելով տարագրութեան դառ-

նութիւնները և ձանձրանալով լրագրավաճառի «անպատիւ» պաշտօնից, ինքնասպանութիւն գործեց սրանից մի քանի օր առաջ՝ պատուհանից փողոց նետուելով:

Ջելակովը, յուսահատ ու անհամբեր, սպասում է «համաշխարհային յեղափոխութեան», իր ծնօտը պատռատելու անմեռ հաւատքով:

Աղաբէկովը, այդ դաժան և յամառ հայը, վերջերս զոհ գնաց մի կոյր պատահականութեան այն վայրկեանին, երբ նկրտում էր երկինքը վար բերել և երկիրը վեր հանել՝ արիւնոտ անիւով:

Լրտես Անդրիւշկան և Ազա Ծրէյդէրը նոր ընտանիք են կազմել, անպտուղ, անժառանգ:

Իսկ ղահիճ Պորֆիրիյն այժմ գտնւում է Աֆղանիստանում և կոմունիզմ է քարոզում: Նա դարձել է կրակոտ հռետոր և ամէն անգամ իր ճառը վերջացնում է հետևեալ խօսքերով.—

«Մե՛նք կառուցինք աշխատանքի տաճարը Ռուսաստանում, կը կա՛ռուցենք և Հնդկաստանում»:

(Վերջ)

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Imp. de Navarre, 5, rue des Gobelins, Paris.

ՀՀ Ազգային գրադարան
NL0357376

52057

Դիմել՝

M. Altounian 17, Rue Ampère CACHAN (Seine) FRANCE.